Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հրատարակութիւն «Գովքաւոր դրամագլուխոյ» Զ. Գրիգորեանցի

# ՍՐԲԱԳԱՆ

# ԳԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՀԻՆԵՍԱՅԻ ԱՏԱՄԱՐԱՆՑՑ

ՀԱՅ ՏՂԱՅՈՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ Պ. ՍԻՄԷՈՆԵԱՆՑ

## Հ Ա Տ Ո Ր Դ

*Զորրորդ տպագրութիւն*

ԳԻՆՆ է 60 կ.

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍՈՎ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

1881

# ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԴԻՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՀԱՅ ՏՂԱՅՈՑ ԵՒ ԱՂՋԿԱՆԵՑ ՀԱՄԱՐ

*աշխատասիրեց Պ. Ս. . . . եաղոց*

## ՀԱՏՈՐ Ա.

## 1863

## ԹԻՖԼԻԶ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՑ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

*Одобрено Цензурою*
*Цензоръ Каитмазовъ.*

ԻՐ ՍԻՐԵԼԻ ԱՇԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻՆ

ԵՒ

ԱՂԱԴԵՐՏԵԼԵՐԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

Հրատարակչատան

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ԳԼՈՒԽ Ա.

### ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Սկզբում ստեղծեց Աստուած երկինքը և երկիրը. բայց երկիրը էր անպատրաստ, ծածկած խաւարով և ջրով և Աստուծոյ Հոգին շրջում էր ջրերի վերայ։

Աստուած ասաց, «Թող լինի լոյս» և երևեցաւ լոյսը։ Աստուած անուանեց լոյսը օր և խաւարը գիշեր։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ առաջին օրը։

Աստուած ասաց. «Թող լինի հաստատութիւնը» և երևեցաւ հաստատութիւնը, կամ երկինքը, որ տեսնում ենք։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր երկրորդ։ Ասաց Աստուած. «Թող հաւաքվին ջրերը միասին և երևի ցամաքը», և ջրերը բաժանվեցան ցամաքից, կազմեցին լճեր, գետեր և աղբիւրներ, որոնք վազում են և թափվում ջրերի մեծ ժողովի մէջ։ Աստուած անուանեց ջրերի այս մեծ ժողովը ծով և ցամաքը դետին, կամ երկիր։ Աստուած հրամայեց երկրին տալ իրենից առնկեր և նա ծաղկեցաւ խոտով, ծաղկներով, թփերով և ծառերով, ո-

բոնք տալիս են պտուղներ, ամէնը իւր կերպիւ։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր երրորդ։

Ասաց Աստուած. «Թող երևին լուսաւորները երկնային հաստատութեան վերայ, նոքա պէտք է լուսաւորեն և տաքացնեն երկիրը, բաժանեն օրը գիշերից և ցոյց տան ժամանակը՝ օրերը և տարիները։ Եւ փայլեցան արեգակը՝ օրուան լուսաւորը և գիշերը երևեցան լուսինը և աստղերի անթիւ բազմութիւնը։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր չորրորդ։

Դեռ չկար երկրիս վերայ ոչ մի կենդանի, որ զուարճանար Աստուծոյ այս գեղեցիկ արարածներով։ Այն ժամանակ ասաց Աստուած. «Թող լքցվին ջրերը ձկներով և օդը թռչուններով, որոնք թռչում են հաստատութեան տակ»։ Եւ ջուրը լքցվեցաւ զանազան մեծ և փոքր ձկներով և թռչունները սկսան թռչել օդում։ Աստուած օրհնեց նրանց, ասելով. «աճեցէք և բազմացէք, լքցրէք ջրերը և թռչունները թող բազմանան երկրիս երեսին»։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր հինգերորդ։

Ասաց Աստուած. «Թող լինին երկրիս վերայ կենդանիք. և զանազան անասուններ, գեռուններ և գազաններ երևեցան երկրի վերայ։ Արևի ծայրին և ձորերի մէջ ամէն տեղ յայտնվեցաւ կեանք և ուրախութիւն։ Աստուած ասաց, եկ ստեղծենք մարդուն մեր պատկերով և նմանութեամբ և թող տիրէ նա ծովային ձկներին, երկնային թռչուններին և ամէն արարածներին, որոնք կենում են երկրիս երեսին». և ստեղծեց Աստուած մարդուն։ Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ և օր վեցերորդ։

Այսպէս ստեղծեց Աստուած աշխարհս ոչնչից, միայն իւր ամենակարող խօսքով։

ԳԼՈՒԽԳ Բ.

## ՄԱՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՆԸ

Երբ երկինքը և երկիրը ամէն իր զարդերով պատրաստ էին, Աստուած առաւ զեռնից հող ստեղծեց նրանից մարդուն, կենդանացրեց նրան իւր հոգւով տուեց նրան հոգի անմահ և անուանեց նրան Ադամ։ Աստուած դրաւ իւր ստեղծած մարդուն ամենագեղեցիկ եդեմայ դրախտի մէջ, ժողովեց նորա մօտ ամէն կենդանիներուն և Ադամը տուեց նրանց անուն, ամէնին համեմատ իր բնաւորութեան։ Բայց բոլոր արարածների մէջ չկար արարած նրան նըման։ Աստուած ասաց. «մարդուն համար լաւ չէ մենակ լինելը, եկ ստեղծենք նրան օգնական, իր նման։ Աստուած զցեց Ադամի վերայ խորը քուն, առաւ նորա կողերից մէկը և ստեղծեց նրանից կին։ Սրան տեսնելով Ադամ ասաց. «Սա է ոսկր իմ ոսկրներից և մարմին իմ մարմնից»։ Նա անուանեց կնոջը Եւա, որ նշանակում է կենդանիների մայր։ Աստուած օրհնեց նրանց ասելով. «աճեցէք, յաւելացէք, լցրէք երկիրը, իշխեցէք նրան. տիրեցէք ծովի ձկներին, երկնքի թռչուններին, երկրիս ամէն անասուններին, գազաններին և զեռուններին»։

Այսպէս Աստուած առաջին երկու մարդոց ձեռքով օրհնեց բոլոր մարդկութիւնը հայրական սիրով և կարգեց ամուսնութեան սուրբ կապը։

Վեց օրում վերջացնելով Աստուած իւր արարչագործութիւնը, տեսաւ որ ամէն բան բարի էր։ Եօթներորդ օրը հանգստացաւ Աստուած իւր գործերից և սրբեց այս օրը։ Այս ժամանակից դրած է պատուիրան, վեց օր աշ-

*խաղալ և եղեմնաբորգ օրը նուիրել բարեգործութեան և մանաւանդ Աստուծոյ պաշտօնին։*

ԳԼՈՒԽ Գ.

## ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴՈՑ ԱՆՄԵՂ ԿԵԱՆՔԸ ԴՐԱԽՏԻ ՄԷՋ

Ադամ և Եւան էին անմեղ և ազատ ցաւերից և մահից։ Նոքա բնակուում էին գեղեցիկ պարտիզի մէջ, որտեղ նոցա համար Աստուած ինքը տնկել էր և ուռոգանում էին նրան չորս մեծ գետեր։ Ամէն կենդանիները հպատակում էին մարդուն և նա չունէր պատճառ նոցա գազանութիւնից վախենալու։ Զգիտենալով մեղք, Ադամ և Եւան շորերի կարօտութիւն էլ չունէին և չէին ամաչում բոլորովին իրենց մերկութիւնից, անմեղ երեխաների նման։ Նոքա չէին զգում ոչ ցաւ և ոչ տրտմութիւն։ Վերջապէս երեք երեսի խօսակցում էին նոքա իրենց արարչին և նորա հրեշտակների հետ, որ երջանկութեան կատարելութիւնն է։ Եդեմի՝ երկրային դրախտին մէջ կային ամէն կերպի ծառեր, որ դուրալի էին աչքի համար և տալիս էին քաղցրահամ պտուղներ։ Դրախտի մէջ տեղում էին երկու հրաշալի ծառեր, այն է կեանց ծառը և բարուոյ ու չարի գիտութեան ծառը։ Աստուած ասաց Ադամին, «Կե՛ր այս պարտեզի ամէն ծառերի պտուղներից, միայն մի՛ուտեր բարուոյ և չարի գիտութեան ծառի պտղից։ Երբ կ՚ուտէ՛ք այս պտղից, իսկոյն անպատճառ կ՚մեռնէ՛ք»։ Այս պատուիրանքով կամեցաւ Աստուած փորձել Ադամին և Եւային, որովհետև միայն անպայմանխոնարհութեամբ և երեխայական հպատակութեամբ նոքա կարող էին ցոյց տալ, թէ իրենց կատարեալ հպատակութիւնը, թէ ճշմարիտ սէրը և թէ հաւատարմութիւնը դէպի երկնային Հայրը։

ԳԼՈՒԽ Դ.

## ՆԱԽԱՀԱՐՑ ՄԵՂՔԻ ՄԷՋ ԸՆԿՆԻԼԸ

Սատանան երկրիս կենդանիներից ամենից խորամանկի՝ օձի կերպարանքովը յայտնվեցաւ Եւային և ասաց նրան. «Ինչո՞ւ Աստուած արգելեց ձեզ ուտել դրախտի ամէն ծառերի պտուղներից»: Եւան պատասխանեց. «Աստուած հրամայեց մեզ այս պարտիզի ամէն պտուղները ուտել և միայն այն ծառի համար, որոնք դրախտի մէջտեղումն է, ասաց. «Մի՛ ուտէք նորա պտուղներից և մի՛ մօտենաք նրանց, որ չմեռնէք»:—«Դուք չէք մեռնիլ». ասաց օձը. «Աստուած գիտէ, որ եթէ դուք ուտէք այդ պտղից, ձեր աչքերը կ'բացվին և դուք կ'լինէք, ինչպէս աստուածներ, կ'ճանաչէք բարին և չարը:

Եւան նայեցաւ ծառին ցանկութեամբ ուտելու նորա պտղից և այսպէս մեղքը արդէն գործած էր նորա սրտում: Ովքեր շարժվում է փորձութեան ժամանակը, գայթակղվում է և նայում է ցանկութեամբ և ուրախութեամբ արգելած բանի վերայ, նա արդէն մեղանչում է իր սրտում: Այսպէս արաւ Եւան էլ: Արհամարհելով Աստուծոյ պատուիրանը, նա կերաւ արգելած պտղից և տուեց նրանից իւր մարդուն էլ, որոնք նմանապէս կերաւ: Այն ժամանակ տեսան նոքա, որ մերկացին, զրկվեցան իրենց անմեղութիւնից և նորա հետ միասին դրախտի երջանկութիւնից և ամօթից թաքնվեցան թփերի մէջ: Աստուած ասաց. «ո՞ւր ես Ադամ»: «Ես լսեցի քո ձայնը պարտիզում». պատասխանեց Ադամ և թաքնվեցայ, որովհետև մերկ էի»:—«Ո՞վ կ'յայտնէր քեզ քո մերկութիւնը, թէ դու չէիր կերել արգելած ծառի պտղից», ասաց Աստուած. «Ինչո՞ւ անցար դու

իմ պատուիրանից»։ —Ադամ պատասխանեց. «Կինը, որ դու ինձ տուիր, տուեց ինձ պտուղը և ես կերայ»։ Կինը ասաց. «օձը ինձ խաբեց»։ Ցանցանքին հետևեց պատիժը։ Աստուած ասաց օձին. «Դու անիծածն ես երկրիս ամէն կենդանիներից, դու կ'սողաս երկրի երեսին և ես կ'դնեմ թշնամութիւն քո և կնոջ ծնունդների մէջ. դու կ'խայթես նորա գարշապարը. բայց կնոջ ծնունդը կ'ջախջախէ քո գլուխդ»։ Կնոջը ասաց Աստուած. «կ'շատացնեմ քո վիշտերդ։ Ցաւով կ'ծնես որդիներ և ամէնայն բանում պէտք է հպատակես մարդուդ»։ Վերջապէս, Ադամին էլ ասաց Աստուած. «որովհետև լսեցիր քո կնոջդ և չպահեցիր իմ տուած պատուիրանս, չարչարանքով կ'գործես երկիրը, որնոր անիծուած է քո պատճառով. նա կ'դուրս բերէ քեզ տատասկ և փուշ և դու քո երեսիդ քրտինքով կըտանաս նրանից քո հացդ, մինչև որ կրկին հող կ'դառնաս, ընչից որ առած ես։ Դու հող ես և հող կ'դառնաս»։ Աստուած տուեց Ադամին և Եւային կաշիէ շորեր և արտաքսեց դրախտից։ Աստուած դրաւ դրախտում քէրուբէին, որ պահէ հրեղէն թրով կենաց ծառի ճանապարհը։ Ադամ, աքսորած դրախտից, սկսաւ գործել երկիր, որից ինքը առած էր։ Այսպէս ճանաչելով մեղքը, առաջին մարդիկ կորցրին իրենց առաջուան երջանկութիւնը։ Միակ ուրախութիւնը նոցա և յոյսը էր Աստուծոյ խոստումն, թէ կնոջ սերմը կ'ջախջախէ օձի գլուխը, այսինքն կոյսի Որդին կ'ջնջէ սատանայի իշխանութիւնը։

## ԳԼՈՒԽ Ե.

## ԱԳԱՄԻ ՈՐԴԻՔԸ

Ադամ և Եւա ունէին երկու որդիք Կայէն և Աբէլ։ Կայէնը էր երկրագործ և էր խիստ բնութեան տէր. ընդհակառակն Աբէլ, հեզ երիտասարդը, էր հովիւ։ Երկու եղբայրներն էլ բերին Աստծուն մատաղ. Կայէնը երկրի պտուղներից, իսկ Աբէլ իւր խաշնարի անդրանիկներից։ Մատաղ բերելիս Կայէնը նկատեց, որ իր մատաղը հաճելի չէ Աստծու. բայց բարեպաշտ Աբէլի մատաղը ընդունելի եղաւ Աստծուն։ Կայէն խիստ տրտմեցաւ։ Բայց Աստուած ասաց նրան. «Ինչո՞ւ համար տրտմեցար։ Թէ բարի կ'գործես, ուրախ կլինես, թէ չէ, զգոյշ կաց մեղքից. նա արդէն դրան մօտ է». բայց Կայէն, ուղղվելու տեղ, կանչեց իր եղբօր դաշտը և սպանեց նրան։ Այն ժամանակ Տէր Աստուած ասաց Կայէնին. «Ո՞ւր է Աբէլ եղբայրդ»։ Կայէնը պատասխանեց. «Չգիտեմ. մի՞թէ ես նորա պահապանն եմ»։—«Այս ի՞նչ գործեցիր». ասաց նրան Աստուած. «քո եղբօրդ արիւնի ձայնը գոչում է ինձ։ Դու անիծած ես այս երկրիս երեսին, որնոր քո ձեռովդ ծածկեցաւ եղբօրդ արիւնով. դու կ'տատանես, չգտնելով ոչ մի տեղ քեզ հանգիստ ապաստան։

Սրանից յետո Կայէն գնաց Նայիդ երկիրը, ուր մի քանի ժամանակից շինեց առաջին քաղաքը, որ նորա ենոք որդու անունով կոչվեցաւ։ Նորա ամէն յետագաները շար էին և սուրբ գրքումը կոչվում են որդիք մարդկան։ Երեւելիները նոցանից էին Յովբալ, որնոր հնարեց երգ և քնար և Թուբէլ, որնոր էր ճարտարապետ դարբին պղնձի և երկաթի։ Տէր Աստուած մեղքացաւ Ադամին և Եւային,

և տուն նրանց։ Աբէլի տեղ, ուրիշ որդի, Սէթ անունով։ Սորա որդիքը էին բարեպաշտ և սուրբ գրքի մէջ անուանվում են որդիք Աստուծոյ։ Երևելիները նոցանից էին Ենոք, որ միշտ Աստուծոյ կամքին էր հետևում և կենդանի փոխվեցաւ երկինք և Մաթուսաղա, որնոր ամէն մարդիկներից աւելի երկար կեանք ունեցաւ՝ այսինքն ինն հարիւր վաթսուն ինն տարի։

Բացի Սէթից Ադամ ունէր էլ շատ որդիք և աղջիկներ։ Նա կեցաւ ինները հարիւր երեսուն տարի և մեռաւ, դառնալով հող, որից որ առաջ էր։

## ԳԼՈՒԽ Ե։

## ՋՐՀԵՂԵՂ.

Սէթի որդիներից մէկը, Նոյ անունով, կենում էր այն ժամանակ, երբ մարդիկ, բազմանալով երկրի երեսին, բոլորովին զեղխեցան։ Նոքա չէին մոռանում Աստուծոյ վերայ, որնոր ամէն օր անում էր նրանց բարերարութիւնները, մոռացան նորա պատուիրանները և մտածում էին միայն, որ ոչ թէ իւրեանց պարտաւորութիւնները կատարեն, այլ իրենց արտի ցանկութիւնները։ Մինչև Սէթի բարեպաշտ յետագայները անգամ, իրենց անմիտ կապակցութեամբը կայէնի յետագաների հետ, զեղխեցան և մոռացան ճշմարիտ Աստուծուն։ Այս ամէն չար մարդոց մէջ արդար էր միայն Նոյ։ Սա բարեպաշտ մեծացրեց իւր բոլոր որդոց և աշխատում էր նրանց հեռացնել ամէն չար օրինակից, որով նոքա պատած էին։ Աստուած վճռեց ջնջել մարդկային ցեղը ջրհեղեղով և պահել ընդհանուր մահից միայն բարեպաշտ Նոյին, իր ընտանիքովը։

Աստուած հրամայեց Նոյին շինել տապան, այսինքն մի մեծ նաւ անփուտ փայտից և ծեփել այն նաւթով, որ կարողանայ կենալ ջրի երեսին: Այս տապանը երեք դըստիկոն էր, որոնց ամէն մէկը շատ մասերի բաժանուած: Պատուհանը էր վերևից և դուռը կողքից: Նոյ, Աստուծոյ հրամանով, առաւ տապանի մէջ մի մի զոյգ ամէն կենդանիներից և մի քանիից, որ առաւել օգտաւէտ էին մարդոց, և որ չէին կարող կենալ ջրում, մինչև անդամ եօթն եօթն, որ պահպանվի նոցա ցեղը մահից և առաւ նոցա համար մի տարուան կերակուր էլ: Վերջապէս Աստուած հրամայեց Նոյին մտնել տապանը իւր երեք՝ Սեմ, Քամ և Յաբէթ որդիներով և նոցա կանանցմով: Ամէնը միասին ութը հոգի էին: Աստուած փակեց նրանց տապանի մէջ, որանից յետո երկինքը ծածկվեցաւ ամպերով, որոնցից եկաւ սաստիկ անձրև քառասուն օր և քառասուն գիշեր շարունակ. բայի որանից ծովերը և գետերը բարձրացան իրենց ափերից և ջուրը այնքան շատացաւ, որ դաշտերը, ծառերը և մարդոց բնակութիւնները ծածկվեցան ջրով և տապանը սկսաւ լողալ: Մարդիկ և գազանները փախչում էին դաշտերից բլուրների գագաթը. միայն ջուրը հասաւ նրանց այն տեղ էլ: Բլուրների վերայ էլ չդանելով ապաստան վեր ելան ամենաբարձր սարերի գագաթները, միայն այս տեղ էլ հասաւ նրանց ջուրը: Ջուրը բարձրացաւ ամէնից բարձր սարերից էլ տասնուհինգ կանգուն աւելի: Ամէն բան փչացաւ. միայն տապանն ապահով շրջում էր ջրի երեսին: Նորա մէջն էին երկրագործ իս բոլոր բնակիչները՝ ութը հոգի, որոնք Աստուծոյ ամենակարող պաշտպանութեան տակ էին:

Շարունակ յիսուն օր ջուրը ամենևին չէր փոքրանում

երկրիս երեսից։ Սրանից յետոյ փչեց հողմ, ջրեց ամպերը և փոքր առ փոքր ջուրը սկսաւ նսաել։ Տապանը, որնոր շրջուում էր ջրի երեսին, կանգնեցաւ Մասիսի գլխին։ Նոյ, կամենալով գիտենալ, որ արդեօք չորացել է երկիրը, թէ չէ, բաց թողեց ագռաւին, որնոր էլ յետ չդարձաւ և չբերաւ համբաւ երկրի դրութեան վերայ։ Փոքր ժամանակից յետոյ թողեց աղաւնին, որնոր երկրիս վերայ ցամաք տեղ չգտնելով, որ հանգստանայ փոքր ինչ, յետ դարձաւ և Նոյ ձգելով իր ձեռը առաւ նրան էլի ներս տապանի մէջ։ Եօթը օրից յետոյ Նոյ միւսանգամ բաց թողեց աղաւնին, որնոր երեկոյեան դարձաւ տապան, կոցում ձիթենիի ճիւղ բերնաց։ Ի՛նչպէս ուրախացան տապանի բնակիչները, երբ այսպէս իմացան, որ ծառերը էլ ջրի տակը չեն։ Եօթը օրից յետոյ Նոյ կրկին բաց թողեց աղաւնին, որնոր էլ յետ չդարձաւ, որովհետև երկիրը արդէն ցամաք էր։ Նոյը վերջհարիւր տարեկան էր, երբ Աստուած ասաց նրան. «դուրս ելէ տապանից բոլոր ընտանիքովդ և ամէն կենդանիներով, որոնք քեզ հետ միասին փակված էին այն տեղ։ Ամեցէք և բազմացէք երկրիս վերայ»։

Տապանից դուրս գալից յետոյ, Նոյ շինեց սեղան և բերաւ Աստուծու շնորհակալութեան մատաղ, որնոր այնպէս հաճոյ եղաւ Աստուծու, որ այս երախտագիտութեանը համար նա օրհնեց երկիրը և մարդկութիւնը ասելով. «մինչև երկիրս կայ, անպակաս կ'լինի նորա երեսից ցանքը և հունձը, ամառը կ'հետևէ ձմեռին և գիշերին կ'հետևէ օրը և այսպիսի ջրհեղեղ էլ չի լինիլ երկրիս վերայ»։ Նոյ նայեցաւ երկինք և տեսաւ ամպերի մէջ վայրուն աղեղը. «Այս աղեղը ամպերի մէջ, ասաց Աստուած, է նշան և գրաւական իմ ողորմութեան մարդոց. երբ կ'հաւաքվին երկնքում ամ-

օրերը և իմ աղեղը կ'երևի ի նոցա մէջ, թո՛ղ մարդիկ շնորհակալութեամբ յիշեն իմ ուխտս՝ թէ էլ չեմ զրկիլ ջրհեղեղ։ Այսպէս աղեղը երևելով երկնքում միտերս է բերում մեզ մեր արարչի ողորմածութիւնը և մարդասիրութիւնը։

ԳԼՈՒԽ Է.

## ՆՈՅԻ ՈՐԴԻՔԸ

Նոյ, Աբրահամից յետ, սկսաւ գործել երկիրը և անկեց խաղողի ծառ։ Երբ պտուղը հասաւ, քամեցնորածութիւնը, և որովհետև երբէք չէր փորձած նորա զօրութիւնը, խմեց անչափ շատ դրանից, այնպէս որ հարբեցաւ։ Թուլացած գլխից թմբեցաւ և պառկեցաւ տան մէջ ամենեքեան մերկ։ Քամ, տեսնելով իւր հօրը այսպիսի անվայել դրութեան մէջ, սկսաւ ծիծաղել նորա վերայ և յայտնեց այն իր եղբայրներին էլ Բայց Սեմ և Յաբէթ մտան վրան և քամակով դէպի հայրը դարձած առան շորերը և ծածկեցինն նրան, առանց տեսնելու նորա մերկութիւնը։ Նոյ, երբ զարթեցաւ, իմանալով Քամի անպատիւ վարմունքը, ասաց։ «Անիծած դու. քո յետագաներդ, Քանանու որդիք, կ'լինին քո եղբայրների որդւոց ստրուկները. բայց Սէմին և Յաբէթին, որոնք պատուեցին իրենց հօր մինչև անվայել դրութեան մէջն էլ և ծածկեցինն նորա վարմունքը, ասաց. «օրհնեալ եմ ձեզ, ձեր որդիքը կ'բազմանան երկրիս երեսին և կ'իշխեն Քամի յետագաների վերայ։ Նոյի զուշակութիւնը իր որդւոց յետագաների վերայ կատարեցաւ։

Նոյի երեք որդիներից, Սէմից, Քամից և Յաբէթից ծագեցան աշխարհիս ամէն մասերի բնակիչները։ Ինքը Նոյ Ջրհեղեղից յետոյ էլի երեք հարիւր յիսուն տարի ապրեցաւ։

ԳԼՈՒԽ Ը.

## ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Նոյն որդիքդ բա գ'մացան և ամէնքը իրրև մի ազգ խօսում է էին մի լեզուով։ Բազմանալով սկսան Նոքա ցրվել երկրիս երեսին. բայց բոլորովին ցրվելից և մէկ մէկից հեռանալից առաջ վճռեցին շինել ընդարձակ քաղաք և բարձր աշտարակ, որի գլուխը հասնէր մինչև երկինք և երևէր հեռուից։ Բացի սրանից Նոքա ուզում է էին, որ այս շինուածքը լինի Նոցա յետագայների համար նշան իրենց զօրութեան և իմաստութեան։ Բայց Աստուած ջնջեց Նոցա այս հպարտ ձեռնարկութիւնը։ Նա խառնեց Նոցա մտքում բառերը և միտքերը. ուստի և աշտարակի շինողները չհասկանալով մէկ մէկու, չկարողացան շարունակել իրենց շինութիւնը և ստիպվեցան ցրվելու զանազան կողմեր. իսկ սկսած և անկատար մնացած աշտարակը և քաղաքը մնացին յիշատակ մարդոց անմոռութեան, որոնք ձեռք խփեցին մի գործքի առանց Աստուծոյ օրհնութեան։ Այս քաղաքը անուանվեցաւ Բաբիլոն, որ նշանակում է խառնակութիւն, որովհետև Նորա շինութեան ժամանակ Աստուած խառնեց մարդոց լեզուն։

ԳԼՈՒԽ Թ.

## ԱԲՐԱՀԱՄ

Մարդիկ ցրուելով երկրիս վերայ, բաժանվեցան զանազան ազգեր և մուացան ճշմարիտ Աստծուն, Նոքա սկսան պաշտել իրենց շինած կուռքերը, զանազան կենդանիներուն, արեգակը, լուսինը և այս պատճառով կռապաշտներ։ Այս կռապաշտների մէջ էր Սէթի ցեղից մի

բարեպաշտ մարդ Աբրահամ անունով։ Աստուած, ճշմարիտ հաւատը հաստատ պահելու համար երկրիս վերայ, ընտրեց նրան և նորա ցեղը։

Աբրահամ թարայի որդին էր և ունէր երկու եղբայր, Նաքորը և Առան անունով։ Այս վերջինը իր հօր թարայից առաջ մեռաւ, թողնելով իրանից յետոյ մի որդի Ղովտ անունով, որին Աբրահամ իր մօտ առաւ։ Բայց որովհետև կռապաշտութիւնը տարածվեցաւ ոչ միայն Աբրահամի հայրենիքում, այլև նորա հօր ընտանիքի մէջ էլ, Աստուած ասաց Աբրահամին. «Հեռացիր քո հայրենիքից և ազգականներից և դնա այն երկիրը, որտեղ ես քեզ կ'ցոյց տամ։ դու կ'լինես մեծ ազգի հայր։ Ես օրհնում եմ քեզ և քեզ մով կ'օրհնվին երկրիս բոլոր ազգերը։

Թէև յոյժ ցաւալի էր Աբրահամի համար իւր հայրենիքը թողնել. բայց նորա հաւատը Աստուծոյ վերայ այնպէս հաստատ էր, որ ոչ մի րոպէ չտատանեցաւ նա, այլ առաւ իր Սարա կնոջ, Ղովտ եղբօրորդուն, իր ծառաներուն և աղախիններուն, հաւաքեց իր խաշները և ամէն իր ստացուածներով միասին հեռացաւ հայրենիքից։

Աբրահամ գնաց Բանան անուանված գեղեցիկ և բերրի երկիրը և երբ հասաւ Սիքէմի պտղաբեր հովիտը, Աստուած ասաց նրան. «Ահա այն երկիրը, որտեղ տալիս եմ քեզ և քո որդուցդ։» Աբրահամ, շարժած շնորհակալութիւնից, կանգնեց Աստծուն սեղան այնտեղ, ուր նա երևեցաւ իրեն։

ԳԼՈՒԽ Ժ.

## ԱԲՐԱՀԱՄ ԵՒ ՂՈՎՏ

Աբրահամ և Ղովտ բնակում էին միասին և երկուսն էլ ունէին բազմաթիւ խաշներ։ Բայց Աբրահամ ոչ էր

շատ մեծապէս զանձերի, որոնք իր առաքինութիւններն էին։ Նա էր Աստուծմէ երկնչող մարդ, արդար, մեծահոգի, ցաւակից խեղճերին, հիւրասէր, լեռը կենդանի հաւատովը Աստուծոյ, հպատակ նորա կամքին և հաւատարիմ իր մերձաւորներին։ Ինքը միշտ ճշմարտութեամբ վարվելով, կամենում էր ուրիշների մէջ էլ միշտ ճշմարտութիւն տեսնել։ Իր հոգոյ այս գեղեցիկ արդիւնութիւնների համար հաճոյ էր նա Աստուն, սիրելի մարդոց և բարեկամ ինքը իրմով։ Քանանու բնակիչները խիստ սիրով ընդունեցին նրան։ Բարեպաշտ մարդիկ ամէն տեղ Աստուծոյ պաշտպանութեան տակն են լինում։ Աբրահամի և Ղովտի խաշները այնպէս բազմաթիւ էին, որ արածելու տեղը, ուր իրենք կենում էին, չէր բաւական։ Նոցա հովիւների մէջ յաճախ ծագում էր վէճ. այս պատճառով Աբրահամ ասիպվեցաւ իր եղբօրորդուն ասելու. «մենք աղգականներ ենք և չպէտք է վիճենք մէկ մէկու հետ ծառաներիս համար, աւելի լաւ է իրարև բարեկամներ հեռանալ մէկ մէկից։ Տես ահա բոլոր երկիրը առ ջեզ է, ընտրիր, ուր կամենում ես կենալ. թէ դու կ'երթաս աջ, ես ձախ կ'երթամ։ Աբրահամը, թէև Ղովտից առաւել մեծ էր և զօրեղ, բայց ընտրութիւնը տուաց Ղովտին, որովհետև ամէն իր վարմունքի մէջ էր միշտ մեծահոգի։ Ղովտ իր խաշների համար ընտրեց բերրի հովիտը, որոնք ոռոգանում էր Յորդանան գետը և ուր էին շինած հարուստ Սոդոմ և Գոմոր քաղաքները։ Եւ նա ինքը բնակեցաւ Սոդոմ քաղաքում։ Իսկ Աբրահամ խփեց իր վրանները Մամբրէի մայրի մօտ, որոնք Քէբրոնի մօտ էր։

Բայց Ղովտի ընտրութիւնը յաջողակ չէր. Սոդոմի բնակիչները չար մարդիկ էին։

Երջակայ երկիրները բաժանուած էին փոքրիկ տէրութիւններ, որոնց ամէն մէկը իր առանձին թագաւորը ունէր։ Այս թագաւորներ ին մէջ սկսաւ պատերազմ, որի մասնակից էր Սոդոմի թագաւորն էլ։ Սրան թշնամի կողմը յաղթեց, և Ղոտ ամէն իր ընտանիքով, ծառաներով, աղախիններով, մեծ խաշներով Սոդոմ և Գոմոր քաղաքների միւս բնակիչների հետ միասին գերի ընկաւ։

Մէկ գերութիւնից ազատուած մարդ գնաց և պատմեց Աբրահամին, ինչպէս նրա եղբօրորդոյ գլխին եկել էր։ Աբրահամ շուտով ժողովեց իր ամէն ծառաներուն, որոնք ողջը երեք հարիւր տասնը ութ հոգի էին։ Նորա դաշնակիցները Էսքոդ, Անան Մամբրէ միացան նմանապէս նորա հետ իրենց մարդիկներով և շտապով գնացին գերիների ետևից։ Սոքա հասան թշնամիների ետևից գիշերով, ջարդեցին նրանց և քշեցին, ազատեցին Ղոտին և ամէն միւս գերիներուն և խլեցին թշնամիների տարած բոլոր աւարը։ Աբրահամ Ղոտի, նորա ընտանիքի, բոլոր նորա մարդիկների և Սոդոմի բնակիչների հետ միասին յետ դարձաւ։

Այս յաղթութիւնից յետ դառնալիս Աբրահամ անց էր կենում Շալէմ քաղաքի մօտով, ուր այն ժամանակ թագաւորում էր բարեպաշտ Մելքիսեդէկը, որոնք ճշմարիտ Աստուծոյ քահանայ էլ էր։ Սա Աբրահամին առաջը դուրս եկաւ և ասաց. «օրհնած է Աբրահամ Բարձրեալ Աստուծմէն, որոնք երկինքը և երկիրս ստեղծեց, և օրհնած է Աստուած, որոնք մատնեց թշնամիներուդ քո ձեռքդ»։ Այս ասելով տուաց նրան հաց և գինի։ Աբրահամ պատասխանելով Մելքիսեդէկի քահանայութիւնը և Աստուծոյ հոգւով նորա մէջ յաւիտենական քահանայապետի (Յի-

տես Քրիստոսի) օրինակը տեսնելով, տուեց նրան ա-ռաջ աւարի տասանորդը։

Սոդոմի թագաւորն էլ դուրս եկաւ Աբրահամի առաջը և ասաց նրան, «յետ տուր ինձ միայն մարդիկս, որոնց դու գերութիւնից ազատեցիր, իսկ մնացած Սոդոմից թալանած հարստութիւնները թող քեզ մնան։ Սոդոմի թագաւորը չէր կարծում, որ Աբրահամը իրեն մէկ բան յետ կ՚դարձնէ. բայց Աբրահամ պատասխանեց. «Աստուած չանէ, որ ես տրիշի ստացուածքից շահվել կամենամ։ Ես յետ եմ դարձնում քեզ ամէնը, բացի նրանից, ինչ որ կերան մարդիկս և բացի դաշնակիցներիս բաժինից։ Այս ասելով յետ տուեց թագաւորին ամէնը, ինչ որ թշնամին նորա տէրութեան մէջ յափշտակել էր։

## ԳԼՈՒԽ ԺԱ

## ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԲՐԱՀԱՄԻ ՄՕՏ

Աբրահամ, չնայելով իր հարստութեանը, տուն չունէր. այլ բնակում էր վրանում, որտեղ տեղափոխում էր իր հետ միասին այնտեղ, ուր արածում էին նորա խաշները։ Մէկ անգամ կէսօրին նա նստած էր իր վրանի դրանը մօտ և տեսաւ իր առջևը երեք անցուորականներ։ Նա նոցա առաջ դուրս եկաւ և մինչև գետին երկրպագութիւն տալով ասաց. «Եթէ կամենում էք իմ բարին, մի՛ անցնէք իմ վրանից մօտով։ Հանգստացէ՛ք փոքր ինչ այս ծառի տակ, ես կ՚բերեմ ջուր ոտներդ լուանալու և կ՚պատրաստեմ ձեզ ճաշ։» Արա՛, ինչպէս ասում է սուրբ պատասխանեցին նոքա։ Այն ժամանակ Աբրահամ շուտով մտաւ վրանը, հրամայեց իր կնկան լաւ նաշխից թխել նկանները, յետոյ գնաց խաշնարի մօտ, ընտրեց ամէնից լաւ հորթը և հրամայեց ծառա-

ներին պատրաստել նրան հիւրերի համար. բերել նոցա համար նամանակ կարագ և կաթ. իսկ ինքը կանգնած ծառայում էր նրանց ճաշի ժամանակ:

Ճանապարհորդները էին հրեշտակներ և Աստուած մարդու կերպարանքով: Տէր Աստուած ասաց Աբրահամին. «Ո՞ւր է քո կինը Սառան»: «Նա վրանումն է», պատասխանեց Աբրահամ: «Գալ տարի այս ժամանակ Սառան կ'ունենայ որդի», ասաց Աստուած: Սառան կանգնած էր վրանի դրան առաջ և լսելով այդպիսի խոսումն ծիծաղեցաւ, որովհետև չէր հաւատում և ասում էր ինքը իրեն. «Ինչպէս կարող է այդ պատահել, երբոր ես եմ միայն և ունենալ որդի, այն ինչ ես էլ իմ մարդս էլ ծերացել ենք (այն ժամանակ Սառան 90 տարեկան էր և Աբրահամ 100): Բայց Աստուած ասաց Աբրահամին, «ինչո՞ւ է ծիծաղում Սառան. կա՞յ արդեօք անկարելի բան Աստուծոյ համար»: Սառան վախեցաւ ասելով, որ Անցաւորին յայտնի էր մինչև անդամ նորա միտքն էլ. նա դուրս եկաւ վրանից, կամենում էր ներողութիւն խնդրել, ասելով. թէ ինքը չէ ծիծաղել: Բայց Աստուած ասաց. «Ես գիտեմ որ դու ծիծաղեցար»: Աբրահամ համոզվեցաւ, որ իր առջև եղողները հասարակ ճանապարհորդներ չէին:

Նրա վեր կացան և գնացին դէպի Սոդոմ: Աբրահամը ճանապարհ դրեց նրանց: Աստուած ասաց. «Ես չեմ ծածկել իմ ծառայից՝ Աբրահամից, ինչ որ կամենում եմ անել: Ես գիտեմ, որ նա կ'ասէ իր յետնորդներին ճշմարիտ ճանապարհով գնալ և բարեպաշտութեամբ կենալ: Աստուած յայտնեց Աբրահամին, որ միտը դրել է Սոդոմ և Գոմոր քաղաքները իրենց բնակիչների անօրէնութեան համար չ'չքելու: Աբրահամ հարցրեց Աստծուն, կ'խր-

նայէ՞ արդեօք Նա քաղաքին, թէ գանվէին նորա մէջ յիսուն կամ թէ տասն էլ արդար մարդիկ։ Տէր Աստուած պատասխանեց, թէ կ՚ինայէր քաղաքին, եթէ գանվէին նորա մէջ միայն տասն հոգի արդար մարդիկ էլ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

## ՍՈԴՈՄ ԵՒ ԳՈՄՈՐ

Երկու հրեշտակները ճանապարհորդների ձեւով մըտան երեկոյեան Սոդոմ։ Ղոտը, որ նստած էր քաղաքի դըրան մօտ, տեսաւ մոնոզներուն. միայն չէր իմանում, թէ ո՞վ են։ Նա մօտեցաւ նրանց և կրկրպագանելով նրանց մինչև գետին խնդրեց, որ մտնեն իր տուն և գիշերը իր մօտանց կացնեն։ «Չէ, պատասխանեցին հրեշտակները, մենք կ՚անցկացնենք գիշերը փողոցում»։ Բայց Ղոտը այնքան խնդրեց, որ նոքա վերջապէս համաձայնեցան։ Նա ուտեցրեց նրանց ընթրիք և երբ քնելու ժամանակ էր և կամենում էին պառկել, քաղաքի բնակիչները պատեցին Ղոտի տունը և պահանջում էին, որ նա իրենց ձեռը մատնէ օտարականներուն, որոնք նորա մօտ եկել են։ Ղոտը դուրս գալով ժողովրդի առաջ, փակեց դուռը իր ետևից և խնդրում էր, որ վնաս չտան օտարականներին։ Բայց Սոդոմի բնակիչները գոռում էին նրան ասելով. «դու ինքդ մեր մէջ պանդուխտ եկած ես և դեռ մեր դատաւորն էլ կամենում ես լինել»։ Այս խօսքերով յարձակեցան Ղոտի վրայ. միայն հրեշտակները մացրին նրան ներս և դուռը փակեցին վրայից։ Այսպէս Ղոտը ազատեցաւ Սոդոմի բնակիչների կատաղութիւնից, որոնք կուրացած չկարողացան նորա տուն մտնելու ճանապարհը գտնել։

Մինչեոյն գիշեր հրեշտակները ասացին Ղոտին. «մենք

ղրկած ենք Աստուծմէ այս քաղաքը քանդելու. Նորա բնակիչներէ անօրէնութիւնը բարձրացաւ մինչև երկինք»։ Երբ սկսաւ առաւօտանալ, հրեշտակները առին Ղ.ովտին, նորա կնոջ և երկու աղջիկներուն և հանեցին քաղաքէն դուրս։ «Այժմ ազատվեցէ՛ք, ասաց հրեշտակը. «մի՛ մընաք այս հովտում, այլ գնացէ՛ք սարը, և յետ մի՛ նայէք»։ «Տէր», ասաց Ղ.ովտ, ես չունիմ զօրութիւն, մինչև սարը գնալու. բայց ահա մօտումս փոքրիկ քաղաք կայ, արդեօք չե՞մ կարող այնտեղ ազատվել։ «Այս բանումն էլ թոյլ կատարվի քո խնդիրդ. գնա՛ շուտ այնտեղ, մինչև որ դու քաղաքը չմտնես, ես ոչինչ չեմ կարող անել»։ Սրևէ ծագելիս, Ղ.ովտ հասաւ քաղաքը, որտեղ այնուհետև Սեղո

անուանվեցաւ։ Այն ժամանակ վերը եկաւ երկնքից կրակ և ծծումբ և ջնջեց Սոդոմ և Գոմոր քաղաքները, բոլոր նորա շրջակայքն, ամէն բնակիչներուն, դաշտերը և խաշները։ Ղ.ովտի կինը, հրեշտակների հրամանից անցնելով, յետ մնաց իր ընտանիքից, յետ նայեցաւ և դարձաւ աղի արձան։

Աբրահամ վեր կացաւ առաւօտը, գնաց նայելու այն կողմը, ուր էին Սոդոմ և Գոմոր քաղաքները և տեսաւ, որ այն տեղից բարձրանում է թանձր ծուխ և բոց։

ԳԼՈՒԽ ԺԴ.

## ԻՍԱՀԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ. ԱԳԱՐԻ ԵՒ ԻՍՄԱՅԷԼԻ ԱՔՍՈՐՈՒՄՆ

Աստուծոյ խոստմանը համեմատ տարուան վերջին Սառան ծնաւ որդի, որին անուանեցին Իսահակ։ Սառան ասում էր. «Աստուած տուեց ինձ ուրախութիւն ծերութեան ժամանակ. ամէնքը, ով կ'լսէ իմ որդուս ծնունդ-

զը՝կ՚ուրախանայ ինձ հետ միասին։ Սրախան մեծանում էր և զօրանում։ Աբրահամ հարբուր տարեկան էր և Սառան ինեսուն, երբ ծնաւ նրանց որդի։

Իսմայէլ Աբրահամի որդին Ագարից, էր մեծ խահանից քանի մի տարով և յաճախ զրկում էր իր եղբօրը։ Սառան նկատեց այս և պահանջեց Աբրահամից, որ նա արտաքսէ Ագար աղախնին իր որդուն, այն պատճառով, որ նրա չէին պատիւում նորա որդուն խահանին։ Աբրահամ խիստ տրամեցաւ այս պահանջման համար։ բայց Աստուած ասաց նրան. «տրամ ինչպէս Սառան կամենում է»։ Աբրահամ, որ նոր միշտ անպայման հպատակում էր Աստուծոյ կամքին, վեր կացաւ առաւօտը վաղ, առաւ մի քանի հացեակ ջրով լցրեց դրաւ Ագարի ուսին և խմայէլին էլ տալով նրան աքսորեց երկուսին էլ։ Ագար թափառելով անապատում կորցրեց ճանապարհը և խմայէլը թուլանում էր ծարաւից։ Ագար թողեց նրան ծառի տակ և ինքը մի վաստակ հեռու նրանից նստեցաւ. «ես չեմ կարող տեսնել որդուս մահը». ասում էր նա լալով։ Խմայէլ ծարաւից նեղացած, գոռում էր և լաց լինում։ Աստուծոյ հրեշտակը յայտնվեցաւ Ագարին և ասաց նրան. «մի՛ լար, Ագա՛ր, Աստուած լսեց քո որդուդ ձայնը, վեր կաց բռնիր նորա ձեռից և տա՛ր քեզ հետ։ Նրանից կ՚ծագէ բազմաթիւ ազգ»։ Այն բոլորին Ագար տեսաւ յուսակ ջրի աղբիւր, մօտեցաւ նրան, լցրեց իր տիկը ջրով և խմցրեց ջուր խմայէլին։ Աստուած օգնեց նրան, նա մեծացաւ, բնակում էր անապատում, դարձաւ ճարտար աղեղնաւոր և նշանաւոր կին առնելով ունեցաւ տասնվիսը որդի և բազմաթիւ ցեղ։ Խմայէլից գուրսեն եկած Աբրաբացիները, որոնք այսպես ճանաչվում երբէմն խմայէլացիք էլ են կոչվում։

ԳԼՈՒԽ ԺԴ.

## ԻՍԱՀԱԿԻ ՄԱՏԱՂ ԲԵՐՎԻԼԸ

Աստուած, փորձելով Աբրահամի հաւատը, մի անգամ ասաց նրան. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ».—«Այստեղ եմ ես Տէր, պատասխանեց Աբրահամ։«Վերա՛ռ քո սիրելի որդուդ Իսահակին», ասաց Աստուած, «գնա՛ նորա հետ միասին այն սարի գլուխ, որ ես քեզ կ'ցոյց տամ և այն տեղ բե՛ր նրան ինձ մատաղ ողջակէզ»։

Առաւօտը վաղ վեր կացաւ Աբրահամ, պատրաստեց փայտ, բարձեց այն իշի վրայ, առաւ հետը երկու ծառաներ և Իսահակին ու ընկաւ ճանապարհ։ Երրորդ օրը նոքա հասան նշանակած տեղը, ուր յետոյ Սողոմոն շինեց ճշմարիտ Աստուծոյ տաճարը։Այն ժամանակ Աբրահամ ասաց իր ծառաներին. «մնացէ՛ք այստեղ և սպասեցէ՛ք ինձ. իսկ ես իմ որդուս կ'երթամ սարի գլուխը աղօթք անելու»։ Նա վեր առաւ մատաղի կրակը ու դանակը և Իսահակ վեր առաւ փայտը։ Սարը բարձրանալիս Իսահակ ասաց իր հօր. «Հա՛յր իմ, մենք ունինք կրակ և փայտ. բայց ո՞ւր է մատաղի ոչխարը».—«Որդեա՛կ, ասաց Աբրահամ, «Տէր Աստուած կ'զգէ մեզ մատաղի ոչխար»։Իսահակի խակի մտքումն էլ չէր անց կենում, որ ինքը նշանակված է զոհվելու։ Երբ սարը վեր եկան, Աբրահամ կանգնեց սեղան և դրաւ նորա վերայ փայտը։ Իսահակ համեստ հպատակութեամբ, թոյլատրեցին առանց ընդդիմութեան, թողեց իրեն կապել և փայտի վերան դնել։ Աբրահամ բարձրացրեց արդէն իր ձեռը դանակը, որպէս կամենում էր կոխել իր որդու սիրտը, և ահա՛ լսեց Աստուծոյ հրեշտակի ձայնը, որպէս ասում էր. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ».—«Ես այստեղ եմ». պատասխանեց Աբրահամ։ «Ձեռդ քեզ քաշիր, ասաց հրեշտակը, «մի՛ պատնէր որդուդ.

Աստուած բաւական է քո հպատակութեամբդ, որովհետև դու չինայեցիր Նորա սիրոյն համար մինչև քո սիրելի որդուդ էլ։ Աստուած կ'վարձատրէ քեզ և քո զաւակդ կ'բազմանայ ինչպէս ծովի աւազը և քո զաւակովդ կ'օրհնվին երկրիս բոլոր ազգերը։ Այս նշանակում էր, որ Աբրահամի ցեղից, պէտք է, ծնէր երկրիս փրկիչը։

Յետոյ նայեցաւ Աբրահամ և տեսաւ մի խոյ, որոնք ծառից կախված էր, առաւ նրան և զոհեց Աստծու իր որդու տեղը և յետոյ խահակի հետ միասին դարձաւ տուն։

Սառա մինչև խահակի ամուսնութիւնը կենդանի չըմնաց։ Նա մեռաւ հարիւր քսան եօթը տարեկան։ Մինչև այս ժամանակ Աբրահամ, չնայելով իր հարստութեան, չունէր սեպհական երկիր, ուր կարողանար թաղել իր կնոջ։ Այն ժամանակները հասարակաց հանգստարաններ չկային, այլ ամէնը թաղում էր իր մեռելներին իր սեպհական կալուածքում։ Աբրահամ գնեց այն երկրի բնակիչներից Եփրոն անուն մի այրով, ուր և թաղեց իր կնոջ։ Ուրեմն Աբրահամի առաջին սեպհականութիւնը այս երկրում էր ագարակ մի այրով, ուր էր գերեզմանը։

ԳԼՈՒԽ ԳԵ։

## ԻՍԱՀԱԿԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Աբրահամ, խորին ծերութեան հասած, իր մահից առաջ կամեցաւ իր որդու խահակի վիճակը կարգաւորել։ Նա չէր ուզում Նորա կին առնել ոչ մի քանանացի աղջիկ, այլ վճռեց ընտրել Նորա համար կին իր հայրենիքից և ազգականներից։ ուստի և կանչեց իր ծառաներից մէկուն, որին նա հաւատում էր և որոնք կատարում էր բոլոր Նորա կա-

լուածները և ասաց նրան. «երդում եմ ուստ ի ինձ մեր Աստուծոյ անունով, որոնք երկինք և երկիր ստեղծեց, որ դու իմ որդուս Իսահակի համար կին չես ընտրիլ քանանացի աղջիկներից, այլ կ'երթաս իմ հայրենիքս, իմ ազգականներիս մօտ և այն տեղից կ'առնես նրան կին։ Տէր Աստուածը, որի պատուիրանները բոլոր կեանքիս մէջ ես պահել եմ, կ'առաջնորդէ քեզ և քո առաջից կ'ղրկէ իր հրեշտակին»։ Ծառան երդումով խոստացաւ Աբրահամի ամէն հրամանները կատարելու, առաւ տասն ուղտ, բարձեց նոցա վերայ իր տիրոջ հարստութիւնները, և գնաց Միջագետք, ուր Աբրահամ թողել էր իր նաքորը։ Երբ այն քաղաքին մօտացաւ, ուր բնակուում էր Նաքորը, նա մնաց դրան մօտ և իր ուղտերը կանգնեցրեց նոյն ջրհորի մօտ, որից ջուր առնելու գալիս էին քաղաքի բոլոր աղջիկները։ Եղիազարը (Աբրահամի ծառայի անունն է) սկսաւ աղօթք անել Աստծուն, որ նա ցոյց տայ իրեն Իսահակի ապագայ կնոջ։ «Թող այն աղջիկը, ասաց Եղիազար իր աղօթքի մէջ, «որին ես կ'ասեմ, ցածացրու սափորդ, որ ես խմեմ և նա կ'ասէ, խմի՛ր. ես կ'խմեցնեմ քո ուղտերիդ էլ, թող այն աղջիկը լինի Իսահակի կին»։ Հազիւ աւարտեց իր աղօթքը, դուրս եկաւ քաղաքից մի աղջիկ սափորով. մօտեցաւ աղբիւրին, լցրեց իր սափորը և կամենում էր արդէն հեռանալ։ Եղիազարը մօտենալով նրան ասաց. «ստուր ի ինձ խմել քո սափորից»։— «Խմի՛ր ինչքան ուզում ես». պատասխանեց աղջիկը բարութեամբ, սափորը նրան տալով։— «Ես կ'խմեցնեմ քո ուղտերիդ էլ». աւելցրեց նա. յետոյ հանելով ջուր լցրեց այն տաշտը, որտեղ դրած էր անասուններուն ջրելու համար և ջրեց ողջ նորա ուղտերուն։ Զարմացած այսպիսի բարեհոգութեան վերայ, լուռ նայում էր օտարականը նորա

վերայ և յիսոյ հանելով ոսկի օղեր և ապարանջաններ ընծայեց նրան և ասաց. «ո՞ւմ աղջիկն ես, ո՞ւր են քո ծնողներդ. չունե՞ք արդեօք ձեր տանը տեղ ինձ և իմ ուղտերիս համար»։—«Ես եմ Ռեբեկա, Բաթուէլի աղջիկը, որնոր Նահորի որդին է Մելքա կնոջից». պատասխանեց աղջիկը։— Մեր տանը կայ տեղ քեզ համար, ոչ օտարական, կայ նրամեծապէս տեղ քո ուղտերիդ համար էլ։ Մենք շատ ունենք յարդ և խոտ»։ Այն ժամանակ երկրպագեց Եղիազար Աստծու առելով. «օրհնեալ է Աբրահամի Տէր Աստուածը. նա երբէք չէ թողուցել նրան և ինձ ուղիղ առաջնորդեց դէպի նորա եղբօր տունը»։

Ռեբեկան շտապով գնաց տուն։ Նա ունէր մի եղբայր Լաբան անուն։ Սա, տեսնելով թանկագին ընծաները, որոնք իր քոյրը ստացել էր, շտապով գնաց օտարականի մօտ և ասաց։ «Եկ մեր տունը, Աստուծմէ օրհնեալդ. ես պատրաստել եմ քեզ համար տեղ. կայ տեղ հաղստանալու քո ուղտերիդ համար էլ»։ Նա տարաւ իր հետ Եղիազարին, մեր տուաւ ուղտերի բեռները և տուեց նրանց ուտելու խոտ և յարդ։

Ինչպէս Եղիազար ներս մտաւ թէ չէ, բերին նրան ընթրիք. բայց նա ասաց. «Ես ոչինչ կերակուր չեմ գնիլ բերանս, մինչև չկատարեմ իմ ուխտս կամքը»։ Այժմ պատմեց նա իրեն եղած յանձնարարութիւնը և խնդրեմ էր վճռական պատասխան։ Բաթուէլ և Լաբան ասացին. «Աստուած ինքը կարդացրեց այս բանը. ահա Ռեբեկան քո առաջը է, առ նրան և գնա, թող լինի նա քո ուխտիդ արդեւ կինը, ինչպէս Աստուած հրամայեց»։ Այս լսելով Եղիազար երկրպագութիւն տուեց Աստուծու և շնորհակալ եղաւ նրանից։ Բերաւ ոսկի և արծաթի իրա-

եր, գեղեցիկ շորեր և ողջը տուեց Ռեբեկային։ Նոյնպէս ընծաներ տուեց նորա ընտանիքին էլ։ Արանից յետոյ ամէնքը նստան ընթրիքի։ Միւս օր առաւօտ վաղ վեր կենալից յետոյ, Եղիազար ասաց. «այժմ թող ինձ գնամ տիրոջս մօտ»։ Աղջկանը ծնողները ասացին. «թող Ռեբեկան մնայ մեզ մօտ էլի մի՛ տասն օր գոնէ»։ Բայց նա պատասխանեց. «մի՛ բռնէք ինձ, Աստուած օրհնեց իմ ճանապարհս և ես պէտք է գնամ շուտով իմ տիրոջս ուրախացնեմ»։ Մայրը և եղբայրը ասացին. «մենք կ՚կանչենք Ռեբեկային, թող նա ինքը վճռէ»։ Երբ Ռեբեկան ներս մտաւ, հարցրին նրան. «կերթա՞ս դու այս մարդու հետ»։—«Կերթամ». պատասխանեց Ռեբեկան։ Այն ժամանակ ազգականները օրհնեցին նրան, հրաժարական ողջոյն տուին և Ռեբեկան, առնելով իր աղախիններուն գնաց Եղիազարին հետ։ Խահակ ամուսնանալով նորա հետ, խիստ սիրում էր նրան. իր առաքինութիւններով Ռեբեկան եղաւ նրան ուրախութիւն և մխիթարում էր նրան մօր մահուան համար, որի վերայ լալից նա չէր դադարում։ Աբրահամ խորին ծերութեան մէջ մեռաւ, թողնելով բոլոր իր կալուածքը Խահակին։ Նորա որդիք՝ Խահակ և Իսմայէլ թաղեցին նրան այն այրի մէջ, ուր շատ ժամանակ առաջ թաղած էր Սառա։

## ԳԼՈՒԽ ԺԶ.

## ԵՍԱԻ ԵՒ ՅԱԿՈՎԲ

Աստուծոյ ընտրած ազգինահապետները, ուղղակի Աստուծմէ ստանում էին հրամաններ. իսկ իրենք կառավարում էին և պահում իրենց ընտանիքը, ընդոծիններուն և այն ազգականներուն, որոնք չունէին բաւական հարստութիւն, որ բաժանվէին նրանցից։ Ամէն նահապետ էր

միևնոյն ժամանակ քահանայ էլ իր տան մէջ և մինչևորդ Աստուծոյ և իրենների մէջ։ Դահապետների ընտանիքների մէջ, աւագ որդին ունէր առաւել արտօնութիւններ քան թէ նորա եղբայրները. որովհետև հօր մահից յետոյ ժառանգում էր քահանայութեան և տիրոջ իրաւունքը։ Բացի սրանից աւագ կամ անդրանիկ որդին ունէր ամէնից մեծ իրաւունք՝ այն է յոյս ունենալ, որ իսկ իր ցեղից կ'ծնվի խոստացած ապագայ Փրկիչը աշխարհիս։ Աբրահամ էր տէր և քահանայ իր տան մէջ. նրանից յետո միևնոյն իրաւունքները ժառանգեց նորա որդին Իսահակը։

Իսահակից և Ռեբեկայից ծնան երկու եղբայրներ՝ երկուորեակներ՝ Եսաւ և Յակոբ։ Եսաւ ծնաւ առաջ, ուրեմն համարվում էր աւագ։ Նորա մարմինը ծածկած էր մազերով. ինչպէս բրդով։ Նա էր գօրեղ, քաջ, միայն խիստ վայրագ և թեթևամիտ, նորա սիրելի պարապմունքը էր վայրի կենդանիների որսը. նորա աւարը Իսահակի սիրելի կերակուրն էր. ուստի և Եսաւ ին առանձնապէս սիրում էր հայրը։ Իսկ Յակոբը էր հեզ, բարեպաշտ երիտասարդ, օգնում էր իր մօր տան գործերում և սիրում էր հովուի հանդարտ կեանքը. այս շատ դուր էր գալիս մօրը։ Յակոբը Ռեբեկայի սիրելին էր։

Մի անգամ Յակոբը եփեց իրեն համար ոսպէ թան և ուտում էր այն։ Նոյն ժամանակ որսից յետո դարձաւ Եսաւ, դաշտաց և քաղցած։ «Տուր ինձ քո կերակուրից», ասաց նա, «ես խիստ դաշտաց եմ և շատ քաղցած։—«Տուր ինձ քո անդրանկութիւնդ, պատասխանեց Յակոբը, ես էլ կրտամ քեզ իմ կերակուրս»։—«Ինչ հարկաւոր է ինձ անդրանկութիւնս. ահա՛ ես մեռնում եմ սովից». պատասխանեց թեթևամիտ Եսաւ և երդումով խոստացաւ ապալ

ի՛ր եղբօր իր անդրանկութեան իրաւունքը։ Սրանից յետոյ Յակոբը էլ տուեց նրան իր կերակուրը։ Եսաւ կերաւ, խմեց և գնաց, ամենևին չհոգալով իրեն եղբօրը վաճառած իրաւունքների վերայ։ Եսաւ երբ քաւաւուն տարեկան դառաւ ամուսնացաւ մի այլազգի աղջկան հետ, որնոր ամենևին չէր պատվում Ռեբեկային։

ԳԼՈՒԽ ԺԷ.

## ԻՍԱՀԱԿԸ ՕՐՀՆՈՒՄԷ ԻՐ ՈՐԴՈՑԸ

Իսահակը, երբ շատ ծերացաւ, կուրացաւ և զգալով, որ մահը արդէն մօտ է, կանչեց իր որդուն Եսաւին և ասաց նրան. «որդեակ, ես արդէն ծեր եմ և իմ մահուանը օրը չգիտեմ։ Գնա՛ դաշտ, որս արա՛ և պատրաստի՛ր ինձ նրանից այն կերակուր, որնոր ես սիրում եմ։ Ես մահից առաջ կամենում եմ քեզ տալ օրհնութիւնս. ինչպէս անդրանիկ որդուս»։ Եսաւ այն րոպէին գնաց։ Բայց Ռեբեկան, որնոր լսեց Իսահակի այս խօսքերը և կամենում էր անդրանկութիւնը առաւել արժանաւոր Յակոբին տալ, հրամայեց սրան իրեն խաշնից երկու ուլեր բերել, պատրաստեց նրանցից Իսահակի ճաշակին յարմար կերակուր. յետոյ Յակոբի վիզը և ձեռները փաթաթեց ուլերի մորթով, հագցրեց նրան Եսաւի լաւ շորերը և տալով նրան պատրաստած կերակուրը, ղրկեց իր հօր մօտ, որ առանց անդրանկութեան օրհնութիւնը։ Լսելով, որ մէկը վրան ներս մտաւ, հարցրեց կոյր ծերունին. «ո՞վ եկաւ։ «Եսաւ, քո անդրանիկ որդիդ»։ պատասխանեց Յակոբը։ «Ես կատարեցի հրամանդ, ահա՛ կեր և օրհնիր ինձ»։

«Մօտեցի՛ր ինձ առաւել, ասաց Իսահակ։ Ես կամենում

եմ քեզ շոշափել, որ ճշմարիտը իմանամ, որ դու արդեօք իսկ իմ որդիս Եսաւն ես»։ Յակովբը մօտեցաւ։ Իսահակը նրան շոշափելով ասաց. «Ձայնդ նմանէ Յակովբի ձայնին. իսկ վիզդ և ձեռներդ Եսաւին են»։ Այսպէս ծերունին խաբվեցաւ, կերաւ թերած կերակուրը և ասաց. «մօտեցիր ինձ որդեակ և համբուրիր ինձ»։ Ինքն էլ նրան տուեց իր օրհնութիւնը ասելով. «Եղիր տէր եղբօրդ վերայ, քո մօրդ որդիքը թող հպատակեն քեզ, անիծած լինի, ովքր քեզ կ'անիծէ և օրհնած, ով քեզ կ'օրհնէ»։

Հազիւ Յակովբը դուրս եկաւ թէ չէ, Եսաւը վրան մտաւ։ «Ով եկաւ. հարցրեց Իսահակ.—«ես Եսաւ, քո անդրանիկդ». պատասխանեց Եսաւ։ «Որդեակ իմ», ասաց Իսահակ. «քո եղբայրդ Յակովբ յափշտակեց օրհնութիւնը, որնոր քեզ համար էր նշանակած»։ Եսաւ երկիւղից և բարկութիւնից սկսաւ լաց լինել և ասաց. «Հայր, մի՞թէ ինձ համար էլ ուրիշ օրհնութիւն չունես»։ Նորա արտասուքներից շարժած, ծերունին օրհնեց նրան էլ ասելով. «Թող բնակեցնէ Տէր Աստուած քեզ էլ բարեբեր երկրի մէջ, միայն դու պէտք կենաս սրովդ և լինես եղբօրդ իշխանութեան տակ»։ Այս ամէնը կարգադրած էր Աստուծոյ նախախնամութիւնից, որնոր յաճախ իր շնորհքը խլում է ապերախտներից ու անարժաններից և տալիս է այն երկիւղած մարդոց։

Այս ժամանակից Եսաւ ատեց իր եղբօր և ասում էր մտքում, «երբ կ'մեռնի մեր հայր Իսահակը, ես եղբօրս կսպանեմ»։ Ռեբեկան, այս իմանալով, խորհուրդ տուեց Յակովբին հայրենի տնից փախչել Մեսոպոտամիա իր եղբօրը, Լաբանի մօտ։ «Թող նա այն տեղ ընտրէ իրեն կին, ասաց Ռեբեկա Իսահակին, ես չեմ ուզում որ նա ամուսնա-

նայ քանանացի աղջկայ հետ. Եսաւի կինը քանանացի է, իմ բոլոր կեանքս մաշեց նա. եթէ Յակոբը էլ քանանացի կին առնէ, էլ ինչո՞ւ համար է իմ կեանքս աշխարհիս վերայ:

## ԳԼՈՒԽ ԺԸ.

## ՅԱԿՈԲԻ ԵՐԱԶԸ

Իսահակ կանչեց Յակոբին իր մօտ, օրհնեց նրան ճանապարհ ընկնելիս և յետագայ հրամանը տուեց նրան. «մի՛ առներ քեզ կին քանանացիներից, այլ գնա՛ Մեսոպոտամիա, քո մօրդ հօր՝ Բաթուէլի տունը և ամուսնացիր մօր եղբօրդ Լաբանի աղջիկներից մէկի հետ: Իսկ Աստուած կ'օրհնէ քեզ, կ'մեծացնէ և կ'բազմացնէ: Իմ հօրս Աբրահամի օրհնութիւնը կ'տայ նա քեզ և քո զաւակներդ»: Յակոբը, ծնողաց օրհնութիւնը առնելից յետոյ, ճանապարհ ընկաւ դէպի Մեսոպոտամիա իր մօրեղբօր Լաբանի մօտ:

Եսաւ լսելով, որ Իսահակ օրհնեց Յակոբին և ղրկեց նրան Մեսոպոտամիա, որ Լաբանի աղջիկներից մէկի հետ ամուսնանայ, որովհետև քանանացի աղջիկներուն չէր հաւանում. ինքն էլ գնաց իր հօրեղբօր Իսմայէլի մօտ և կին առաւ իրեն նորա Մայելէթ աղջկան:

Երբ Յակոբը, իր ծնողների հրամանով, գնում էր Մեսոպոտամիա, մի անապատ տեղում գիշերը նրան վրայ հասաւ: Նա պառկեցաւ գետնի վերայ, գլխի տակ քար դրաւ և քնեցաւ հանդարտ: Երազում տեսաւ նա երկրից վերայ ամրողջ դրած, որի գլուխը հասնում էր մինչև երկինք: Հրեշտակները իջնում էին և բարձրանում նորա վերայ. իսկ գլխին կանգնած էր ինքը Աստուած և ա-

ասում էր. «Ես եմ քո Տէր Աստուածդ, Աբրահամի Աստուածը, Իսահակի քո հօրդ Տէրը, մի՛ վախիր, Ես կ՚տամ քեզ և քո զաւակներիդ երկիրը, որի վերայ դու այժմ քնում ես. քո ազգդ կ՚բազմանայ ինչպէս ծովի աւազը և կ՚տարածվի դէպ արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ, և քեզմով ու քո զաւակներովդ կ՚ինչնի օրհնութիւն և բոլոր մարդկութեան վերայ: Ես կ՚լինիմ քեզ հետ, ամէն ճանապարհներում կ՚պահեմ քեզ, կ՚դարձնեմ քեզ կըկին այն երկիրը և չեմ թողնիլ քեզ, մինչև չկատարվի ամէնը, ինչոր Ես քեզ ասացի»: Յակովը զարթեցաւ և ասաց. «Աստուած է այս տեղումն և ես չէի իմանում. այս տեղ է Աստուծոյ տունը և երկնքի դուռն» և առաւ այն քարը, որի վերայ քնած էր, կանգնեց նրան արձանի պէս, ածեց նորա վերայ իւղ և ասաց. «երբ Աստուած ինձ յետ կ՚դարձնէ, կ՚շինեմ այս տեղ սեղան, այս տեղ կ՚լինի Աստուծոյ տունը և ես իմ ստացուածներիս տասանորդը կըտամ նրան»: Սանդուղը էր օրինակը Աստուածամօր և Յիսուսի Քրիստոսի երկրիս վերայ ինչնելուն: Տեղը, ուր Յակովը տեսաւ մարգարէական տեսիլը, այն ժամանակից յետ կոչվեցաւ Բեթէլ, այսինքն, Տուն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

## ՅԱԿՈՎԲԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Յակովը շարունակեց իր ճանապարհը դէպ արևելք իր մօրեղբօր Լաբանի մօտ: Երկար ժամանակ գնալից յետո հասաւ միջհորի մօտ, որնոր դաշտի մէջ էր և որի մօտ երեք խաշներ հանգստանում էին. և ջրհորը ծածկած էր մեծ քարով: Յակովը հովիւներին ասաց «եղբայրներ, ո՞րտեղից էք»—«մենք Խառան քաղաքից ենք»—պատասխանեցին

հովիւները։ «Ճանաչո՞ւմ է՛ք դուք Բաթ ուէլի որդուն Լաբանին»։ Հարցրեց Յակոբը։ «Ճանաչում ենք»։ պատասխանեցին հովիւները։ «և ահա՛ Հռաքէլ նորա աղջիկն էլ գալիս է ջրհորի մօտ նորա ոչխարներով»։ «դեռ վաղ է խաշները ժողովելու»։ ասաց Յակոբը։ «ինչո՞ւ չէ՛ք ջրում խաշներդ և չէ՛ք քշում նրանց արածելու մինչև իրիկուն»։ —«Մենք ապասում ենք միւս հովիւներուն», պատասխանեցին նրան, «որ գլորենք քարը, ջրենք միասին մեր ոչխարներուն և յետոյ կրկին ծածկենք ջրհորը»։ Այս միջոցին մօտեցաւ Հռաքէլն էլ իր հօր խաշներով։ Սրան տեսնելով, Յակոբը շտապեց քարը գլորելու ջրհորի բերանից, ջրեց Լաբանի ոչխարներուն և յետոյ բարևեց Հռաքէլին, լաց եղաւ ուրախութենից և ասաց, որ ինքը նորա հօրաքրոջ Ռեբեկայի որդին է։ Այս իմանալով Հռաքէլ վազեց տուն, որ բոլորը պատմէ իր հօր։ Երբ Լաբան իր քեռորդու գալուստը լսեց, դնաց նորա առաջ, գրկեց նրան, համբուրեց և տարաւ իր տուն։

«Դու իմ ազգականս ես», ասաց Լաբան Յակոբին, «բայց ես չեմ ուզում, որ դու ինձ ձրի ծառայես։ ասա՛, ինչ վարձ ուզես, կ'ատանաս քո ծառայութեանդ համար»։ Լաբան ունէր երկու աղջիկ, երեցը անուանվում էր Լիա, որի աչքերը ցաւում էին, և կրտսերը, Հռաքէլ, որն որ գեղեցիկ էր շատ դէմքով։ «Ես կ'ծառայեմ քեզ եօթն տարի կրտսեր աղջկանդ Հռաքէլի համար», պատասխանեց Յակոբը, «թէ կ'տաս դու նրան ինձ կին»։ Լաբանը համաձայնեցաւ։ Յակոբը եօթն տարի արածում էր նորա խաշները։ Նշանակած ժամանակի անցնելից յետոյ Լաբանը խնջոյք պատրաստեց և հարսանիքի կանչեց շատ հիւրեր։ Այն ժամանակվան սովորութեամբ հարսը պէտք

և իր երեսը ծածկէր պատկի ժամանակ քօղով։ Երբ Յակովը միւս առաւօտ տեսաւ իր կնոջ առանց քօղի, իմացաւ, որ նրան Հռաքէլի տեղ Լիային են տուել։ Յակովը գնաց Լաբանի մօտ և ասաց. «դու խաբեցիր ինձ. ես եօթն տարի քեզ ծառայեցի Հռաքէլի համար և դու ինձ Լիային տուիր». — Մենք սովորութիւն չունինք, կրտսեր քրոջը մեծից առաջ կին տալու», պատասխանեց Լաբան. «Եթէ կուզես մի շաբթից կ'տամ քեզ Հռաքէլին էլ, միայն եթէ կ'համաձայնես էլի եօթն տարի ինձ ծառայել»։

Յակովը ամուսնացաւ Հռաքէլի հետ և ծառայեց Լաբանին էլի եօթն տարի։ Բայց իր երկու կնոջից աւելի սիրում էր նա գեղեցիկ Հռաքէլին։ Այս գերազանցութիւնը շատ տրտմեցրեց Լիային, բայց Աստուած նրան մխիթարելու համար այս տրտմութիւնից, տուեց նրան շատ որդիք. իսկ Հռաքէլը երկար ժամանակ ամուլ էր։ Վերջապէս ամուլութիւնից շատ տարի յետոյ, երբ արդէն Յակովը տասն որդի ունէր, Հռաքէլն էլ ծնաւ որդի, որին անուանեցին Յովսէփ։

ԳԼՈՒԽ Ի.

## ՅԱԿՈՎԲԻ ԼԱԲԱՆԻ ՄՕՏ ԿԵՆԱԼԸ

Տասնչորս տարիից յետո Յակովը ասաց Լաբանին. «Ես ծառայեցի քեզ հաւատարմութեամբ. երբ ես քեզ մօտ եկայ, ստացուածդ մեծ չէր այնքան, այժմ դու հարուստ ես։ Եւ ես պէտք է արդէն իմ որդոցս համար հոգ քաշեմ. թող ինձ, որ իմ հայրենիքս երթամ»։ Լաբան դիտենալով, որ ճշմարտիւ Յակովը խիստ մեծ այրից իրեն ստացուածքը, քաղցրութեամբ պատասխանեց նրան,

«խնդրում եմ քեզ, ինձ իմ մօտ էլ մի քանի ժամանակ. ես տեսնում եմ, որ Աստուած օրհնեց ինձ այն ժամակից, երբ դու իմ տանս բնակում ես. նշանակիր ինքդ քեզ քո աշխատանքիդ համար վարձ»: Յակոբը նշանակեց իրեն վարձ այն խայտախարիւ (գոյնզգոյն) գառները և ալխտակ ուլերը, որոնք կ'ծնեն Լաբանի խաշնի մէջ: Լաբանը համաձայնեցաւ:

Սրանից յետոյ Յակոբը մնաց էլի ծառայելու Լաբանին և շատ անբաւականանում էր նրանց համբերից: Եթէ մի անասուն կորչում էր խաշնից կամ պատռւում էր վայրենի գազաններից, Յակոբը ստիպւած էր Լաբանին նորա համար վարձատրելու: Բացի սրանից Լաբանը քանի անգամ փոխեց պայմանը, որոնք գրել էր Յակոբի հետ: Բայց Աստուած էր Յակոբի պաշտպանը և օգնականը: Երբ Լաբանը նշանակում էր Յակոբի համար խայտախարիւ ծնած գառները ու ուլերը, ողջ գառները խայտ էին ծնում. իսկ երբ Լաբան մեռ տարին պայմանը փոխում էր և Յակոբին մնան էր նշանակում ալխտակ գառները, ծնում էին ալխտակ: Այսպէս Յակոբը կամաց կամաց ունեցաւ բազմաթիւ խաշներ ոչխարների և այծերի, որով կարողացաւ շատ ծառաների էլ տէր դառնալ և ուրիշ անասուններ էլ շատ գնել:

ԳԼՈՒԽ ԻԱ.

## ՅԱԿՈՎԲԻ ԴԱՐՁԸ

Լաբան երբ տեսաւ, որ Յակոբը խիստ հարստացաւ, սկսաւ նրան նախանձել և չէր կարողանում հանդարտ աչքով նայել նորա վերայ: Յակոբը նկատեց այս բանը և խիստ զարմացաւ այսպիսի վարմունքի համար: Այն ժամանակ

Աստուած ասաց նրան. «այժմ դուրս եկ այս երկրից, ես քեզ կ'դարձնեմ հայրենիքդ, ես քեզ հետ կ'լինեմ»: Յակոբը պատրաստեցաւ ճանապարհ ընկնելու առանց Լաբանի դիտաւորեան, նատացրեց իր կնոջներուն և որդոցը ուղտերի վերայ և ճանապարհ ընկաւ դէպ իր հայրենիք: Լաբանը եռանդերից ընկաւ և բռնութեամբ կամենում էր նրանց կանդնացնել. միայն Աստուած արգելեց նրան, որ ոչ մի կերպի նեղութիւն չտայ Յակոբին: Ուստի և Լաբանը, երբ հասաւ նրանց գաղաադ լերան մօտ, հրաժարական ողջոյն տուեց Յակոբին, իր աղջիկներին և թոռներին ու խաղաղութեամբ բաց թողաւ նրանց:

Յակոբը, երբ Յորդանան գետին մօտ հասաւ, վախեցաւ իր եղբօր Եսաւին միտը բերելով: Նա խնդաց տուեց նրան իր գալուստը: Զրկված մարդիկը յետ դարձան և ասացին. «մենք տեսանք եղբօրդ Եսաւին, նա գալիս է քո առաջդ չորս հարիւր հոգով»: Յակոբը զարհուրեցաւ, կարծելով թէ նա գալիս է յափշտակելու իր բոլոր ստացուածքը: Նա երկու մասը բաժանեց իր մարդոց և խաշները, ասելով. «եթէ Եսաւը կ'ջնջէ ստացուածքիս միմասը, միւսը էլի կ'մնայ ինձ»: Յետոյ, ամէն խաշնից մի քանի անասուն զատելով, և ամէն մէկը այս փոքրիկ խաշներից յանձնելով իր հաւատարիմ մարդոց, հրամայեց նրանց Եսաւի առաջը դուրս գնալ: Եւ եթէ Եսաւը նրանցը հանդիպելով, կ'հարցնէր թէ ո՞ւմ է պատկանում այս խաշները, ծառաները, պէտք է ասէին. «քո ծառայիդ Յակոբինն, որոնք զրկում է այս քեզ ընծայ և ինքը գալիս է եռևից»:

Այս ամէնը այսպէս կարգադրելից յետոյ, Յակոբը սկսաւ աղօթել ասելով. «իմ հայրերիս Աբրահամի և Ի-

ահակի Տէր Աստուածը, որ հրամայեցիր ինձ դառնալ իմ հայրենիքս ազգականներիս մօտ և խոստացար ինձ քո ողորմութիւնդ, արժանի չեմ ամէն բարերարութեանդ, որոնք ինձ արիր դու։ Երբ ես Յորդանան անցայ, բացի գաւազանից ոչինչ չունէի. այժմ ահա եմ երկու մեծ խաշնարի։ Ազատիր ինձ եղբօրս ձեռքից, որովհետև ես վախենում եմ, որ չգինի, թէ նա գայ և սպանէ ինձ և մօրը իր որդիներով»։ Երբ գիշեր եղաւ, Յակոբը մնաց մենակ։ Նորա մօտ եկաւ մի անծանօթ մարդ և մարտնչեց (կռուեցաւ) նորա հետ բոլոր գիշերը և այն միջոցին փնտռեցաւ նորա ոտը, ինչից էլ Յակոբը կաղում էր բոլոր իր կեանքի մէջ։ Առաւօտեան մօտ, երբ անծանօթը կամենում էր թողնել նրան և գնալ, Յակոբը բռնեց նրան և ասաց. «ես քեզ չեմ թողնիլ, մինչև ինձ չ'օրհնես»։ Խորհրդաւոր մարդը հարցրեց. «անունդ ի՞նչ է»։—«Յակոբը». պատասխանեց նա։ «Այսուհետև քեզ», ասաց անծանօթը, «Իսրայէլ կ'անուանեն, որովհետև դու մարտնչեցիր Աստուծոյ հետ, և զօրաւոր կըլինիս դու պատերազմում մարդոց դէմ էլ»։—«Քո անունը ի՞նչ է». հարցրեց Յակոբը.—«մի՛ հարցներ իմ անունս, նա հրաշալի է». պատասխանեց Աստուած. յետոյ օրհնեց նրան և անհետացաւ։ Յակոբը այս անց.քի յիշատակի համար, անուանեց այն տեղը վանուէլ (տեսիլ Աստուծոյ), որովհետև դէմ յանդիման տեսաւ Աստծուն և չմեռաւ։ Արևը ծագեց նա իր եղբօր՝ Եսաւին, որ գալիս էր նորա առաջը։

ԳԼՈՒԽ ԻԲ.

## ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀԱՇՏՎԻԼԸ

Եսաւ բնակում էր Սէիր երկրում. նա եղաւ այր զօրեղ,

հարուստ և շատ ժամանակից 'ի վեր մօտացել էր իր եղբօր Յակոբի վերայ ունեցած ոխը։ Երբ Յակոբի ղրկած մարդիկ ծանուցին նրան իր եղբօր գալուստը, Եսաւ ուրախութեամբ դուրս եկաւ նորա առաջ և նրան առաւել պատիւ ցոյց տալ կամենալով, առաւ հետը չորս հարիւր հոգի էլ։ Յակոբը նրան տեսնելով, առաջ կարդից իր աղախիններուն իրենց որդիներովը. յետոյ Լիայն իր երեխաներով ու վերջապէս Հռաքէլին և նորա որդուն՝ Յովսէփին։ Իսկ ինքը գնաց իր եղբօր առաջ և երկրպագեց նրան մինչև գետին եօթն անգամ։ Եսաւը ընկաւ նորա վիզը, եղբայրաբար գրկեց նրան և երկուսն էլ սկսան լալ ուրախութիւնից։ Նայելով կանանց և երեխաների վերայ. որոնք իր առջևը կանգնած էին, հարցրեց Եսաւ. «ո՞վ են սոքա։ Սոքա իմ զաւակներս են, որով ինձ օրհնեց Աստուած և իմ կանայքս են». պատասխանեց Յակոբը։ Այն ժամանակ մօտեցան աղախինները իրենց երեխաներով և երկրպագեցին Եսաւին. նրանց հետևեց Լիան իր որդիքներով և նմանապէս երկրպագեց և վերջապէս եկաւ Հռաքէլ Յովսէփին հետ և երկրպագութիւն տուեց Եսաւին։ «Այն ո՞ւմ խաշներն էին, որոնք ինձ հանդիպեցան ճանապարհին». հարցրեց Եսաւ։ «Դա զրկեցի նրանց քեզ ընծայ, որ արժանանամ քո ողորմութիւնդ». պատասխանեց Յակոբը։ «Եղբա՛յր, նոքա ինձ հարկաւոր չեն», ասաց Եսաւ, քեզ մա՛ նրանց. ես առանց նոցա էլ բաւական եմ իմ ունեցածովս։ «Ա՛ռ նրանց ասաց Յակոբը և եղի՛ր ինձ ողորմած, ընդունիր այն ընծան իբրև Աստուծոյ օրհնութիւնը, որով նա ինձ այսպէս առատաձեռնութեամբ վարձատրեց»։ Յակոբը չդադարեց խնդրելից, մինչև որ Եսաւ համաձայնեցաւ ընդունել այն ընծան։

Արանից յետոյ, նոքա հեռացան միմեանցից և գնացին ուրիշ ուրիշ ճանապարհներով։ Ճանապարհին Հռաքէլը ծնաւ Յակոբին մի որդի էլ Բենիամին անունով և ինքը վախճանեցաւ։

Վերջապէս Յակոբը, քսանամեայ առանձնութիւնից յետոյ, դարձաւ կրկին իր հօր՝ Իսահակի մօտ, որտեղ այս ուրախալի տեսութիւնից յետոյ էլ երկար չապրեցաւ։ Նա մեռաւ հարիւր ութսուն տարեկան և իր որդիքը՝ Եսաւ և Յակոբը թաղեցին նրան։

ԳԼՈՒԽ ԻԳ.

## ՅԱԿՈՎԲԻ ՈՐԴԻՔԸ

Յակոբը ունէր տասներկու որդիք. ահա՛ նրանց անունները աւագութեան կարգով. Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Զաբուղոն, Իսաքար, Դան, Գադ, Ասեր, Նեփթաղիմ, Յոսէփ և Բենիամին։ Երկու վերջիններ էին նորա սիրելի կնոջ՝ Հռաքէլի որդիքը։ Մեծ որդիքը պարապում էին հովուութեամբ և իրենց վարքով միշտ արժանի չէին լինում ծնողական սիրոյն։ Բենիամինը՝ ամենից փոքրը դեռ երեխայ էր. իսկ Յոսէփ զեղեցիկ, հեզ և բարեբաշտ երիտասարդը, էր խիստ սիրելի հօրը։ Յակոբը կարեց նրան գեղեցիկ ծաղկեայ շորեր։ Մեծ եղբայրները նախանձում էին Յոսէփին և ատում էին նրան նորա համար, որ հայրը նրան նոցանից գերադանց էր դատում, և նոցա ատելութիւնը աւելացաւ մանաւանդ այն ժամանակից, երբ Յոսէփ պատմեց նրանց երկու զարմանալի երազներ, որոնք տեսել էր նա։ Մի անգամ ասաց նա եղբայրներին. «Լսեցէ՛ք, ինչպիսի զարմանալի երազ տեսայ ես։ Ես երազումս տեսայ, որ մենք դաշտում ցորէն էինք հնձում և որայ կապում. իմ

որայս կանգնած էր ուզիղ. իսկ ձեր որանները պատեցին իմ որայս և երկրպագութիւն տուին նրան»։ — «Մի՞թէ դու կ՚զառնաս մեր թագաւորը և մենք քո հպատակները». ասացին նրան եղբայրները բարկութեամբ։

Դուռ արանից յետ Յովսէփի տեսաւ էլի մի երազ, որոր նմանատէս պատմեց եղբայրներին։ «Ես տեսայ երազում», ասաց նա. «որ արեգակը, լուսինը և տասնըմէկ աստղեր երկրպագում էին ինձ»։

Յակոբը այս լսելիս, սաստեց նրան ասելով. «այդ ի՞նչ երազ է. մի՞թէ ես, իմ կինս և եղբայրներդ կ՚գանք քեզ երկրպագութիւն տալու»։ Եղբայրները խիստ չարացան Յովսէփին վերայ այսպիսի երազների համար, բայց Յակոբը, որոր ինքը սեանում էր տեսիլներ, որոնք Աստուած նրան ղրկում էր. չմոռացաւ այն երազները և թաքուն մտածում էր Յովսէփի խօսքերին վերայ. «երևի» ասում էր նա ինքը իրեն, «Աստուած նշանակում է իմ Յովսէփին մեծ բանի համար»։ Եւ ճշմարիտ, որ Յովսէփ, իր հօրը սիրելին, իր առաքինութեանց պատճառով արժանացաւ Աստուծոյ առանձին շնորհքին։

ԳԼՈՒԽ ԻԴ.

## ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ԾԱԽՈՒՄԵՆ ՅՈՎՍԷՓԻՆ

Յակոբի որդիք արածում էին իրենց հօր խաշները։ Մի անգամ նոքա խաշները շատ հեռու քշեցին հօր անից և որովհետև հայրը երկար ժամանակ համբաւ չունէր նոցա վերայ, ասաց Յովսէփին. «գնա՛, տես, առողջ են արդեօք եղբայրներդ և մեր խաշները և յետ դառնալով խօսց տուր ինձ, ինչպէս այն տեղ լինում է»։ Յովսէփ հագաւ իր գեղեցիկ շորերը և գնաց եղբայրների մօտ։ Եղբայրները, երբ

դեռ հեռուից տեսան նրան, ասացին մէկ մէկու, «ահա՛ գալիս է մեր երազասեսը, եկէ՛ք սպանենք նրան և ասենք մեր հօրը, թէ վայրենի գազանները պատառել են նրան։ Տեսնենք ինչպէս կ'կատարվին նորա երազները»։ Ռուբէն, ամէնից մեծ եղբայրը, զարհուրեցաւ, լսելով նոցա այս միտքը և ամէն կերպով աշխատելով Յովսէփին ազատել նոցից. «մի՛ սպանէք նրան, մի՛ թափէք անմեղ արիւն, մի պղծէք ձեռներդ ձեր եղբօր սպանելով. լաւ է, որ գցէք նը-բան այս անջուր փոսի մէջ»։ Նա այս առաջարկեց նորա համար, որ կամենում էր գիշերով գալ, հանել նրան փոսից կամ անջուր ջրհորից և տանել հօր մօտ։ Երբ Յովսէփը մօտեցաւ եղբայրներին, ոչ հանեցին նորա շորերը և դը-ցեցին նրան փոսի մէջ։ Սորանից յետոյ երբեւ ոչինչ չար բան չէին արած, հանդիստ նստան ուտելու։ Բայց Ռուբէն չկա-րողացաւ ուտել նոցա հետ, նա հեռացաւ և մտածում էր, թէ ինչպէս ազատէ Յովսէփին։

Երբ Ռուբէն հեռացել էր, եղբայրները տեսան խամայե-լացի վաճառականներուն, որոնք այնտեղից անց էին կե-նում ուղտերով։ Այս խամայելացիները էին խամայէլի յա-ջորդները. նոքա տանում էին զանազան վաճառներ Եգի-պտոս։ Յուդան ասաց եղբայրներին. «ինչու համար սպա-նենք Յովսէփին. նա մեր եղբայրն է և ինչ օգուտ մեզ, թէ նրան սպանենք. լաւ է, որ ծախենք նրան այս վաճա-ռականներին»։ Այսպէս Յովսէփին էլի հանեցին փոսից և հնայելով նորա խնդրելուն, լացին և արտասուքին ծախե-ցին խամայէլացիներին քսան դահեկանով։

Մի քանի ժամանակից եկաւ Ռուբէնը, որ հանէ Յով-սէփին փոսից։ Նա զարհուրեցաւ, երբ չգտաւ նրան այն անց-ը և ինքը շատ նեղացած, վազեց եղբայրներին մօտ. «էլ ըշ-

ուստ երեխային ինչ արիք», հարցրեց նա, «ես չգտայ նը-
բան փոսում, ինչ կ'լինի ինձ այժմ»։—«Մենք ծախեցինք
Ներան» . պատասխանեցին եղբայրները։ Յեսոյ իրենց յան-
ցանքը հօրից ծածկելու համար, մորթեցին մի այծ, թաթ-
ջեցին նորա արիւնով Յովսէփի շորերը և ղրկեցին այն հօ-
րը, հրամայելով ասել. «Ահա՛ արիւնոտ շորերը, որոնք գտ-
ատանք դաշտի մէջ, տես արդեօք սա Յովսէփինը չէ»։ Յակով-
բը խակոյն ճանաչեց իր սիրելի որդուն շորը և յուսահա-
տած աղաղակեց։ «Այս շորը Յովսէփին է, Ներան պատառել
են վայրենի գազանները»։ Երկար ժամանակ ողբաց նա իր
սիրելի որդուն։ Բոլոր որդիքը և աղջիկները հաւաքվեցան
Ներան մխիթարելու. բայց խեղճ հայրը անմխիթար արեալ էր։
«Ո՜հ, ասում էր նա, արտիս ցաւը ինձ էլ շուտ կ'իջեցնէ
գերեզման. ես շուտով կ'միանամ իմ որդուս Յովսէփին
հետ»։

## ԳԼՈՒԽ ԻԵ.

## ՅՈՎՍԷՓԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ.

Իսմայէլացիքը երբ եղիպտոս հասան, ծախեցին Յովսէ-
փին մի Պետափրէս անուն մարդուն, որ եղիպտոսի
թագաւորի մեծամեծների մէջն էր։ Պետափրէսը տեսնելով,
որ Յովսէփը էլ խիստ խելօք արդար, հեզ և բարեպաշտ
մարդ, շինեց Ներան առաջին մարդ իր տան մէջ և յանձ-
նեց Ներան բոլոր իր տասյուսածքը։ Այս մարդոց ամէն տեղ
լաւ է լինում. նոքա ամէն տեղ դառնում են բարեկամ և
պաշտպան։

Պետափրէսին կինը շատ կնիկ էր. նա կամենում էր հա-
մոզել Յովսէփին, որ իր հետ միասին խառնէ նորա մարդուն.
բայց որովհետև Յովսէփ չհամաձայնեցաւ նորա առաջ-

ջարկութեան, այս չարկինը դուռ հնարք նրան իր մարդու պետափրէսի առջևը զրպարտելու, այնպէս որ սա հրամայեց անմեղ Յովսէփին այն բանը գցել։ ուր պահվում էին արքունի յանցաւորները։ Բայց Տէր Աստուած միշտ անմեղութեան և առաքինութեան պաշտպանն է։ Յովսէփ խակ բանտի մէջ էլ դուռ բարեկամներ։ Բանտապետը սիրեց նրան, իբրև ստրուկի, խիստ չէր պահում. այլ շինեց նրան երկրորդ մարդ իրանից յետոյ և ասաց նրան, որ նայէ ամէնին վերայ, որոնք բանդումն բռնած էին։

Յովսէփի կալանաւորութեան ժամանակ Եգիպտոսի թագաւորը բարկացաւ երկու արքունի պաշտօնեաներին վերայ և հրամայեց նրանց բանտը գցել։ Սրանցից մէկը էր տակառապետը, որոնք գինի էր թագաւորին տալիս և միւսը մատակարարը (հացագործը), որոնք վերկացու էր թագաւորի սեղանին։ Մի անգամ առաւօտը երբ Յովսէփ մըտաւ նրանց մօտ, տեսաւ որ խիստ մռայլութեան մէջ են։ Նոքա ասացին նրան. «մենք տեսանք զարմանալի երազներ, որոնց մեկնութիւնը խիստ կ'ուզէինք իմանալ. բայց այստեղ բանտի մէջ այնպիսի հմուտ երազի մեկնիչ չկայ»։ Յովսէփ ասաց. «Ցեսիլքի մեկնութիւնը Աստուծմէ է կախած, ասացէք, ի՞նչ երազ տեսաք»։ Այն ժամանակ տակառապետը առաջին սկսաւ. «Ես տեսայ երազումս», ասաց նա, մի որթ, որոնք ունէր երեք ճիւղ և ճիւղերին վերայ խաղող հասած. ինձ երևում էր, թէ հաւաքում էի պտուղը, քամում էի ծուծը թագաւորի բաժակի մէջ և տալիս էի նրան»։ Յովսէփ ասաց նրան. «Երեք ճիւղերը նշանակում են երեք օր. այս միջոցի անցնելից յետոյ, թագաւորը կ'հրամայէ քեզ ազատել և կ'յանձնէ քեզ էլի քո առաջվան պաշտօնդ։ Քո բաղդաւորութեանդ ժա-

մանակ միտք բեր ինձ և աշխատիր ինձ ազատելու բան-
դից, ուր ես փակված եմ՝ խզուր»։ Սրանից յետո մատակա-
բարն էլ սկսաւ պատմել իր երազը. «ես տեսայ երազումս,
ասում էր նա, որ երեք խան զլխս դրած ունէի, վերի խա-
նում էին ամէն կերպի կերակուրներից, որոնք թագաւորը
գործածում է, և թռչուններ ուտում էին նրանցից»։ Այն-
ժամանակ Յովսէփ ասաց նրան. «երեք խաները նշանակում
են երեք օրը. այս ժամանակը անցնելից յետո թագաւորը
կ'հրամայէ քեզ կախաղանի վերայ կախել, ուր թռչուն-
ները կուտեն մարմինդ»։ Ամէնը կատարվեցաւ ինչպէս Յով-
սէփ զուշակեց։ Ակերախտ տակառապետը, իր բաղդաւորու-
թեան ժամանակ մոռացաւ Յովսէփին. բայց Աստուած,
որտեղ երբէք չէ թողնում անմեղ մարդոց, էր Յովսէփի հետ
և նորա թշուառութիւնները էլ դարձրեց բաղդաւո-
րութիւն։

ԳԼՈՒԽ ԻԶ.

## ՅՈՎՍԷՓԻ ԱԶԱՏՎԻԼԸ.

Երկու տարիից, ինքը Փարաւոն այսինքն Եգիպտոսի թագաւորը (Փարաւոն բառը Եգիպտոսի թագաւորների անուղղակի է) տեսաւ զարմանալի երազ։ Նա տեսաւ երազում, որ ինքը կանգնած է գետի մօտ, որից դուրս եկան եօթը գէր կովեր և արածում էին ափում։ Յետոյ նոցա հետևից նոյն գետից դուրս եկան եօթը վատ կովեր, որոնք կերան եօթը գէր կովերին։ Փարաւոն զարթնեցաւ. բայց կրկին քնելով տեսաւ էլի երազում եօթը լեր և դեղեցիկ հասկեր մի ցօղի վերայ։ Նոցա մօտ մի և նոյն ցօղից դուրս եկան եօթն ազազուն և չոր հասկեր, որոնք կերան եօթը լեր հասկերը։ Այս երազները խիստ անհանգստացրին

թագաւորին։ Երբ առաւօտ եղաւ, Հրամայեց բոլոր երաղահաններուն իր պալատում ժողովել. միայն ոչոք չկարողացաւ մեկնել Փարաւոնի երազները։

Այն ժամանակ ապերախտ տակառապետը միտը բերաւ իր կալանաւորութեան ընկերին՝ Յովսէփին և ասաց Փարաւոնին. «ես այժմ յիշեցի իմ յանցանքս։ Երբ դու, տէր արքայ, բարկացար իմ և մատակարարին վերայ և երկուսիս էլ հրամայեցիր բանտը գցել, ամէն մէկս տեսաւ մի մի զարմանալի երազ։ Նոյն բանդումն կար մի Եբրայեցի երիտասարդ էլ. մենք պատմեցինք նրան մեր երազները, նա մեզ երկուսիս էլ մեկնեց և կատարվեցաւ այնպէս, ինչպէս նա ասաց. ես տուցայ առաջվան պաշտօնս և մատակարարը կախվեցաւ կախաղանի վերայ»։ Փարաւոն իսկոյն ղրկեց Յովսէփի եռևից. նրան հադցրին հարուստ շորեր և բերին թագաւորի առաջ։

Փարաւոնը ասաց Յովսէփին. «ես տեսայ երազ, բայց ոչոք չէ կարողանում մեկնել նրան։ Ինձ ասացին, որ դու մեկնում ես երազներ»։ Հեզ Յովսէփը պատասխանեց. «ես ինքս ոչինչ չեմ կարող անել։ Մի՛այն Աստուած կարող է, տէր արքայ, տալ քեզ քո ցանկացած մեկնութիւնը»։ Այն ժամանակ Փարաւոն պատմեց իր երազները։

«Երկու երազներդ էլ մի նշանակութիւն ունին», ասաց Յովսէփ, «Աստուած նրանցմովասում է թագաւորին, եօթը ագեր կովերը և եօթն լեռքը հասկերը նշան են եօթն պտղաբեր տարիներին. իսկ եօթն վախտ կովերը և եօթն ապաղուն հասկերը նշան են եօթն սովի տարիներին։ Ահա՛ ինչպէս այս ամէնը կ'պատահի. բոլոր Եգիպտոսում եօթն տարի շարունակաբար կ'լինի մեծ առատութիւն հացի. նրանից յետո կ'գան միւս եօթն տարիներ, երբ ոչինչ չի

դուրս գալ և ինչ որ պատրաստած էր պաղաբեր տարիներ-
ում, բոլորը կ'ծախվի սովի տարիներում։ Բայց Փարաո-
ն էր երկու միակերպ երազներ տեսնելը ցոյց է տալիս, որ
Աստուծոյ կամքը գուցէ շուտով էլ կատարվի։ Պէտք է թա-
գաւորը նշանակէ մի իմաստուն, գործունեայ մարդ, որնոր
պաղաբեր տարիներին հաւաքէ ամենայն կերպի ցորէն այն
քան, որ բաւական լինի բոլոր ժողովրդեան, անպտղաբեր
տարիների ժամանակ։

Խնամ հաւանելի թուեցաւ այս փարաւոնին և նորա
պաշտօնեաներին։ «Ո՞ւր կ'գտնեմ, բացի Յովսէփից մի մարդ,
որի մէջ լինի Աստուծոյ ոգի»։ Փարաւոն «քեզ յայտնեց
Աստուած իր խորհուրդը, ուրեմն դու ուրիշներից իմաս-
տուն ես։ Քեզ կ'դնեմ ես գլուխ բոլոր Եգիպտոսի վերայ,
երկրորդ մարդը կ'լինես դու ինձանից յետոյ։ միայն գա-
հոյս բարձր կ'լինեմ ես քեզանից»։ Այս ասելով փարաւոն
հանեց իր մատանին և հագցրեց Յովսէփի մատին։ նոր-
նոպէս հրամայեց բեհեզեայ շոր հագցնել նորան, վզին ոս-
կի մանեակ կախել և արքունի կառքով շրջեցնել մայրա-
քաղաքի մէջ պատուով, որ ամէնը իմանան նորա մեծու-
թիւնը։

ԳԼՈՒԽ ԻԷ։

## ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՒ ԱՌԱՋԻՆ ԳԱԼՈՒՍՏԸ ԵԳԻՊՏՈՍ

Պաղաբերու թեան ժամանակ, Յովսէփի շինեց Եգիպտո-
սի մէջ ահագին մեծութեամբ շտեմարաններ, ու ժողո-
վեց անչափ ցորեն։ Վերջապէս եկան սովի տարիները։ այն
ժամանակ Յովսէփ բացեց շտեմարանները և բաժանեց ցո-

բեն աղքատ Եգիպտացիներին։ Օտար երկիրներից էլ գա-
լիս էին Յովսէփի մօտ ցորէն գնելու։

Քանանացւոց երկրում նմանապէս սով ընկաւ։ Յակով-
բը ասաց իր որդւոց. «Ես լսում եմ, որ Եգիպտոսում ծա-
խում են ցորէն, գնացէք և գնեցէք, ինչքան հարկաւոր է,
որ սովից չմեռնենք»։ Յովսէփի տասն մեծ եղբայրները գը-
նացին Եգիպտոս. միայն Բենիամինը մնաց հօր մօտ։ Յա-
կովբը վախում էր, որ չլինի, թէ ճանապարհին պատահի
նրան մի անբաղդութիւն։

Յակովբի որդիք հասան Եգիպտոս։ Այստեղ առանց
Յովսէփի գիտութեան ոչոք հրաման չունէր ցորէն ծախե-
լու. այս պատճառով նոքա գնացին նորա մօտ։ Նոքա չճա-
նաչեցին նրան և մինչև գետին երկրպագութիւն տուին
նրան յարգութեամբ։ Յովսէփ իսկոյն ճանաչեց նրանց և
միտը բերելով իր երեխայութեան տեսիլները, խորին ե-
րախտագիտութեամբ և յարգութեամբ սկսաւ մտածել
Աստուծոյ անհասանելի նախախնամութեան վերայ։

Բայց ինքը ցոյց տուեց, իբրև թէ չէ ճանաչում իր եղ-
բայրներին և չէ հասկանում նոցա լեզուն։ Նա խստու-
թեամբ ասաց նրանց թարգմանի ձեռքով. «դուք լրտես էք
և եկել էք իմանալ, ինչպէս լինում է Եգիպտոսի երկրում։
«Չէ՛, ասէր, մենք ճշմարիտ մարդիկ ենք, ասացին եղբայր-
ներ, մենք երբէք լրտես չենք եղել և եկանք այս տեղ, որ
գնենք ցորէն։ Մեր հայրը կենում է Քանանացւոց երկրում
և մենք ողջս տասներկու եղբայրներ էինք։ Մեզանից մէկը
կորաւ և փոքրը մնաց տան մեր հօր մօտ»։—«Չէ, դուք կաս-
կածելի մարդիկ էք», ասաց Յովսէփ. «ես կասկածում եմ փոր-
ձել, արդեօք ուղիղ են ձեր խօսքերը և չեմ թողնել ձեզ
Եգիպտոսից, մինչև ձեր եղբայրը չգայ այս տեղ։ Ղրկեցէք

ձեզնից մէկին ձեր եղբօր եռևից. բայց միւսներդ մնայէք իմ մօտ գերի, մինչև ես իմանամ, որ դուք իսկ ճշմարիտ էք ասում»: Նա հրամայեց նրանց բանտը տանել:

Վրէժխնդրութիւնը բարեպաշտ հոգւոյ յատկութիւն չէ: Յովսէփ չէր ուզում իր եղբայրներից վրէժ հանել, այլ ուզում էր նրանց: Երեք օրից նա հրամայեց բերել նրանց իր առջևը և ասաց նրանց. «ես երկիւղած եմ Աստուծոյ և չեմ ներողանում ոչոքին: Եթէ դուք ճշմարտիւ արդար մարդիկ էք, թող մէկը ձեզնից մնայ այս տեղ բանտում, իսկ մնացածները գնած ցորենով գնացէք տուն, ու յետո դարձէք էլի ձեր փոքր եղբօր հետ. այն ժամանակ ես կ'հաւատամ ձեր խօսքերին և դուք կազատուէք ձեզ սպառնող մահից»:

Թշնամութիւնը եղաւ սկիզբն Յովսէփի եղբայրների ուղղելուն. նոքա ասում էին մէկ մէկու. «երևի մենք պատժվեցանք մեր խստասրտութեան համար, որ մենք ցոյց տուինք մեր եղբօր Յովսէփին: Մենք տեսանք նորա հոգւոյ տրտմութիւնը և արտասուքը և ականջ չդրինք նորա խնդրելուն». — «ես չասացի ձեզ», կրկնեց Ռուբէն, «որ դուք չըմեղանչէք ձեր եղբօր դէմ: Դուք ինձ չլսեցիք, այժմ նորա արիւնը մեզնից պահանջվում է:

Նոքա կարծում էին, թէ Յովսէփ չէ հասկանում իրենց խօսակցութիւնը, որովհետև նոքա խօսում էին նորա հետ թարգմանի բերանով: Բայց Յովսէփ, լսելով նրանց խօսակցութիւնը, խիստ սրտին կպաւ նոցա զղջումն, յետ դարձաւ և լաց եղաւ: Բայց ճշմարտութեամբ նոցա զղջումները իմանալու համար, դարձաւ նրանց և հրամայեց ամենին աւելի կապել Շմաւոնին: Այս կատարելից յետո Յովսէփ ծառաները, լքցրին միւս եղբայրների պարկերը ցորենով և նոցա ցորենի համար բերած փողերը նմանապէս, Յովսէփ

հրամանով, դրին պարկերի մէջ թաքուն, ասուին նրանց նոյնպէս ճանապարհի պաշար էլ։ Պարկերը բառնալով ի-շերի վերայ, Յովսէփի եղբայրները դնացին տուն, սաստիկ հրաման տանելով, որ միւս անգամ առանց իրենց փոքր եղբօր չերևին Յովսէփի աչքին։

Երբ դարձան հօր մօտ, նորա տրտմութեամբ պատմեցին ամէնը, ինչոր պատահեցաւ և խիստ զարմացան, երբ յորեանը թափելիս պարկերի մէջ գտան իրենց փողերը։

Ծերունի Յակոբը ցաւում էր Շմաւոնի վերայ. բայց ամէնից աւելի վախենում էր Բենիամինի համար։ «Յովսէփը էլ չկայ» ասում էր նա, «Շմաւոն բանտն է գցած, այժմ ուզում էք ինձնից խլել իմ Բենիամինիս էլ. ամէն թշուառութիւնները իմ գլխիս ընկան։ Չեմ թողնիլ ես Բենիամինին Եգիպտոս, նրան մի թշուառութիւն կ'պատահի և դուք այն ժամանակ իմ ցաւով լեք ծերութիւնս գերեզման կ'իջեցնէք։

## ԳԼՈՒԽ ԻԷ.

## ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏԸ ԵԳԻՊՏՈՍ.

Սովը դեռ էլի շարունակվում էր Քանանացոց երկրում։ Եղիպտոսում գնած հացը կերան. Յակոբը ասաց իր որդոց. «դնացէք էլի Եգիպտոս և եթէ կարելի է, գնեցէք ցորէն»։ «Եգիպտոսի իշխանը», պատասխանեց Յուդան, ասաց մեզ, որ չերևինք նորա աչքին, թէ չառանենք մեր հօտ մեր փոքր եղբօր։ Թող մեզ հետ երեխայն էլ, թէ չէ, չենք կարող ցորէն ստանալ և մենք ամէնքս, պէտք է, մեռնենք սովից, դու էլ, մենք էլ, մեր որդիքն էլ։ Բենիամինին ես իմ ձեռս եմ առնում, նրան դու ինձանից պահանջիր,

եթէ ես նրան յետ չբերեմ և քո առջևդ չկանգնեցնեմ, թող նորա յանցանքը իմ վերայ լինի բոլոր իմ կեանքումս։ Եթէ մենք այսպէս չէ՛նք ուշացել, մենք արդէն երկու անգամ Եգիպտոս դնացած և եկած կ՚լինէ՛ինք»։

Վերջապէս Յակոբը ախուր սրտով ասաց, «եթէ այդ շատ կարևոր է, ահա՛ ինչ արէ՛ք։ վեր առէ՛ք այս երկրի լաւ բերքերից և տարէ՛ք ընծայ Եգիպտոսի իշխանին՝ ոնտին, մեղր, խունկ, ատաշխին, բևեղին և ընկոյզ և պարկերում զանեցած փողերը յետ դարձրէ՛ք։ Առէ՛ք ձեր հետ բենիամինին էլ։ Թող ամենազօր Աստուածը օգնական լինի ձեզ, որ Եգիպտոսի իշխանի ողորմութեան արժանանաք։ որ կարողանաք կրկին հետերդ բերել ձեր այն տեղ իրրև գրաւեցնացած եղբօր և բենիամինին։ Բայց թէ ինձ Աստուծմէ նշանակած է անզաւակ լինիլ, թող լինի այնպէս»։

Յոսկոբի որդիք կրկին դնացին Եգիպտոս։ Յովսէփ, երբ իմացաւ, որ բենիամինը եկել է իր եղբայրներին հետ, հրամայեց իր տան հաղարապետին պատրաստել հարուստ սեղան և հրաւիրել նոր եկածներուն։ Երբ հաղարապետը մոցրեց նրանց ներս Յովսէփի տուն, նոքա դողով սկսան պատմել նրան այն փողի վերայ, որնոր գտել էին իրենց պարկերում, կարծելով թէ իրենց սորուկ կ՚շինեն այն փողի համար։ «Մի՛ հոգաք դորա մասին»։ պատասխանեց հաղարապետը։ «Աստուած ինքը յետ է դարձրել ձեզ այն փողերը, ես ամէնը ստացել եմ ինչպէս հարկն էր»։ Նա բերեց Շմաւոնին էլ և ամէնը միասին մտան Յովսէփի տուն։ Հաղարապետը յայտնեց նրանց, որ նոքա կ՚մնան այն տեղ ճաշելու և որ նոցա էշերն էլ կ՚ստանան կերակուր։

Յովսէփի գալուն սպասելով նոքա պատրաստեցին ընծաները։ Երբ Յովսէ ներ մտաւ, բոլոր եղբայրները չոքե-

ցին նորա առջև և ամէն մէկը բռնած ունէր ձեռին իր ընծան։ Նա քաղցրութեամբ բարևեց նրանց և հարցրեց. «առողջ է ձեր հայրը. կենդանի՞ է արդեօք դեռ ծերունին». Նոքա պատասխանեցին. «Մեր ծերունի ծնողը, քո ծառայդ, առողջ է»։ Երբ Բենիամինին տեսաւ Յովսէփ հարցրեց. «սա՞ է ձեր փոքր եղբայրը, որի վերայ դուք ինձ ասացէք.—Աստուած օրհնէ քեզ որդեակ», ասաց նա երիտասարդին և շուտ հեռացաւ, որ թաքցնէ իր արտասուքը։ Նորա սիրտը վառվռում էր իր փոքր եղբօր սիրով։ Արտասուքը աղբիւրի պէս վազում էին աչքերից, նա գնաց իր ներքին սենեակ և այն տեղ փակված լաց էր լինում։

Երբեմն լուանալից յետոյ Յովսէփ դարձաւ իր եղբայրներին մօտ և աշխատելով պահել իր արտասուքը, ասաց. «քեզ էլ քեզ կերակուր»։ Եղբայրներին նստացրին տեղան աւագութեան կարգով. աւագին ամէնից բարձր և փոքրին ամէնից ցած։ Նոքա մէկ մէկու վրայ նայելով, զարմանում էին և չէին կարողանում հասկանալ, ո՞րտեղից այդպէս լաւ յայտնի են նրանց իրենց տարիքը։ Իսկ ինքը Յովսէփ թէև միասին նոցա հետ էր ուտում միայն առանձին սեղանի վրայ։ Իր հարազատ եղբօր Բենիամինի, իր մօր Հռաքէլի որդուն նա աւելի պատիւ էր տալիս, ամէն խմիչքներից և կերակուրներից նրան հինգ անգամ աւելի էին տալիս քան թէ ուրիշներին։ Ամէնը կերան և խմեցին առատութեամբ։

ԳԼՈՒԽ ԻԹ

## ՅՈՎՍԷՓ ՑԱՅՏՆՎՈՒՄ Է ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ.

Յովսէփ էլի մի անգամ կամենում էր փորձել իր եղբայրներուն. նա հրամայեց իր հաշվապահին, որ լցնէ նորա պարկերը ցորենով, ու դնէ նոցա մէջ ցորենի համար

բերած փողերն էլ. իսկ Բենիամինի պարկի մէջ հրամայեց դնել իր արծաթի սկիհն էլ։ Հազարապետը կատարեց Յովսէփի հրամանը և մեծ օր Յակոբի որդիք ճանապարհ ընկան դէպի հայրենիք։

Հազիւ կարողացան նոքա քաղաքից դուրս գնալ, Յովսէփ կանչեց Հազարապետին և ասաց. «Շտապիր, հասիր այն օտարականներին և ասա՛ նրանց, «դուք չարութիւն էք հատուցանում բարութեան փոխանակ, դուք գողացել էք այն սկիհը, որից միշտ իմ տէրս խմում է»։

Հազարապետը ամէն բան այնպէս կատարեց, ինչպէս իրեն հրամայած էր։ «Այս ի՞նչ է նշանակում», ասացին Յովսէփի եղբայրները, ինչպէս կարելի է մտածել, որ մենք այդպիսի չար գործ քի ընդունակ լինինք. քո մի՞տք է, որ մենք Քանանացու երկրից յետ բերինք պարկերում գտնված փողերը, մի՞թէ մենք կ'գողանայինք քո տիրոջդ տնից արծաթի սկիհ. ում մօտ կ'գտնվի, թո՛ղ նա սպանվի, իսկ ողջ մնացածներս լինինք քո տիրոջդ ստրուկները»։ Նոքա իշերի բեռները վար բերին, առան պարկերը և բաց արին։ Հազարապետ ինքը նայում էր պարկերը, ամէնից մեծից սկսելով և երբ կարգը հասաւ փոքրին, սկիհը գտնվեցաւ Բենիամինի պարկում։ Անպատմելի տրտմութիւնից Յովսէփի եղբայրները պատռեցին իրենց շորերը։ Պարկերը կրկին իշերի վերայ բարձած, նոքա էլի յետ դարձան քաղաք։ Ամէնքը դնացին Յովսէփի մօտ. իսկ Յուդան նորա ոտերը ընկնելով սկսաւ խնդալ լաց լինիլ։ «Այս ի՞նչ արիք», ասաց Յովսէփ, «մի՞թէ կարծում էիք, որ ինձ կ'խաբէք». «ո՞հ, աղաղակեց Յուդան, ի՞նչ ասենք մեզ արդարացնելու համար. Աստուած պատժում է մեզ մեր վաղուց արած չարութեան համար. ահա՛ նա, ում մօտ որ գտնվեցաւ սկի-

հը, մենք ամէնքս ճնում ենք քեզ ծառայ։—«Չէ՞», պատասխանեց Յովսէփ, այդ անարդարութիւն կ'լինէր, ես չեմ ուզում, որ անմեղները նեղութիւն քաշեն յանցաւորի համար։ Ում մօտ որ գտնվեցաւ իմ սկիհն նա միայն կը-լինի իմ ծառայ։ իսկ դուք յետ դարձէք խաղաղութեամբ ձեր հօր մօտ։

Յուդան մօտեցաւ Յովսէփին և ասաց։ Տէր իմ, տուր ինձ հրաման քեզ մի քանի խօսք ասելու, մի՛ բարկանար համարձակութեանս վերայ, որով ես համարձակվում եմ խօսել քեզ հետ, որոնք առաջին մարդն ես թագաւորից յետոյ։ Դու միանգամ հարցրիր մեզ, կենդանի՞ է արդեօք մեր ծնողը և ունենք ուրիշ եղբայր էլ։ Այն ժամանակ մենք պատասխանեցինք, որ մեր հայրը կենդանի է և թէ մենք ունենք էլ մի փոքր եղբայր, որնոր մեր հօր համար աշխարհիս վերայ ամէնքանից առաւել թանգագին է։ Դու հրամայեցիր մեզ, որ բերենք նրան։ բայց մենք պատասխանեցինք, թէ մեր հայրը կ'մեռնէ, եթէ բաժանվի իր սիրելի որդուից։ «Եթէ դուք չէք բերել ձեր փոքր եղբօր, դուք էլ իմ երեսս չպէտք է տեսնէք», ասաց իր դու։ Մենք այս ամենը յայտնեցինք մեր ծնողին և երբ նա երկրորդ անգամ կամենում էր զրկել մեզ ցոգ խլատս, մենք ասացինք նրան, որ մենք չենք համարձակվել գալ այս տեղ առանց մեր փոքր եղբօր։ Այն ժամանակ մեր հայր ասաց մեզ։ «դուք գիտէք, որ ես իմ սիրելի կնոջից՝ Հռաքէլից միայն երկու որդի ունեցայ։ մինը ինձից գուրս եկաւ և դուք ինձ ասացիք, որ վայրենի գազանները պատառեցին նրան և ես այն ժամանակից՝ ի վեր նրան չեմ տեսած։ Եթէ դուք կ'առնէք Հռաքէլի միւս որդուն էլ և նորա հետ էլ կ'պատահի անբարեբաղդութիւն, ես կ'մեռնեմ տրտմութիւնից»։ Ուրեմն

եթէ մենք դառնանք տուն առանց երախայրի, մեր հայրը, որտեղ իր կեանքից աւելի սիրում է նրան, կ'մեռնի դարդից։ Ես նրան իմ ձեռս եմ առել, ես յանձնառու եղայ, որ կը-պահպանեմ նրան։ Ես ասացի ծնողին, որ ես իմ կեանքս կ'տամ երեխայի համար։ ուրեմն թո՛ղ ես մնամ քեզ ծառայ։ բայց նրան թոյլ թո՛ղ գնալ տուն եղբայրներիս հետ։ Ի՞նչպէս ես պէտք է երեւիմ ծնողիս աչքին, եթէ երեխան հետս չլինի։ Ես չեմ կարող տեսնել նորա տրտմութիւնը»։

Սոյժմ տեսաւ Յոսէփ, որ իր եղբայրները ուզում են։ Էլ չկարողանալով աւելի անյայտ մնալ, հրամայեց ամէն իրեն պատող Եգիպտացիներին դուրս գնալ և երբ ինքը մենակ մնաց եղբայրներին հետ, բարձր ձայնով սկսաւ լալ և ասաց։ «Ես Յոսէփն եմ։ Կենդանի՞ է արդեօք դեռ մեր հայրը»։—Եղբայրները վախից մնացին անշարժ և չէին կարողանում մի խօսք էլ ասել։

Յոսէփը կամենալով քաջալերել իր եղբայրներին ասաց։ «մօտեցէք ինձ, ես ձեր եղբայրը Յոսէփն եմ։ դա, որին դուք ծախեցիք։ Ասուած թերաւ ինձ այս տեղ էլ ձեր լաւութեան համար։ Անցան տասն երկու տարիները և անպտղութիւնը դեռ կ'շարունակվի էլի հինգ տարի։ Բոլոր այս ժամանակը ոչ կ'ցանեն և ոչ կ'հնձեն։ ուրեմն Ասուած զրկեց ինձ այստեղ նորա համար, որ դուք միջոց ունենաք կերակրվելու, որ դուք ինձմով ազատվեք սովի մահից։ Ոչ թէ ձեր կամքով, այլ Ասուծոյ զօրութեամբ եմ ես այս տեղ։ Ասուած շինեց ինձ երկրորդ մարդ Փարաւոնից յետո, հաստատեց նորա տան և իշխան բոլոր Եգիպտոսի վերայ։ Շտապով յետդարձէք մեր հօրմտեւ յայտնեցէք նրան, որ Յոսէփը նորա որդին, հրամայեց նրան ասել։ թէ Ասուած իրեն դրաւ իշխան բոլոր Եգիպտոսի երկրին

վերայ, առանց ուշանալու թող գայ ինձ մօտ. նա կ'բնակի Եգիպտոսի ամէնից լաւ տեղում. կ'լինի ինձ մօտիկ իր որդիներով, թոռներով, խաշներով և բոլոր իր ստացուածներով։ Ես կ'հոգամ նորա վերայ և ինչ'որ նրան պատկանում է, կ'կերակրեմ ձեզ ամենուդ, որովհետև սովը էլ հինգ տարի կ'տևէ երկրիս երեսին։—Այժմ դուք տեսնում է.ք, որ ես խօսում եմ ձեզ հետ ձեր լեզուով առանց թարգմանելու։ Գնացէ.ք, յայտնեցէ.ք իմ հօրս իմ փառքս և պատիւս Եգիպտոսի մէջ. պատմեցէ.ք նրան ամէն բան, ինչ'որ տեսաք, շտապեցէ.ք, յետ դարձէ.ք ինձ մօտ շուտով և բերէ.ք հետներդ իմ հօրս»։

Նա գրկեց իր եղբօր Բենիամինին, համբուրեց և լաց եղաւ նորա վերայ, նմանապէս էլ Բենիամինը լալիս էր նորա գրկում։ Յետոյ կարգով գրկեց միւս եղբայրներուն էլ և թափում էր արտասուք։

## ԳԼՈՒԽ Լ.

## ՅԱԿՈՎԲԻ ԵԳԻՊՏՈՍ ՏԵՂԱՓՈԽՎԻԼԸ.

Փարաւոնը խիստ ուրախացաւ, երբ լսեց, որ Յովսէփի եղբայրները եկել են։ Նա ասաց իր կառքերից մի քանիսը, որ բերեն Յովսէփի հօր, եղբայրներուն, նոցա կանանց և որդւոց։ Յովսէփը ամէն եղբայրներին ընծայեց մի ձեռք շոր. իսկ Բենիամինին տուեց հինգ ձեռք շոր և երեք հարիւր արծաթի դահեկան։ Իր հօրն էլ գրկեց տասը էշ բարձած Եգիպտոսի լաւ բերքերով և տասն էլ մատակ էշեր բարձած ցորենով և ճանապարհի զանազան պաշարներով։ Իր եղբայրներուն ճանապարհ գցելիս ասաց. «Ճանապարհին չվիճէ.ք միմիանց հետ»։

Բայց ծերուն Յակոբը էս միջոցին տարտամութեամբ և ան-

հանդստութեամբ սպասում էր իր որդւոց դառնալուն։ Յանկարծ յայտնվեցան նորա առաջ բոլոր որդիքը։ Բենիամինն էլ նոցա հետ և ասացին. «քո որդիք Յովսէփը կենդանի է. նա է այն հզօր իշխանը Եգիպտոսի, որի վերայ մենք քեզ պատմեցինք»։ Ծերունին չէր կամենում նրանց հաւատալ։ Այն ժամանակ նոքա պատմեցին Յովսէփի բոլոր պատմութիւնը և կրկնեցին ամէն նորա խօսքերը։ Յակովբ, երբ տեսաւ փարաւոնի զրկած կառքերը և հարուստ ընծաները, հաւատաց ու կարծես թէ քնից զարթնելով աղաղակեց. «իմ որդիս Յովսէփը կենդանի՞ է, կ'երթամ, կըտեսնեմ նրան մեռնելից առաջ»։

Յակովբ առանց ուշանալու պատրաստվեցաւ ճանապարհ ընկնելու։ Նորա որդիքը նստեցրին իրենց որդոց և կանանց փարաւոնի կառքերի վերայ, առան հետները բոլոր իրենց խաշները և ստացուածները և գնացին Եգիպտոս։ Ողջը միասին էին եօթանասուն հոգի։ Քանանացւոց երկրի սահմանին վերայ Յակովբը Աստուծոյ մատաղ բերաւ։ Նա չէր վճռում թողնել երկիրը, որտեղ խոստացած էր իրեն և իր զաւակներին Աստուծմէ։ Աստուած ասաց նրան գիշերվան տեսիլքում. «Ես եմ քո հօրդ Աստուածը, գնա աներկիւղ Եգիպտացւոց երկիր, ես քեզ հետ կ'լինիմ։ Այն տեղ քո ցեղը կ'դառնայ մեծ ազգ և ես կ'դարձնեմ նրան քեզ և քո նախնիքներիդ խոստացած երկիրս։ Յովսէփ կ'ծածկէ քո աչքերդ»։ Այս տեսիլը հանդատացրեց բարեպաշտ ծերունին, որպէս աներկիւղ շարունակեց իր ճանապարհորդութիւնը դէպի Եգիպտոս։ Յուդան առաջ գնաց, որ իմաց տայ Յակովբի գալուստը։ Յովսէփ նստաւ իր կառքը և շտապեց առաջ դուրս գալու իր հօրը։ Երբ նրան տեսաւ, կառքից իջաւ, ընկաւ նորա գիրկը և լաց էր լի-

նում երկար ժամանակ։ Ծերունին ասաց. «այժմ ես հանգիստ կ'մեռնիմ. ես տեսայ քո երեսը, դու դեռ կենդանի ես»։

Յովսէփ իմաց արաւ Փարաւոնին իր հօր գալուստը և թագաւորը ասաց. «բոլոր Եգիպտոս երկիրը քաց է քո հօրը, եղբայրներիդ համար, ընտրիր նոցա բնակութեան համար իմ թագաւորութեան ամէնից լաւ տեղը»։ Յովսէփ ինքը տարաւ իր հօր Փարաւոնին մօտ։ Բարեպաշտ Ծերունին օրհնեց Փարաւոնին, որոնք հարցրեց նրան. «թէ քանի՞ տարեկան է։ Յակոբը պատասխանեց. «հարիւր երեսուն տարեկան եմ»։ Սակաւ եղան և տխուր իմ օրերս. տարի ամենևին չեն հասարակում իմ նախնիներիս պանդխտութեան օրերին։ Նա միւս անգամ օրհնեց Փարաւոնին և շարժուած սրտով դուրս եկաւ։ Յովսէփ իր ընտանիքի բնակութեան համար, Փարաւոնի հրամանքով, ընտրեց Եգիպտոսի ամէնից լաւ երկիրը, այն է Գեսէմ։ Նա հոգս էր քաշում իր ազգականներին վերայ և ամէն նոցա հարկաւորութիւնները լրացնում էր։

ԳԼՈՒԽ ԼԱ.

## ՅԱԿՈՎԲԻ ԵՒ ՅՈՎՍԷՓԻ ՄԱՀԸ.

Յակոբը հասաւ խորին ծերութեան։ Նա հարիւր քառասուն եօթը տարեկան էր, երբ զգաց իր մահուան մօտենալը և զրկեց Յովսէփի եռևից, որոնք եկաւ նորա մօտ շուտով և բերաւ հետը իր երկու որդոց՝ Մանասէին և Եփրէմին, որոնք ծնուն նորա Ասանէթի կնոջից, որ Արէգ քաղաքի քրմապետի աղջիկն էր։ Յակոբը իր զօրութիւնը հաւաքելով նստաւ մահճի վերան և ասաց «ով են սրբա. երեխայք, որով Աստուած օրհնեց ինձ». պատասխանեց

Յովսէփ։ «Մօտեցո՛ւր դրանց ինձ», ասաց Յակոբը. «ես կա-
մենում եմ դրանց օրհնել»։ Յովսէփը մօտեցրեց նրանցը
մեռնող Ծերունի մօտ, որնոր որդեգրեց նրանց, գրկեց,
համբուրեց և յետոյ ասաց Յովսէփին. «ես կարծում էի, թէ
քեզ էլ չեմ տեսնիլ երբէք, բայց Աստուած բերաւ ինձ,
որ ես տեսնէի քեզ և քո որդոցդ»։ Վերջապէս օրհնելով
Յովսէփի որդոց իր ձեռքերը խաչի պէս նոցա գլխին դը-
րած, ասաց բարեպաշտ Ծերունին. «Աստուածը, որին հա-
ճել էին իմ հայրերս Աբրահամ և Իսահակ, և որնոր կե-
րակրեց ինձ երեխայութիւնից մինչև այժմ. հրեշտակը,
որնոր ազատեց ինձ ամէն չարից, թող օրհնեն այս երեխա-
ներս»։ Յետոյ, դառնալով դէպի Յովսէփը, շարունակեց.
«ես մեռնում եմ. բայց Աստուած միշտ կ'լինի ձեզ հետ, նա
կ'դարձնէ ձեզ ձեր հայրերի երկիրը։ Քեզ առանձնապէս,
բացի միւս ժառանգութիւնից, տալիս եմ ես Սիկիմն էլ։

Յակոբը հրամայեց բոլոր որդոցը, որ հաւաքվեն իր մահ-
ճի չորս կողմում. օրհնեց նրանց ամէնուն. իսկ Յուդային
ասաց յետոյ մարգարէական խօսքերը. «ով Յուդա՛, քեզ
թող օրհնեն եղբայրներդ, քեզ երկրպագութիւն տան քո
հօրդ որդիքը, թագաւորներ և զօրավարներ կ'լինեն քո
յետագաներդ, մինչև կ'գայ խաղաղարարը՝ ամէն ազգերի
Ցոյսը»։

Յետոյ ասաց նա ամէն որդոց. «թաղեցէ՛ք ինձ Քաղա-
նացւոց երկրում այրումը, ուր թաղած են Աբրահամ,
Սառան, Իսահակ և Ռեբեկան, այնտեղ ուր դրի ես Լիայի
մարմինը»։ Այս ասաց, պառկեցաւ իր մահճին վերայ և
վախճանեցաւ։ Այսպէս խաղաղ և հանգիստ մեռնում է
նա, ինչպէս վարում է բարեպաշտ կեանք։

Յովսէփը փարաւոնի հրամանով, բոլոր եղբայրներով,

Եգիպտացի մեծամեծներով և բոլոր իր ընտանիքը Լաբան Յակոբի մարմինը Քանանացոց երկիր և Թաղեց այրում, որոնք Աբրահամ գնեց Սառայն թաղելու համար։ Բայց երբ Եգիպտոս դարձան, եղբայրները նորա վախենալով, որ նա գուցէ վրէժը հանել ուզենայ իրանցից, ասացին նրան։ «Մենք խնդրում յանցաւոր ենք քո առաջիկ։ բայց մեր Հայրը մեռնելիս պատուիրեց, որ դու մեզ ներես, վրէժ մի՛ հանիր մեզնից։ մենք քո ծառաներդ ենք»։ — «Եւ ես Աստուծոյ ծառան եմ»։ պատասխանեց Յովսէփ։ «Աստուած բարի արար, թէ ինձ համար և թէ ձեզ համար, այն չարութիւնը։ որոնք դուք ինձ կամենում էիք անել։ Հանգիստ եղէ՛ք, ես միշտ կ՚լինեմ ձեր պաշտպանը»։

Յովսէփ հարիւր տասն տարի ապրեցաւ։ Նա տեսաւ իր որդոց, թոռներուն և թոռների որդոցը։ Իր մեռնելից առաջ ասաց նա իր եղբայրներին։ «այժմ ես մեռնում եմ։ բայց Աստուած կ՚դարձնէ ձեզ մեր հայրերին՝ Աբրահամին, Իսահակին և Յակոբին խոստացած երկիրը։ երդուցէք ինձ, որ երբ կ՚պատահի այս անդամոխութիւնը, դուք կ՚պատուիրէք ձեր որդւոց և նոցա յետագայներին, որ տանեն իմ մարմինս էլ հետերը»։ Նորա երդուցին տուին և նա մեռաւ կատարեալ հաւատով և յոյսով։ Նորա բարեպաշտ կեանքը ոչ մի անօրէնութեան բիծ չունեցաւ։ Նորա մահը հանդիստ էր շատ։ Ամէնը նորա վերայ լաց եղան սրտանց։ Նորա մարմինը դրին դագաղի մէջ և թաղեցին Եգիպտոսում։

## ԳԼՈՒԽ Լ.

## ԱՐԴԱՐ ՅՈՎԲԸ։

Աստուածաշնչի մէջ նկարագրած է մի բարեպաշտ մար-

դու կեանք, որոնք բնակում էր Արաբիայի մէջ Աւսիդ (Աւ-
սաներ) աշխարհում, դեռ Մովսէսից առաջ։ Նորա անունը
էր Յոբ. սա էր անարատ, արդար, բարեպաշտ և ամէն ա-
նօրէնութիւններից հեռացած մարդ։ Երկիրը, ուր նա
բնակում էր, գեղեցիկ էր և պտղաբեր. նա տէր էր բաղ-
մաթիւ խաշների, ունէր արծաթ ու ոսկի շատ. ամէնը
պատում էին նրան և նորա բաղդը կատարեալ էր մա-
նաւանդ նորա համար, որ այս ամէն բանի հետ միասին ու-
նէր գեղեցիկ և բազմաթիւ ընտանիք էլ։ Նա ունէր եօ-
թըն որդիք, երեք աղջիկներ, որոնք էին նորա ուրախու-
թիւնը։ Ամէն բան միացել էր, որ Յոբին բաղդաւորացնէ։
Սորա օրինակովը Աստուած կամեցաւ ցոյց տալ, որ ճշմա-
րիտ բարեպաշտ մարդը չի փոխվիլ թէ բաղդաւորութեան
և թէ աներաղդութեան մէջ։ Սատանան բամբասեց Յով-
բին Աստուծոյ առաջ ասելով թէ այս բարեպաշտը միայն
այն պատճառով այնպէս հաւատարիմ ծառայում է
նրան, որ նա առատաձեռն տուել է Յոբին ամէն եր-
կրաւոր բարիքները։ Աստուած Յոբի ստոյուածների
իշխանութիւնը տուեց սատանային։

Նորա որդիքը, որոնք շատ սիրով կենում էին միմեանց
հետ, շուտ շուտ խնճոյքներ էին պատրաստում մէկ մէկու
համար, միայն Յոբը ինքը խակի մասնակից չէր լինում
այս ուրախութիւններին, այլ հեռանալով նրանցից ա-
ղօթք էր անում Աստծու իր որդոց համար։ Մի անգամ,
երբ երիտասարդները խնճոյք պատրաստել էին, ուրախա-
նում էին և Յոբը աղօթք էր անում, ծառաներից մէկը
վազելով եկաւ ասելու, որ Արաբացի աւազակները փախ-
ցրին բոլոր նորա եզներն և իշերն։ Նրանից յետոյ եկաւ
երկրորդ ծառան և համբաւ բերաւ, թէ երկնքից կրակ

ընկաւ և այրեց բոլոր ոչխարները և հովիւներն։ յետոյ երրորդը եկաւ ու հրամայեց թէ ապաստակաւորներ եկան։ յափշտակեցին բոլոր ուզտերն և հովիւներն ոչնչացին։ վերջապէս չորրորդը եկաւ և ասաց, որ անապատից մեծ հողմ փչեց և քանդեց տունը, ուր նորա որդիքը և աղջիկները ուրախանում էին և մեռան ամէնքը։ Յոբ խիստ տրտմեցաւ, մանաւանդ այս վերջին համբաւովը։ Նա տխրութիւնից պատռեց իր շորերը, բայց մտածելով, որ այս ամէն անբաղդութիւնները Աստուծոյ ղրկածն են, ասաց նա. Աստուած տուեց ինձ ամէնը. Աստուած էլ առաւ. օրհնեալ լինի նորա անունը։

Յոբը աղքատացաւ. նա տխրում էր իր որդոյ կորստի վերայ. բայց երբէք չէր արգելում Աստուծոյ վերայ և մընաց հաստատ իր բարեպաշտութեան մէջ։ Այս անբաղդութիւններից յետոյ, Աստուծ թոյլ տուաւ սատանային, որ նորից էլի փորձէ Յոբի համբերութիւնը։ Նորա բոլոր մարմինը ծակվեցաւ սատանի խոցերով, բայց նա համբերութեամբ տանում էր իր ցաւին և օրհնում էր Աստծուն։ Յոբի կնոջը անտանելի էին թվում նորա չարչարանքները. նա խորհուրդ էր տալի, որ լաւ է մեռնի, քան թէ համբերէ այդպիսի տանջանքներին։ «Մի խօսք ասա՛ Աստուծոյ դէմ, ասաց նա, և մեռի՛ր»։ «Դու խօսում ես ինչպէս անմիտ կին», պատասխանեց Յոբը. «եթէ մենք ընդունեցինք Աստուծոյ ձեռքից բարութիւնները, մի՞թէ չպէտք է համբերենք այն չարչարանքներին էլ, որոնք նա ղրկում է մեզ»։

Յոբի բարեկամները և ծանօթները, տեսնելով նրան այս դրութեան մէջ, կարծում էին, յայտնի բան է. Աստուած պատժում է նրան, երևի թաքուն յանցանքների համար։ Անկարելի է, կարծում էին նոքա, որ Աստուած, անկրքան

բարի և արդարադատ գոլով, այդպէս խիստ պատժէ անմեղ մարդուն։ Ընդքա չէին մտածում, որ Աստուած շատ անգամ փորձում է արդարներուն էլ թշուառութիւններով, որ նոցա առաքինութիւնը առաւել կփայլի թշուառութիւնների մէջ և վերջապէս կայ ուրիշ աւելի լաւ կեանք, ուր արդարը ստանում է վարձ իր քաշած նեղութիւնների, իր հաստատութեան, որով համբերից նրանց, և իր առաքինութիւնները կատարելագործելուն համար։ Խիստ բարեկամները յայտնեցին թշուառ Յովբին իրանց անարդար կասկածները նորա վերայ։ Յովբ, զուրկ մնացած որդիներից, ստացուածքից, առողջութիւնից, տեսաւ, որ կամենում են իրանից խլել մինչև անգամ իր բարի անունն էլ։ Բայց նորա խղճմտանքը յստակ էր և յոյսը Աստուծոյ վերայ հաստատ։ Նա ասում էր. «Կորչողներուն ազատում էի, ոխուր որբերուն մխիթարում էի, կոյրի համար աչք էի նա, անտէր մարդուն ցուպ. խեղճերին հայրը։ Մի և նոյն ժամանակ խարազան էի աւազակների և յափշտակողների համար, խլում էի նրանցից ապօրէն աւարը, ջարդում էի մեղաւորների ատամները։ Եթէ ես գնացել եմ մեղքի ճանապարհով, եթէ ես խաբել եմ մէկին, թո՛ղ զրկէ Աստուած ինձ վերայ իմ՝ արժանի պատիժս. բայց իմ խղճմտանքս հանգիստ է։ Հարցրէ՛ք իմ ծառաներուս, արդեօք բարի տէր չէի՞ նոցա համար, բայց չէ՞ր արդեօք իմ դուռս ճանապարհորդի համար, արդեօք պատրաստ չէի՞ աղքատին օգնելու։ Զէ՛. իմ յոյսս ես արծաթի և ոսկի վերայ չէի դրած. չէ՛։ Ես վախենում էի Աստուծմէ. իմ յոյսս Նորա վերայ էր»։

Էն ժամանակ անսիրտ բարեկամները, իրենց դատողութիւններով աշխատում էին խլել Յովբից նորա միակ մընացած մխիթարութիւնը։ Ընդքա աշխատում էին նրան

այն անելը հասցնել, որ նա իրեն մեղաւոր կարծէ և աղա-
պէս շատ նեղացնում է ինն արդար մարդուն։ Զարշարուած
ցաւով և իր խիստ բարեկամների դատողութիւնով,
Յովբը երբեմն երբեմն ցոյց էր տալիս անհամբերութիւն,
գանգատում էր Աստծու իր վիճակի վերայ և մինչև ան-
գամ անիծեց իր ծննդեան օրն էլ։ Աստուած ինքը եղաւ
միջնորդ Յովբի ու նրան շարշարող բարեկամների մէջ։ Աս-
տուած յայտնեցաւ նրանց մրրկում և ամպերում և ա-
սաց, որ Աստուծոյ ճանապարհները անհասանելի են մարդ-
կային մտքին և թէ մարդուս պարտաւորութիւն է ան-
պայման հպատակել Աստուծոյ կամքին և չդատել նա-
խախնամութեան ճանապարհների վերայ։

Աստուած վարձատրեց Յովբին կրկնապատիկ ամէն
քաշածներին համար։ Յետոյ դարձրեց նրան իր հարստու-
թիւնը և առողջութիւնը։ Նրան ծնան էլի եօթն որդի-
ներ և երեք աղջիկներ։ Յովբը ապրեցաւ սրանից յետոյ է-
լի հարիւր եօթանասուն տարի և տեսաւ որդոյը և թոռ-
նոյն, մինչև չորրորդ ազգը։

ԳԼՈՒԽ ԼԳ.

## ՄՈՎՍԷՍԻ ԾՆՈՒՆԴԸ ՅԻ ԿՐԹՈՒԹԻՆԸ.

Քանանացւոց երկրում Աբրահամի ցեղից ոչոք չկար,
այն տեղ հանգստանում էին միայն նորա ընտանիքի տակ-
ները. իսկ Եգիպտոսում Աբրահամի ցեղը ժամանակով
բազմացաւ շատ և հզօր ազգ դարձաւ։ Յակոբը կոչվեցաւ
Իսրայէլ. ուստի և այն ազգն էլ ստացաւ նորա Իսրայէլ
կամ Իսրայէլացիք անունը։ Յակոբ տատերիս որդի ու-
նէր և Իսրայէլացւոց ազգն էլ տատերիս տոհմերը բաժա-

նվեցաւ որոնց ամէն մէկը իր յեղափոխ անուանումն էր ա-
նուանվում:

Յովսէփի ժամանակվան փարաւոնը վաղուց մեռած
էր. թագաւորից ուրիշ փարաւոն, որնոր չէր իմանում
Յովսէփի գործքերը: Սուտ ազգը, որնոր բնակում էր իր
տէրութեան մէջ, երկիւղալի թուեցաւ նրան. նա վախե-
նում էր, որ Իսրայէլացիքը մի անգամ միանան իր թըշ-
նամիների հետ և այս պատճառով, կամենալով նրանց ջնջ-
ջել կամ թուլացնել, հրամայեց ամէն կերպի նեղել նրանց:
Նրանց ամէն ծանր աշխատանքի համար գործածում էին,
կերակրում էին վատ, վարվում էին հեռները ամարդաբար.
բայց չնայելով այս բանին ուրախ ութեամբ Իսրայէլացւոց
ազգը շարունակ էլի բազմանում էր: Վերջապէս փարաւոնը
հանեց ամարդի հրաման, որ ամէն Եբրայեցի նորածին արու
երեխաներուն սպանեն և գետը գցեն:

Այս ժամանակներումն կենում էր մի բարեպաշտ և
Աստուածասէր Իսրայէլացի կնիկ, որի մարդը նմանապէս
բարեպաշտ էր և Ղևիի ցեղից էր ինքը. այս կինը ծնաւ մէկ
զեղեցիկ որդի: Նա ինչպէս որդեսէր մայր խիստ սիրում էր
նրան և պահում էր մօտը թագուն մինչև երեք ամիս: Էլ
չկարողանալով երկար թաքցնել երեխային, նա հիւսեց մի
կողով պրտուից, ծեփեց նրան կպրով, որ ջուրը ներս չը-
մտնէ, դրաւ նորա մէջ իր փոքրիկ որդուն և քաց թողեց
կողովը ջրի մէջ: Կարելի է, մտածում էր նա, Աստուած
ղրկէ մէկին, որնոր մեղքանայ իր զեղեցիկ երեխային: Իսկ
երեխայի քոյրը, փոքր ինչ հեռու կանգնած, նայում էր, թէ
ինչ կ'լինի իր եղբօր հետ:

Թագաւորի աղջիկը իր աղախիններին հետ միասին գնաց
ջրի ափը լուացվելու: Նա տեսաւ թափի մէջ ծեփած կողո-

վը, հրամայեց իր աղախիններին, որ առնեն այն և բաց անելով գտան նորա մէջ երեխային, որոնք լաց էր լինում։ Շատ մեղքացաւ երեխային. «յայտնի է» ասաց նա, «որ այս խարայէլացի մանուկ է». երեխայի քոյրը տեսնելով, որ թագաւորի աղջիկը ողորմած է շատ, համարձակեցաւ, մօտեցաւ նրան և ասաց. «իշխանուհի՛, թէ կ'հրամայես, ես կ'է երեմ մի խարայէլացի կին, որոնք կ'սնուցանէ երեխային»։ «Բարի է, ասաց թագաւորի աղջիկը, ես քեզ դրա համար կ'վարձատրեմ»։

Ինչպիսի ուրախութեամբ, ինչպիսի սրտանց շնորհակալութեամբ բարձրացրեց խեղճ մայրը իր աչքերը դէպ երկինք երբ կրկին տեսաւ իր փոքրիկ երախային իր գրկումը։ Նա կերակրեց նրան և երբ փոքր ինչ մեծացաւ, տարաւ փարաւոնի աղջկան մօտ, որոնք կրթեց նրան իր որդուն պէս և անուանեց Մովսէս, որ նշանակում է ջրից հանած։

## ԳԼՈՒԽ ԼԴ.

## ՄՈՎՍԷՍԸ ՑՈԹԼՐԻ ՄՕՏ.

Մովսէսը, երբ մեծացաւ, էր հզօր մարմնով և հոգով և սովորած էր բոլոր իմաստութիւնը Եգիպտացւոց։ Բայց չնայելով առատութեան և բաղդաւորութեան, որով նա պատած էր, նա չէր մոռանում իր նեղացած եղբայրներուն՝ խարայէլացիներուն։ Նա չէր կամենում թագաւորի որդի անուանվիլ. նա աւելի լաւ էր համարում Աստուծոյ ժողովրդի աղքատութեանը մասնակից լինել, քան թէ վայելել մեղսալից քաղցրութիւնները փարաւոնի տան մէջ։ Նա կռապաշտների մէջ չմոռացաւ ճշմարիտ Աստծուն և բոլորովին կարեկից էր նեղացած խարայէլացիների խեղճ վիճակին։

Մի անգամ, երբ այցելու թիւն արաւ իր եղբայրներին, տեսաւ, որ մի Եգիպտացի անողորմաբար ծեծում էր Իսրայէլացուին։ Մովսէս ամէն կողմը նայեցաւ, տեսաւ, որ ոչ ոք չկայ։ Իսկոյն իր ազգակցին պաշտպան կեցաւ և սպանեց Եգիպտացուին ու ծածկեց նորա մարմինը աւազի տակ, կարծելով, թէ ոչ ոք չի իմանալ նորա այս մարդասպանութիւնը. բայց փարաւոնը իմացաւ և Մովսէսը գուցէ իր սիրոյն համար իր կեանքը կորցնէր, եթէ Եգիպտոսից չըփախչէր։

Եգիպտոսից փախչելով գնաց Մարդիամու երկիրը և ճանապարհից դադրած լինելով, նստաւ մի ջրհորի մօտ։ Այս տեղի մօտ բնակում էր մի քահանայ, որ եօթն աղջիկ ունէր. նոքա արածում էին իրենց հօր խաշնները։ Երբ այս աղջիկները ջուր էին հանում, որ ջրեն իրենց ոչխարներուն, եկան ջրհորի մօտ կոպիտ հովիւներ, որոնք ուզում էին աղջիկներուն դուրս անել, որ առաջ իրենց ոչխարներուն խմացնեն։ Մովսէս, որ միշտ թոյլերին և նեղացածներին պաշտպանում էր, չթողաւ հովիւներուն խաւսութիւն անել և օգնեց աղջիկներին իրենց խաշնները ջրելու։

Այն ժամանակ ցոթեր որի աղջիկները ոչխարներուն տուն քշեցին։ Երբ հայրը նրանց տեսաւ, հարցրեց. «ինչո՞ւ համար այսօր այսպէս շուտ յետ դարձաք». մի Եգիպտոսից եկած անծանօթ մարդ օգնեց մեզ ջուր հանելու ու ոչխարներուս ջրելու». պատասխանեցին աղջիկները։ Հայրը շատ բաւական մնաց օտարականի այսպիսի գործքով և հարցրեց աղջիկներուն. «ո՞ւր է այն օտարականը. ինչո՞ւ չկանչեցիք նրան մեր տուն. գնացէ՛ք շուտով և հրաւիրեցէ՛ք նրան մեզ մօտ ընթրիքի»։ Մովսէս գնաց ցոթերի

Մեռա և որովհետև լաւ մարդիկը շուտով բարեկամանում են մէկ մէկու հետ, Մովսէս շուտ բարեկամացաւ Յոթերի հետ, որոնք նրան կին տուին իր աղջկանը Սեպփովրային։

ԳԼՈՒԽ ԼԵ.

## ԱՆԿԷԶ ՄԱՐԴԻՆ

Մովսէս արածում էր իր անասուն Յոթորի խաշները։ Մովսէս յաճախ մտածում էր իր եղբայրների՝ Իսրայէլացիների վերայ և աղօթք էր անում Աստուծ, որ ազատէ նրանց Եգիպտացւոց ծառայութիւնից։

Մի անգամ Քորէբ լեռան տակ ոչխարները արածելիս տեսաւ Մովսէս մի մարդի, որ այս տեղերում դուրս է գալիս պատած կրակով։ Կռակը վառվում էր, բայց թուփը անվնաս էր։ Մովսէս մօտացաւ տեսնելու, որ լաւ տեսնէ այս հրաշալի երևոյթը։ Յանկարծ թփի մէջից նա լսեց ձայն, որ կանչում էր. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս».—«Ես եմ, Տէր. ի՞նչ է,» պատասխանեց Մովսէսը։ «Ես եմ քո հայրերի Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի և և Յակոբի Աստուածը», ասաց ձայնը։

Մովսէս, լի երախտագիտութեամբ և յարգութեամբ ծածկեց իր երեսը։ Աստուած շարունակեց. «Ես տեսնում եմ ժողովրդեանս թշուառութիւնը Եգիպտոսի մէջ. լսում եմ նորա աղաղակը, և հասու ինձ նորա աղօթքը. Ես կամենում եմ ազատել նրանց Եգիպտացւոց ձեռքից, և մտցնել գեղեցիկ, ընդարձակ երկիրը, ուր բղխում է մեղը և կաթ, այն է Քանանացւոց երկիրը։ Ես ղրկում եմ քեզ Փարաւոնի մօտ, որ հանես իմ ժողովուրդս Եգիպտոսից»։ Մովսէս խոնարհութեամբ ասաց. «Տէր Աստուած. ես ո՞վ եմ, որ համարձակվիմ թագաւորի առաջը դուրս գալ և

խրայէլացիներուն հանել Եգիպտոսից։ Եւ խրայէլացիներն
էլ չեն լսել ինձ և չեն հաւատալ. որ ինձ Աստուած յայտ-
նըվեցաւ. Աստուած ասաց. «Այդ ի՞նչ է ձեռումդ»։—«գա-
ւազան». պատասխանեց Մովսէս։ «Գցի՛ր դրան գետնին վե-
րայ». ասաց Աստուած։ Մովսէս գցեց իր գաւազանը գետ-
նին վերայ և գաւազանը դարձաւ օձ։ Մովսէս վախեցաւ և
և կամենում էր փախչել. բայց Աստուած ասաց նրան. «ձգ-
գի՛ր ձեռքդ և վեր առ օձին». Մովսէս ձգեց ձեռքը, վեր ա-
ռաւ օձին և նա կրկին դարձաւ գաւազան։ Աստուած կրկին
ասաց նրան. «դի՛ր ձեռքդ ծոցդ։ Մովսէս դրաւ իր ձեռքը
ծոցը, ու երբ հանեց տեսաւ, որ ձեռքը ծաղկած է բորոտ.
բայց երբ երկրորդ անգամ տարաւ նրան ծոցը Աստուծոյ
հրամանով. հանեց բոլորովին առողջ։ «Այս հրաշքները,
ասաց Աստուած, կ՚հաւատացնեն Խրայէլացիներուն, որ
նոցա հայրերի Աստուածը յայտնվել է քեզ»։ «Տէր Աս-
ուած», ասաց Մովսէսը. «ես ծանրաբեղու եմ, զժուարու-
թեամբ եմ արտասանում բառերը»։ Աստուած ասաց. «ո՞վ
տուեց մարդուն բերան։ Ո՞վ է մարդուս կոյր, կամ ականջ
շինում։ ո՞չ արդեօք ես. գնա՛, ես կլինիմ քո բերանը. ես
կ՚սովորցնեմ, ինչ որ պէտք է խօսես»։ Մովսէսը, որ դեռ
էլի իրեն ընդունակ չէր համարում այս մեծ գործին,
ասաց. «Տէր Աստուած, խնդրում եմ քեզ, զրկի՛ր մի ուրիշ
շինա»։ Աստուած ասաց նրան. «քո եղբայրը Ահարոնը
ճարտարախօս է, նա կ՚հանդիպի քեզ ուրախութեամբ.
դու կ՚գտնես իմ պատգամները նորա բերանը, նա քո տեղ
կ՚խօսի ժողովրդի հետ»։ Մովսէս հպատակեցաւ։ Նա գը-
նաց Յոթորի մօտ և խնդրեց, որ իրեն թոյլ տայ Եգիպտոս
երթալու։ Յոթորը ասաց. «գնա՛ խաղաղութեամբ»։ Մով-
սէս նստացրեց իշերի վերայ իր կնոջ, երկու որդոցը, առաւ

իր գաւազանը և ճանապարհ ընկաւ։ Աստուած ասաց Ահարոնին. «գնա՛ անապատը քո եղբօրդ՝ Մովսէսի առաջ»։ Ահարոն շուտ գնաց և գրկելով համբուրեց նրան։ սրտանց ուրախացած։ Մովսէս պատմեց նրան. ինչու համար Աստուած իրեն զրկեց և երկուսը միասին գնացին Իսրայէլացիների մօտ։ Ահարոն յայտնեց Աստուծոյ հրամանը և Մովսէս արաւ հրաշքները, որոնք Աստուած նրան ցոյց տուեց։ Բոլոր ազգը հաւատաց և երկիւղածութեամբ երկրպագեց Աստծու։

## ԳԼՈՒԽ ԼԶ.

## ԵԳԻՊՏԱՑԻՈՅ ՏԱՍՆ ՊԱՏԻԺՆԵՐԸ

Այն ժամանակ գրեթէ բոլոր աշխարհքը ընկղմած էր կռապաշտութեան և ամէն կերպի անառակութեան մէջ։ Եգիպտոսը այս անառակութիւնների ազբիւրն էր։ Եգիպտացիները, ոչ միայն երկնային լուսաւորներին էին երկրպագութիւն տալիս, այլ կենդանիներին էլ անողորմ։ Նոքա պաշտում էին կուռքեր, և կարծում էին, թէ սոքա լսում են իրենց աղօթքները և կարող են օգնել իրենց։ Աստծու հաճոյ թուեցաւ իրեն յայտնել հրաշալի դիպուածներում մարդոցը, որ սոքա ճանաչեն վերջապէս ճշմարիտ մի Աստծուն, որ է երկնքի և երկրի Արարիչը։ Եգիպտացիները ինձ կ'ճանաչեն Աստուած ամենազօր», ասաց նա Մովսէսին. «կ'ձգեմ իմ ձեռս և կ'հանեմ նրանցից Իսրայէլացիներին»։

Երկու ծերունիները՝ Մովսէս ութսուն տարեկան և Ահարոն ութսուն երեք տարեկան, յայտնվեցան փարաւոնի առաջ։ Նոքա յայտնեցին նրան Աստուծոյ կամքը։ Աստուած ասաց. «կրկնեցին նոքա», թո՛ղ իմ ժողովուրդս»։

Փարաւոնը, հպարտութեամբ փքած, պատասխանեց։ Ո՞վ է այն Աստուածը, որին կամենում է, որ ես հպատակեմ. ես չեմ ճանաչում ձեր Աստծուն և ձեր ազգին էլ չեմ թողնել։

Մովսէսը, կամենալով համոզել Փարաւոնին իր նշանակութեան ճշմարտութիւնում, գցեց նորա առաջ իր գաւազանը, որնոր օձ դարձաւ. նա ցոյց տուեց իր բորոտ ձեռքը, որնոր կրկին բժշկեց։ Եգիպտացի քուրմերն էլ արին միևնոյնը. միայն Մովսէսի օձը կերաւ Եգիպտացիների օձերուն։ Փարաւոնը չհամոզվեցաւ այս հրաշքներով և շարունակեց չարչարել Իսրայէլացիներուն առաջվանից աւելի։

Մովսէսը Փարաւոնի առջև խփեց գաւազանով Ներոս գետի ջրին, և ջրերը ոչ միայն Ներոս գետում, այլև Եգիպտոսի ամէն ջրհորներում և լիճերում դարձան արիւն. ոչ ոք չէր կարողանում խմել և բոլոր ձկները սատակեցան։ Բայց Փարաւոնի սիրտը չկակղեցաւ։

Մովսէս ձգեց իր գաւազանը Եգիպտոս իգետի, աղբիւրների և լճերին վերայ և այս ջրերից դուրս եկան անթիւ բազմութեամբ գորտեր, որոնք ծածկեցին բոլոր երկիրը. թագաւորի պալատը, ամէն տները, անկողինները, շտեմարանները. ամէն բան լեք էր գորտերով։ Փարաւոնը խոստացաւ թողնել Իսրայէլացիներուն. բայց հապա գորտերը Մովսէսի նշանով ջնջվեցան թէ ոչ, Փարաւոնի սիրտը կրկին խստացաւ։

Մովսէս խփեց գաւազանով գետնին և բոլոր աւազը ու փոշին դարձան մուն (մոծակ) բացի գետէ մերկից. ուր բնակում էին Իսրայէլացիները. բոլոր Եգիպտոսի մէջ մունը ջարչարում էր մարդոց և այլ կենդանիներուն. բայց հպարտ

Փարաւոնը չէր փափկու մէ Եգիպտացւոց քու բաներն էլ աշխատում էին միւնոյնը անել. բայց չկարողացան և ստիպվեցան ասել Փարաւոնին. «այդ Աստուծոյ ձեռն է».

Յետոյ շանաձանձը լքցրեց արքունի պալատը և Փարաւոնի ծառաների տները, դաշտեր և ամէն բան, ինչ որ կար դաշտերումը։ Այն ժամանակ Փարաւոն խոստացաւ Աստուծոյ ժողովրդին թողնել. բայց երբ Եգիպտոսը ազատվեցաւ այս պատժից էլ, թագաւորը էլի չկատարեց իր խոստումն։

Սարսափելի մահ երևեցաւ կենդանիների մէջ բոլոր Եգիպտոսում, բացի Գեսէմի երկրից։ Ուղտերը, էշերը, եզները, ոչխարները, ամէնը մեռնում էին. բայց Փարաւոնը մնում էր էլի անհամոզելի։

Մովսէս վերստաւ ձեռին մոխիր և ցանեց այն օդում Փարաւոնի առջև։ Կեղը և խաղաւարդը ծածկեցին բոլոր Եգիպտացիներուն և բոլոր նոցա մնացած կենդանիներուն. բայց Փարաւոնը այս էլ բանի տեղ չդրաւ։

Մովսէս բարձրացրեց իր գաւազանը դէպի երկինք և ահա վերկացաւ սաստիկ մրրիկ, ինչպիսի երբէք չէր եղած Եգիպտոսում. գոռում էր սաստիկ գոռոցքը. անընդհատ փայլում էր փայլակը, որնոր լուսաւորում էր թանձր ամպերով ծածկած երկինքը. եկաւ այնպիսի սաստիկ կարկուտ, որ դաշտերի բոլոր բոյսերը և ծառերը ջարդվեցան և շատ մարդիկ, որոնք տնից դուրս էին, կատորվեցան։ Փարաւոնը աղաղակեց. «ես մեղանչեցի. արդար է Աստուածը, որնոր պատժում է ինձ և իմ ազգս. աղօթք արէք, որ այս սարսափելի մրրիկը վերջանայ. ես կ'թողնեմ խրայէլացիներուն»։ Բայց հապա երկինքը պարզվեցաւ թէ ոչ, Փարաւոնի սիրտը կրկին խստացաւ։

Մովսէս էլ մի անգամ ձգեց իր գաւազանը Եգիպտոսի վերան և երևեցաւ անթիւ բազմութեամբ մարախ ս-դումն և ծածկեց բոլոր երկիրը այնպէս, որ ոչինչ չէր երևում դաշտերում և ծառերի վերայ ոչ մի կանանչ տերև չմնաց. այն արտերը, կանաչները և բոյսերը, որոնք կարկուտից ազատվել էին, բոլորովին ջնջվեցան մարախից։ Փարաւոն խնդրեց ողորմութիւն, խոստացաւ կատարելու ամէն բան, ինչ որ Մովսէսը պահանջում էր, բայց իր խօսքը չպահեց։

Այնպիսի խաւար պատեց բոլոր Եգիպտոսը, որ երեք օր շարունակ ոչինչ չէր կարելի տեսնել։ Միայն գեսեմի երկրում ցերեկով փայլում էր արեգակը և գիշերը լուսաւորում էր լուսինը և փայլում էին աստղերը։ Փարաւոն սատանի քարկոծած ասաց Մովսէսին, «հեռացի՛ր աչքից, եթէ ես քեզ մէկ տեղ տեսնեմ, կ'հրամայեմ քեզ սպանել»։

## ԳԼՈՒԽ ԼԷ.

## ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

Մովսէս, Աստուծոյ հրամանովը վերջին անգամ գնաց Փարաւոնի առաջ և յայտնեց նրան յեհովայի խօսքերը. «Աստուած ասաց, երբ կէս գիշեր կ'լինի, ամէն անդրանիկները բոլոր Եգիպտոսի մէջ կ'մեռնին, թագաւորի որդուից սկսած մինչև վերջին աղախնի որդին. նոյնպէս էլ անասունների անդրանիկները։ Եգիպտոսի բոլոր երկրում կ'լինի ողբ, որպիսի երբէք չէ եղած. բայց Իսրայէլացւոց մէջ ամէն բան յաջողակ կ'լինի։ Այս վերջին հրաշքը կ'ցոյց ասց ձեզ, որպիսի զանազանութիւն է դնում Աստուած Եգիպտացւոց ազգին և Իսրայէլացւոց

ապրելու մէջ։ Սրանից յետո շարունակեց Մովսէս ասելով։ «Բոլոր քո ծառաներդ, բոլոր հպատակներդ կ'գան ինձ մօտ և ոտքս ընկնելով կ'ասեն. «դուռ այս տեղից դուս և քո ազգդ և ես դուրս կ'երթամ»։ Փարաւոնը ապրանքեցաւ։ Գիշերը մօտենում էր։ Աստուած Մովսէսի ձեռքով խրատ յէլացիներին յետագայ հրամանը տուեց. ամէն ընտանեաց գլուխը խրայէլացիներից պէտք է մորթէր մի ոչխար մի տարեկան, անարատ, այրինքն ուռանց բծի և թեսի և խորովէր կրակի վերայ ամբողջ, ոտքերը չկտրած։ Ամէն տանեկին, պէտք է պատրաստէր խմոր, որ եփէ բազարջ. այս վերջին ընթրիքը Եգիպտոսի մէջ պէտք է լինէր զօրացուցիչ կերակուր ճանապարհի համար և միևնոյն ժամանակ յիշատակ Աստուծոյ հովանաւորութեանը։ Որ ընտանիքը փոքրաթիւ էր, պէտք է հրաւիրէր դրացին, որովհետև ընթրիքից ոչինչ չպէտք է մնար։ Խրայէլացիներին հրամայած էր ուտել այս ընթրիքը կանգնած, ճանապարհի շորերով և գաւազանը ձեռնին։ Եւ ոչխարի արիւնովը սրսկած էին ամէն խրայէլացիների դռները։ Մահուան հրեշտակը, որոնք կտարուց այս գիշեր բոլոր Եգիպտացի անդրանիկներուն. անց էր կենում Եբրայեցւոց տների մօտով, որոնք զատկի դռների արիւնով նշանակած էին։

Կէս գիշերը եկաւ. ամէն խրայէլացւոց տներում կատարում էին զատիկը, այսինքն ուտում էին պասէքի գառը։ Այս ժամանակ կատարվում էր Եգիպտացւոց տուած վերջին պատիժը Աստուծոյ։ Ամէն անդրանիկ ընտանիքի մէջ մեռաւ, թագաւորի գահի ժառանգից սկսած մինչև վերջին աշխատաւորինը։ Նմանապէս սատակեցան անասունների անդրանիկներն էլ։ Փարաւոնը, նորա ծառանե-

րը և բոլոր ազգը պատած էր սարսափանքով։ Ողորմելի ա-
ղաղակ, լաց և ողբ լսելի եղան յանկարծ բոլոր Եգիպ-
տոսի մէջ։ Ոչ մի տուն չէր խնայուած. ամէն տան մէջ մեռել
կար։ Փարաւոն գիշերով հրամայեց կանչել Մովսէսին և
Ահարոնին և ասաց նրանց. «Շուտով հեռացէք իմ երկրի-
ցը, դուք և բոլոր Իսրայէլացիներդ։ Առէք ձեր հետ բո-
լոր ձեր անասուններն էլ և ձեր դուրս գալից առաջ օրհ-
նեցէք ինձ։» Եգիպտացիները սխրում էին Իսրայէլացի-
ներուն, որ շուտով հեռանան։ «Շտապեցէք. ասում էին
նոքա, թէ չէ, մենք ամէնքս կ'կոտորվինք»։ Իսրայէլացի
կանայք սխրվեցան եփել հացը չխմորված և շտերը
մինչև չեփած էլ առան հետերը։ Մի՞թէ չմոռացան հետ-
ը առնելու Յովսէփի ոսկրները։

Եգիպտացւոց ծառայութիւնից ազատվելու յիշատակին
համար Իսրայէլացիները մինչև այժմ ու


մեն պասէ-
քը. այսինքն ուտում են գիշերով պասէքի գառը և բո-
լոր շաբաթը բաղարջ։ Այս կ'ասարում են նոքա զարուն-
քի առաջին ամսի կէսին, որովհետև այս ժամանակ դուրս
եկան նոքա Եգիպտոսից. բայց Եբրայեցւոց պասէքը այժմ
ոչինչ նշանակութիւն չունի, նա օրինակ էր ապագային
և նորա տեղ բռնեց այժմ իսկ ճշմարիտ քրիստոնէական
պասէքը։ Պասէքի գառը, ոլի արիւնը ազատեց Եբրայե-
ցիներուն մահուան հրեշտակիկ ոտորածից, օրինակ էր Ա-
մենամաքուր Գառին՝ Յիսուսին Քրիստոսին, որի արիւնով
հաւատացողները ազատվում են յաւիտենական մահից։

Յակոբը մտաւ Եգիպտոս եօթանասունհինգ հոգով։
Զորս հարիւր երեսուն տարի մնաց նորա ազգը Եգիպտո-
սում։ և երբ Մովսէս հանեց Իսրայէլացիներուն, որոնք

վեց հարիւր հազար հոգիք էին, չհամարելով կանանց և երեխաներուն։

## ԳԼՈՒԽ ԼԸ.

## ԿԱՐՄԻՐ ԾՈՎԸ ԱՆՑՆԵԼԸ.

Այսպէս ազատեց Աստուած Իսրայէլացիներուն ծանր ծառայութիւնից։ Աստուած ինք ցոյց էր տալի նրանց ճանապարհը. հրաշալի ամպը առաջնորդում էր Աստուծոյ ժողովրդեան. ցերեկով ամպը էր խաւարին և պաշտպանում էր նրանց արդեան ճառայդաթներից և գիշերով երևում էր նա հրեղէն և լուսաւորում էր նոցա ճանապարհը։ Երբ, Իսրայէլացիները ամպին հետևելով, հասան կարմիր ծովի ափը, բանակ գցեցին մի հովտի մէջ։

Բայց այս միջոցին փարաւոնի և նորա ազգի միտքը փոխվեցաւ։ «Այս ի՞նչ արինք մենք» ասում էին նոքա, «ինչո՞ւ թողինք այնքան բազմութիւնը մեր ծառայութիւնից»։ Փարաւոնը ասաց. նրանց պատում է անապատը, նոքա չեն գտնել ճանապարհ. հասնենք նոքանից։ Նա շուտ հրամայեց պատրաստել վեց հարիւր լաւ պատերազմական կառքեր և բոլոր իր զօրքով, բոլոր հեծեալներով և զօրավարներով Իսրայէլացիների ետևից ընկաւ և հասաւ նոքանց կարմիր ծովի ափի մօտ։

Գիշերը մօտենում էր։ Իսրայէլացիները պատած էին ամէն կողմից. առաջներին ծովն էր և ետևներին փարաւոնի անթիւ զօրքը։ Ահը պաշարեց նրանց։ Մէկ քանիսը աղօթք էին անում, խնդրելով Աստուծմէ, օգնութիւնխակ միւսները պարսաւում էին Մովսէսին ասելով. «մի՞թէ փոքր էր գերեզմանի տեղ մեզ համար եգիպտոսում։ Ինչո՞ւ բերիր մեզ այս տեղ, որ ս մէնքս անապատում կորչում ենք։

Աբելի լաւ էր մեզ համար, որ ծառայէինք Եգիպտացիներին քան թէ այս տեղ մեռնենք». այսպէս անհանգիստ լինում է մարդուս սիրտը, եթէ նորա յոյսը Աստուծոյ վրայ հաստատ չէ։

«Ոչինչ բանից մի՛ վախացէք, ասում էր Մովսէս. «Դուք կ՚տեսնէք, ինչպիսի հրաշք կ՚գործէ Աստուած ձեր ազատութեան համար։ Շուտով այս Եգիպտացիները, որոնք այնպէս հպարտ կանգնած են ձեր առաջին, յաւիտեան կ՚կորչեն ձեր աչքից»։ Այսպէս հանդարտ և հանգիստ լինում է այն մարդու սիրտը, որնոր դնում է իր բոլոր յոյսը Աստուծոյ վերայ։

Այն ժամանակ Աստուած ասաց Մովսէսին. «Թող վեր կենան Իսրայէլացիները և շարունակեն իրենց ճանապարհը. իսկ դու առ գաւազանդ և ձգի՛ր ձեռդ ծովի վերայ. ջուրը երկու կ՚բաժանվի և Իսրայէլացիները կ՚անցանեն ցամաքով։ Եգիպտացիները կ՚իմանան, որ ես եմ Տէր Աստուածը։ Ես կ՚ցոյց տամ իմ զօրութիւնս փարաւոնի, նորա կառքերի և հեծեալների վերայ»։ Ամպը բարձրացաւ և կանգնեցաւ Եգիպտացիների և Իսրայէլացիների մէջ։ Իսրայէլացւոց կողմում նա վայլում էր կրակի պէս և ցրում էր գիշերային խաւարը. իսկ Եգիպտացիների կողմումը էր խաւարային։ Այսպէս գիշերով երկու բանակները մէկ մէկու չկարողացան հանդիպել։

Մովսէս ձգեց իր գաւազանը և արմիր ծովի վերայ և ջուրը բաժանվեցաւ երկու մասն։ Սաստիկ հողմը ցամաքացրեց ծովի յատակը և բոլոր գիշեր Իսրայէլացիներից էին կենում ծովի ցամաքած յատակի վրայով։ Նոքա գնում էին և երկու կողմում կանգնած էին պատերի պէս բարձրացած ջրերը։ Երբ լուսացաւ, փարաւոնը, տեսնելով որ Իսրայէ-

լացիները անց են կենում ծովի միջով ինչպէս ցամաքի վրայ, յանկարծ ընկաւ նոցա հետևից և իր կառքերովը, այրուձիով և բոլոր զօրքով մտաւ ծովի մէջտեղը։ Այն ժամանակ վեր կացաւ մի մի սատանիկ, եկան ամպերը, գոռաց գոռոցքը, փայլեցան փայլակները. «յեռ դառնանք, յեռ, աղաղակեցին սարսափած Եգիպտացիները. Աստուած ինքը պաշտպանում է Իսրայէլացիներուն. փախչենք նորա բարկութիւնից». բայց Աստուած հրամայեց Մովսէսին, որ բոլոր Իսրայէլացիներով անց էր կացել միւս ափը, դարձընել իր գաւազանը Եգիպտացիների դէմ։ Մովսէսը ձըգեց իր ձեռքը—և ծովը սարսափելի ձայնով թափվեցաւ Եգիպտացիների վերայ, ծածկեց կառքերը, այրուձիին և բոլոր զօրքերուն, ոչ մի Եգիպտացի կենդանի չնաց։

Այն ժամանակ Մովսէս բոլոր Իսրայէլացիների հետ միասին երգեցին Աստուծոյ շնորհակալութեան երգ, ասելով. օրհնենք Տիրոջը, որովհետև փառաւորված է նա։ Օգնական և պաշտպան է նա ինձ, նա եղաւ իմ փրկութիւն, նա է իմ Աստուածս և փառաւորում եմ նրան. իմ հօրս Աստուածն է նա և բարձրացնում եմ նրան. և այլն։ Մովսէսի քոյրը Մարիամ ուրիշ Եգիպտացի կանանցը հետ միասին, առանձին պար կազմելով, կրկնում էր մի և նոյն խօսքերը։

ԳԼՈՒԽ ԼԹ.

## ՀԱՑ ԵՐԿՆՔԻՑ ԵՒ ՋՈՒՐ ՔԱՐԻՑ.

Երբ Իսրայէլացիները անցան Կարմիր ծովը բանակ գցեցին ընդարձակ, անպտղաբեր և անբնակ անապատում. ոչ մի սեղջէր երևում ոչ ցանք և ոչ խրճիթ։ Իսրայէլացիները մնաւանդ զգում էին ջրի պակասութիւն։ Մի անգամ

գուան նոքա ջուր։ միայն գաւն էր այն։ Աստուած հրամայեց Մովսէսին դնել նորա մէջ մի կտոր փայտ և. ջուրը բոլորովին լաւացաւ և խմելու ջուր դարձաւ։ Եգիպտոսից դուրս գալից երեք օր յետո Իսրայէլացիների հացը պակասեցաւ և չգիտէին, որտեղից առնեն հաց։

Ամէն այն հրաշքներից յետո, որոնք Աստուած նոցա ազատութեան համար գործեց, կարելի՞ էր արդեօք, որ Իսրայէլացիները երկմտէին Աստուծոյ ողորմածութեան մասին։ Բայց նոքա, բոլորովին իրենց յոյսը Աստուծոյ վերայ դնելու տեղ, որտանջում էին և ասում էին Մովսէսին և Ահարոնին. «Ինչո՞ւ չմնացինք մենք Եգիպտոսում։ Մեզ համար այն տեղ լաւ էր, մենք հաց շատ ունէինք և մեր առաջը դրած էին մսով լիք կաթսաները։ Դուք բերիք մեզ անապատը, որ բոլոր ազգը կոտորվի սովից։ Զնայելով, որ այս խօսքերը խիստ անմիտ և անշնորհակալ էին, էլի Աստուած մեղքացաւ այս անգամ էլ այն փոքրոգի ազգին։ Նա ասաց Մովսէսին. «Ես կ'ղրկեմ ձեզ հաց երկնքից, թող ժողովուրդը ամէն առաւօտ դուրս գայ վրաններից և հաւաքէ հաց, ինչքան իրեն հարկաւոր է։ Թող նոքա տեսնեն, որ ես եմ ձեր Տէր Աստուածը»։ Մովսէս և Ահարոն յանդիմանում էին ժողովրդին ասելով։ «Մենք ի՞նչ ենք. դուք որտանջում էք ոչ թէ մեր վերայ, այլ իրեն Աստուծոյ վերայ։ Էդուց դուք կ'տեսնէք Աստուծոյ ողորմութիւնը ձեր վրայ»։

Առաւօտը վաղ, երբ ցողը ինչաւ, բոլոր անապատը, կարծես թէ, ծածկած էր ձիւնով։ Սոքա էին մանր սպիտակ հատիկներ, նման գինձի և ունէին մեղրով խառնած աղուրի համ։ «Այս ի՞նչ է», աղաղակեցին Իսրայէլացիները։ Այս այն հացն է, որ ձեզ ղրկում է Աստուած»։ պատասխանեց Մովսէս։ «Հաւաքեցէ՛ք, ինչքան ամէն ոչկիր

բաւական է մի օրվան համար։ Այս կերակուրը կոչվում էր Մանանայ։ Իսրայէլացիները հաւաքում էին նրան ամէն առաւօտ և կերակրվում էին նրանով։

Մանանան մի օրից աւելի չէր պահվում, միայն այն մանանան, որնոր շաբաթի օրվան համար քաղում էին պ[illegible]նում էր երկու օր։ Շաբաթի օրը չէր իջնում և այս պատճառով Իսրայէլացիները շաբաթի առաջիկայ օրը պատրաստում էին երկու օրվան համար։

Իսրայէլացիները առաջ գնալով հասան ուրիշ անապատ տեղ, ուր բոլորովին ջուր չկար։ Մարաւը նրանց նեղացնում էր և նոքա աղօթքով դէպի Աստուած դառնալու տեղ սկսան էլի տրտնջել Մովսէսի վերայ. «Տո՛ւր մեզ ջուր», կանչում էին նոքա, «մենք, որպէս քեզ, և ամէն մեր անասունները մեռնում ենք ծարաւից. ինչո՞ւ հանեցիր դու մեզ Եգիպտոսից»։

«Դուք էլի մեղանչում էք Աստուծոյ դէմ, ասում էր նրանց Մովսէսը։ Բայց ծարաւից նեղացած ժողովուրդը չէր լսում նորա խօսքերը և շարունակում էր գոռալ և տրտնջալ։ Աստուծոյ երկայնամտութիւնը դեռ չկտրվեցաւ։ Նա մեղքացաւ նեղացած ժողովրդի՝ և ասաց Մովսէսին, «առ գաւազանդ և գնա՛, կանգնի՛ր Իսրայէլացիների առջևը. դու կ'տեսնես վէմ, խփի՛ր նրան գաւազանովդ և ջուրը կ'բղխէ քարից, նա կ'ջրէ բոլոր ժողովրդեանդ»։

Մովսէսը մօտեցաւ վէմին, և բոլոր ժողոված ազգի առաջին խփեց իր գաւազանով քարին—և ահա՛ առատ քաղցր աղբիւր ջրի սկսաւ բղխել քարից։

Սրանից խմեցին բոլոր Իսրայէլացիները և նոցա անասունները։ Ամէնքը ուրախացան և փառաւորում էին տէրտերի հրաշքը։

## ԳԼՈՒԽ, Խ.

## ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ.

«Իսրայէլացիները հասան Սինա լերան մօտ։ Մովսէս ելաւ սարի գլուխը և Աստուած ասաց նրան. «Սա՛ Իսրայէլացիներին. Դուք տեսաք ինչպէս ես ջնջեցի Եգիպտացիներուն և ձեզ կարծես արծուի թևերի վերայ հանեցի Եգիպտոսից։ Այժմ եթէ կ'լսէք իմ ձայնիս, և կը պահէք իմ ուխտս, դուք կ'լինիք իմ ընտրեալ ազգս։ Բոլոր աշխարհքը իմն է, բայց թէ դուք կ'լսէք իմ խօսքերս և կ'պահէք իմ ուխտս, դուք կ'լինիք իմ սուրբ թագաւորութիւն, իմ քահանայութիւն, ընտրեալ և սուրբ ժողովուրդս։ Սա՛ իմ խօսքերս Իսրայէլացիներին»։ Մովսէս կրկնեց ժողովրդի առաջին Աստուծոյ խօսքերը և բոլոր Իսրայէլացիները միաձայն ազաղակեցին, «մենք պատրաստենք կատարելու Աստուծոյ ամէն հրամանները»։

Աստուած ասաց Մովսէսին. «դնա՛ ժողովրդին մօտ, սրբի՛ր ամէնուն, թո՛ղ լուանան իրենց շորեր և երրորդ օրը պատրաստ լինին։ Երբ փողի ձայնը կ'լսի, թո՛ղ մօտենան սարին։ Ամէնքը սրբեցան, հագան լուացած շորեր և պատրաստեցան մեծ և սուրբ հանդէսի համար։

Երրորդ օրը, երբ լուսացաւ, Իսրայէլացիները տեսան փայլատակներ և լսեցին դոռոցքի ձայն. թանձր ամպերը ծածկեցին Սինայի սարը, լսեցաւ փողի ձայնը. ժողովրդին պաշարեց երկիւղ և ահ։ Մովսէս ժողովրդին բանակից հանեց Աստուծոյ առաջ։ Նոքա մօտեցան սարի ստորոտին. բոլոր սարը ծխում էր, վառվում էր և շարժում։ Փողի ձայնը աւելի և աւելի զօրանում էր։

Յետոյ ամէն բան հանդարտեցաւ. Աստուծոյ ձայնը

յայտնի լսում էր բոլոր ժողովուրդը։

«Ես եմ քո Տէր Աստուածդ. մի՛ ունենար քեզ ուրիշ աստուածներ բացի ինձանից»։

«Մի՛ շիներ քեզ կուռքեր, և ոչ մի նմանութիւն, ոչ երկնքում և ոչ երկրիս վերայ, ոչ ջրերում և ոչ գետնի տակում։ Մի՛ երկրպագիր և մի՛ լսի՛ր նրանց»։

Միտդ պահի՛ր շաբաթի օրը, որ սուրբ պահես նրան. վեց օր գործի՛ր և ամէն քո բաներդ արա՛, եօթներորդ օրը՝ շաբաթը նուիրի՛ր քո Աստուծուդ»։

Պատուի՛ր հօրդ և մօրդ և քեզ բարի կ'լինի ու երկարակեաց կ'լինիս երկրիս վերայ»։

«Մի՛ սպաներ»։

«Մի՛ շնար»։

«Մի՛ գողանար»։

«Քո ընկերիդ վերայ սուտ վկայութիւն մի՛ տար»։

«Քո ընկերիդ կնոջ մի՛ ցանկանար. մի՛ ցանկանար նորա արտին, ոչ նորա ծառային, ոչ աղախնին, ոչ եզին, ոչ էշին և ոչ անասուններին և ամէն բանին, որ ինչ նրան պատկանում է»։

Բոլոր ժողովուրդը լսում էր Աստուծոյ և փողի ձայնը բոլոր աղդը տեսնում էր բոցը և սարը, որնոր ծխում էր։ Նա կանգնած դողում էր և սարսում։ «Մի՛ վախացէ՛ք», ասաց Մովսէս. «Աստուած ձեզ դէպ 'ի բարին է առաջնորդում. հպատակեցէ՛ք նրան և փախէ՛ք մեղքից»։ Այդը միաձայն խոստացաւ կատարել պատուիրանները։ Այս անց.քի յիշատակի համար Իսրայէլացիները մինչև այժմ ուտում են պինտէկոստէն, որովհետև այս պատահեցաւ Պասէքից յետոյ եօթներորդ օր յետոյ։

## ԳԼԽԻ ԽԱ.

## ՈՍԿԻ ՈՐԹԸ.

Սրանից յետո Մովսէս դնաց Սինայի գլուխը, ուր Աստուած տուեց շատ ուրիշ օրէնքներ էլ Իսրայէլացիներին և իր տասն պատուիրանները երկու քարէ տախտակների վերայ գծագրած։ Մովսէս մնաց Սինայի գլխին Աստուծոյ հետ խօսելով քառասուն օր և քառասուն գիշեր։

Ժողովուրդը նորա բացակայութեան ժամանակ վճռեց քանդել իր ուխտը Աստուծոյ հետ։ Իսրայէլացիները ուզում էին, Եգիպտացւոց օրինակով, ունենալ կուռքեր։ «Մենք ուզում ենք գնալ առաջ, ասում էին նոքա Ահարոնին։ Շինի՛ր մեզ համար աստուածներ, որոնք մեզ առաջնորդեն։ Մենք կ՚տանենք նրանց մեր ամբոխի առջևը։ Մենք չգիտենք, ի՞նչ եղաւ Մովսէսի հետ, որոնք մեզ Եգիպտոսից հանեցն։ Ահարոնը վախեցաւ ժողովրդին ընդդէմ խօսելու և ասաց։ «Բերէ՛ք ինձ ձեր կանանց և աղջիկների ոսկի գինդերը և մատանիները»։ Իսրայէլացիները շուտ հաւաքեցին իրենց կանանց և աղջիկների օղերը և մատանիները և բերին Ահարոնին մօտ, որոնք բերած ոսկի ոչխարի ձուլեց որթ (հորթ)։ Երբ սրան տեսաւ, բոլոր ազգը աղաղակեց։ «Ահա՛ այն աստուածը, որոնք մեզ հանեց Եգիպտոսից»։ Նոքա տուին Ահարոնին կանգնել սեղան և զոհել ոսկի որթին։ Ուրախանում էին և պար էին գալիս նորա չորս կողմում։

Մովսէս չ՚իմանում, ինչպէս Սինայի ստորոտումն լինում էր։ բայց Աստուած ասաց նրան։ «Իջի՛ր սարից, ժողովուրդը, որին դու հանեցիր Եգիպտոսից, մեղանչեց, նա շուտ դարձաւ իմ ցոյց տուած ճանապարհից։ Ես կ՚ջնջեմ նրան և

դու կ'լինես նախահայր ուրիշ մեծ ազգի։ Բայց Մովսէս ընկաւ Աստուծոյ առաջ և խնդրեց Նրան, որ խնայէ իր ժողովրդին։ Աստուած լսեց Մովսէսի աղօթքը և խնայեց Իսրայէլացիներուն։

Մովսէս ինքնամէջ սարից, ձեռին օրինաց տախտակները բռնած. բայց երբ մօտեցաւ քանակին, տեսաւ ոսկի որթ են և ազգին, որոնք երկրպագում էին էր տալիս Նրան, բարկութիւնից գցեց տախտակները և կոտրեց։ Ցեղոյ հրամայեց որթ են այրել, փոշի շինեց Նրան ու ջրի մէջ խառնելով, հրամայեց Իսրայէլացիներին խմել։ «Ի՞նչ արին քեզ այս մարդիկ, ասաց Մովսէս Ահարոնին, որ դու Նրանց այսպիսի մեղք անել տուի՛ր»։ «Մի՛ բարկանար», պատասխանեց Ահարոնը, «դու ինքդ էլ լաւ գիտես նոցա յանդգնութիւնը. նոքա, որոնք ցաւում էին որթ ի վերայ ապանվեցան Ղևտացիների սրով։ Շատ հազարներ փչացան։ Այն ժամանակ Մովսէս ասաց. «դուք խի՛ստ մեղանչեցիք. ես կ'բարձրանամ էլի սարի գլուխը, որ կակղացնեմ Աստծուն, որոնք զայրացած է ձեր յանցանքի վերայ»։ Նա եկաւ սարի գլուխը և գոչեց Աստծուն ասելով. «Տէր, Քո ազգդ մեղանչեց Քեզ, բայց Քո ողորմածութեամբդ ների՛ր նորա յանցանքը, կամ ջնջիր իմ անունս կենաց գրքից»։ «Կ'ջնջեմ կենաց գրքից նորա անունը, որոնք մեղանչեց ինձ». ասաց Աստուած։ «Կ'գայ օրը, երբ կ'ինջնի իմ ապտիժս մարդոց վերայ իրենց մեղքերի համար»։ Մովսէսը այս անգամ էլ մնաց Սինա սարին վերայ քառասուն օր և քառասուն գիշեր խօսելով Աստուծոյ հետ երես երեսի։ Աստուած տուեց Նրան ուրիշ տախտակներ, վրան պատուիրանները գծագրած և երբ Մովսէս ինքաւ սարից, նորա երեսը այնպէս փայլում էր, որ նա պետք է ծածկէր իր ե-

բեսը քոլով, որ ժողովուրդը կարողանար նայել նորա վերայ։

Աստուծոյ հրամանով Մովսէս շինեց տապանակ անիւտ փայտից, պատեց ներսն ոսկի թերթով և դրաւ նորա մէջ պատուիրանների տախտակները։ Առանձին, դոյն զդոյն շորերով և կաշիներով ծածկած վրան շինեց այս տապանակի համար։ Սա գրած էր երկրորդ վարագոյրի ետևը. իսկ առաջին վարագոյրի ետև գրած էր սեղանը խնկով, ոսկի աշտանակը եօթն ճրագարաններով և էլ մի սեղան տաճարիս հացերովը երեսայ։ Այս տապանը, որի մէջ պահվում էին պատուիրանները, անուանվեցաւ Տապանակ Ուխտի և վերանը, որի մէջ գրած էր Տապանակը կոչվում էր Խորան վկայութեան։ Սա պատած էր սրահով, ուր գրած էր զոհարաւոր և ժողովուրդը աղօթում էր։ Խորանի առաջին մասը, որ բաժանած էր սրահից (բակից) վարագոյրով, անուանվում էր Սրբութիւն. իսկ երկրորդը, որ բաժանած էր առաջինից ուրիշ վարագոյրով, անուանվում էր Սրբութիւն սրբոց։ Երբ ամէնը պատրաստ էր, ամպը ծածկեց խորանը, որնոր Աստուծոյ փառքով լեցուեցաւ։ Ահարոնը քահանայապետի շորերով, խորանի սրահում դրեց զոհը զոհարանին վերայ։ Այն ժամանակ ամպից, որ հովանի էր խորանին, լեցաւ զոհի վերայ կրակ։ Ժողովուրդը այս հրաշքը տեսնելով, ուրախութիւնից երեսով ընկաւ գետնին, երկրպագեցին մեծապէս Աստծուն և շնորհակալ եղաւ նրանց։

ԳԼՈՒԽ ԽԲ.

## ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈՐ ՀՐԱՇԵՔՆԵՐԸ ԱՆԱՊԱՏՈՒՄ.

Շուտով Իսրայէլացիների մէջ ծագեցան նոր ապստամբութիւններ, նոքա ձանձրացան այն հացերից, որ ընկ-

նում էր երկնքից. նոքա կամենում էին ուրիշ կերակուր։ Երեսուն վրանների գոնների մոտ նստած լաց էին լինում և գոռում էին փոքրիկ երեխաների պէս։ Ամաց մեզ միս, ասում էին նոքա։ Մենք չենք մոռանալ իսկի Եգիպտոսի վարունգները, սեխը, սոխը և խատորը։ Իսկ այժմ մենք մահանալից աւելի բան չենք տեսնում»։

Մովսէսը չափից դուրս տրտմեցաւ այսպիսի յիմարութեան վերայ, նա լաց էր լինում Աստուծոյ առջև։ «Յայտնի՛ր ժողովրդին», ասաց Աստուած, «նոցա լայը լսեցի։ Ես կ՚զրկեմ նրան միս, ոչ թէ մի կամ երկու օր այլ ամբողջ ամիս շարունակ, մինչև որ նրանից էլ զզուի։ Խաբայէլացիները այսուհետև թող չդանդատեն, որ թողին Եգիպտոսի երկիրը։

«Տէ՛ր Աստուած, ասում էր Մովսէս, նոքա վեց հարիւր հազար հաւակը հատած մարդիկ են բացի կանանց և երախաներից, որտեղից առնենք այնքան միս, որ բոլոր ամիս կերակրվի ողջ ազգը։ «Մի՞թէ Աստուծոյ ձեռը բաւական չէ։ ասաց Աստուած, այժմ կ՚տեսնես իմ խօսքերիս կատարվելը»։

Աստուծոյ հրամանով վեր կացաւ սաստիկ հողմ և բերաւ ծովից անթիւ բազմութեամբ լորամարդի։ Անապատի մի օրվան ճանապարհի չափ տեղ ծածկվեցաւ նրանցմով, երկու կանգուն բարձրութեամբ գետնից։ Ժողովուրդը հաւաքեց բոլոր այն օր և գիշեր և միւս օրը այս լորամարդներից։

Բացց գեռ ողջը չկարողացան ուտել, գեռ միսը առաջների տակն էր, երբ զգացին Աստուծոյ պատիժը։ Նոքա շատ ուտելից հիւանդացան և բազմութեամբ մեռ-

նում : Այնտեղ, ուր էր այն ժամանակ Եբրայեցիների բանակը, կոչվեցաւ գերեզման ցանկութեան:

Այս միջոցներում պատահեցաւ յիսադաց անցքն էլ : Ղևտացին Կորխ և երեք հոգիք Ռուբէնի ցեղից ուրիշ անուանի մարդոց հետ յարուցին մեծ խռովութիւն, նոքա վիճում էին Մովսէսի և Ահարոնի հետ նոցա իշխանութեան և քահանայութեան վերայ: Կորխին, Դաթանին և Աբիրոնին, այս վերջին երկուսին իրենց ընտանիքովը, կուլ տուեց երկիրը. իսկ միւս երկու հարիւր յիսուն հոգիները կոտորվեցան հրաշալի կրակով, երբ բուրուատը ձեռներին կանգնած էին վկայութեան խորանի առջև, կամենալով Ահարոնից քահանայութիւնը խլել: Միւս օրը, երբ դեռ շարունակվում էր խռովութիւնը, կոտորվեցաւ ժողովրդից 14.700 հոգի: Այս քահանայութեան իրաւունքի վէճերին յաւիտեան վերջ դնելու համար, հրամայեց Աստուած Մովսէսին, առնել ամէն տաներկու ցեղերի ծերերի գաւազանները և դնել խորանում: Մէկ գիշերում Ահարոնի գաւազանից բուսաւ ճիւղ ծաղկով և պտղով:

ԳԼՈՒԽ ԽԳ.

## ԽՈՍՏԱՑԵԱԼ ԵՐԿՐԻ ՎԵՐԱՑ ՀԱՄԲԱՒԸ:

Իսրայէլացւոց ազգը արդէն մօտենում էր Քանանացւոց երկրի սահմաններին : Մովսէս ընտրեց ցեռուին՝ Նաւեայ որդուն, Քաղէբին և տասն ուրիշ անուանի մարդոց Իսրայէլացիներից և զրկեց նրանց, որ լրտեսեն խոստացած երկիրը: Նոքա յետ դարձան քառասուն օրից: Մովսէսի և Ահարոնի առջևը դնացին ցեռուէ Նաւեայն և Քաղէբը ու բոլոր ժողովրդի առաջին պատմում էին յետադայն. «մենք էինք այն երկրում, ուր դուք մեզ զրկեցի. քաջամարտիւ այս

երկրում բնակում է մեղը և կաթ։ Ահա պատուղները, որ մենք բերինք այնտեղից»։ Նոքա ցույց էին տալիս թզոյզ նուռն և մեծ ողկույզ խաղողի։ Բայց միւս տասն լրտեսները ընդդէմ խօսեցան Յեսուին և Քաղէբին և ասացուցանում էին ժողովրդի մէջ վատ համբաւ երկրին վերայ։ «Երկիրը, ուր մենք էինք, ասում էին նոքա մարդածախ է իր բնակչացը համար*։ Այն տեղ քաղաքները մեծ են, պատած ամուր պատերով։ Այնտեղ բնակում են սկայներ, որոնց առջև մենք այնպէս փոքր ենք, ինչպէս մարախ։—Երբ այս լսեցին Իսրայէլացիները, սկսան լալ և դառնալ։ Նոցա լացը շարունակվեցաւ բոլոր գիշերը։ Վերջապէս Իսրայէլացիները ապրատամբեցան Մովսէսի և Ահարոնի դէմ։ Նոքա ասում էին. «Ինչո՞ւ չմեռայինք Եգիպտոսում։ Ասուած արդեօք մեզ այս տեղ նորա համար չբերաւ, որ մեզ, մեր որդոց և մեր կանանց մատնէ թշնամիներիս ձեռքը։ Աւելի լաւ է մեզ համար, որ դառնանք էլի Եգիպտոս։ Ընտրենք մեր մէջից զօրավար և դառնանք Եգիպտոս»։

Մովսէս և Ահարոն ընկան երեսի վերայ ժողովրդի առջև, որ փափկացնեն նորա սիրտը։ «Բայց մի՛ վախենաք ոչինչից», ասում էր Մովսէս, «Ասուած կ'պաշտպանէ ձեզ այս մարդոց դէմ էլ, ինչպէս նա պաշտպանեց Եգիպտացիների դէմ։ Մի՞թէ մոռացաք ինչպէս նա առաջնորդեց ձեզ անապատում, ինչպէս հօր պէս հոգաց ձեր վրայ»։ Յեսուն Նաւեայն և Քաղէբը տրտմութիւնից պատառեցին իրենց շորերը։ «Մենք տեսանք բոլոր երկիրը, ասում է, ինն նոքա, «նա շատ գեղեցիկ է։ Ասուծոյ օգնութեամբ մենք կ'մտնենք այն տեղ։ Ասուած կ'բնակեցնէ մեզ այն երկրում, ուր մե-

(Թիւ. գլ. ԺԳ. 33)

ղը և կաթ են բղխում. Աստուծմէն մի՛ ապստամբէք։ Այս երկրի ազգերից մի՛ վախենաք, մեզ՝ կ'ջնջենք նրանց։ Աստուած կ'լինի մեզ նրանց»։ Բայց 'ի զուր էին այս ամէն խօսքերը։ Ժողովուրդը կատաղած գոռում էր և կամենում էր քարկոծել Մովսէսին, Ահարոնին, Յեսու Նաւեային և Քաղէբին։

Այս միջոցին երևեցաւ Աստուծոյ փառքը ժողովրդի առջև ամպի մէջ խորանին վերայ։ Աստուած ասաց Մովսէսին. «մինչև ե՞րբ այս ժողովուրդը ինձ կ'բարկացնէ. մինչև ե՞րբ նա չի հաւատալ իմ հրաշքներիս. ես կ'կոտորեմ նրան և կ'ջնջեմ երկրիս երեսից. իսկ քեզ կ'շինեմ նախահայր աւելի զօրեղ և հզօր ազգի»։—Բայց Մովսէսը ասաց որ Խրայէլացիները կամենում էին քարկոծել, ասաց «Աստուած մի՛ ջնջեր այս մարդոց։ Երբ նոքա կ'ջնջվին երկրիս երեսից, Եգիպտացիները և ուրիշ ազգերը կ'ասեն. Աստուած չկարողացաւ Խրայէլացիներին մտցնել խոստման երկիրը, նոքա կորան անապատումն. ողորմած եղիր նրանց և ցոյց տուր քո զօրութիւնդ։ Տէր Աստուած, դու երկայնամիտ ես և բազումողորմ։ Աղաչում եմ քեզ, որ քո ողորմածութեամբդ ներես այս անգամ էլ քո ազգիդ իր յանցանքը»։

Աստուած ասաց. «ներում եմ քո խօսքովդ. Խրայէլացիները յանկարծակի այժմ չեն մեռնել, բայց նոցա ոսկրները կ'փտեն անապատումն. ոչոք նրանցից, որոնք արտնջացին իմ վերայ, չի մտնել խոստման երկիրը։ Նրան կ'տեսնեն միայն Յեսու Նաւեան, և Քաղէբը, որոնք ինձ հաւատարիմ մնացին։ Իսկ այն որդոց, որոնք ապստամբութեանը մասնակից չէին, կ'մտցնեմ խոստման երկիր և նոքա կ'տիրեն նրան։ Բայց նոքա էլ կ'մնան քառասուն տարի

անապատում ՝ մինչև որ փտեն նոցա հայրերի ոսկրները։

Տան հոգիք, որ Յեհուսի և Գաղէբի հետ միասին լրտեսեցին Քանանու երկիրը և յարուցին Իսրայէլացւոց մէջ խռովութիւն, մեռան յանկարծակի, իսկ մնացեալները, որ հաստակով դուրս եկան Եգիպտոսից մեռան անապատում կամաց կամաց։

Եգիպտոսից դուրս գալից յետո, քառասուներորդ տարին Եբրայեցիները կրկին մօտեցան խոստացած երկրի սահմաններին։ Այս տեղ նոքա էլի սկսան տրտնջալ Մովսէսի և Ահարոնի վերայ Ջրի պակասութեան պատճառով։ Երբ ստացան հրաման Ահարոնի հրաշալի գաւազանով քարից Ջուր հանելու, Եբրայեցւոց առաջնորդները ցոյց տուին այս անգամին իրենց հաւատի թուլութիւնը կամ երկբայութիւնը Աստուծոյ զօրմածութեան մասին անարժան ազգին վերայ։ «Արդեօք այս քարից Ջուր կ՚հանենք մենք ձեզ համար ասաց Մովսէսը Եբրայեցիներին և խփեց գաւազանով քարին երկու անգամ։ Հրաշքը գործվեցաւ։ բայց Մովսէս և Ահարոն, խոստման երկիրը տեսնելու ուրախութիւնից զրկվեցան։ Եռւտ այս բանից յետոյ Ահարոնը վախճանեցաւ։

Եբրայեցւոց նոր տրտնջանքի համար, Աստուած զրկեց նոցա վերայ թունաւոր օձեր, տրտնջողներից շատերը մեռան։ երբ Եբրայեցիները զղջացին իրենց մեղքը, Աստուած հրամայեց Մովսէսին դնել զրօշակի վերայ պղնձի պատկերը օձին։ և ով որ նայում էր այս պատկերի վերայ, ստանում էր առողջութիւն օձի թոյնից։ Նոյնպէս էլ այժմ մեզ համար խաչված Յիսուսի Քրիստոսի հաւատացողները ազատվում են մեղքից և սատանայի իշխանութիւնից։

ԳԼՈՒԽ ԻԴ.

## ՄՈՎՍԷՍԻ ՄԱՀԸ.

Մովսէսը, Իսրայէլացիների խոսումն երկիրը մտնելից առաջ արդէն, էր հարիւր քսան տարեկան ծերունի։ Իր մահից առաջ նա ժողովեց բոլոր Իսրայէլացիներին և հրամայեց, որ բերան առնեն իր շարադրած մեղարէական երգը, որնոր սկսվում է յետագայ խօսքերով. «Լսեցէ՛ք երկինք, ես կ'խօսեմ և թող լսէ երկիրը իմ բերանից պատգամները»։ Այս երգը, որ լիք է յորդորանքներով և սպառնալիքներով, թողեց Մովսէս ապագայ սերունդների համար իրրև յիշատակ։

Վերջին անգամ նա ասում էր ազգին իրրև Հայր իր որդոց. «Ես պէտք է մեռնիմ անապատում. բայց դուք կ'անցնէք Յորդանանը և կ'մտնէք գեղեցիկ երկիրը, որնոր Աստուած ձեզ խոստացել է։ Մնացէ՛ք հաւատարիմ Աստծուն։ Վկայ կանչելով երկինքը և երկիրը, ես թողնում եմ ձեզ իմ օրհնութիւնս էլ, անէծքս էլ. օրհնութիւնը—եթէ դուք կ'մնաք հաւատարիմ Աստծու. անէծքս—եթէ կ'ապստամբէք նրանից։ Ժամանակով Աստուած ձեր մէջից, ձեր եղբայրների մէջից, կ'վերկացնէ ինձ նման ուրիշ մարգարէ, նրան լսեցէ՛ք»։ Այս Մովսէսի նման Մարգարէն է մեր Տէրը Յիսուս Քրիստոս։ Յետոյ Մովսէս գնաց սարի գլուխը, ուրանից նա կարողանում էր նայել հեռու ից այն երկրին վերայ, որ խոստացած էր Իսրայէլացիներին, այն երկրին վերայ, ուր բնակում էին նորա սուրբ նախահայրերը Աբրահամ, Իսահակ և Յակոբ. նա տեսաւ նրան բոլոր իր պտղաբեր դաշտերով, գետերով և բարձր լեռներով։ Այնտեղ նաբաւ լերան գլխին Մովսէսը երկրում վախ-

ձանեցաւ Մովսէս։ Տեղը, ուր հանգչում է նորա մարմինը, մնաց անյայտ։

ԳԼՈՒԽ ԽԵ.

## ՑԵՍՈՒ ՆԱԻԵԱՅ. ԽՈՍՏԱՅԱԾ ԵՐԿԻՐ ՄՏՆԵԼԸ

Ո՞վ կ'մոցնէ ուրեմն Իսրայէլացիներուն Աւետեաց երկիրը. Մովսէս չկայ, ազգը որբացաւ. բայց կենդանի է աստուածը Աստուածը. նա լքցրեց իր հոգւով Յեսու Նաւեայն և հրամայեց նրան վերջացնել Մովսէսի սկսած գործը։

Իսրայէլացիները երեսուն օր սուգ արին Մովսէսի վերայ, յետոյ գուրս եկան բանակից և հրաշալի կերպով անցան Յորդանանը։ Երբ քահանաները, որոնք տանում էին Ուխտի Տապանակը մտան գետի մէջ ուղղ, Յորդանանի ջուրը բաժանվեցաւ և Եբրայեցիները առանց ոտները թրջելու անցան Յորդանան և հասան վերջապէս այն նպատակին, որի համար քառասուն տարի թափառում էին։ Ուրախութեամբ բարևեցին այն երկիրը, ուր բնակում էին նոցա նախնիք, որոնց հետ Աստուած ինքը խօսակցում էր. և ուր հանդատանում էին նոցա ոսկրները։ Այս պատահեցաւ պասէքից առաջ։

Այժմ դադարեցաւ մանանան իջնելու երկնքից, երբ Իսրայէլացիները առաջին անգամ կերան երկրի պտուղներից ուտելով պասէքը։ Բայց Աւետեաց երկրի բնակիչները կռապաշաններ էին. զեղեց և խիստ մարդիկ, որ իրենց հարատաղաստ որդոց զոհ էին բերում կռքերին։ Նոքա չէին ուզում թողնել Աբրահամի զաւակներուն իրենց նախնեաց երկիր մտնելու. այս պատճառով ծագեցաւ երկարատև պատերազմ, միայն Աստուծոյ օգնութեամբ Իսրայէլացիները ամէն տեղ յաղթում էին։

Առաջին քաղաքը, որին տիրեցին Իսրայէլացիները, էր

Երիքովը։ Սա պատած էր ամուր և բարձր պարսպով, որոնք անառիկ էին թվում։ Բոլոր Իսրայէլացի ժողովուրդը մօտեցաւ քաղաքին. նոցա մէջտեղը ճիշ գնում էին քահանաները, տանելով Ուխտի Տապանակը և փողեր փչելով։ Առաւօտուց հրամանով, վեց օր այսպէս պատերազմից ամէն կողմից Երիքովի պատերը փողեր հարկանելով։ Եօթներորդ օրը նոքա կերպարանափոխուեցան եօթն անգամ պատերազմեցին Երիքովի պատերի չորս կողմում և երբ քահանաները եօթներորդ անգամն փողերը փչեցին, ցեղուի տուած նշանով ժողովուրդը հանեց պատերազմական ձայներ. Երիքովի պատերը հրաշքով քանդուեցան և Իսրայէլացիները մտան քաղաք և սրեցին նրան։ Քաղաքի բոլոր բնակիչներին կոտորեցին բացի մի կնոջից, որի անունը Ռահաբ էր, իր ընտանիքով, որովհետև սա գնեց սրանից առաջ իր տունը ընդունել էր լրտեսներին, որոնց ցեղուն Նաւեան զրկել էր լրտեսելու համար։

Այսպէս Իսրայէլացիներ, Աստուն իրենց նիզակակից ունենալով, շարունակեցին իրենց աշխարհակալութիւնը։ Մի սաստիկ պատերազմի ժամանակ գաբաւոն քաղաքի մօտ, արեգակը մնում էր արդէն մայրը մտնելու, ցեղուն Նաւեան տեսնելով, որ չէ կարող վերջացնել պատերազմը մինչև արևի մտնելը, ասաց «ով արեգակ, կա՛ց Գաբաւոնի հանդէպը և դու լուսին կանգնիր Եղոնի ձորին վերայ»։ Ամէնը կատարուեցաւ ցեղուի խօսքով. արեգակը և լուսինը իրենց ընթացքը դադարեցրին և այս օրը ուրիշ նրանից երբեք եղաւ։

Իսրայէլացիները տիրեցին գրեթէ Քանանացւոց բոլոր երկրին և ջնջեցին բնակչաց մեծ մասը։ Այն ժամանակ ցեղուն Նաւեան սկսաւ բաժանել երկիրը Իսրայէլացւոց

տաններկու տոհմերին այսինքն Ռուբէնի, Շմաւոնի, Ցուդայի, Զաբուղոնի, Իսաքարի, Դանի, Գադի, Ասերի, Նեփթաղիմի, Բենիամինի, Եփրէմի և Մանասէի ցեղերի մէջ։ Երկու վերջիններըը էին Յովսէփի որդիքը, որոնց Յակոբ որդեգրեց։ Ռուբէնի, Գադի ցեղերը և Մանասէի կէս տոհմը ստացած էին իրենց բաժինը արդէն Մովսէսի ժամանակ Յորդանանի միւս կողմում։ Ղևիի տոհմը չունէր առանձին մասն, որովհետև Ղևտացիք կերակրվում էին զոհերից, որ բերում էին Աստուն և բնակում էին քաղաքներում, որոնք նրանց մասն հանած էին Իսրայէլացւոց ամէն ցեղերից Յորդանանի երկու կողմումն էլ, ծովի և անապատի միջացումն։

Ամէն բան այսպէս կարգադրելից յետոյ Յեսու Նաւեան հաւաքեց բոլոր Իսրայէլացիներին Սեղեմ, որ հրաժարական ողջոյն տայ նրանց իր մահից առաջ։ Նա միտքը բերաւ նրանց Աստուծոյ ամէն բարերարութիւնները և խնդրեց, որ նրան հաւատարիմ մնան։ Երբ ազգը խոստացաւ, որ չի անցնիլ Աստուծոյ օրէնքներից, Յեսու Նաւեան վախճանեցաւ հարիւր տասն տարեկան։

## ԳԼՈՒԽ ԽԶ.

## ԴԱՏԱՒՈՐՆԵՐԸ։—ԴԵԲՈՎՐԱ ԿԻՆ ՄԱՐԳԱՐԷ.

Յեսու Նաւեայի մահից յետոյ Իսրայէլացիները չունէին ընդհանուր զօրավար, որնոր հոգար Աստուծոյ օրէնքների կատարելուն վերայ և պաշտպանէր ազգը բազմաթիւ և հզօր թշնամիներից։ Մինչև նոքա հաւատարմութեամբ ծառայում էին Աստուծոյ, Աստուած ինքը պահում էր նրանց. իսկ երբ հեռացան ճշմարիտ Աստուծոյ պաշտօնից, Քանանացիք, Մովաբացիք, Փղշտացիք, Մադիամացիք և

Ամմոնացիք սկսան նեղել նրանց։ Բայց այս ծանր վիճակն էլ Աստուած չէր մոռանում նրանց, եթէ նոքա խոնարհութեամբ դառնում էին. նա զրկում էր նրանց փրկիչներ, որոնք կոչվում էին դատաւորներ։ Երբ նեղացնում էր նրանց Քանանացւոց Յաբին թագաւորը, կենում էր մի կին Դեբովրա անունով, սա դատում էր Իսրայէլացիներուն և էր մարգարէ։ Ամէն երեկոյի բաներուն նրանից խորհուրդ էին հարցնում և նրանից խնդրում էին Աստուծոյ կամքը։ Նա բնակում էր մի արմաւենիի տակ լեառներում, Եփրեմի ցեղի բաժնի մէջ։ Աստուած յայտնեց նրան, որ կամենում է տաներիկու տարի Յաբինից նեղացած Իսրայէլացիներուն ազատել և հրամայեց նրան, որ մի առնուանի մարդուն Նեփթալիմի ցեղից, Բարակ անունով, զրկէ տան հազարով Յաբնի զօրավարին Սիսարային դէմ։ Դեբովրան կանչեց Բարակին և յայտնեց նրան Աստուծոյ կամքը։ Բայց Բարակ առանց նրան յանձն չէր առնում պատերազմ երթալ։ Այն ժամանակ մարգարէուհին խոստացաւ գնալ նորա հետ։ Միայն այս էլ ասաց. «Ես կ'երթամ, միայն յաղթութեան փառքը կ'ընկնի կնոջ և ոչ քեզ»։ Բարակ ժողովեց տասն հազար զօրք։ Թշնամեաց զօրքը շատ բազմաթիւ էր նրանցից. բայց այս բանին չնայելով նոքա յաղթուեցան։ Սիսարայի զօրքը կոտորվեցաւ. իսկ ինքը փախաւ։ Սա երբ տեսաւ, որ Բարակ իր եռեից գալիս է, թռաւ կառքից ցած և փախչում էր ոտով։ Ճանապարհին կար մի Կինեցիի վրան։ Սիսարան թագնվեցաւ այս տեղ և ապաստանեցաւ վրանի տանտիկնից, որի անունը Յայէլ էր։ Այս ոչ կոտորվեցաւ մարգարէուհի խօսքը, որ ասում էր, թէ յաղթութեան կատարեալ փառքը կ'ընկնի կնոջ։ Դեբովրան և Բարակ այս յաղթութիւնից յետոյ երգեցին

## Աստուն հանդիսաւոր և շնորհակալութեան արհնութիւն:

### ԳԼՈՒԽ ԽԷ.

### ԳԵԴԷՈՆ.

Իսրայէլացիները էլի ընկան առաջվան անօրէնութեան մէջ: Նոքա մոռացան ճշմարիտ Աստուն և սկսան երկրպագութիւն տալ կռքերին: Այն ժամանակ Աստուած էլ հեռացաւ նրանցից և մատնեց նրանց Մադիամացւոց ձեռքը, որոնք եօթն տարի շարունակ գալիս էին հունձքի ժամանակ անթիւ ուղտերով, փչացնում էին և յափշտակում ամէն բան, ինչը գտնում էին: Այնքան ոչինչ պաշար այլ և Իսրայէլացիները հազիւ կարողանում էին ազատել իրենց կեանքը թաղնվելով այրերում և լեռների մէջ: Երբ վերջին թելը հատան նոքա, դարձան դէպի Աստուած և խնդրեցին նրանից օգնութիւն: Աստուած լսեց նրանց:

Մի Եփրա անունով անյայտ քաղաքում բնակում էր մի մարդ Գեդէոն անունով Մանասէի ցեղից, որան ընտրեց Աստուած, որ փրկէ իր ազգին:

Այս Աստուծոյ ընտրած զինուորը երեք հարիւր ընտիր մարդիկներով ցրուեց թշնամիների բազմութիւն զօրքը: Գեդէոնի երեք հարիւր զինուորները գիշերով մօտեցան թշնամեաց զօրքին, փչեցին երեք հարիւր փողեր և աղաղակեցին «Աստուծոյ և Գեդէոնի սուրը». թշնամիները սարսափած փախան մէկ մէկու սպանելով և Իսրայէլացիներին թողին հարուստ առար:

Իսրայէլացիները, երբ տեսան, որ Գեդէոնի ձեռքով ազատվեցան, ասացին նրան. «Թագաւորիր մեր վերայ դու

և քո ազգդ»։ բայց Գեդէոն, որին Աստուած ընտրել էր Իսրայէլացիներուն փրկելու համար և ոչ թագաւորութեան, պատասխանեց նրանց. «ես չեմ կամենում ձեր թագաւորը լինել։ Աստուած թող թագաւորէ ձեր վերայ։

Գեդէոնին անուանեցին Ցերոբոաղ էլ, որովհետև նա քանդեց բահաղ կուռքի բաղինը։ Դա մեռաւ խորին ծերութեան մէջ։

## ԳԼՈՒԽ ԽԸ։

## ԱԲԻՄԵՂԷՔ։

Գեդէոնը ունէր եօթանասուն որդի և մի որդի էլ սիկիմացի կնոջից. Աբիմեղէք անուն։ Գեդէոնի որդոց ոչ մինը չէր վնասում իշխանութիւն Իսրայէլացիների վերայ բաց Աբիմելէքից։ Սա էր հպարտ, փառասէր և խստասիրտ մարդ։ Գեդէոնի մահից յետո շուտով գնաց նա Սիկիմ իր մօր ազգականների մօտ, զինաւորեց նրանց Գեդէոնի միւս որդոց դէմ և անմարդաբար սպանեց բոլոր իր եղբայրներին, բացի ամենից փոքրին, որի անունը էր Յովաթամ։ Զարապարծութիւնը առանց պատժի չմնաց։ Սիկիմի բնակիչները, որոնք ընտրեցին Աբիմելէքին թագաւոր, առաջինը ապստամբեցան նորա դէմ։ Աբիմելէք գնաց նոցա վերայ պատերազմի, պաշարեց նոցա քաղաքը, առաւ այն և այրեց։ Սիկիմի բնակիչները հաւաքուեցան մի ամուր աշտարակի մէջ և կամենում էին մինչև վերջին զօրութիւնը պաշտպանել իրենց։ Աբիմելէք պատեց աշտարակը և հրամայեց նորա շուրջ կոպմնում շարել փայտ, որ այրէ։ Մի կին տեսնելով նրան աշտարակին մօտ, ուր ինքը փակուած էր, ցցեց նորա վերայ վերևից երկանի կտոր և ջարդեց գլխայրաապանի գլուխը։ Աբիմելէք կանչեց իր կապարձակրին և

հրամայեց նրան, որ սպանէ իրեն, չկամենալով մեռնել ձեռքով մեռնել։ Կապարձակին կատարեց նորա վերջին հրամանը։

. ԳԼՈՒԽ ԼԹ.

## ՑԵՓԹԱՅԷ

Մի քանի ժամանակից Ամենայնները յարձակվեցան Խարայէլացիների վերայ Գաղատի մէջ, Յորդանանի մէս կողմում։ Խարայէլացիները հաւաքեցին զօրք, բայց զօրավար չունէին։ Նոքա որոնում էին զօրավար, միայն ոչոք չէր ուզում կամ ոչոք չէր կարողանում առաջնորդել նրանց։ Նոքա միտքը բերին այն ժամանակ Ցեփթայէ անունով մէկին, որին եղբայրները մի քանի ժամանակ առաջ զուրս էին գցել հայրենի տնից, որ զրկեն նրան ժառանգութիւնից։ Ցեփթայէն տխրվեցաւ հեռանալ հայրենիքից և բնակվեցաւ օտար երկրում, ուր նա անուանի եղաւ իր քաջութեամբ։ Եւ այս պատճառով էլ Խարայէլացիները առում էին. «եթէ Ցեփթայէն մեր մէջ լինէր, յայտնի բան է, նա մեզ կ'ազատէր»։ Եւ նոքա մարդիկ ղրկեցին և կանչեցին նրան, որ իրենց զօրավար լինի։

Ցեփթայէն էր քաջ և մեծահոգի, միայն չկարողացաւ նա զսպել իր օրինաւոր բարկութիւնը և ասաց իր մտերիկած պատգամաւորներին, ինչպէս չարացած մարդ. «դուք չէ՞ք, որ ինձ աքսորեցիք հայրենի տնից և ասիպեցիք ինձ օտար երկրում թափառել. ինչո՞ւ այժմ ձեր նեղութեան ժամանակն եկաք ինձ մօտ»։

Բայց երբ լսեց ամէն թշուառութիւնները, որ քաշում էին իր քաղաքակիցները, մոռացաւ իր սեպհական նեղութիւնները և զրկանքը ու շտապով գնաց օգնելու Խարայէլացիներին։ Ցեփթայէի նման մեծահոգի և կարեկից

մարդը շուտ յանձն չի առնել արիւնահեղութիւն։ Նա աշխատում էր ամէն կերպի պատերազմը վերջացնել և երկու անգամ ղրկեց Ամմոնացւոց թագաւորին մօտ պատգամաւորներ, յորդորելով նրան, որ յետ կենայ իր անօրէն պահանջմունքներից և խաղաղութիւն անէ։ Բայց Ամմոնացւոց թագաւորը չընդունեց ոչ մի առաջարկութիւն. ուստի և ցեփթայէն վճռեց պատերազմ տալ։

Պատերազմի գաշտը գուրս գալիս ցեփթայէն առանց մոռանալու խոստումն արաւ, որ եթէ յաղթող կ'ելնոյ, ողջակէզ կ'բերէ առաջին բանը, ինչպէս իր տնից իրեն առաջ գուրս կ'գայ։ Նա ջարդեց թշնամիին, քշեց նրան իր երկրի սահմաններից և ազատեց իր ենթացած հայրենիքը։ Յաղթութեամբ տուն յետ դառնալիս, պատահեցաւ նրան քաղաքի դրան մօտ իր միամօր աղջիկը։ Սա գաղտագողցի կանանց և աղջիկների հետ իր ծնողի առաջ գուրս էրեկը, որ շնորհաւորէ նրան։ Ցեփթայէն, երբ նրան տեսաւ, սարսափած պատռեց իր շորերը։ «Աղջիկս իմ», աղաղակեց նա, «ես սարսափելի խոստումն արի»։ Հնգ աղջիկը հասկացաւ նորա միտքը ու ասաց խոնարհութեամբ. «ամէն հայր կատարիր քո խոստումը, երբ Աստուած պարգևեց քեզ յաղթութիւն։ Միայն տուր ինձ հրաման, որ երկու ամիս իմ ընկերակիցներով գնամ սարը և լամ իմ կուսութիւնս»։ Այս ժամանակի անցնելից յետո ցեփթայէն կատարեց իր խոստումը։

## ԳԼՈՒԽ Ը.

## ՍԱՄՍՈՆ.

Ցեփթայէի մահից յետո Խարայէլացիները իրենց անօրէնութեան համար ընկան փղշտացիների իշխանութեան

տակ։ Երկար ժամանակ տանջվեցան նոքա այս ծառայութեան մէջ. վերջապէս Աստուած տուեց նրանց մի արտաքոյ կարգի մարդ, Սամփսոն անունով, որնոր սարսափեցրեց փղշտացիներուն։ Հրեշտակը յայտնեց նորա ծնողներին, թէ նրանց կ'ծնի որդի գերբնական զօրութեամբ։ Երբ նա հասակ առաւ, կամեցաւ ամուսնանալ մի փղշտացի աղջկան հետ։ Ծնողները յայտնեցին նրան, որ Աստուածային օրէնքը արգելում է Իսրայէլացիներին օտարազգիների հետ կապակցութիւն ունենալ։ Բայց Սամփոսն չլսեց նրանց և անպատճառ կամենում էր կատարել իր կամքը։ Աստուած բանը այնպէս կարգեց, որ Սամփսոնի ամուսնութիւնը ինքը միջոց եղաւ փղշտացիներից վրէժ հանելու նոցա Իսրայէլացիներուն նեղացնելու համար։

Միանգամ Սամփսոն, երբ գնում էր իր հարսի մօտ, դաշտումը տեսաւ մի առիւծ, որնոր նորա վերայ յարձակեցաւ։ Սամփսոնը բռնեց և պատառեց նրան։ Մի քանի ժամանակից, երբ յետ էր դառնում մի և նոյն ճանապարհով, հանդիպելով իր պատառած առիւծին, կամեցաւ տեսնել նրան և դուրս ամբողջ մեղուների դունդ, որոնք մեղը էին շինել նորա բերանում։ Նա առաւ մեղրից, համը տեսաւ և բերաւ իր հօրն ու մօրն էլ, որոնք նոյնպէս կերան նրանից, միայն չասաց որտեղից էր առել այն։ Իր հարսանիքի օրը նա, այն ժամանակվան սովորութեամբ, առաջարկեց փղշտացիներին մի առասպել այն պայմանով, որ եթէ նոքա կ'իմանան եօթն օրվան մէջ, Սամփսոն, պէտք է, ամէն հիւրերին մի մի ճեռք շոր ընծայէր (հիւրերը երեսուն հոգի էին)։ Իսկ եթէ առասպելը չկարողանան լուծանել փղշտա-

ցիներըը, պէտք է, իրենք նրան տային երեսուն ձեռք շոր։

Ահա նորա առասպելը, «Ուտողից դուրս եկաւ ուտելիք և հզօրից քաղցր»։

Այսպիսի առասպելը անկարելի էր իմանալ, որովհետև Սամփսոնի սխրագործութիւնը առեւծին պէտք չէր իմանում, բայց Սամփսոն յայտնեց խորհուրդը իր հարսին, որոնք պատմեց այն փղշտացիներին։ Հիւրերը ձեւանալով, իբրև թէ իրենք իմացան առասպելը, ասացին, ի՞նչ է մեղրից քաղցր և ի՞նչ առեւծից զօրեղ։ Սամփսոն հասկացաւ, որ իր խորհուրդը հարսի դաւաճանութեամբը յայտնված է, բայց պայմանին նայելով շորերը պէտք է տար։ Նա երկար չմտածեց, թէ որտեղից առնէ շորերը։ Գնաց Ասկաղոն քաղաքը, սպանեց այնտեղ երեսուն փղշտացիներ և բերաւ նոցա շորերը հիւրերին, որոնք հրաւիրած էին հարսանիքումն և բարկացած գնաց իր հօր տուն։ Նորա կնոջ հայրը կարծելով, որ Սամփսոն բոլորովին թողեց իր կնոջ, տուեց նրան կին մի ուրիշին։ Մի քանի ժամանակից Սամփսոն եկաւ իր կնոջ մօտ և երբ իմացաւ, որ նրան ուրիշին կին են տուել, առանց թեամբ չկարողացաւ համբերել այս անպատուութեան և վճռեց այս բանի համար վրէժ հանել բոլոր փղշտացիներից։ Հնձի ժամանակը նա բռնեց երեքհարիւր աղուէս, երկու երկու կապեց նրանց պոչերից և պոչերի մէջ վառած ջահ դրեցնելով բաց թողեց հասած ցորենի դաշտերի մէջ, որոնք փղշտացիներին էին պատկանում։ Այսպէս այրվեցան նոցա ոչ միայն արտերը, այլ և խաղողի ծառերը ու ձիթենիներն էլ բոլորովին ջնջվեցան։

Փղշտացիք պահանջում էին, որ Իսրայէլացիները Սամփսոնին կապած իրենց ձեռքը մատնեն, ապա թէ չէ, սպառնում էին, որ կրակի և սրի զոհ կ'անեն բոլոր բնակիչներուն։ Սամփսոնը անձնատուր եղաւ Իսրայէլացիներին և թողեց իր ձեռքերը կապել չուաններով, բայց երբ փղշտացիները, նրան առած, կամենում էին տանել իրենց հետ, Սամփսոն կտրեց չուանները ինչպէս խծուծ, սառկած էշի ծնօտը վեր առաւ և այսպիսի ընչին զէնքով սպանեց հազար փղշտացի։

Մի անգամ էլ պատահեցաւ նա մի քաղաքում, որտեղ պատկանում էր Փղշտացիներին։ Կառավարութիւնը պահապան դրաւ այն տան մօտ, ուր նա կենում էր և երբ գիշեր եղաւ, քաղաքի դռները փակվեցան, ամէնքը կարծում էին, թէ Սամփսոնին անկարելի է փախչել. բայց Սամփսոն բարձրացրեց քաղաքի դռները իր սեմով և նիգով ու իր ուսին դրած տարաւ քաղաքի մօտ եղած սարի գլուխը և հանգիստ էլ դարձաւ տուն։

Եթէ Սամփսոնի բարեխառնութիւնը համեմատ լինէր նորա զօրութեանը, նա երբէք չէր ընկնիլ փղշտացիների ձեռքը։ Ապարդարար նա ծանօթացաւ մի Դալիլա անունով փղշտացի կնոջ հետ։ Փղշտացիները փողով և ընծաներով խաբեցին այս կնոջ, որ իմանայ Սամփսոնից, թէ ընչից է նորա այն անսովոր զօրութիւնը։ Նա 'ի գործ դրաւ ամէն կերպի հնարքներ, որ իմանայ նորա գաղտնիքը։ Վերջապէս Սամփսոն, չդիմանալով նորա խնդրելուն և հաւատալով նրան, յայտնեց, որ ծնողները իր ծննդից նուիրել են նրան Աստուծոյ, որ նորա մազերը երբէք գերծած չեն եղել և որ իր բոլոր զօրութիւնը կախված

է մազերից և եթէ սրանց կտրեն, նա ուրիշ մարդիկ-
ներից աւելի զօրեղ չլինիլ։ Դալիլան քնացրեց նրան և
մինչև որ նա անհոգութեամբ հանգստանում էր, կան-
չեց վարսավիրային, հրամայեց գերծել նորա գլուխը, ու
յետոյ կանչեց նորա թշնամիներուն։ Սամսոն, երբ զար-
թեցաւ, զգաց իր սկսարութիւնը և սոխակեցաւ մատ-
նել իր անձը Փղշտացիների ձեռքը, որոնք հանեցին նորա
աչքերը, կապեցին շղթայներով և ընչին սարուկի պէս
հրամայեցին աղալ բանտում։

Այս սարսափելի անբաղտութիւնից յետո, Սամսո-
նը զղջացաւ և հանեց վրէժը իր թշնամիներից։ Ինքը
մեռաւ, միայն իր հետ միասին սպանեց շատ Փղշտացիներ
էլ։ Երբ նորա գլխի մազերը մեծացան, նոցա հետ մի-
ասին յետ դարձաւ նորա առաջուան զօրութիւնն էլ։

Մի անգամ Փղշտացիները կազմեցին մեծ հանդէս
իրենց Դագոն Աստուծոյ պատուի համար և բազմու-
թեամբ հաւաքված նորա տաճարում շնորհակալութեան
զոհեր էին բերում նրան, որ ազատեց իրենց ահալի
թշնամիից՝ Սամսոնից։ Այս միջոցին դուրս բերին
Սամսոնին էլ, որ ծաղր անեն նրան, որ ամէնին ցոյց
տան նորա այժմեան անզօրութիւնը և սկսան ծիծաղել
վրան։ Փղշտացիները ամենևին չէին կարծում, որ էլ
նորա զօրութիւնը յետ կ'դառնար։ Ծերերը, երիտասարդ-
ները, կանայք, երեխաները, ամէնքը ծիծաղում էին
Սամսոնի վերայ և տանջում էին նրան։ Թշուառ կոյրը
խնդրեց իրեն մատ ածողին, որ մօտեցնէ նրան տան սիւնե-
րին, ուր խրախանում էին նրան ծաղր անողները։ Շինուա-
ծը հաստատած էր սիւների վերայ։ Տափարակ տանիքի
վերայ կային այն ժամանակ մինչև 3000 հոգի։ Ծա-

ման մատեցրեց նրան սիւներին : Սամսոն աղօթք արաւ Աստուծոյ և խնդրեց նորա օգնութիւնը. յետոյ երկու ձեռքով շարժեց տեղից երկու միջին սիւները, ընչից քանդվեցաւ բոլոր շինուածն և սպանեց թէ նրան և թէ բոլոր այն տեղ եղող Փղշտացիներուն : Այս միանգամըն նա սպանեց աւելի Փղշտացի, քան թէ բոլոր իր կեանքումն մինչև այն օրը:

## ԳԼՈՒԽ ԾԱ.

## ՀՌՈՒԹ.

Այն ժամանակ, երբ դատաւորները կառավարում էին Իսրայէլացւոց ազգին, նոցա երկրում միանգամ սով ընկաւ : Յուդայի Բեթղեհէմ քաղաքի բնակիչներից մինը, Եղիմելէք անունով, իր Նոոմին կնկով և երկու որդիներով տեղափոխեցաւ Մովաբացւոց երկիրը : Եղիմելէք մեռաւ և Նոոմինը իր երկու որդոց հետ, որոնք Մովաբացի կին առան, մնաց Մովաբացիների երկրում : Նորա հարսերից մէկի անունը էր Որփա և միւսինը Հռութ : Փոքր ժամանակից մեռան Նոոմինի որդիքն էլ. բայց հարսերը կենում էին նորա մօտ : Իր տեղափոխութիւնից տասն տարի յետոյ Նոոմին իմացաւ, որ Իսրայէլացւոց երկրում սովը վերջացել է և միտը դրաւ դառնալ իր հայրենիք. հարսերն էլ գնացին հետը :

Ճանապարհին մտածում էր իր աղքատութեան վերայ և նորա վերայ, թէ ինքը չէ կարող կերակրել իր հարսերուն : «Իմ աղջիկներ» ասաց նա նրանց. «դարձէք ձեր ծնողների մօտ : Աստուած օրհնէ ձեզ, որ դուք էիք բարի կանայք իմ հանգուցեալ որդոցս և յար-

գու թեամբ վարվում էիք ինձ հետ։ Ես շատ ցաւում եմ, որ չեմ կարող ձեր համար մի բան անել. միայն դուք իրեն՝ գ տեսնում էք, ինչպէս ես խեղճ եմ։ Հարաւերը լաց եղան և Ոլիան գրկելով իր սկեսրին համբուրեց, հրաժարական ողջոյն տուեց և դարձաւ տուն։ Նոումին ասաց Հռութին. «Դու տեսնում ես, Ոլիան դարձաւ իր ազգի, ազգականների և Աստուածների մօտ. հետևի՛ր դու էլ նորա օրինակին»։ Հռութ պատասխանեց. «Չէ՛. ես քեզ չեմ թողնել, ուր որ դու կ՚երթաս, ես էլ կ՚գամ հետդ, քո ազգդ կ՚լինի ինձ ազգ և քո Աստուածդ ինձ Աստուած։ Ուր դու կ՚մեռնես, այնտեղ էլ ես պէտք է մեռնեմ։ Միայն մահը կ՚բաժանէ ինձ քեզնից։» Եւ Հռութ գնաց Նոումինի հետ։

Ցորեն Նոումինի դարձը յայտնի եղաւ բոլոր Բեթղեհեմի մէջ։ Բոլոր բնակիչները պատեցին նրան ասելով, «Դու ես Նոումին»։ — «Ինձ էլ մի՛ անուանէք Նոումին, այլ ինքն, գեղեցկագոյն, այլ կանչեցէք ինձ դառնացած.» պատասխանեց թշուառ կնիկը։ «Դառնութիւններով լիքն է իմ կեանքս։ Հարուստ հեռացայ ձեզանից և այժմ աղքատ յետ դարձրեց ինձ Աստուած։»

Նոումին հասաւ Բեթղեհեմ գարնան հնձի ժամանակ։ Օրվան հացի կարօտ լինելով, Հռութը գնաց արտ, մնացած հասկերը հաւաքելու։ Խեղճ օտարականը չէր իմանում, ուր երթայ. բայց Աստուած բերեց նրան մի հարուստ մարդու արտը, որնոր իր մարդու ազգականն էր և անունը Բոոս էր։ Սա եկաւ քաղաքից, որ նայէ՝ ինչպէս քաղել են գարին, կանչեց հնձողների վերակացուին և հարցրեց. «այս ի՞նչ կին է»։ Վերակացուն պատասխանեց. «Սա Մովաբացի աղջիկն է, որնոր Նոումինի հետ եկաւ,

նա հրամանն ուզեց, որ հաւաքէ մնացած հասկերը։ Նա այնտեղ արտում առաւօտից մինչև այժմ աշխատում է և ոչ մի րոպէ չէ հեռացել»։

Բոոս մօտենալով Հռութին ասաց. «ա՛ղջիկս, մի՛ երթար ուրիշի արտը։ Մնա՛ իմ աղախիներիս մօտ և դնա՛ նոցա ետևից, ուր նոքա կ՚հնձեն։ Ես կ՚հրամայեմ իմ բոլոր ծառաներիս, որ նոքա քեզ հետ քաղցրութեամբ վարվեն։ Երբ խմել կ՚ուզենաս, խմի՛ր այն տեղից, ուր խմում են իմ ծառաները»։ Հռութը երկրպագեց նրան մինչև գետին և ասաղակեց. «ի՞նչով արժանացայ ես այդքան ողորմութեան, ես այսպէս մի օտարական կին եմ»։ Բոոս պատասխանեց նրան. «ես գիտեմ դու ինչպէս յարգութեամբ վարվեցար քո սկսրի հետ, մարդուդ մահից յետոյ։ Աստուած կ՚վարձատրէ քեզ, քո որդիական սիրոյդ համար։ Իսրայէլի Տէր Աստուածը, որին դու հաւատացիր, կ՚հատուցանէ քեզ»։ «Ես արդէն բաւական վարձատրված եմ նրանով էլ, որ դու այդպէս ողորմած ես ինձ» պատասխանեց Հռութ։ Դու ինձ մխիթարեցիր քո քաղցր խօսակցութեամբդ, ինձ, որ աւելի փոքր եմ, քան թէ քո վերջին աղախինդ»։ — Ո՛հ թէ խմանային բոլոր դաւորները, թէ ինչպիսի բարերարութիւն է թվում նոցա մի քաղցր խօսքն էլ նեղացած սրտի համար»։

Երբ ճաշի ժամանակ եկաւ Բոոսը կանչեց Հռութին, որ իր ծառաների հետ ուտէ. ինքը ածում էր նրա համար կերակուր։ Հռութ կշտացաւ և պահեց փոքրը ինչ իր սկսրի համար էլ։ Ճաշից յետո այն րոպէին նա էլի աշխատանքը սկսաւ։ Բոոսը հրամայեց հնձողներին արտումն աւելի հասկեր թողնել, որ նա հեշտութեամբ կարողանայ հաւաքել։ Հռութ հաւաքեց մինչև իրի-

գուն. յետոյ չորացրեց հաւոքած հասկերը, ծեծեց ներ-
բանց և եղաւ ամբողջ արդու գարի։

Երեկոյեան Հռութ տարաւ իր սկսրին գարին և իր
պահած կերակուրը։— Աղջիկս, ով ողորմեց քեզ. ապա-
ղակեց Նոոմին, Աստուած օրհնէ այն կարեկից մարդուն։
Ես դաւաքում էի հասկեր բոսի արտում, պատասխանեց
Հռութ։— «Դա մեզ ազգական է.» ասաց Նոոմին. «Դա
միշտ սիրում էր մեր հանգուցեալներուն, նոցա կենդա-
նութեան ժամանակ, այժմ նոցա մահից յետոյ էլ մի-
ւուն ունէ հին բարեկամութիւնը և այն պատճառով
անում է ողորմութիւն իր մեռած բարեկամների այրի-
ներին։ Աստուած օրհնէ նրան։ Իսկ դու սիրելի աղջիկս,
ուրիշի արտ մի՛ գնար հասկ հաւաքելու, օտար մարդիկ
խստութեամբ և անպատշաճ կերպով կ՚վարվեն հետդ»։
Նոոմին տալիս էր իր հարսին շատ ուրիշ օգտաւէտ խր-
րատներ էլ և Հռութը միշտ պատրաստ էր նորա հրա-
մանները կատարելու։

Գարիի և ցորենի հնձի ժամանակ Հռութ հաւաքում
էր հասկեր բոսի արտում։ Երբ հունձը վերջացաւ, բոոս
ասաց նրան. «աղջիկս, Աստուծոյ օրհնութիւնը քեզ
վերայ լինի։ Քո ամէն վարմունքդ յայտնում է սէրդ դէպի
քո սկեսուրդ։ Դու ամենևին երիտասարդների սիրոյն
ետևից չընկար. բոլոր քաղաքը համարում է քեզ ա-
ռաքինի կնիկ։ Եթէ դու համաձայն ես և ոչոք չի ընդդի-
մանալ իմ՝ եղբայակիս, ես կ՚ամուսնանամ քեզ հետ»։ Բո-
ոս յայտնեց իր միտքը ծերերին և ամէնքը հաւանեցան,
բաղդաւորութիւն ցանկանալով նրան։ «Աստուած օրհնէ
կնոջդ, ինչպէս նա օրհնեց մի ժամանակ Հռաքելին և Լի-
ային. Իսրայէլացւոց ազգի մայրերուն», ասում էին նրան

ծերերը և բոլոր ժողովուրդը։ «Աստուած պարգևէ քեզ որդի ներանից, փառաւորվի անունդ Բեթղէհէմի մէջ»։

Բոոս ամուսնացաւ Հռութի հետ։ Աստուած տուաց նրանց որդի, որին անուանեցին Ովբէդ։ Սա էր Յեսսէի հայրը. իսկ Յեսսէն էր Դաւթի հայրը, որի վերայ յետոյ կ'խօսենք։ Երբ Ովբէդը ծնաւ Բեթղէհէմի կանայք շնորհաւորում էին Նոոմինին ասելով. «Օրհնեալ է Աստուածը, որնոր չթողեց քեզ անզաւակ։ Ահա՛ քո հարսիդ Հռութի որդին, Հռութի, որնոր քեզ այնպէս սիրում է և որնոր քեզ աւելի ուրախութիւն է պատճառում քան թէ եօթն որդիք։ Աստուած այս երեխային խրկեց քեզ ուրախութիւն և կերակրիչ ծերութեանդ ժամանակ։ Նոոմինը առաւ երեխային իր գիրկը, եղաւ նորա դայեակը և մեծ սիրով կրթում էր նրան։

ԳԼՈՒԽ ԾԲ.

## ՀԵՂԻ ԴԱՏԱՒՈՐԸ ԵՒ ՔԱՀԱՆԱՅՊԵՏԸ։

Պատերազմասէր զօրավարներից յետոյ, Հեղի քահանայապետը դառաւ դատաւոր Իսրայէլացոց ազգին քառասուն տարի շարունակ։ Նա բնակում էր այն ժամանակ Սիլով քաղաքումը, ուր էր վկայութեան խորանը։ Այս տեղ բերում էին ընտանեաց մեծերը իրենց խաշների նախաձիններուն, պտուղների երախայրիքը և տասանորդը ամէն իրենց եկամտից. այս տեղ հաւաքվում էին բոլոր Իսրայէլացիները Ուխտի տապանակի առջևը Աստուծոյ մատաղ բերելու համար։

Հեղին երկու որդի ունէր, մէկի անունը էր Ոփնի և մուսինը Փենեհէս, որոնք երկուսն էլ ամենևին Աստ-

ու ծոյ երկիւղ չունէին և ոչ էլ յարգում էին Խորանի սրբութիւնը և աստուածպաշտութիւնը։ Հեղին արդէն շատ ծեր էր, նա գիտէր իր որդոց անկարգ վարքը, յաճախ նրանց յանդիմանում էր, միայն այնպէս թոյլ, որ նոքա բանի տեղ չէին գցում։

Այն ժամանակումն կենում էր էլի մի բարեպաշտ մարդ Եղկանա անունով, որ երկու կին ունէր՝ Աննա և Փենանա անունով։ Վերջինը ունէր որդիք, իսկ Աննան, թէպէտ և աւելի սիրելի էր մարդուն, միայն ամուլ էր և այս շատ տրտմեցնում էր նրան։ Աննան ամէն տարի գնում էր Սելով աղօթելու և զոհ անելու ճշմարիտ Աստծուն։ Միանգամ ուրեմն ժամանակ, Աննան մէնակ գնաց խորանին մօտ, որ տեղ էր և Հեղի քահանայապետը։ Աննան ջերմեռանդութեամբ աղօթք էր անում Աստուծոյ, որ պարգևէ իրեն մի որդի և խոստացաւ նրան Աստուծոյ ծառայութեանը նուիրել խորանումը։ Հեղին երկար ժամանակ նայում էր նրան և տեսնելով, ինչպէս նորա երեսը վառվում էր, շրթունքները շարժում էին առանց մի բան արտասանելու, կարծեց, թէ նա հարբած է և ասաց նրան. «ամօթ չէ՞ քեզ, որ հարբած Աստուծոյ տունն ես եկել, գնա՛ և արբեցութիւնդ անցկացրո՛ւ»։ —«Ո՛չ, պատասխանեց Աննան, «ես հարբած չեմ, այլ ես թափում եմ Աստուծոյ առաջ իմ սրտիս ցաւը և խնդրում եմ նորա օգնութիւնը»։ Իսրայէլացիների մէջ կնկայ համար ոչ միայն անբախտութիւն, այլ ամօթ էլ էր համարվում որդի չունենալը։ «Գնա՛ խաղաղութեամբ» ասաց Հեղին։ Մի քանի ժամանակից Աննան ծնաւ որդի և անուանեց նրան Սամուէլ։

Աննան երբ երեխային ծծից կտրեց, իր մարդու և փոք-

րիկ Սամուէլի հետ միասին գնաց Սելով։ Գնաց քահանայապետին մօտ և ասաց. «ես այն կնիկն եմ, որ քո առաջիդ աղօթք էի անում Աստուն և խնդրում էի, որ ինձ որդի պարգևէ։ Աստուած լսեց խնդիրքս և ահա ես Նրան նուիրում եմ իր պարգևը։ Ահա իմ որդիս, թող մնայ սա այս տեղ խորանում և ծառայէ Աստուծոյ բոլոր իր կեանքում»։ Շնորհակալութիւն անելից յետո սրտաշարժ և խորիմաստ երգով, Աննան թողեց Սամուէլին Աստուծոյ տանը, քահանայապետի հովանաւորութեան տակ, որնոր կրթում էր Նրան և սովորցնում էր Նրան Աստուծոյ օրէնքները։ Աննան ամէն տարի տանին դալիս էր Սելով և բերում էր իր որդու համար նոր շոր։ Սա մխիթարվում էր, երբ լսում էր ամէնից, որ իր որդին խիստ ժրաջան է, խոնարհ և երկիւղած և տնանում էր, որ իր որդին զօրանում է մարմնով և հոգով։ Աննան այնուհետև ունեցաւ էլի ուրիշ երեք որդի և երկու աղջիկ։

ԳԼՈՒԽ ԾԳ.

## ՍԱՄՈՒԷԼ.

Սամուէլը, զեռ երեխայ ժամանակը, քնում էր միշտ վկայութեան խորանում։ Հեղի քահանայապետը քնում էր փոքր ինչ հեռու այնտեղից առանձին սենեակում։ Մխանգամ գիշերով Սամուէլը լսեց ձայն, որ կանչում էր. «Սամուէ՛լ, Սամուէ՛լ»։ —Սամուէլը կարծելով, թէ քահանայապետը կանչում է իրեն, վազեց նորա մօտ և ասաց. «ես այս տեղ եմ, դո՞ւ էիր կանչում ինձ». բայց Հեղին պատասխանեց. «ես քեզ չեմ կանչել, դնա՛, քնի՛ր»։

Զայնը էլի մի անգամ կանչեց. «Սամուէլ Սամուէլ». և-
բեխան վեր կացաւ և վազեց քահանայապետի մօտ ասելով
«Դո՞ւ ինձ կանչեցիր, ես այս տեղ եմ». — Չէ, որդեակ, ես
քեզ չեմ կանչել», պատասխանեց Հեղէին, «գնա՛, քնի՛ր». և
Սամուէլը քնեցաւ. բայց էլի զարթեցրեց Նրան այն ձայ-
նը, որ կանչում էր «Սամուէլ, Սամուէլ.» Նա էլի գնաց
քահանայապետի մօտ. և ասաց. «Դու ինձ կանչեցիր և
ես այստեղ եկայ»։ Այն ժամանակ Հեղէին հասկացաւ, որ
Աստուած ինքը կանչում է երեխային, և ասաց Նրան.
«գնա՛ որդեակ և քնի՛ր. միայն եթէ էլի կ'լսես ձայն,
պատասխան տուր. «Ասա՛, Տէր, քո ծառայ լսում է
քեզ»։ Սամուէլ քնեցաւ և չորրորդ անգամն էլ լսեց
էլի ձայն, որ կանչում էր. «Սամուէլ, Սամուէլ»։ Այն
ժամանակ Սամուէլը ասաց. «խօսի՛ր, Տէր, ծառայ լսում
է քեզ»։ Աստուած ասաց Նրան, «կ'գայ օրը, երբ Ես կ'ը-
պատժեմ Հեղէին և նորա որդոցը։ Հեղէին գիտէ իր որդոց
յանցանքները և չէ պատժում Նրանց»։

Առաւօտը, երբ Սամուէլ վեր կացաւ, դուրս գնաց
խորանից, նա չէր սիրտ անում պատմել քահանայա-
պետին Աստուծոյ խօսքերը։ Բայց Հեղէին կանչեց Նրան
իր մօտ ասելով. «Սամուէլ որդեակ։ «Այս տեղ եմ ես».
պատասխանեց Սամուէլ։ «Խնդրում եմ քեզ, ասաց Հե-
ղէին, «մի՛ ծածկիր ինձնից, ինչ որ Աստուած քեզ յայտ-
նեց»։ Այն ժամանակ Սամուէլ պատմեց քահանայապե-
տին ամէնը, ինչոր Աստուած իրեն յայտնեց և ոչ ինչ
չծածկեց։ Հեղէին, հպատակելով Աստուծոյ կամքին,
ասաց, «նա է Տէրը, թո՛ղ լինի նորա կամքը»։

Միայն Հեղէի որդիք չէին Աստուծոյ անհնազանդ,
այլ և բոլոր Իսրայէլացոց ազգն էլ, ուստի և պատժ-

վեցան պատերազմելիս Փղշտացոց հետ։ Իսրայէլացիները յաղթվեցան և փախան կռվի դաշտից։

Այն ժամանակ ծերերից մի քանիսը ասացին. «Եթէ ուխտի Տապանակը հետերս տանենք, յայտնի բան է, յաղթութիւնը մեր կողմումը կ'մնայ և մենք կ'ջարդենք Փղշտացիներուն»։ Խրկեցին Սելով Ուխտի Տապանակի հետևից, որ բերին նրան։ Հեղլի որդիք Ոփնին և Փենեհէսը, պէտք է, բերէին Տապանակը։ Միայն Իսրայէլացիները այս կռվումն էլ ջարդվեցան։ Նոքա կորցրին երեսուն հազար հոգի կռվում, իսկ մնացած զօրքը ազատվեցաւ փախչելով։ Ուխտի Տապանակը ընկաւ թշնամիների ձեռքը և Հեղլի որդիք Ոփնին ու Փենեհէսը սպանվեցան։ Մի զինուոր, որ ազատվեցաւ այս կատարածից, Սելով քաղաքը վազելով, յայտնեց այս բանը քահանայապետին, որնոր խորանի դրան մօտ նստած անհամբերութեամբ սպասում էր կռվի համբաւին։ Հեղլին, տարտափանքով և և տրտմութեամբ պաշարած, ընկաւ կռնակի վրայ աթոռից, որի վրայ նստած էր, կոտրեց իր ողնը (մէջքի ոսկորը) և մեռաւ։ Նա ինն տարի ուրիշ տարեկան էր։

ԳԼՈՒԽ ԺԴ.

## ՍԱՄՈՒԷԼԻ ԶՈՀԸ ԵՒ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ ՓՂՇՏԱՑԻՈՑ ԴԷՄ

Փղշտացիք Իսրայէլացւոց երկրում ամէն բան թալի և կրակի կերակուր արին։ Ոչոք չէր համարձակվում նրանց դէմ կենալ։ տարտափը պաշարեց բոլոր խեղճ աղքատներին ամէն տեղ։ Նոյն իսկ Տապանակը, Իսրայէլացւոց սրբութիւնը, ընկաւ թշնամիների ձեռքը։ Նոքա, պէտք է, հասկանային, որ այս ամէն թշուառութիւնները ծա-

գեցան իրենց մեղքից, և որ մինչև նոցա յոյսը Տաճարանակին վերայ դնելն էլ Աստուծոյ ընդունելի չեղաւ։ Նոքա ոսկով պատեցին Տաճարակը, ուր դրին Աստուծոյ տուած պատուիրանները, միայն իրենց սրտերը չկրթեցին և չսովորեցրին այն պատուիրանները կատարելու։

Սամուէլ դառաւ Իսրայէլացւոց ազգի ազատիչը։ Նա հաւաքեց ցրուած Իսրայէլացւոց և նրանց իրենց մոլորութիւններից, որոնց մէջ ընկել էին, դարձնելով ասաց, «Միայն մի բան կարող է ձեզ փրկել. դարձէք բոլոր սրտով դէպի Աստուած և կատարեցէք նորա ամէն հրամանները. այն ժամանակ նա ձեզ կ՝ազատէ»։

Ժողովուրդը տխուր և ողջալով բոլոր օրը անցկացրեց պահով և աղօթքով ու բարձր ձայնով աղաղակում էր. «Մենք մեղանչեցինք Աստուծոյ դէմ»։ Սամուէլ ողջակէզ բերաւ դառը և աղօթք արաւ Աստծուն։ Աստուած լսեց նրան. էն ժամանակ երբ դեռ ողջակէզի ծուխը բարձրանում էր, Իսրայէլացիների վերայ յարձակեցան Փղշտացիները և կռիւը սկսաւ, յանկարծ սարսափելի գոռոց եղաւ. Փղշտացիները սարսափած ջարդվեցան ու փախան։ Իսրայէլացիները քշեցին նրանց իրենց սահմաններից և Աստուած խրկեց Փղշտացիների վրայ զանազան թշուառութիւններ, մինչև որ նոքա յետ դարձրին Ուխտի տապանակը։ Առաջ դրին նոքա նրան Դագոն կուռքի բաղնում, միայն միւս օրը գտան Դագոն կուռքը ընկած գետնի վերայ Տապանակի առջևը։ Երբ նոքա կուռքը իր տեղը դրին, միւս օրը գտան նրան ոչ միայն ընկած գետնին վերայ, այլ և առանց գլխի և ձեռների։ Սրանից յետոյ Աստուած խրկեց Փղշտացւոց վերայ անթիւ մկներ և մահ։ Այն ժամանակ

փղշտացիները, ընդհանուր խորհրդով, վճռեցին, որ Ուխտի Տապանակը դնեն կառքի վերայ, որին լծեցին երկու դեռ չլծված երինջներ, և բաց թողնեն։ Անասունները, առանց կառավարիչների Տապանակը Իսրայէլացիներից երկիր։ Այսպէս Աստուած ցոյց տուեց Իսրայէլացիներին, որ միայն արտաքին աստուածապաշտութիւնը չէ բաւական մարդուս, այլ պէտք է ուղղել իր զգացմունքներն էլ, կատարելով Աստուծոյ սուրբ պատուիրանները։

Սամուէլ այն տեղում, մինչև, ուր Իսրայէլացիները Փղշտացիներուն քշեցին, դրեց քար և անուանեց նրան վէմ օգնականի։

ԳԼՈՒԽ ԾԵ.

## ՍԱՒՈՒՂԻ ԹԱԳԱՒՈՐ ԸՆՏՐՎԻԼԸ

Առաքինի Սամուէլը էր դատաւոր Իսրայէլացւոց ազգին, բայց երբ ծերացաւ, իր իշխանութիւնը յանձնեց իր երկու որդոց, որոնք ամենևին նորա արդարամիտութեանը և նորա առաքինութիւններին մատակից չէին։ Ազգը անբաւական էր նրանցից և Սամուէլից թագաւոր էր պահանջում։ Սամուէլ այս մասին հարցրեց Աստծուն և Աստուած հրամայեց նրան, որ թագաւոր ընտրէ և ինքը ցոյց տուեց ընտրվելու մարդուն։ Բենիամինի տոհմի բաժնումը բնակում էր մի հարուստ մարդ Կիս անունով։ Սա ունէր որդի, որ երևելի էր ամէնից իր մեծ հասակով, գեղեցկութեամբ և զօրութեամբ։ Նրան նըմանը չկար բոլոր Իսրայէլացւոց մէջ։ Մի անգամ Կիսի էշերը կորան։ Նա խրկեց իր որդուն Սաւուղին, մի ծառայի հետ կորած անասուններուն փնտռելու համար։

Սաւուղ իր ծառայով գնաց Եփրեմի տոհմի լեռները. միայն չգտաւ, ինչ որ փնտռում էր: Սաւուղ երեք օր՝ի դուր թափառեցաւ և արդէն միտը դրել էր դառնալ. միայն նորա հետ եղած ծառան առաջարկեց նրան մըտանել մերձակայ քաղաքը. «Այն տեղ է այժմ սուրբ մարդը. Սամուէլ մարգարէն, ասում էր ծառան, նա կ՝ասէ մեզ, ուր պէտք է փնտռենք կորած էշերուն»:

Սաւուղ գնաց մարգարէի մօտ: Սամուէլին, դեռ մի օր առաջ յայտնել էր Աստուած, որ Սաւուղը ընտրած է իրանից Իսրայէլացւոց թագաւոր: Սամուէլ տարաւ Սաւուղին իր հետ նամա քաղաքը, ուր պէտք է ժողովէր ժողովուրդը և լինէր ազգային խրախութիւն: Այս տեղ Սաւուղին հիւրերի մէջ առաջին տեղը նշանակվեցաւ և ուրիշ կերակուրների հետ միասին բերին իրեն մարգարէի հրամանքով առաջվանից նորա համար պատրաստած ազդրը: Միւս օրը, երբ Սաւուղը տուն էր դառնում, Սամուէլ նրան ճանապարհ գցեց քաղաքից դուրս և հետը առած ամանով իւղը աճեց Սաւուղի գլխին: Այս կերպով նա օծեց նրան թագաւոր: Սաւուղ եկաւ տուն: Ազգականները հարցրին նրան, թէ՝ ինչ ասաց նրան մարգարէն: «Նա ասաց ինձ,» պատասխանեց Սաւուղ, «որ մեր էշերը շուտ կ՝գտնվին», որնոր ճշմարտիւ էլ կատարվեցաւ. բայց ծածկեց այն գաղտնիքը, որ իրեն յայտնվեցաւ: այսինքն, որ ինքը օծվեցաւ Իսրայէլացւոց թագաւոր.

ԳԼՈՒԽ ԺԶ.

## ՍԱՒՈՒՂ ԻՍՐԱՅԷԼԱՑՒՈՑ ԹԱԳԱՒՈՐ

Սամուէլ հաւաքեց Իսրայէլացւոց բոլոր ցեղերը Մասեփաթ քաղաքում, որ ընտրեն թագաւոր: Վիճակ դը-

ցեղին տոհմերի մէջ և վիճակը դուրս եկաւ. Բենիամինի տոհմին. յետոյ էլի գցեցին վիճակ Բենիամինի տոհմի ընտանեաց մէջ և վիճակը դուրս եկաւ Ամատարէսի ցեղին. էլի գցեցին վիճակ Ամատարէսի ցեղի մարդոց մէջ և ելաւ վիճակը Կիսի որդուն Սաւուղին: Բայց Սաւուղ պահվեցաւ: Սամուէլ գտաւ նրան և հանեց հաւաքված ժողովուրդի առջև: Սաւուղ գեղեցիկ էր տեսքով և ասով չքի բարձր էր ամէն իր առջև կանգնածներից: «Ահա՛ թագաւորը», ասաց Սամուէլ, «որին Աստուած ձեզ տուեց. սրան նմանը չկայ բոլոր Իսրայէլի մէջ»: Ժողովուրդը տեսնելով գեղեցիկ և երիտասարդ մարդուն ուրախութեամբ աղաղակեց. «կեցցէ՛ մեր թագաւորը»: Միայն մի քանիսը անբաւական մնացին այս ընտրութեամբ. նոքա անարգում էին Սաւուղին և ասում էին. «ի՞նչ կարող է նա մեր համար անել»: Սաւուղ իբրև թէ չլսեց այս խօսքերը. և դարձաւ իր հօր տուն և մի քանի ժամանակ կեցաւ այնտեղ անյայտութեան մէջ: Սաւուղ օծված տուրբ իւղով ստացաւ մարգարէութեան շնորհք: Ամմոնացիք պաշարեցին Յաբէս քաղաքը և ապառնում էին, թէ քաղաքի բնակիչների աջ աչքերը պէտք է հանեն: Նոքա պաշարված-ների համար եօթն օր ժամանակ տուին մտածելու համար: Յաբէսի բնակիչները սարսափած խրկեցին մարդիկ Բենիամինի տոհմից օգնութիւն խնդրելու: Սաւուղ, երբ լսեց Յաբէսի բնակիչների ողբալի դրութիւնը, շատ տխրեցաւ: Աստուծոյ հոգին իջաւ նորա վերայ: Նա առաւ երկու եզներ, կտոր կտոր արաւ նրանց, և խրկեց Իսրայէլացւոց ամէն ցեղերին, հրամայելով յայտնել, թէ ով որ չի գնաւորվել իր հետ միասին Ամմոնացւոց դէմ, նորա եզներն էլ այսպէս կ'կտրվին: Իսրայէլացիք ամէնքը գնաց

առան, ժողովեցան վեցհարիւր եօթանասուն հազար հոգիք։ Այս զօրքով Սաւուղը յարձակեցաւ Ամմոնացւոց վերայ, բոլորովին ջարդեց նրանց և ազատեց Յաբէս քաղաքը։ Այն ժամանակ Իսրայէլացւոց ազգը ուրախացած, օրհնել սկսաւ Սաւուղին և գոչում էր. «մատնիր մեր ձեռք նրանց, որոնք չէին կամենում քեզ թագաւոր ընտրել իրենց. մենք նրանց կ'սպանենք». բայց մեծահոգի թագաւորը պատասխանեց. «այս օր, երբ Աստուած փրկութիւն խրկեց Իսրայէլացւոց ազգին, ոչ ոք, չպէտք է, կորչի»։ Այս յաղթութեամբ և մանաւանդ իր մեծահոգութեամբ, Սաւուղ ամէնի սիրտը գրաւեց։ Այդ Սամուէլ յայտնի օծեց նրան Իսրայէլացւոց թագաւոր։

Կառավարութիւնը ընտրած թագաւորին յանձնելով Սամուէլ ժողովեց ազգը և ասաց. «ես աշխատում էի հասարակաց բարութեան համար իմ մանկութիւնից մինչև այսօր։ Այսուհետև ժողովրդին կ'կառավարէ թագաւորը։ Ես կանգնած եմ ձեր առջևը, ո՛վ Իսրայէլացիք, պատասխանեցէ՛ք իմ մասին իրեն Աստուծոյ և նորա օծեալի առաջին, արդեօք զրկեցի՞ ես մէկին իր սեփականութիւնից, ստացի՞ ես արդեօք մէկին, կարեցի՞ արդեօք մէկին գատաստանը անարդար կամ երեսպաշտութեամբ և առի՞ արդեօք մեկից ընծայ։ Թո՛ղ, ովոր գանգատ ունի իմ վերայ, ասէ համարձակ։ Ես պատրաստ եմ ամէն բան ուղղելու, ամէն բան եռ դարձնելու»։ Բայց բոլոր ժողովուրդը միաձայն աղաղակեց. «Դու էիր մեր հայրը, դու երբէք անարդարութիւն չես արել՝ մենք օրհնում ենք քեզ»։

Սաւուղ, իր քաջ որդուն Յովնաթանին օգնութեամբ, մեծ գործքեր կատարեց, շատ երեւելի յաղթութ-

թիւններ էր անում և միշտ ազատում էր Իսրայէլացիներուն իրենց թշնամիներից։

Միայն յաջողութիւնները, իշխանութիւնը և փառքը մոլորեցուցին Սաւուղին։ Ինչքան որ մեծանում էր նորա զօրութիւնը, նորա սիրտը լքցվում էր զեղխութեամբ։ Սամուէլ յաճախ զգուշացնում էր նրան. բայց սա չէր լսում նրան։ Միանգամ, երբ յաղթեց Ամաղէկին, Աստուծոյ կամքը կատարելու տեղ, իր շահի եռեւից ընկնելով Ամաղեկացւոց ընտիր խաշները իրեն աւար առաւ, որ Աստուած հրամայել էր բոլորը ջնջել, բացի սրանից համարձակվեցաւ ինքը Աստծու զոհ էլ բերել։

Սամուէլ ասաց Սաւուղին. «ես պէտք է յայտնեմ քեզ Աստուծոյ կամքը, որ նա ինձ այս գիշեր ասաց։ Երբ դու ինքդ քեզ ոչինչ էիր համարում, ընտրեց քեզ Աստուած Իսրայէլացւոց թագաւոր, բայց այժմ դու հպարտացար, ընչասէր եղար և մոռացար Աստծուն, որնոր քեզ այնքան բարութիւններ արաւ։ Աստուած արհամարհում է քեզ և քո թագաւորութիւնդ կ'տայ ուրիշին»։

Այս ասաց և երեսը դարձրեց, որ հեռանայ նրանից, միայն Սաւուղ զղջալով բռնեց նորա փէշից և պատռեց։

Աստուած ողորմում է հնազանդներին և հակառակ է հպարտներին։

Այս ժամանակից յետոյ Սամուէլ էլ իսկի չգնաց Սաւուղի մօտ և էլ չտեսաւ նրան մինչև նորա մահը։ Թէ և էլի միշտ աղօթք էր անում նորա համար և լաց էր լինում նորա վերայ։ Սաւուղ ընկաւ մոռացմունքի մէջ. յաճախ տիրում էր նրան տխրութիւն և անսանելի անհանգստութիւն. միայն նա չէր փնտռում մխիթարութիւն Աստուծոյ մէջ և չէր աշխատում իրեն ուղղել։

## ԳԼՈՒԽ ԺԷ.

## ԴԱՒԻԹ

Սամուէլը տխրուեմ էր միշտ էլի. որ Սաւուղ թարկացրեց Աստծուն։ Աստուած ասաց Սամուէլին. «մինչև ե՞րբ դու լաց կ'լինես Սաւուղի վերայ։ Ես էլ թագաւոր չլինել Իսրայէլացւոց վերայ։ Գնա՛ Բեթղեհէմ, Յեսսէի որդու Յեսսէի տունը. ես ընտրեցի նորա որդոց մէկին թագաւոր»։

Սամուէլը գնաց Բեթղեհէմ, բերեց Աստծուն զոհ և հրաւիրեց Յեսսէին իր որդոց հետ զոհ ուտելու։ Երբ նոքա եկան, Սամուէլը տեսնելով Յեսսէի մեծ որդուն Եղիաբին, որ քաջ, բարձրահասակ և գեղեցիկ տեսքով մարդ էր, կարծեց իր մտքում, թէ, յայտնի բան է, սա կ'լինի օծեալը։ Բայց Աստուած պատասխանեց նրան. «մի՛ նայիր ոչ հասակին և ոչ գեղեցկութեանը. սա չէ իմ ընտրածս»։ Աստուած, մարդոց պէս, արտաքին տեսքով չէ դատում։ Մարդս տեսնում է միայն, ինչը նորա աչքի առջևն է, բայց Աստուած տեսնում է սիրտն էլ։

Յեսսէն Սամուէլի առաջ հանեց իր երկրորդ որդուն Ամինադաբին։ Սամուէլ ասաց. «Չէ՛, Աստուած դրան չէ ընտրել»։ Նրանից յետո հայրը Սամուէլի առջև հանեց իր երրորդ որդուն։ «Սա էլ չէ ընտրած Աստուծմէ»։ ասաց Սամուէլ։ Յեսսէն հանեց մարդարէի առաջ իր եօթն որդոց էլ մէկին միւսի ետևից։ «Սրանցից ոչ մէկին Աստուած չէ ընտրել»։ ասաց Սամուէլ։

Ոչոք չէր հասկանում, ի՞նչ են նշանակում այս խօսքերը։ «Ուրիշ որդի էլ չունե՞ս դու արդեօք»։ հարցրեց

Սամուէլ։ «Ունիմ էլի մի որդի, պատասխանեց Յեսսէն ամենից փոքրն է նա, Դաւիթը, նա արածում է իմ ոչխարները»։ — «Եռա մարդ խրկիր նորա եռևից, ասաց Սամուէլ։ Թող գայ նա, մեր սեղանատեղից առաջ»։

Հայրը խրկեց մարդ, կանչեց Դաւթին և հանեց Սամուէլի առջև երեխային, որ գեղեցիկ էր երեսով և քաղցը աչքով։ Այն ժամանակ Աստուած ասաց Սամուէլին։ «Ահա իմ ընտրածս։ օծիր սրան թագաւոր»։

Սամուէլ առաւ շիշը իւղով և օծեց Դաւթին, իր բոլոր եղբայրների ներկայութեամբ։ Աստուծոյ Հոգին իջաւ օծեալի վերայ և այնուհետև մնաց միշտ նորա հետ։

ԳԼՈՒԽ ԾԸ։

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՒԻԹԸ ԱՐՔՈՒՆԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Աստուծոյ Հոգին բոլորովին թողեց Սաւուղին, որնոր սրտով զեղխացել էր։ Սաւուղ ընկաւ տրտմութեան մէջ, և տանջվում էր չար գևից։ Ով որ իրեն Աստուծոյ ողորմութեանը անարժան է զգում, չէ զղջում իր վատ գործոց վերայ և չէ աշխատում նրանց լաւացնել, նա չէ կարող ամենևին հանգիստ լինել, ինչպիսի մեծ փառքով և մեծութեամբ էլ պատած լինի։

Պալատականները ասացին Սաւուղին։ «թագաւոր, եթէ կ'հրամայես, մենք կ'բերենք քեզ մօտ մի մարդ, որնոր լաւ ածում է քնար, դուցէ երաժշտութիւնը մեղմացնէ քո տրտմութիւնը»։ — «Բարի է, պատասխանեց Սաւուղ։ «ճանաչում էք մի այսպիսի մարդ»։ Այն ժամանակ պալատականներից մէկը ասաց։ «Երբ ես Բեթղեհէմումն էի, Յեսսայի բաժնում, լսեցի միանգամ,

ինչպէս Յեսսէի որդին քնար էր ածում։ Նա գեղեցիկ ածում է։ բացի սրանից նա շատ խելօք է, բարեպաշտ և աստուածահաճոյ։ Սաւուղ այն րոպէին խրկեց Յեսսէի մօտ Բեթղեհէմ մարդ, հրամայելով նրան, շուտ խրկել իր որդուն Դաւթին, որնոր արածում է նորա ոչխարները։ Յեսսէն առաւ մի քանի հաց, մի տիկ գինի, ուլը և խրկեց Դաւթին այս գիւղական ընծաներով թագաւորի մօտ։ Այն ժամանակ Իսրայէլացոց երկրում սովորութիւն էր, թագաւորին մօտ ընծաներով երթալը։

Դաւիթ յայտնվեցաւ Սաւուղին և շատ սիրելի եղաւ նրան։ Թագաւորը նրան իրեն կապարձակիր շինեց և հրամայեց Յեսսէին ասել, որ ինքը պահում է նորա որդուն իր մօտ, որովհետև արժանացաւ իր ողորմութեանը։ Սակայն անգամ, երբ տրտմութիւնը պիրում էր Սաւուղին, Դաւիթ ածում էր քնար—և այս ցրում էր Սաւուղի տխրութիւնը ու չար ոգին, որ տանջում էր նրան, հեռանում էր նրանից։

ԳԼՈՒԽ ԺԹ.

## ԳՈՂԻԱԴ

Փղշտացիները նորից գնացան Իսրայէլացւոց դէմ։ Սաւուղ դուրս եկաւ նոցա դէմ իր զօրքով։ Փղշտացւոց զօրքը վեր եկաւ սարի գլխին. Իսրայէլացիներն նմանապէս վեր եկան նոցա դէմուդէմ միւս սարի գլխին։ Հովիտը բաժանում էր երկու զօրքերուն մէկ մէկից։

Փղշտացւոց բանակից առաջ դուրս եկաւ մի հսկայ, Գողիադ անունով։ Նորա հասակն էր կարգից դուրս

բարձր, գլուխը ծածկած էր երկաթէ սաղաւարտով, և ինքը հագած ունէր պղնձի զրահ։ Ձեռին ունէր տէգ ահագին մեծութեամբ։ Նորա բոլոր զէնքը էր խիստ ծանր և ցոյց էր տալիս նորա արտաքոյ կարգի զօրութիւնը, Նորա առջևից գնում էր նորա զինակիրը, որ տանում էր նորա սուրը։

Հովտի մէջ ցած իջնելով Գողիադ կանչեց Իսրայէլացիներին. «Ինչո՞ւ դուք ամէնքդ պատրաստվում էք կռվի։ Ես Փղշտացի եմ և դու քՍաւուղի ծառաներն էք։ Ընտրեցէք ձեր մէջից մէկին, որնոր կարողանայ իմ հետ մենամարտել։ Եթէ նա ինձ կ՚սպանէ, մենք կ՚լինենք ձեր ծառաները, իսկ եթէ ես նրան կ՚սպանեմ, դուք եղէք մեր ծառաներ։

Սոյսիսի առաջարկութիւն որ լսեցին, Սաւուղ և բոլոր Իսրայէլացիներն խռովեցան խիստ և սարսափեցան։ Իսկ Գողիադ ծաղը էր անում նրանց, ասելով, որ ոչոք չէ համարձակվում դուրս գալ իրեն դէմ և պարծենում էր իր զօրութեամբ։

Դաւիթ, որին որ Սաւուղ չէր կամենում իր հետ առնել պատերազմ նորա մանկութեան պատճառավ, յետ դարձաւ էլի իր հօր ոչխարները արածելու, բայց նորա երեք մեծ եղբայրները էին արքունի զօրքումն։ Յեսսէն ասաց Դաւթին. «ա՛ռ հաց և տա՛ր զօրաց բանակը եղբայրներիդ համար։ Ահա էլի տան կտոր նոր պանիրներ, որ կտաս դու նոցա հաղարապետին. տեղեկացի՛ր, արդեօք եղբայրներդ առո՞ղջ են և ինչպէս են գնում գործերը»։ Դաւիթ, որնոր ամէն բանում հնազանդ էր հօրը և սրտանց սիրում էր եղբայրներուն, ուրախութեամբ գնաց բանակը, տանելով իր հօր տուած պաշարը։

Երկու կողմն էլ արդէն պատրաստ էր պատերազ-

մելու, երբ Դաւիթ եկաւ այնտեղ։ Ինչոր հետը բերել էր, տուեց վանականին։ Իսկ ինքը դնաց իր եղբայրներուն տեսնելու։ Այս ժամանակ Գոլիադ հսկայն առաջ դուրս եկաւ թշնամեաց զօրքի մէջէն, պարծենում էր իր զօրութեամբ ու նախատում էր Իսրայէլացիներուն։ Սրան տեսնելիս Իսրայէլացիները վախեցած փախան։ Բայց Դաւիթ ասաց. «ո՞վ է այս յանդուգն մարդը, որնոր համարձակվում է նախատել Աստուծոյ ազգի զօրքին։ Ի՞նչ վարձատրութիւն է նշանակած նրան, ով որ կ'բառնէ այս հպարտ փղշտացին և կ'ազատէ Իսրայէլացիներուն ամօթից»։

Դաւթի մեծ եղբայրը նկատեց նորա խօսքերը և չարացաւ։ «Ինչո՞ւ եկար դու այս տեղ», ասաց նա։ «Այս քո տեղը չէ։ Գնա՛, արածիր ոչխարներուդ, ինչո՞ւ թողեր նրանց անտէրտում։ Ես քո հպարտութիւնդ և սրտիդ չարութիւնը գիտեմ, դու հետաքրքրութիւնից եկել ես պատերազմ տեսնելու»։ Դաւթի եղբայրները էին հպարտ և կռվիտ և այս պատճառով էլ Աստուած չընտրեց նրանց։ Բայց Դաւիթ հեզութեամբ և խոնարհութեամբ համբերում էր նոցա կռպտութեան և Աստուած ընտրեց նրան։ Աստուած ցածացնում է հպարտներուն և բարձրացնում է խոնարհներուն։

Օտար մարդիկ, որ կանգնած էին Դաւթի մօտ, աւելի քաղցրութեամբ վարվեցան։ Նոքա պատասխանեցին նրան. «ով որ կ'յաղթէ այս հսկային, նրան թագաւորը ինքը կ'վարձատրէ, նա իր աղջիկն նրան կին կ'տայ և նորա հօր տունը հարկից ազատ կ'լինի»։ Դաւիթ, որ բոլոր սրտով սիրում էր իր հայրենիքը, յայտնեց, որ ինքը խիստ ցանկանում է կռվել հսկայի հետ։ Այս բանը

հայրին Սաւուղի ոտանջը և նա հրամայեց Դաւթին իրեն մօտ բերել։

Դաւիթ թագաւորի առջև գալով ասաց նրան. «Թագաւո՛ր ողջունէից մի վախենա՛ր, հրաման տո՛ւր ինձ, որ երթամ մարտնչեմ այս Փղշտացիի հետ»։ Սաւուղ պատասխանեց. «Ի՞նչպէս կարող ես դու յաղթել այն հրակայինն։ Դու դեռ մանուկ ես. իսկ նա հասակ առած մարդ է և մանկութիւնից սովոր է պատերազմի»։

Դաւիթ պատասխանեց. «Երբ ես արածում էի իմ հօրս ոչխարները, երբեմն գայլս էր գայլ և յափշտակում էր ոչխարներից մէկին, ես ընկնում էի ետևից ու խլում նորա բերանից աւարը, բայց եթէ ընդդիմանում էր ինձ, բռնում էի նորա փողից և սպանում էի նրան։ Առիւծ և արջ էլ սպանել է քո ծառայ։ Նոյն կերպով կ'վարվեմ ես այն Փղշտացիի հետ էլ։ Ի՞նչպէս համարձակվեցաւ նա նախատել ճշմարիտ Աստուծոյ զօրքին։ Աստուածը, որնոր ինձ ազատեց առիւծի և արջի բերանից, կ'ազատէ Փղշտացիի ձեռքից էլ»։

«Գնա՛ Աստուած քեզ հետ լինի». ասաց թագաւորը։ Սաւուղ հրամայեց հագցնել Դաւթին պղնձի սաղաւարտ, զրահ և կապել մէջքին իր սեպհական սուրը։ Դաւիթ այսպէս զինաւորված մաս նկաւ յետ ու առաջ և տեսաւ, որ խիստ ծանր է, նա չէր սովոր այսպիսի զինուորական զրահին։ «Ես չեմ կարող մաս գալ այսպէս զինաւորված», ասաց նա, ու հանեց սաղաւարտը, զրահը և թուրը. վեր առաւ իր հովուական ցուպը, ընտրեց գետի ափից հինգ ողորկ քարեր, ձեռը առաւ իր պարտը և այս զէնքով միայն դուրս եկաւ հսկայի դէմ։

Գողիադ դուրս եկաւ պատերազմի տեղը կառա-

ընկալեալ զինուորական և առջևից գնում էր նորա զինակիրը։ Նա երբ տեսաւ Դաւթին, արհամարհեց նրան։ Դաւթի քնքուշ մանկութիւնը և հեզ դէմքը ամենևին չէին ցոյց տալիս նորա քաջ և զօրեղ զինուոր լինելը։

«Մի թէ շո՞ւն եմ ես, որ իմ դէմ քարերով ես գալիս» ասաց հսկայն։ Շուտով ես քո մարմինը կերակուր կըտամ երկնային թռչուններին և երկրային գազաններին»։

Դաւիթ պատասխանեց. «դու դուրս ես գալիս իմ դէմ վահանով, սուրով և տէգով. իսկ ես գալիս եմ քո դէմ Զօրութեանց և Իսրայէլի Աստուծոյ անունովը, որին դու անարգում ես։ Այժմ Աստուած կ՚մատնէ քեզ իմ ձեռս և բոլոր երկիրը կ՚իմանայ, որ նա է միայն ճշմարիտ Աստուած։ Ամէն այսներկայ ժողովուրդը կ՚լինի վկայ, որ Աստուծոյ օգնութիւնը ունի զօրեղ է քան թէ սուրը և տէգը՝ ձեզ Աստուած կ՚մատնէ մեր ձեռքը»։

Հսկայն գնաց Դաւթի վերայ. երիտասարդ Դաւիթը անվեկիւղ դուրս եկաւ նորա առաջ և իր պարսաք առնելով գցեց նրանով մի քար փղշտացիին վերայ, քարը պատռեց նորա ճակատը։ Փղշտացին երեսով ընկաւ գետնի վերայ. իսկ Դաւիթ առնելով նորա սուգին սուրը կտրեց գլուխը։ Փղշտացիները, իրենցից ամէնից զօրեղին սպանած տեսնելով, վախեցան և փախան։ Իսրայէլացիներ, պատերազմական ձայներ հանելով, ընկան նոանցից, կոտորեցին նրանց, ցրուեցին և ոտնակոխ արին նոցա գունդերը։ Թշնամեաց բոլոր բանակը ընկաւ յաղթողների ձեռքը։

---

ԳԼՈՒԽ Կ.

## ՅՈՎՆԱԹԱՆ

Գողիադին յաղթելից յետոյ Դաւթին տարան թագաւորի առջև։ Սաւուղ ընդունեց նրան քաղցրութեամբ. իսկ նորա որդի Յովնաթանը սիրեց Դաւթին բոլոր սրտով։ Նա դառաւ Դաւթի բարեկամը և տեսնելով նորա առաքինութիւնները սիրում էր նրան ինչպէս իր կեանքը։ Բարեկամութեան նշանի համար Յովնաթան ընծայեց Դաւթին իր շորը, թուրը, աղեղը և նետերը։ Սաւուղ յետ դառնալիս վեր առաւ հետը Դաւթին։ Այն քաղաքներում, որոնց մօտից որ անց էին կենում, աղջիկները նոցա առաջ էին դուրս գալիս երգերով և ծնծղաներով։ Իրենց հանդիսաւոր գովասանական երգերումը երգում էին նոքա. «Սաւուղը յաղթեց հազարին, իսկ Դաւիթ բիւրերուն»։ Ուրախութիւնը, որով ամէն տեղ ընդունում էին Դաւթին և գովասանութիւնները, որ նրան տալիս էին, տրտմեցրին Սաւուղին, որոնք բարկացած ասաց. «Դաւթին ինձնից գերազանց են համարում, ուրեմն ի՞նչ է նրան պակաս. միայն թագաւորութիւն»։ Այս ժամանակից Սաւուղ սկսաւ կասկածել Դաւթի վերայ և նորա առաջքան այսահարութիւնը էլի նորոգվեցաւ։ Մի անգամ Դաւիթ ածում էր քնար թագաւորի մօտ. Սաւուղ վեր առաւ տէգը և գցեց նորա վերայ. բայց Դաւիթը ճարպիկով ազատվեցաւ այս հարուածից։ Այս երկու անգամ պատահեցաւ։

Դաւիթ էլի միանգամ յաղթեց Փղշտացիներուն և Սաւուղ այս պատճառով աւելի առաց նրան։ Նա իր

որդու Յոնաթանի առջև հրամայեց թիկնապահնե-
րին սպանել Դաւթին, բայց Յոնաթան ասաց. «Թա-
գաւոր, մի՛ մեղանչի՛ր քո ծառայ Դաւթին. նա անմեղ է:
Ինչպէս Դաւիթը արաւ, բոլորը քո օգտի համար էր:
Քեզ համար չինայեց իր կեանքը, նա չէ՞ր որ սպանեց
Գողիաթին. նա չէ՞ր, որ ազատեց Իսրայէլացիներուն: Դու
ինքդ վկայ էիր նորա քաջութիւններին, դու ինքդ դո-
վեցիր նրանց, ինչո՞ւ համար ես կամենում թափել ան-
մեղ արիւն, ինչո՞ւ ես կամենում սպանել նրան, որ
քեզ ոչինչ չէ արել»: Այս խօսքերը կակղացրին Սաւուղի
սիրտը և ասաց. «չէ. թող Աստուած ինքը վկայ լինի, նա
չեմ սպանում Դաւթին»: Այն ժամանակ Յոնաթան
բերաւ Սաւուղի մօտ իր բարեկամին: Սաւուղ իր Մեղ-
քող աղջիկը տուեց նրան կին:

Շուտ սրանից յետոյ Դաւիթ կրկին յաղթեց այլ-
ազգիներուն. այս էլի նորոգեց Սաւուղի սրտի մէջ նա-
խանձը: Նորա առաջման այսահարութիւնը նորոգվե-
ցաւ առաւել զօրութեամբ: Նա նստած էր տանը գե-
զարդը ձեռին և Դաւիթը ածում էր քնար և երգում:
Սաւուղ գցեց նորա վերայ գեղարդը. բայց Դաւիթ մի
կողմ քաշվեցաւ և գեղարդը ցցվեցաւ պատի մէջ: Նոյն
գիշեր Դաւիթը գնաց և պահվեցաւ լեռներում:

Մի քանի ժամանակից յետոյ թագաւորը, երբ նըս-
տած էր սեղանի առջև, հարցրեց. «ինչո՞ւ Յեսսէի որդին
չէ գալի իմ սեղանիս մօտ. նա երեկ էլ չկար, այսօր էլ
չէ երևում»: Յոնաթան սկսաւ արդարացնել Դաւթին.
և այս մասին Սաւուղ խիստ չարացաւ: «Դու՛ անհնա-
զանդ որդի». գոչեց նա. «ես գիտեմ. դու ինձ և մօրդ
ամաչցնելու համար ընտրել ես քեզ բարեկամ Յես-

սէր որդուն։ Այս բոլորս հրամայեր բերել նրան այս տեղ. նա, պէտք է, մեռնի»։ Յովնաթանը հնազանդեցաւ պատասխանեց. «ինչո՞ւ պէտք է զրկես նրան կեանքից, նա ի՞նչ է արել»։ Սաւուղ բարկացած վեր առաւ զեղարդը և կամենում էր սպանել իր որդուն։ Յովնաթան, վեր թռաւ սեղանից, դուրս գնաց և տխրութիւնից բոլոր օրը ոչինչ չկերաւ։ Այն միտքը, որ իր հայրը վճռել է Դաւթին սպանել, խիստ տխրեցնում էր նրան։

Միւս օր առաւօտը վաղ Յովնաթան գնաց սարը այն տեղ, ուր պահված էր Դաւիթ, միայն նրան էր յայտնի նորա թաղնված տեղը։ Դաւիթ նորա առաջ դուրս եկաւ։ Յովնաթան խորհուրդ տուեց նրան, որ ոչ ոքին չյայտնվի և իրարից հրաժարվելիս գրկեցին մէկ մէկու և լաց էին լինում երկուսն էլ. վերջապէս Յովնաթանը ասաց. «գնա՛ խաղաղութեամբ, բարեկամութիւնը, որով մենք Աստուծոյ իլեն առաջը երդում տուինք, կ'մնայ անքակտելի, Աստուած թո՛ղ վկայ լինի իմ և քո մէջ, իմ որդոցս և քո որդոցդ մէջ»։ Սրանից յետոյ նոքա հեռացան մէկ մէկից։ Յովնաթանը դարձաւ տուն. իսկ Դաւիթ հեռացաւ խորը անապատի մէջ։

Սաւուղ շարունակեց հալածել Դաւթին անապատումն էլ։ Նա խրկեց իր բոլոր զօրքը զանազան կողմեր Դաւթի ետևից։ «Եթէ գտնի տակն էլ պահված լինի, այնտեղից էլ պէտք է գտնվի նա». ասում էր Սաւուղ։ Բայց Դաւիթը հեռացաւ շատ հեռու և անապատ տեղեր։ Յովնաթան այն տեղ էլ գտաւ նրան և աշխատում էր մխիթարել նրան ու զօրացնել նորա մէջ այն յոյսը, որ նա ունէր Աստուծոյ վերայ։ «Ոչինչից մի վախենար,

ասում էր նա, «իմ հոգս ձեռը չէ կարող քեզ հասնել. դու կ'լինես ժամանակով Իսրայէլի թագաւոր. իսկ ես կամենում եմ երկրորդը լինել քեզնից յետո»։

Յոնաթանը յուխտեան կ'ունայ հաստատ բարեկամութեան բարի օրինակ։

ԳԼՈՒԽ ԿԱ.

## ՆԱԲԱՂ ԵՒ ԱԲԻԳԻԱ

Դաւթի պաշտպանը Սամուէլ վախճանեցաւ։ Նորա վերայ լաց եղաւ Իսրայէլացւոց բոլոր ազգը և թաղեցին նրան Արիմաթեմում։

Դաւիթը խիստ խղճալի դրութեան մէջ էր. ամիսվաճ մի տեղից միւս տեղ թափառելու, նա ոչ մի տեղ չէր գտնում հաստատ ապաստանի տեղ։ Նորա կեանքը միշտ վտանգի մէջ էր, իբրև աքսորված հեռու մարդկանց ընկերակցութիւնից, նա պէտք է ծածկվէր կամ թանձր անանցանելի անտառներում կամ խորը այրերում։ Բայց այն տեղ էլ ապահովութեան մէջ չէր. այն տեղ ապառնում էր նրան մարդասպանի նետը, այս տեղ ապառնում էին նրան Սաւուղի զինուորները։ Թէ ուրիշը լինէր նորա տեղ, կ'յուսահատվէր. բայց Դաւիթ չկորցրեց իր արիութիւնը, նա բոլոր սրտով յոյսը դնում էր Աստուծոյ վերայ և իր տխուր աքսորանքի ժամանակը գրեց Աստուծոյ հոգով շնչած սաղմոսները. որոնց մէջ նա իր բոլոր սիրտը բաց էր անում Աստուծոյ առջև։ Այսպէս կենում էր նա անապատումն, բայց մի քանի ժամանակից յետոյ Սաւուղից ամէն անբաւական և զրկեալ մարդիկը փախան և մնան Դաւթի պաշտպա-

նութեան տակը և Դաւիթ դառաւ իշխող շորս հարիւրից աւելի մարդոց։

Մի փոքրիկ Մաոն անունով քաղաքում, որ անապատի մօտն էր, բնակւում էր մի հարուստ մարդ Նաբաղ անունով։ Նա ունէր երեք հազար ոչխար և հազար այծ, որոնք արածում էին անապատում և որոնց Դաւիթ պահպանում էր։ Նաբաղը, չնայելով իր հարստութեան, էր շահասէր և խստասիրտ մարդ։ Միանգամ Նաբաղը ժողովեց բոլոր իր մշակներուն և հովիւներուն, որ կարէն հօտերը։ Այս բանի համար, այն ժամանակվան սովորութեամբ, նա կամենում էր մեծ խնճոյք կազմել։ Դաւիթ, գրէթէ պաշարից զրկած լինելով, խրկեց նորա մօտ տասն երիտասարդներ, որոնք նորա մօտ էին և մասնակից էին լինում ամէն նորա կարօտութիւններին, նա հրամայեց նրանցը հարցնել Նաբաղի և ընտանեաց առողջութիւնը ու ասել նրան. «Դաւիթը բարեկամաբար ողջունում է քեզ։ Յանկանում է քեզ և քո բոլոր ընտանեացդ ողջութիւն և ինչ որ դու ունես։ Մենք իմացանք, որ այժմ քո հովիւներդ պէտք է խուզեն քո ոչխարներուդ, որոնք մեզ մօտ անապատում արածում էին։ Մենք ոչ միայն չէինք արգելում քո մարդոցդ արածելու խաշներդ մեր մօտ, և ոչ թէ միայն ոչինչ վնաս չէինք տալիս, այլ և պահպանում էինք նրանց գողերից և վայրենի գազաններից։ Հարցրու այս մասին քո հովիւներուդ, նոքա, յայտնի բան է, կ'հաստատեն մեր խօսքերը։ Այս պատճառով մենք յոյս ունինք արժանանալ շնորհք գտնելու քո առջևից։ Մենք քեզ մօտ գալով այսօր, որ քո կազմած հանդէսի օրն է, յոյս ունինք, որ դու կ'խրկես մի բան Դաւթին էլ, ինչպէս հայրը իր

որդուն. նոյնպէս էլ մեզ՝ քո ծառաներիդ մի ողորմութիւն կ'տաս։

Դաւիթ յայտնի էր Իսրայէլացւոց բոլոր ազգին, ամէնքը սիրում էին նրան, ամէնքը գովասանութեամբ խօսում էին նորա վերայ, բայց Նաբաղ ձեւացրեց, իբրև թէ չէ ճանաչում նրան։ Նա բարկութիւնից տեղից վեր թռաւ և գոռաց. «Այդ ո՞վ է ցեսէի որդի Դաւիթը։ Այժմ շատացել են փախստականները և իրենց տէրերից փախած ծառաները, ես իմ հացս և միսս, որ պատրաստել եմ իմ ծառաներիս համար, նոցա չեմ բաժանիլ. ես Դաւթին չեմ ճանաչում»։ Դաւթի մարդիկը ամօթով յետ դարձան։

Նաբաղի կնոջ անունը էր Աբիգիա։ Նա էր խելօք, բարի և գեղեցիկ կնիկ։ Հովիւներից մէկը գնաց և յայտնեց Աբիգիային այս անցքը։ «Դաւիթը, ասաց նա, խրկեց իր մարդոց, որ շնորհաւորեն այս ուրախութեան օրը քո մարդուդ. բայց Նաբաղ յետ խրկեց նրանց մեծ կոպտութեամբ։ Իսկ Դաւիթը և նորա մարդիկը մեզ խիստ օգտաւէտ էին։ Ինչքան որ մենք անապատումն էինք, բերդի պէս պահպանում էին մեզ ցերեկը և գիշերը պաշտպանում էին աւազակներից և վայրենի գազաններից։ Լաւ մտածիր, որ Նաբաղի յիմարութիւնը ուղղելու հնարք գտնես։ Նա վախենում եմ, չլինի, թէ մի թշուառութիւն պատահի քո մարդուդ և բոլոր նորա տանը։

Աբիգիան այն րոպէին վեր առաւ երկու հարիւր նկանակ, երկու աման գինի, հինգ խաշած ոչխարներ, մի կողով չամիչ և երկու հարիւր շարուկ չոր թուզը, այս ամէնը խրկեց իր ծառաների հետ Դաւթի համար,

ուսելով։ «Գնացէք դուք այս ընծայներով առաջ։ Շուտով ես ինքս էլ կ՚գամ ձեր ետևից»։ Նա նստաւ իշի վերայ և գնաց ծառաների ետևից, բայց զիտնալով իր մարդու կամքս բնութիւնը ոչինչ չասացուց նրան։

Բայց այն տան երիտասարդները արդէն յետ դարձած յայտնել էին Դաւթին Նաբալի պատասխանը։ Դաւիթ, չարացած այսպիսի խաւութեան վերայ, կապեց իր սուրը և իր մարդոցն էլ հրամայեց զինուորվել։ «Ուրեմն, ասաց նա, մենք 'ի զուր պահպանում էինք Նաբալի խաշները, նա մեզ բարին չարով է հատուցանում։ Աստուած էլ թող այնպէս հատուցանէ մեր թշնամիներին, եթէ առաւօտը նրա բոլոր ունեցածից մի շունչ էլ չի մնալ։ Եկէք ետևից»։

Դաւիթը արդէն ճանապարհուն էր, նա պատրաստ էր մեծ յանցանք գործելու։ Բայց Աբիգիան, Նաբալի խնամուն կիները, ցաւացրեց նրա բարկութիւնը։ Երբ Դաւթին հանդիպեցաւ, նա շուտ իշից իջաւ և նրա առաջին ընկնելով երկրպագութիւն տուեց նրան մինչև գետին։ «Տէր իմ», ազաղակեց նա, թող իմ մարդուս յանցանքի պատիժը միայն իմ վրա ընկնի։ Հրամայեցէք սուր ինձ, քո աղախնիդ, բերել քեզ օրհնութիւն և ականջ դիր իմ խօսքերին։ Ես բերի քեզ ընծաներ, բաժանիր այն քո զինուորներին։ Բանի տեղ մի՛ դնիր Նաբալի յիմարութիւնը։ Դու կ՚լինես Աստուծոյ ազգի առաջնորդը, անմեղ արիւն թափելը թող չլինի պատճառ քո փառքիդ։ Ինձ միայն բեր այն ժամանակ»։

Դաւիթ, փարեցաւած այս հեզ խօսքերով, ասաց Աբիգայլին։ «Օրհնեալ է Աստուած, որ խրկեց քեզ օրհնեալ լինես դու էլ, որ պահեցիր իմ ձեռքս արիւնհե-

ղութիւնից։ Դարձիր խաղաղութեամբ քո տունդ, և մ՚կատարեմ խնդիրդ»։

Իսկ Նաբաղ այս միջոցին խմում էր, ուտում էր և ուրախանում ոչինչ չկասկածելով։ Միւս օր առաւօտը, երբ սթափեցաւ գինիից, կինը յայտնեց նրան, թէ ինչպիսի վտանգի մէջ էր նորա կեանքը։ Նաբաղը, երբ այս լսեց, քար կտրեցաւ վախից և տասն օրից յետոյ մեռաւ։ Դաւիթ, որ լսեց նորա մահը, ամուսնացաւ Աբիգիայի հետ։

ԳԼՈՒԽ ԿԲ։

## ԴԱՒԹԻ ՎԵՐՋԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՍԱՒՈՒՂԻ ՀԵՏ

Սաւուղի ամէն աշխատանքը Դաւթին բռնելու համար 'ի զուր եղան։ Աստուած պահում էր այս հեզ և առաքինի մարդուն։ Չնայելով Սաւուղի բոլոր ատելութեանը և հալածելուն, Դաւիթ էլի միշտ յարգում էր նրան, իբրև Աստուծոյ օծեալին և իր թագաւորին։

Միանգամ Սաւուղ երեք հազար ընտիր զինուորներով գնաց Դաւթին փնտռելու։ Նա վեր եկաւ մի սարի գլխին։ Դաւիթը իմացաւ այս և գիշերով թագուն գնաց իր ամէնից հաւատարիմ զինուորի՝ Աբեսայի հետ միասին Սաւուղի բանակը։ Աբեսան, Սաւուղի զօրավարը և նորա բոլոր զինուորները խորը քուն էին մտել։ Դաւիթ Աբեսային հետ առանց արգելքի գնացին մինչև թագաւորի վրանը։ Սաւուղի թիկնապահները քնած էին և ինքը թագաւորն էլ խորին քնի մէջ էր ընկղմել։ Նորա գեղարդը ցցած էր գետնին, գլխի մօտ, այն տեղ մօտիկ էլ դրած էր ջրի կուժը։

«Աստուած մատնում է մեր ձեռքը մեր թշնամիին, ասաց Աբեսան. ես կ'ապտնեմ դրան իր գեղարդով»։ «Չէ»։ խօսքը կտրեց Դաւիթ. «Չհամարձակես ձեռդ բարձրացնել Աստուծոյ Օծեալի վերայ։ Ա՛ռ նորա գեղարդը և կուժը ու գնանք այստեղից»։ Նորա վեր առան գեղարդը և կուժը ու հեռացան բանակից, և ոչ ոք չնկատեց նրանց։

Դաւիթ, վեր ելաւ դէմուդէմ եղած ժայռի վերայ և բարձր ձայնով գոռաց. «Աբեններ, պատասխան տո՛ւր ինձ»։ — Աբենները ձայն տուեց հարցնելով. «Ո՞վ ես դու»։ — Դաւիթը ասաց, «դո՞ւ ես այն հաւատարիմ և քաջ զինուորը, որին նմանը չկայ բոլոր Իսրայէլի մէջ։ Այդպէ՞ս ես պահում դու քո թագաւորիդ։ Տե՛ս, ահա նորա կուժը և գեղարդը, որոնք նորա գլխի մօտն էին դրած»։ Այն ժամանակ Սաւուղ գոչեց. «Դաւի՛թ, իմ որդեակս, քո ձա՞յնդ է այս»։— Այո՛, թագաւոր, ես եմ՝ քո ծառադ». պատասխանեց Դաւիթ. «Ինչո՞ւ համար հալածում ես դու ինձ, ա՛ռքայ. ես ի՞նչ եմ արել, թողել է՞մ արդեօք երբէք քո հրամաններդ առանց կատարելու. ինչո՞ւ ես կամենում Աստուծոյ առջևը թափել անմեղ արիւն»։ Սաւուղ ասաց։ «Ես մեղանչեցի։ Դարձի՛ր մօտս, որդեակ։ Որովհետև դու խնայեցիր իմ կեանքիս, երբ ես քո ձեռումդ էի, ես քեզ ոչինչ չարութիւն չեմ անիլ»։

Դաւիթը ասաց. «Տե՛ս, ահա՛ քո գեղարդդ և կուժդ։ Հրամայի՛ր ծառաներից մէկին, որ գայ և առնէ։ Աստուած ամէնին կ'հատուցանէ իրենց գործոց համեմատ։ Ինչպէս այսօր մեծացաւ քո անձդ իմ առաջիս, այնպէս էլ կ'մեծանայ իմ անձս Աստուծոյ առաջին։ Նա կ'փրկէ

ինձ ամէն չարից։ Սաւուղը օրհնեց Դաւթին և հեռացան մէկ մէկից խաղաղութեամբ։ Դաւթի այս տեսակը Սաւուղի հետ եղաւ վերջինը։

Սաւուղ իր բոլոր զօրքովը չկարողացաւ յաղթել Դաւթին, բայց Դաւիթ միայն մեծահոգութեամբ յաղթեց Սաւուղին։

Սաւուղ, որի առաքինութեան սէրը միայն բոպէական էր և սերտ չէր, շուտ սրտից յետոյ յաղթուեցաւ փղշտացիներից։ Նորա զօրքը բոլորովին չարչարուեցաւ. նորա երեք որդիք մեռան, որոնց մէջ էր և առաքինի Յոնաթանը, Դաւթի բարեկամը։ Սաւուղ ինքը վիրաւորուեցաւ. փղշտացիները ամէն կողմից յարձակեցան նորա վերայ և կամենում էին զերի առնել նրան։ Սաւուղ վախենալով, որ թշնամեաց ձեռը չընկնի, ընկաւ իր սրի վերայ և կոխեց նրան իր սիրտը ու մեռաւ։

Դաւիթ թէպէտ և ազատուեցաւ իր հզօր և ահալի թշնամիից, բայց էլի չէր ուրախանում Սաւուղի մահի վերայ։ Նա և բոլոր նորա զինուորները ողբում էին Սաւուղի և Յոնաթանի վերայ, որոնք մեռան պատերազմում։ Նոքա լացով և առանց ուտելու անց կացրին բոլոր օրը։

ԳԼՈՒԽ ԽԳ.

## ԴԱՒԻԹ ԻՍՐԱՅԷԼԱՅԻՈՑ ԹԱԳԱՒՈՐ

Սաւուղի մահի ժամանակը, Դաւիթ բոլոր իր զինուորներով կենում էր Գէթայ Անքուս թագաւորի մօտ, Սիկելակ քաղաքում։ Յանկարծ եկաւ նորա առաջ Սաւուղի զինուորներից մէկը, որ փախել էր պատերազմի

զաշտից. նա բերաւ Դաւթին Սաւուղի թագաւորական թագը և ապարանջանները, յուսալով այս կերպով ողորմութիւն գտնել նրանից։ Այս մարդը պատմեց. թէ, երբ Սաւուղ ընկաւ սրի վերայ, մինչև 'ի մահ չվիրաւորվեցաւ և դեռ կենդանի էր. ուստի և իրեն կանչեց և ասաց. «ապանիր ինձ. ես խիստ տանջվում եմ և դեռ շունչս մէջս է»։ Յետոյ շարունակեց նկած մարդը. «ես տեսնելով, որ Սաւուղ այնպէս վիրաւորված է, որ չէ կարող երկար ժամանակ ապրել, ապանեցի նրան, ուստի նորա գլխից թագը և ձեռներից ապարանջանները և եկայ քեզ մօտ։» Դաւիթ և բոլոր զինուորները սրբոտութիւնից պատռեցին իրենց շորերը։ Դաւիթը որոշեց խիստ Սաւուղի և իր բարեկամի Յովնաթանի վերայ։

«Ինչպէս կարողացար դու բարձրացնել ձեռդ Աստուծոյ օծեալին վերայ», ասաց Դաւիթ Սաւուղին ապանող մարդուն. «ինչպէս համարձակեցար դու քո թագաւորիդ կեանքից զրկել։ Թագաւորի կեանքը Աստուծոյ ձեռին է. նորա արիւնը քո գլխիդ կլինի, որովհետև և դու ինքդ վկայեցիր քո դէմ»։ Դաւիթ հրամայեց ապանել այս համբաւ բերողին։

Դաւիթ դուրս եկաւ Սիկելակից իր ընտանիքով և վեցհարիւր զինուորներով դարձաւ իր հայրենիքը և Քերբոնուումն յայտնի ընտրվեցաւ թագաւոր։

Դաւիթի Յեսսէի որդին էր, իսկ Յէսսէն Ովբէթի որդին էր և Ովբէդը Հռութի և Բոոսի որդին։ Այսպէս աղքատ, բայց առաքինի Հռութի ցեղը նստաւ Խրայէլացւոց գահը։ Յետոյ էլի նորա զաւակներից ծնաւ Աստուծոյ խոստացած Մեսիան, նա, որով Աստուած օրհնեց երկրիս բոլոր ազգերուն։

ԳԼՈՒԽ ԿԴ

## ԴԱՒԹԻ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Փղշտացիները, պատերազմի դաշտում գտնելով Սաուլն և նորա որդւոց մարմինները, վեր առան նրանց ուրիշ մեռելներուն և նոցա ազգը նախատելու համար կախեցին դիերը իրենց բերդի պատին վերայ։ Յաբէսի բնակիչները յիշեցին, ինչպէս մի ժամանակ քաջ թագաւորը ազատեց իրենց քաղաքը կորուստից. գիշերով ժողովեցան և իրենց կեանքը վտանգի մէջ դնելով վեր առան թշնամեաց պատերից իրենց թագաւորի և նորա որդոց մարմինները, որոնք յարգելի էին նոցա համար, այրեցին և թաղեցին նրանց Յաբէսում ու եօթն օր պահեցին։

Դաւիթ, երբ լսեց Յաբէսի բնակիչների այս գործը, օրհնեց նրանց և ասաց. «Սատուած թող վարձատրէ ձեզ ձեր հաւատարմութեանը համար դէպի ձեր թագաւորը և ես էլ իմ կողմից կ'վարձատրեմ ձեզ»։

Սրանից յետո Դաւիթ սկսաւ պատերազմել այն օտար ազգերի հետ, որոնք ցեղու Ներեայի ժամանակից մնացել էին Իսրայէլացիների մէջ և անգադար նոցա հետ կռիւ էին անում։ Նա յաղթեց նրանց և արբեց Իսրայէլի բոլոր երկիրը։ Դաւիթ պաշարեց Երուսաղէմ քաղաքը և առաւ։ Երուսաղէմը ընտրեց իրեն բնակութեան տեղ։ Կարծում են որ այս քաղաքը, որնոր թագաւորանիստ դառաւ, նոյն Սաղիմ քաղաքն է, ուր Մելքիսեդէկը Աբրահամին պատահեցաւ։ Այսպէս Աբրահամի զաւակը թագաւոր դառաւ այն գեղեցիկ երկ-

բին, որնոր Աստուած խոստացաւ տալ նորա ազգին։

Դաւիթ բարի և բարեպաշտ թագաւոր էր։ Նա սրտով կամենում էր, որ իր ազգը լինի առաքինի և երջանիկ։ Ինքը ունէր սիրտ սիրով լեցը, երախտագէտ էր Աստուծոյ և յոյսը հաստատ նորա վերայ և բոլորովին հպատակ նորա սուրբ կամքին։ Այս զգացմունքները էին նորա բոլոր երջանկութիւնը երկրիս երեսին և այն պատճառով կամենում էր արմատացնել նրանց իր հպատակների սրտերումն էլ։

Դաւիթ սկսաւ իր թագաւորութիւնը, տարածելով ազգի մէջ աստուածպաշտութեան սէրը։ Երուսաղէմ քաղաքի մօտ էր Սիոն լեառը, որնոր ունէր բերդ էլ։ Այս տեղ իրեն համար ալքունիք շինելից յետոյ, կանգնեց Դաւիթ հոյակապ խորան, Ուխտի տապանակը մէջը տեղաւորելու համար, որնոր մինչև այն ժամանակ դարբինաթարիմ քաղաքումն էր։ Երբ ամէն բան պատրաստ էր, հանդէսով տեղափոխեցին Ուխտի տապանակը նորա համար պատրաստված տեղը, և զրէթէ Իսրայէլացւոց բոլոր ազգը ուղեկից էր նրան փողերով և ուրախութեան երգերով։ Բայց իր սրտումն Դաւիթ շինեց Աստուծոյ համար աւելի գեղեցիկ տուն։ Նա Աստուծոյ հոգւով լցված գրեց այն սրտաշարժ և խրատական աղօթքները, որնք կարդացողի հոգին ազնուացնում են և մխիթարում։

Նոր Սիոնի վրայ շինած սրբութիւնումն Դաւիթ զոհ բերաւ Աստուծոյ, օրհնեց իր ազգին, ամէնին բաժանեց հաց, զոհի միս և գինի։ Այս զոհի սեղանին առմէնքը մատնակից եղան, այս ուրախութեան օրը վերջին աղքատն էլ Դաւթի հպատակներից լիացաւ կերակրով։

Դաւիթ հարցրեց. «Սաուղի ցեղից արդեօք չմնա՞ց մի հոգի կենդանի. ես իմ բարեկամիս Յոնաթանի սիրոյ համար կամենում եմ նրան լաւութիւն անել»: Մնացել էր միայն Յոնաթանի մի որդին Մեմփիբոսթէն, որ երկու ոտով էլ կաղ էր: Նա բնակում էր Ղոդաբարում: Դաւիթը խրկեց նորա եռեից, բնակեցրեց իւրատան մէջ և տուեց նրան Սաուղի բոլոր կալուածները և վարվում էր նորա հետ իր որդու պէս: Մեմփիբոսթէն միշտ ուտում էր թագաւորի սեղանից, Դաւթի որդոց հետ միասին:

ԳԼՈՒԽ ԿԵ.

## ԴԱՒԹԻ ՄԵԳԱՆՉԵԼԸ ԵՒ ԶՂՋՈՒՄՆ

Ամէն թշնամիներուն յաղթելից յետոյ, Դաւիթ և իր թագաւորութիւնը վայելում էին խաղաղութիւն և առատութիւն: Բայց շատ անգամ բարգաւորութիւնը լինում է մեզ գիւրաւոր: Թշուառութեան ժամանակ Դաւիթ էր առաջնի. բայց լինելեան, հանգստութեան և զօրութեան ժամանակը նա ընկաւ փորձութեան մէջ և գործեց ապրանքի յանցանք:

Ակտա պատերազմ Ամմոնացւոց դէմ: Ամ հատարակ թագաւորները իրենք առաջնորդում էին զօրքին. բայց Դաւիթ կամեցաւ վայելել հանգստութիւն. նա ինքը չգնաց կռիւ և յանձնեց զօրքը իր զօրավար Յովաբին. իսկ ինքը մնաց Երուսաղէմում:

Միանգամ, երեկոյեան մօտ, զուրս ելաւ նա յուսակ օդ շնչելու իր պալատի տանիքը, որտեղից երևում էր բոլոր քաղաքը և ազատ, անգործ մարդու պէս նայում

էր ամէն կողմ հետաքրքրութեամբ։ Անգործութիւնից ծնում են միշտ վատ մտքեր։ Նա տեսաւ մի կին և գայթակղվեցաւ նորա գերբնական գեղեցկութեամբը։ Այս կնոջ անունը էր Բէերսաբէ։ Սա էր Ուրիայի կինը, որ Դաւթի զօրավարներից մէկն էր և արժանաւոր մարդ էր։ Դաւթի խրկեց Ուրիային իր զօրավար Յովաբին մօտ նամակով, որի մէջ հրամայում էր սրան, որ Ուրիային խրկէ ամէնից երկիւղալի տեղը և երբ պատերազմը սաստկանայ, նրանից բոլոր զօրքին յետ կանչէ, որ թշնամին կարողանայ անարգել ապանել նրան։ Ամէն բան կատարվեցաւ Դաւթի հրամանին համեմատ. Ուրիան ապանվեցաւ, իսկ նորա կինը Բեերսաբէէն, ուրդի օրեր անցնելից յետո, ամուսնացաւ Դաւթի հետ։

Մարդկերանցից ամէնից լաւն էլ կարող է ընկնել յանցանքի մէջ, բայց առաքինի մարդը չէ ընդունակ յամառելու իր յանցանքի մէջ և երկար ժամանակ հեռանալու բարի զգացմունքներից, որոնք ունէր նա իր բոլոր անցեալ կեանքի մէջ և որոնք էին նորա երջանկութիւնը։ Ստուած ինքը խրկում է նրան իր օգնութիւնը։ Նա խրկեց Դաւթի մօտ Նաթան մարգարէին։ Մարգարէն ասաց նրան. «Մի քաղաքում բնակում էին երկու մարդիկ. նրանցից մէկը հարուստ էր և միսը աղքատ։ Հարուստը ունէր ոչխարների և կովերի ամբողջ խաշներ, իսկ աղքատը ունէր միայն մի գառը, որին նա դեռ շատ փոքրիկ գնել էր. նա կերակրեց նրան և այն էր նորա բոլոր հարստութիւնը։ Սա մատն էր հանում նրան իր աղքատ կերակուրից, մի ամանից նորա հետ խմում էր, և քնեցնում էր նրան իրա ծոցումը։ Բայց հարուստի մօտ եկաւ հիւր. նա չկամեցաւ

նորա համար իր ոչխարներից մեկին մորթել, խլեց աղքատից նորա սիրելի գառին, և պատրաստեց նրանից կերակուր իր հիւրի համար »:

Սկզբում Դաւիթ հասկացաւ այս առածը, որի մէջ նկարագրվում էր իր յանցանքը: Նա բարկացաւ խիստ և գոռաց. «Չարագործը, որնոր խլեց աղքատից գառը, արժանի է մահի»: — «Դու ինքդ վճռեցիր քո պատիժը, ասաց Նաթան»: Այս խօսքերը շառնեցրին Դաւթի վերայ: Նա ճանաչեց իր յանցանքի բոլոր վատութիւնը:

Նաթան շարունակեց. «Աստուած ասում է քեզ. «Ես օծեցի քեզ Իսրայէլի թագաւոր. Ես ազատեցի քեզ Սաւուղի ձեռքից. Ես հպատակեցուցի քեզ ոչ միայն Յուդայի տոհմը, այլ Իսրայէլացւոց բոլոր տասնիւրկու տոհմերը: Եթէ այս փոքր է, կ'անեմ քեզ համար աւելի: Ինչո՞ւ դու անարգեցիր քո Աստուծոյ պատուիրանները և գործեցիր նորա առաջ այսպիսի անօրէնութիւն: Դու սպանեցիր Ուրիայեն Հիթացուի ձեռքով, դու առար նորա կնոջ քեզ կին: Այս պատճառով սուրը չի հեռանալ քո տնից: Քո ընտանիքից կ'ծագէ քեզ վնաս »:

Դաւիթ ապաշխարելով և դողալով ասաց. «Եւ մեղանչեցի Աստուծոյ առաջը»: — Եւ Աստուած ներում է քեզ մեղքդ». ասաց Նաթան. Դու չես մեռնիլ այժմ. բայց քո առաջին որդին Բերսաբէից կենդանի չի մնալ »:

Սաւուղն էլ քանիցս ան գամ խոստովանեց, թ մեղանչեց Աստուծոյ առաջը, բայց Աստուած չէր ներում նրան: Աստուած կարդում է մեր սրտում եղածը: Նա տեսնում էր, որ Սաւուղի զղջումն միայն խօսքերով էր: Բայց Դաւիթ զղջում էր բո՞ր սրտիւը: Այսպիսի զղջ-

ման հետևանքը է միշտ ուղղվելը։

Դաւթի այս միջոցին գրեց այն գեղեցիկ սաղմոսը, որի մէջ կենդանի նկարագրում է իր բեկեալ սրտի ըղձագայմուելքները։ Այս սաղմոսը սկսւում է այս խօսքերով։ «Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ»։ (Ողորմի՛ր ինձ, Աստուած, քո մեծ ողորմութեամբդ և քո շատ գթութեամբդ քաւի՛ր իմ անօրէնութիւններս)։

## ԳԼՈՒԽ ԿԶ.

## ԱԲԻՍՈՂՈՄԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Դաւթի որդիներից ամէնից արժանայիշատակները են՝ Աբիսողոմ և Սողոմոն։ Աբիսողոմ ամէնից գեղեցիկ մարդն էր բոլոր Իսրայէլի մէջ։ Արտաքուստ ոչինչ պակասութիւն չունէր նա. մանաւանդ գեղեցիկ էին նորա մազերը. բայց նորա սիրտը վատասիրութեամբ լեցք էր։ Նա մտքում դրեց շար խորհուրդ իր հօրը գահից վեր գցելու, որ ինքը թագաւորէ նորա տեղ։ Այս նպատակին աւելի հեշտութեամբ հասնելու համար, նա ամէն կերպով աշխատում էր ազգի սէրը ստանալու։ Քաղաքի դրան մօտ կանգնած, հարցնում էր անցկացողներուն. «ի՞նչ խնդրելու են գնում թագաւորից»։ Եւ երբ մէկը պատասխանում էր իր գործը, Աբիսողոմ ասում էր. «քո գործքդ ճշմարիտ է. բայց թագաւորի մօտ չկայ մարդ, որնոր քո կողմդ բռնէ։ Ո՜հ. թէ ես լինէի ազգի դատաւորը, ես ինքս կ'լսէի ամէնուն և ինքս կ'դատէի արդարութեամբ»։ Ով որ կամենում էր նրան պատիւ տալ,

որպիսի արժան է թագաւորի որդուն։ Աբիսողոմ գրկում էր նրան։ Այսպէսով նա ազգին շատ սիրելի եղաւ և ամէնքը կամենում էին նրան թագաւոր ունենալ։ Նոյնպէս իր կողմ գոյց Աքիտոփէլին՝ թագաւորի խորհրդականին էլ, որ մեծ պատիւ ունէր Իսրայէլացւոց մէջ։

Աբիսողոմ չէր կասկածում իր չար խորհրդի յաջողութեան մասին։ Նա գնաց թագաւորի մօտ և հրաման խնդրեց նրանից գնալ Քեբրոն քաղաքը երթալու, որ զոհ բերէ Աստուծոյ ինչպէս խոստացել էր։ Դաւիթ ասաց. «գնա՛, ցերը քեզ հետ լինի, որդեա՛կ»։ Աբիսողոմ, Քեբրոն հասնելից յետոյ, զոհ բերաւ և միևնոյն ժամանակ կազմեց դաւակցութիւն էլ հօր դէմ։ Նա առաւ թագաւորից հրաման միայն նորա համար, որ կասկածանքից ազատ լինի։ Երեսպաշտը բարեպաշտութեան դէմքի տակ ծածկում էր իր չար խորհուրդը։ Զոհն էլ նորա համար միջոց էր աւելի ժողովուրդ հաւաքելու։ Դեռ Քեբրոն գնալից առաջ, խրկեց նա հրեշտակներ Իսրայէլացւոց ամէն ցեղերուն, հրամայելով յայտնել նրանց. «երբ կ'լսէք փողի ձայնը, Աբիսողոմ Քեբրոնում թագաւոր կ'ընտրվի»։ Ժողովուրդը ամէն կողմից հաւաքվում էր նորա մօտ և ընտրեց նրան թագաւոր։

Դաւիթ, երբ իմացաւ այս ապստամբութիւնը, հարկաւոր համարեց հեռանալ փոքրաթիւ զօրքով, որ իր մօտ մնացել էր։ Այս փախուստի սկզբունքն արդէն Աստուած խրկեց Դաւթին մխիթարութիւն։ Նա ասով փախաւ քաղաքից բոլոր իր ընտանիքովը և շատ ժողովուրդ հետևեց նրան։

Դաւիթ կանգնեցաւ Երուսաղէմի մօտ։ Այն ժամանակ եկան նորա մօտ Ցովաբը, Աբիսան, Եթթի և

բոլոր վեցհարիւր հոգիքը, որոնք նորա թիկնապահներն էին։ Դաւիթ, երբ տեսաւ այլազգի Եթթիին, որին նոր առել էր ծառայութեան մէջ, ասաց. «գնա՛ նոր թագաւորի մօտ, դու այլազգի ես, ես քեզ երէկ միայն ընդունեցի ծառայութեանս մէջ և այսօր դու կամենում ես ինձ ընկեր լինել թշուառութեանս մէջ։ Ես ինքս դեռ չգիտեմ, ինձ ինչ կ'լինի». — «Որ տեղ էլ լինես, թագաւո՛ր, ասաց Եթթին, ես քեզ կ'ծառայեմ, ես գալիս եմ քեզ հետ կենդանի մնալու կամ մեռնելու»։ «Գնանք, եկ ուրեմն ինձ հետ», ասաց Դաւիթ, շարժած այսպիսի հաւատարմութիւնից։ Ամէն ներկայ գտնվողները լաց եղան և հետևեցին Եթթիի օրինակին։ Ամէնքը գնացին իրենց թագաւորի ետևից։

Դաւիթ անցաւ Կեդրոնի հեղեղատը բոլոր իր մարդոց հետ։ Այն ժամանակ եկան նորա մօտ Սադովք քահանայապետը և ամէն քահանաները բերելով Ուխտի Տապանակը։ Բայց Դաւիթ ասաց. «դարձի՛ր քաղաք Սուրբ Տապանակովդ. եթէ Աստուծոյ հաճոյ կ'լինի, կ'դառնամ Երուսաղէմ և երկրպագութիւն կ'տամ Սուրբ Տապանակին խորանում։ Իսկ եթէ Աստուած կ'թողնէ ինձ, ես այն ժամանակը կատարեալ հպատակութեամբ կ'սպասեմ. թո՛ղ գո կամքդ լինի. իսկ դուք դարձէ՛ք քաղաք»։

Դաւիթ գնաց բոկոտն ձիթենեաց սարի գլուխը, գլխին մոխիր ածած և լաց լինելով։ Մեծ թշուառութիւնը նորա համար իր գահից զրկվելը չէր. այլ իր սիրելի որդուն ապստամբութիւնը։

Սեմէի, որ Սաւուղի թոռներից մէկն էր, դուրս եկաւ Դաւթի առաջը։ Նա քարեր էր գցում Դաւթի և նորա ուղեկիցներին վրայ, անիծում էր և գոչում. «փախի՛ր,

փախիր մեր երկրից, դու անօրէն մարդ: Այժմ Աստուած վրէժխնդիր է լինում, Սաւուղի և նորա որդոց թափուած արիւնի համար. այժմ Աստուած տալիս է քո թագաւորութիւնը քո որդուդ:

Սբիսան, Դաւթին սիրող քաջ, հաւատարիմ և արի զինուորը, զայրացաւ խիստ լսելով այսպիսի նախատանքներ ու զրպարտութիւններ և ասաց Դաւթին. «Ի՞նչպէս համարձակվում է այս ասելին անիծել իմ թագաւորիս: Ես չեմ կարող համբերել այս բանին և կը կտրեմ այն լեզուն»:

Դաւիթ հեզութեամբ ասաց. «Մի՞թէ դու մոռացար, որ իմ հարազատ որդիս ձէնք է բարձրացրել: Ուրեմն էլ ի՞նչ յարգանք կարող ես պահանջել. օտար մարդից: Թող նրան, թող անիծէ ինձ: Գուցէ Աստուած կ'ողորմի ինձ և նորա անէծքները կ'դառնան ինձ օրհնութիւններ»: Թագաւորը շարունակեց իր ճանապարհը, իսկ Սեմէին երկար ժամանակ հետևում էր նրան, իր անէծքներովը, սարից նորա վերայ քարեր գցելով և հող ցանելով:

Դաւիթ իր բոլոր ուղեկիցներով անցաւ Յորդանանը և հեռացաւ անապատը: Այս տեղ կարօտութիւն քաշում էին նոքա ամէն պաշարների համար: Մի առաքինի ծերունի, Բերզելի անունով և ուրիշ էլի երկու ճշմարիտ մարդիկ բերին թագաւորի և նորա ընկերակիցների համար անկողիններ, զանազան ամաններ և ամէն տեսակ ուտելու պաշարներ:

Ինչպիսի զանազանութիւն է անարժան Սեմէիի վարմունքի և առաքինի Բերզելիի ազնուութեան մէջ: Սէրը բամբասում է իր թագաւորին, տեսնելով նրան

թշուառութեան մէջ, կարծելով թէ նա զուրկ է իրեն վնասելու միջոցներից. իսկ միւսը աշխատում է նրան ոչնչութիւն տալ, շյուսալով նրանից ոչինչ վարձատրութիւն:

ԳԼՈՒԽ ԿԷ.

## ԱԲԻՍՈՂՈՄԻ ՄԱՀԸ

Դաւիթը ճնաց անապատի մօտ եղած Մանայիմ (բանակ) քաղաքում և կարգի դրեց իր զօրքը: Նա բաժանեց նրան երեք մասը, մի մասին վերայ զօրավար դրեց Յովաբին, միւսին վերայ Աբիսային և երրորդին վերայ Եթթիին: Զօրքը անցնում էր նորա մօտով և նա իր երեք զօրավարներին ասում էր. «Խնայեցէք իմ որդուս Աբիսողոմին»:

Աբիսողոմն էլ նմանապէս հաւաքեց բազմաթիւ զօրք և հանդիպեցաւ Դաւթի զօրքին Եփրէմի անտառում: Աբիսողոմի զօրքը ջարդվեցաւ և ինքը շտապեց ազատվել փախչելով: Նա գնում էր ջորիի վերայ նստած թանձր անտառի մէջով: Աբիսողոմի երկար գանգուր մազերը փաթաթվեցան ծառի ճիւղերին և ինքը կախվեցաւ, ջորին ոչնչից դուրս եկաւ և գնաց: Դաւթի զինուորներից մէկը տեսաւ այս և յայտնեց Յովաբին: Ինչո՞ւ չսպանեցիր դու նրան, ասաց Յովաբ: Ես քեզ կ'տայի դրա համար յիսուն սիկղ արծաթ»: Իսկ արդար զինուորը պատասխանեց. «Ես չէի առնել քեզնից հազար դահեկան էլ նորա համար, որ թագաւորի ձեռս իմ թագաւորիս որդու արիւնում: Ես լսեցի, ինչպէս թագաւորը հրամայում էր քեզ. Աբիսային և Եթ-

թիին ասելով. «Խնայեցէք իմ որդուս Աբիսողոմին»։

Յովաբ զայրացած լինելով ապերախտ և անհնազանդ որդուն դէմ, առաւ երեք նետ, գնաց այն կողմը, ուր Աբիսողոմն էր և խփեց նետը նորա սրտին. բայց որովհետև Աբիսողոմ դեռ կենդանի էր, տասն երիտասարդներ Յովաբի ուղեկիցներից, որոնք հասան նորա մօտ, վերջացրին նրան կեանքից։ Այն ժամանակ Յովաբ հրամայեց փողեր ածել, որ պատերազմը վերջացնեն, որովհետև խնայում էր նա իր հայրենակիցների արիւնը։ Աբիսողոմի մարմինը գցեցին անտառում փոսի մէջ և ծածկեցին քարի շեղջով։

Յայտնի բան է, ամէն այտեղից անցկացողը տեսնելով այս յիշատակարանը կ'սարսափէր և միտը կ'բերէր Աստուծոյ պատուիրանը. «Պատուիր քո հօրդ և մօրդ, քեզ բարի կ'լինի և երկար կեանք կ'ունենաս երկրիս վերայ»։

Դաւիթը քաղաքի դրանը մօտ նստած սպասում էր պատերազմի յաջողութեան աւետիչին։ Լուր բերողը, որ պատերազմի տեղից եկաւ, բերեց նրան Աբիսողոմի մահուան համբաւը։ Դաւիթ խիստ տխրեցաւ, մնաւ սենեակ և դառնապէս լաց էր լինում, աղաղակելով. «Որդեակ իմ Աբիսողոմ, որդեակ իմ, Աբիսողոմ որդեակ իմ, ո՞հ ո՞վ կ'տայ ինձ մահ քո տեղ. Աբիսողոմ որդեակ իմ, որդեակ իմ Աբիսողոմ»։ Այսպէս էր ողբում Դաւիթ իր ապերախտ որդու մահը, որոնք կամենում էր նրան գահից զրկել։

ԳԼՈՒԽ ԻԸ.

## ԴԱՒԹԻ ԻՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԴԱՌՆԱԼԸ

Բոլոր ժողովուրդը ուրախութեամբ Դաւթի առաջը դուրս եկաւ նրան ընդունելու։ Սուրհանդակներ խրկեցան թագաւորին մօտ խնդրելու նրան, որ շուտ գաւառայ իր մայրաքաղաքը։ Դաւիթ էլի մտաւ Երուսաղէմ։

Երբ Յորդանանին մօտացաւ, հանդիպեցաւ Սեմէիին, այն Սեմէիին, որնոր այնպէսի ցաւոտութեամբ նախատում էր նրան, զրպարտում և անիծում նրան ամբարշտութեան ժամանակ։ Սեմէին ընկաւ թագաւորի առաջը, ասելով. «թագաւոր, մոռացիր այն գրկանքները, որ ես քեզ տուի, քո Երուսաղէմից փախչելու օրը. ես յանցաւոր էի քո դէմ. բայց այժմ ես առաջինը չեմ արդեօք, որ քո առաջը դուրս եկայ»։ Աբիսաան գոչեց. «և դեռ համարձակվում է պարծենալ, մի՞թէ Սեմէին կենդանի կ'մնայ, նա, որնոր անիծում էր Աստուծոյ Օծեալին։ Բայց ապնիւ սիրտը միշտ պատրաստ է ներելու։ Դաւիթ ասաց Աբիսայիին. «ինչո՞ւ դու աշխատում ես ինձ վատ գործի մէջ դցել։ Այսօր չպէտք է կորչի ոչ մի Իսրայէլացի։ Ո՞չ արդեօք այսօր դառայ էլի Իսրայէլացւոց թագաւոր»։ Յետոյ դառնալով Սեմէիին, ասաց նրան քաջալերութեամբ. «Սեմէի, դու չես մեռնիլ իմ ձեռքից։

Բերզէլին, ուխտաւոր տարեկան Ծերունին, նմանապէս դուրս եկաւ Դաւթի առաջը ուրախ սրտով։ Թագաւորը շնորհակալ եղաւ նրան և ասաց. «եկ ինձ հետ, դնանք Երուսաղէմ. այն տեղ կ'կենաս ինձ մօտ հանգստութեան

և լիութեան մէջ։ Բերզելին պատասխանեց. «Թագաւոր, ես արդէն ուխտուն տարեկան եմ, ինձ էլ երկար ժամանակ չէ մնում ապրել երկրիս երեսին։ Ես էլ համ չեմ առնում ոչ ուտելում և ոչ խմելում, երգեցողների երգերը ինձ էլ չեն ուրախացնում, ես միայն ծանրութիւն կ'լինեմ իմ թագաւորիս. իսկ վարձատրութիւն ինձ ամենևին հարկաւոր չէ։ Ես քեզ կամենում եմ էլի փոքր ինչ ուղեկից լինել և յետոյ հրաման տուր ինձ տուն յետ դառնալ, այն տեղ կամենում եմ վերջացնել օրերս և թաղվել հօրս և մօրս գերեզմանների մօտ»։

Դաւիթ բոլոր ազգի ուղեկցութեամբ Յորդանանը անցնելից յետոյ գրկեց Բերզելին և օրհնեց նրան. բայց էլի հօրը վարձատրելու համար, առաւելորդ որդուն իր ալքունիք և շատ ոգորմած եղաւ նրան։ Իսկ Բերզելին դարձաւ իր տունն։

ԳԼՈՒԽ ԿԹ.

## ԴԱՒԹԻ ՄԱՀԸ

Դաւիթ հասաւ խորին ծերութեան և զգում էր արդէն իր մահի մօտենալը։ Նա չէր բաւականանում նրանով, որ բոլոր կեանքը նուիրած էր Աստուծոյ անունը փառաւորելու և իր հպատակների բարօրութիւնը, այլ կամենում էր դեռ իր մահից յետոյ էլ օգտաւէտ լինել։ Ահա այն գեղեցիկ բարեկարգութիւնները, որ նա արաւ իր մահից առաջ։

Դաւթի ս. տունն երկու ցանկութիւններ կային, որ կամենում էր կատարված տեսնել իր մահից առաջ։

Առաջինը՝ կանգնել հոյակապ տաճար Աստուծոյ. և երկրորդը տալ թագաւորութիւնը իր որդուն Սողոմոնին։ Այս առաջին ցանկութիւնը բաց արաւ Նաթան մարգարէին, որնոր յայտնեց նրան Աստուծոյ կամքը։

Իր մահից փոքր ժամանակ առաջ, Դաւիթ հաւաքեց Երուսաղէմում ամէն իշխաններին, մեծամեծներին և բոլոր Իսրայէլացւոց ազգին, որ ամէնքն առջև բաց անէ Աստուծոյ կամքը, որ Նաթան մարգարէի միջնորդութեամբ յայտնեցաւ իրեն։ Բազմաթիւ ժողովի մէջ ասաց նա յետոյ խօսքերը։

«Եղբայրնե՛ր, իմ ժողովուրդս. ես կամենում էի կանգնել տուն, որ դնեմ նորա մէջ Ուխտի Տապանակը, և պատրաստեցի ամէն հարկաւոր նիւթերը նորա համար. բայց Աստուած ասաց ինձ. «Դու չես կանգնել ինձ տուն, որի մէջ կ'փառաւորուի իմ անունս, դու զինուոր էիր և շատ արիւն թափեցիր։ Քո որդին Սողոմոնը թող կանգնէ իմ տունս։ Նա ինձ որդի կ'լինի և ես նրան հայր. ես կ'զօրացնեմ նորա թագաւորութիւնը, եթէ կ'պահէ իմ պատուիրանները։

«Աստուծոյ իրեն առջև և բոլոր ազգի ներկայութեան, պատուիրում եմ ձեզ, որ կատարէք Աստուծոյ պատուիրանները, այն ժամանակ հանգստութեամբ կըտիրէք երկիրին, որ Աստուած ձեզ տուից և կ'տաք այն ձեր որդոցը ժառանգութիւն։

Իսկ դու, որդեակ, Սողոմոն, պաշտի՛ր քո նախնիքների Աստծուն, և ծառայի՛ր նրան սուրբ սրտով։ Աստուած փորձում է մեր սրտերը և տեսնում է, մեր խորհուրդները։ Փնտրի՛ր Աստծուն և կ'գտնես նրան, բայց եթէ կ'հեռանաս նրանից, նա էլ կ'թողնէ քեզ յաւիտ-

տեան։ Աստուած ընտրեց քեզ, որ կանգնես նրան տաճար, կատարիր Ամենաբարձրեալի կամքը։

Դաւիթը տաճարի շինութեան համար թողեց Սողոմոնին շատ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ քար և փայտ։ «Զնայելով, որ աղքատ էի ես, ասաց նա, էլի կարողացայ Աստուծոյ տան շինութեան համար հաւաքել այսքան նիւթեր»։

Ամէնքը հետևեցին թագաւորի օրինակին. ամէն մարդ բերում էր շինութեան համար, որչափ իր կարողութիւնը ներում էր, ոսկի, արծաթ, թանգագին քարեր, երկաթ, պղինձ և այլն։ Ժողովուրդը ուրախանում էր տեսնելով տաճարի շինութեան համար սրտանց բերած նուէրների այնքան բազմութիւնը. բայց թագաւորը ինքը ամէնից աւելի ուրախանում էր։ Նա բարձր ձայնով, բոլոր ազգային ժողովի առջև, փառաբանում էր Աստուն։

Դաւիթ շնորհակալութեան զոհ բերաւ Աստուծոյ և ասեց բոլոր ազգին հետ միասին այս օրը։

Սողոմոն դեռ իր հօր կենդանութեան ժամանակը օծուեցաւ Իսրայէլացւոց թագաւոր։ Իշխանները, ուժաւորները և ազգը ուրախանում էին այս ընտրութեան վերայ։ Այսպէս, ամբողջ գործքերը կարգադրելից յետոյ, Դաւիթ յանձնեց կառավարութիւնը իր որդուն։

Մահուան մահճումը պարկած, Դաւիթ ասաց Սողոմոնին, «Ես գնում եմ այնտեղ, ուր ամէն մահկանացու պէտք է երթայ, իսկ դու մխիթարվիր և եղիր կատարեալ մարդ։ Պահիր Աստուծոյ ուխտը, գնա նորա ցոյց տուած ճանապարհով և կատարիր Մովսէսի օրէնքները գրած պատուիրանները։ Թող կատարվի Աստուծոյ

խօսքը, որ նա ինձ ասաց. «եթէ քո որդիքդ հաւատարիմ կ'մնան իմ պատուիրանների, քո զաւակիդ թագաւորութիւնը Իսրայէլի գահից երբէք չի դադարիլ»:

Գլխաւոր խոստումն, որ Աստուած տուեց Դաւթին և որոնք միմիթարեց նրան մահուան բոպէին, էր այն, թէ Դաւթի զաւակից կ'ծնի Փրկիչը:

Դաւիթ վախճանեցաւ խորին ծերութեան մէջ. թագաւորեց Սաւուղից յետոյ քառասուն տարի և թաղեցին նրան Սիոնի տարի վերայ:

## ԳԼՈՒԽ Հ.

## ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՒՈՐԸ

Սողոմոնը դեռ երիտասարդ էր, որ նստաւ Իսրայէլի գահը: Թէ ինչպիսի զգացմունքներով ոգեւորած էր նա իր թագաւորութեան սկզբին, կարելի է նկատել յետագայ խնդրից: Աստուած երազում ասաց նրան. «խնդրի՛ր ինձանից, ինչոր ուզում ես: Սողոմոն պատասխանեց. «Ես դեռ երիտասարդ եմ և անփորձ. դու, ո՜էր Աստուած, յանձնեցիր ինձ բազմաթիւ ազգի կառավարութիւնը: Խնդրում եմ քեզնից սուրբ սիրտ և հանճար, որ կարողանամ կառավարել ժողովրդեանը և դատել նրան արդարութեամբ և առանց կողմնապահութեան: Տո՛ւր ինձ միտք, որ կարողանամ բարին չարից զանազանել. որովհետև ի՞նչպէս կարելի է առանց իմաստութեան կառավարել այսպիսի բազմաթիւ ազգին»:

Այս խօսքերը հաճոյ թուեցան Աստուծոյ: Նա ասաց Սողոմոնին. «որովհետև դու չինդրեցիր ինձանից ոչ երկար կեանք, ոչ քո թշնամիներիդ մահ, ոչ փառք և ոչ

հարատեւութիւն, բայց խնդրեցիր իմաստութիւն, ես տա-
լիս եմ քեզ ոչ միայն, ինչ որ խնդրեցիր, այլ և ինչ որ
չխնդրեցիր էլ՝ այն է հարատեւութիւն և փառք։ Ես կը-
տամ քեզ միտք և իմաստութիւն, քեզ նմանը չէ եղել
քեզնից առաջ և ոչ էլ կ'լինի քեզնից յետոյ։ Մի այն
պահիր իմ ուխտս և վարվիր իմ պատուիրանների յար-
մար, ինչպէս վարվում էր քո Հայրը»։

Սողոմոն զարթեցաւ ուրախութեամբ լեռը արտով
և Երուսաղէմում Ուխտի Տապանակի առաջին բերաւ
Աստուծոյ շնորհակալութեան մատաղ։ Շուտ արանից
յետոյ եկան նորա մօտ երկու կանայք։ Արանցից մէկը
ասում էր. «Թագաւոր, ես քեզ մի խնդիրք ունեմ ա-
սելու. ես բնակում եմ այս կնոջ հետ միասին մի տա-
նը, ու մեր երկուսիցս ուրիշ ոչ ոք չկայ։ Երկուսս էլ
ունէինք մի մի երեխայ։ Նա քնած տեղը, երբ ես էլ
քնում էի, խեղդեց իր որդուն, իմ կենդանի երեխայիս
վեր առաւ իր մօտ և իր մեռած երեխային դրեց ինձ
մօտ։ Առաւօտը, երբ զարթեցայ, տեսայ այս մեռած ե-
րեխային. բայց լաւ նայելով ճանաչեցի, որ երեխայն իմն
չէ, այլ նորանն է»։ Մեռա կինը ասաց. «այդ սուտ է, իմ
երեխայն կենդանի է. այլ քո երեխայ մեռաւ»։— «Չէ»,
կանչեց առաջինը. «դու սուտ ես ասում»։— Այսպէս
վիճում էին նոքա թագաւորի առջև։ «Տուէք սուրը»,
ասաց Սողոմոն։ Թուրը բերին և Սողոմոնը ասաց։ «Կէս
արէք կենդանի երեխային և տուէք ամէն մի կնոջ մէկ
կէսը»։ Այս խօսքերը լսելիս հարազատ մօր սիրտը տա-
սեցաւ։ «Չէ՛, թագաւո՛ր, աղաչակեց նա, մի հրամայիր
երեխային սպանել, տո՛ւր նրան կենդանի այս կնոջ»։ Իսկ
միւսը ասաց. «լաւ է նրան կէս անել, թող ոչ ոքին չլինի

և ոչ ի ձ։ Այս խօսքերից թագաւորը այն բոլէին ճա-
նաչից իսկական մօրը. մայրական սէրը յայտնից նրան։
Սողոմոն ասաց. «ասա՛ք երեխան առաջին կին ջը. նա է
նորա մայրը»։ Այս դատաստանը յայտնի եղաւ Իսրայէլի
բոլոր երկրում և թագաւորը հասարակաց յարգութեան
արժանացաւ։ Ամէնքը տեսնում էին, որ Աստուած նրան
իմաստութիւն տուել է։ Այս իմաստութիւնը փառա-
ւորից նրան ամէն տեղ։ Նորա թագաւորութեան ժա-
մանակ Իսրայէլացիները վայելում էին խաղաղութիւն
և հանգստութիւն։ Ամէն դրացի թագաւորները Սո-
ղոմոնի հետ բարեկամութեան ուխտ դրին, և նորա ա-
մէն մի հպատակը կարողանում էր առանց երկիւղի նը-
տել իր այգում և իր թզենիի տակ։

ԳԼՈՒԽ ՀԱ.

## ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Սողոմոն կանգնեց Աստուծոյ հոյակապ տաճար։
Երբ շինուածքը վերջացաւ, ժողովեցան ամէն ծերերը
և Իսրայէլացւոց բոլոր ազգը։ Քահանաները այս հան-
դիսաւոր ժ. զովի առջև տեղափոխեցին Ուխտի տա-
պանակը տաճարի ամէնից ներքին մասը, որ կոչվում էր
Սրբութիւն սրբոց։ Պատրաստած էին շատ զոհեր։

Սողոմոնը մտեցաւ բոլոր ազգի առաջևը զոհա-
բանին, ծունր իջաւ և իր ալօթքում ասաց յետագայ
խօսքերն էլ։

«Տէ՛ր, Իսրայէլի Աստուած, դու ես տիեզերքի մի
Աստուածը. քեզնից ուրիշ Աստուած չկայ ոչ երկին-
քում և ոչ երկրում. դու տալիս ես քո ողորմութիւնդ

ամենին, որոնք ճշմարտութեամբ պաշտում են քեզ. թող կատարվին իմ հօրս Դաւթին առաջ ամէն քո խոստումներդ։ Ցիրաւի կ'բնակի արդիօք Աստուած մարդոց հետ երկրիս վերայ։ Եթէ երկինքը և երկնից երկինքը չեն բաւական քեզ պարունակելու, առաւել և այս տաճարս որ ես շինեցի քո անուանդ համար։ Տէր և Աստուած Իսրայէլի, այս աղօթքի տանը մէջ նայիր մեր, քո ծառաներիդ վերայ. թող բարձրանան այստեղից մեր խնդիրքներս քեզ մօտ, ցերեկը և գիշերը լսիր մեզ։ Երբ մեր մեղայ համար կ'փակվի երկնքի դուռը, կ'գայ երաշտութիւն և քո ժողովրդդ գղջալով և բեկեալ սրտով կ'գայ այս տաճարը աղօթելու, լսիր նորա խնդրքի ձայնը. ներիր նրան իր յանցանքը և ջրիր երկիրս անձրևով»։

«Խնչպէսի թշուառութիւն էլ որ հասանի այս թագաւորութեանը՝ սով, ջրհեղեղ, երկրաշարժ, ցաւ, կրակ, այլապիների յարձակումները— լսիր քո մարդոց, որոնք այս տաճարումս աղօթք կ'անեն, և ողորմիր նրանց»։

«Եթէ կ'գայ մի այլապի հեռու երկրից այս տաճարում քեզ աղօթք անելու, լսիր նրան էլ։ Տէր Աստուած։ Կատարիր նորա խնդրքը. թող իմանան երկրիս ամէն ազգերը քո անունդ և երկնչին քեզնից և գիտենան, որ քո անունդ գրած է այս տաճարիս վերայ, որ ես քեզ կանգնեցի»։

Երբ աղօթքը վերջացրեց, Սողոմոն վեր կացաւ, օրհնեց բոլոր ազգին և յորդորեց նրան պահել Աստուծոյ ամէն պատուիրանները և չանցնել Մովսէսին տուած օրէնքներից։ Այն ժամանակ երկնքից ընկաւ կրակ պատրաստուած զոհերի վերայ և բոլոր ժողովուրդը ընկաւ գետինը, փառաւորելով Աստծուն։

ԳԼՈՒԽ ՀԲ.

## ՍՈՂՈՄՈՆԻ ՄԱՀԸ

Շարունակ բաղդաւորութիւնը, Սողոմոնի սրտում աւելի սէր և շնորհակալութիւն զարթեցնելու տեղ դէպի Աստուծ, նրան փչացրեց: Նա ճշմարիտ ճանապարհից մոլորվեցաւ և սկսաւ դէպի կռապաշտութիւն հակիլ: Այսպէս մարդոց ամէնից իմաստունն էլ, եթէ իր կրքերին կ'յանձնէ իրեն, ընկնում է մոլորութեան մէջ:

Սողոմոնը շատ կանայք ունէր և օրէնքների ընդդէմ, որոնք արգելում էին ամուսնութիւնը կռապաշտների հետ, կայինոնրա կանանց մէջ մի քանի կռապաշտներ էլ: Իր ծերութեան ժամանակ, նրանց սիրտը գրաւելու համար, նա հրաման տուեց շինել կռքերի բագիններ Երուսաղէմի մօտերումն: Այսպէսով ինքը օրինակ տուեց ազգին Աստուծոյ օրէնքից անցնելու:

Աստուած յայտնեց Սողոմոնին, որ նորա թագաւորութիւնը կ'բաժանվի և թէ այս թշուառութիւնը կ'ուշանայ փոքր ինչ նորա հօր Դաւթի առաքինութիւնների համար. ինքը Սողոմոնը չի տեսնիլ այն, այլ կ'լինի այն նորա որդւոյ ժամանակը:

Սողոմոնի ճշմարիտ Աստուծմէն հեռանալու ժամանակից սկսան խռովութիւնները խանգարել նորա հանգստութիւնը, և նա ինքը, իր կեանքը զեղխութեան մէջ անցկացնելով, վաղ ծերացաւ: Իր մահից փոքր ժամանակ առաջ Սողոմոն զղջաց և այս ժամանակ գրեց իր գիրքը երկրային ամէն բաների ունայնութեանը վերայ: Այս գիրքը Աստուածաշնչումն կոչվում է ժողո-

վող (Եկկղեսիաստէս)։ Այս գրքի գլխաւոր միտքերը յետագաներն էն. «Ես մեծ գործքեր արի, շինեցի տներ, ունէի շատ ծառաներ և աղախիններ, ունէի մեծ խաշներ, հաւաքեցի անթիւ գանձեր, ինձ մօտ պահում էի երգիչներ և երգեցող կանանց, ամէն կարելի ուրախութիւնները անում էի, կատարում էի ամէն ցանկութիւններս — բայց ոչինչ չէր ուրախացնում սիրտս, ես տեսայ, որ ամէնը ունայնութիւն էր և հոգւոյ չարչարանք։ Արեգակի տակը ոչինչ հաստատ բան չկայ։ Ամէն իմաստութեանց բովանդակութիւնը է յետագայն. «վախեցիր Աստուծմէ և պահիր նորա պատուիրանները»։

ԳԼՈՒԽ ՀԳ.

## ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՎԻԼԸ

Սողոմոնի մահից յետոյ, նորա որդին Ռոբովամը նստաւ Իսրայէլի գահը։ Նա չէր լսում իր հօր ծեր և փորձառու խորհրդականներուն և վարվում էր աղգին հետ հպարտութեամբ ու խստութեամբ, որնոր էլ եղաւ պատճառ նորա թագաւորութեան բաժանվելուն։ Տասն ցեղերը ապստամբեցան նրանից և ընտրեցին թագաւոր Յերոբովամին, Եփրեմի տոհմից։ Մնայն երկու ցեղերը մնացին հաւատարիմ դաւթի տան, այն է, Յուդայի և Բենիամինի ցեղերը։ Տասն ապստամբած ցեղերը Յերոբովամի առաջնորդութեամբ կազմեցին առանձին տէրութիւն, որ կոչվեցաւ Իսրայէլի թագաւորութիւն։ Մի քանի ժամանակից նորա մայրաքաղաքը դառաւ Սամարիան։ Ամէն այս տասն ցեղերը յաճախ ընկնում էին կռապաշտութեան մէջ։

Ռոբովամը, որ թէև իր ձեռին ունէր մայրաքաղաքը՝ Երուսաղէմ, միայն տէրուն էր ազգի շատ փոքր մասին. նորա տէրութիւնը կոչվում էր Յուդայի թագաւորութիւն։ Այս ժամանակից բոլոր Իսրայէլացւոց ազգը կոչվում է յաճախ Յուդայ։ Բայց բաց 'ի սրանից, թէ Յուդայի թագաւորութեան և թէ Իսրայէլի տէրութեան հպատակները կոչվում էին նմանապէս Եբրայեցիք, Եբերի անունով, որոնք Սէմի զաւակն էր և Աբրահամի նախահայրը։

Երկու թագաւորութեանց բաժանվելը շատ վնասակար հետևանքներ ունեցան. երկու թագաւորութիւնները շատ անգամ պատերազմում էին միմեանց հետ։ Յուդայի թագաւորները բաց 'ի մի քանիսից, մոռանում էին ճշմարիտ Աստուն. ազգը ընկաւ ոգիտութեան և մեղքի մէջ։

Թագաւորներուն և ազգին ուղղելու համար. Աստուած խրկում էր երբէմն երբէմն սուրբ Մարգարէներուն։ Սոքա նախազուշակում էին ապագայն և աշխատում էին մարդոց ուղղելու։

Յուդայի թագաւորների անունները, որոնք թագաւորեցին երկու ցեղերի վերայ, են՝ Ռոբովամ, Աբիու, Ասա, Յոսափատ, Յորամ, Ոքոզիա, Յովաս, Ամասիա, Ազարիա կամ Ոզիա, Յոսաթամ, Աքազ, Եզեկիա, Մանասէ, Ամոնէ, Յոսիա, Յոսաքազ, Յոսակիմ, Յեքոնիա, Սեդեկիա։

Իսրայէլի թագաւորների անունները, որոնք կառավարեցին տասն ցեղերուն, են՝ Յերոբովամ Ա. Նաբատ, Բաասա, Էղա, Զամբրի, Ամրի, Աքաաբ, Ոքոզիա, Յորամ, Յէհու, Յոսաքազ, Յովաս, Յերոբովամ Բ. Զաքարիա, Սեղում, Մանայիմ, Փակէէ և Ովսէէ։

ԳԼՈՒԽ ՀԴ·

## ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ՎԵՐԱՑ·—ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԸՆԿՆԻԼԸ

Իսրայէլի ցեղերի թշուառ բաժանմունքից յետոյ, ինչպէս ասացինք, Դաւթի զաւակները թագաւորեցին միայն երկու ցեղերին վերայ՝ այն է Յուդայի և Բենիամինի· նոցա մայրաքաղաքն էր Երուսաղէմը, ուր էր Սողոմոնի հոյակապ տաճարը· բայց Յուդայի թագաւորների մեծ մասը Աստուծոյ օրէնքից հեռանում էր և ընկնում կռապաշտութեան մէջ: Յուդայի քսան թագաւորներից միայն ութն էին բարեպաշտ: Ահա նոցա անունները· Ասա, որդին Յովսափատը, Յովաս, Ամասիա, որդին Ազարիան, որդին Յոթամը, Եզեկիա և Յոսիա:

Միանգամ Դաւթի ցեղը հազիւ ազատվեցաւ ջնջվելից: Աստուած հրաշալի կերպով ազատեց այս բարեպաշտ թագաւորի յետնդաններից մէկին միայն, որովհետև նրան խոստացած էր, որ նորա զաւակից կ՚ծնի Մեսիան:

Յոքիամը, Յոքսափատի որդին, իրեն կին ունէր Իսրայէլի չար թագաւորի՝ Ահաբի աղջկան Գոդողիային: Յոքիամի մահից յետոյ շուտ վախճանեցաւ նորա որդին Ոքոզիան էլ: Ոքոզիայի մայրը, Գոդողիան, իշխանասէր, արիւնահեղ կինը, կամենալով ինքը թագաւորել, վճռեց արքունի ցեղը ջնջել: Այս սարսափելի ապանութեան ժամանակ Ոքոզիայի մի տարեկան որդուն Յոքասին թագցրին: Նրան, ծրծմոր հետ միասին ազատեց իր ազ-

գլխանը։ Յովսիպա քահանայապետի կինը։ Աստուծոյ տաճարում։ Երեխան կրթվեցաւ քահանաների մէջ Աստուծոյ տանը և նորա հովանաւորութեան տակ վեց տարի։ Գողդոլիան չէր իմանում նորա կենդանի լինելը։

Երբ Յովասը եօթն տարեկան դառաւ, Յովիդա քահանայապետը ժողովից բոլոր քահանաներուն և Ղևտացիներուն և զատեց տաճարը զինաւորած մարդերով, որոնց հաւատարմութեանը հաւատի էր։ Ժողովուրդը մեծ հեռաքրքրութեամբ ժողովեցաւ տաճարի մօտ, ապատելով մի արտաքոյ սովորութեան բան։ Այն ժամանակ քահանայապետը դուրս հանեց եօթն տարեկան երեխային և աղաղակեց՝ «Ցուցցէք, ահա ձեր թագաւորը Յովաս, Ովքոզեայի որդին, որոնք ապատվեցաւ Գողդոլեայի ձեռքից։»

Բոլոր ազգի առաջին Յովասը օծվեցաւ թագաւոր և բոլոր տաճարը լցվեցաւ փողերի ձայնով և ուրախութեան աղաղակներով։ Ազգը ուրախութեամբ ընդունեց մատաղ թագաւորին, որ դաւ թի ցնցի ճիւղն էր։

Յովաս սկզբունքն թագաւորում էր բարեպաշտութեամբ. բայց Յովիդայի մահից յետո, մեծամեծները խնդրեցին և ստացան թագաւորից հրաման աղօթք անելու տաճարում, ոչ թէ ճշմարիտ Աստծուն, այլ կուռքերին։ Յովիդայի որդին Զաքարիա քահանան ընդդիմացաւ այս բանին. բայց թագաւորի հրամանով, քարկոծվեցաւ տաճարի բակի մէջ։ Զաքարիան ասաց՝ «Աստուած կ'լինի դատաւոր իմ և քո մէջ»։ Յովասը բազմաթիւ զօրքով ջարդվեցաւ Ասորոց թագաւորից և յետոյ սպանվեցաւ իր սեպհական ծառաների ձեռքով։ Յովասից յետոյ Յուդայում թագաւորեցին առհասարակ բարեպաշտ թագաւորներ՝ Ամասիան, յետոյ նորա որ-

դին Ակեան, որին յաջորդեց իր որդին Յովաթամը, բայց Յովաթամի որդին Ահազը չհետևեց իր նախորդների բարեպաշտութեան. նա փակեց Սողոմոնի կանգնած տաճարը և շինեց շատ սեղաններ կռոքների համար։

Ահազի բարեպաշտ որդին Եզեկիան, որի ժամանակ Իսրայէլի թագաւորութիւնը վերջացաւ, բաց արաւ Աստուծոյ տաճարը, զարդարեց նրան և քանդեց կռոքների ամէն սեղանները։ Սրա ժամանակ Ասորեստանի թագաւորը Սենեքերիմ, Սաղմանասարի որդին, պաշարեց Երուսաղէմը, բայց մահուան հրեշտակը մի գիշերում ջնջեց Ասորեստանցոց զօրքը և Սենեքերիմ, թողնելով Երուսաղէմի պաշարումն, դարձաւ նինուէ։

Մանասէն պաշտպանում էր կռապաշտութիւնը և անմեղաց արիւնով ջրեց բոլոր Երուսաղէմը. միայն Ասորեստանցւոց ձեռքը գերի ընկած, նա Աստուծոյ առաջին սրտանց զղջացաւ և ստացաւ թողութիւն։ Ովսիա, Մանասէի թոռը, մինչև իր մահը էր առաքինի։ Նա թագաւորեց ութը տարեկան և միշտ հաւատարիմ մնաց ճշմարիտ Աստծուն։

Յուդայի թագաւորութիւնը ծաղկեցաւ էլի հարիւր տարի, Իսրայէլի թագաւորութեան ընկնելից յետոյ. վերջապէս նորա վերայ էլ հասաւ Աստուծոյ արդար դատաստանը։ Աստուած մատնեց նրան Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի ձեռքը։ Այս աշխարհակալը Յուդայի Յովակիմ թագաւորին իրեն հարկատու արաւ։ Շուտ սրանից յետոյ Նաբուգոդոնոսորը նորա որդուն Յեքոնային բոլոր Յուդայի մեծամեծներով միասին Բաբելոն գերի տարաւ։ Տասն տարուից յետոյ, Սեդեկիա թագաւորը կամեցաւ ազատվել յաղթողների ծառայութեան

լծիցը։ Նաբուգոդոնոսոր հրամայեց Սեդեկիայի աչքերը հանել, ինչպէս խռովարարի և նորա ներկայութեան ժամանակը ապանեցին նորա բոլոր որդոցը։ Սողոմոնի հոյակապ տաճարը այրեցին և Երուսաղէմ քաղաքը քարերի շեղջ դարձրին։ Յուդայի ազգը իր կոյր թագաւորի հետ միասին գերի գնաց Բաբելոն։ Այս պատահեցաւ 588 տարի Քրիստոսից առաջ։ Այս ժամանակից Երուսաղէմ մնաց ամայի և տաճարը քանդած, ընկած էր, մինչև որ Պարսից թագաւորը Կիւրոս, Բաբելոնին տիրելով, Յուդայի գերիներուն դարձրեց իրենց հայրենիքը։

ԳԼՈՒԽ ՀԵ.

## ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

## ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԷՆ ԵՂԻԱ

Իսրայէլի թագաւորները, առանց բացառութեան, ամէնքը հակամիտ էին դէպի կռապաշտութիւն. բայց ամէնից չարը և անբարեպաշտը էին Աքաաբ և նորա կինը Յեզաբել. նոքա ոչ միայն բահաղի կռքին բագին շինեցին, այլ և հալածում էին մարգարէներուն և ամէն ճշմարիտ աստուած ապաշտներուն։ Աքաաբ թագաւորի պալատականներից մէկը, Աբդիու անունով, էր երկիւղած Աստուծոյ, սա պահեց այրերի մէջ Աքաաբի և Յեզաբէլի գազանութիւնից հարիւր մարգարէներու. այնտեղ թագուն տանում էր նրանց կերակուր և ամէն հարկաւոր բաները։ Իսկ Եղիա մարգարէին փրկեց Աստուած ինքը։

Սուրբ Եղիան, միանգամ յայտնելով Աքաաբի առջևը, ասաց նրան. «քո մեղքերի և կռապաշտութեան պատճառով, յայտնում եմ քեզ, որ այս օրից սկսած

երկնքից չընկնել ոչ մի կաթիլ անձրև և ոչ ցօղ, մինչև որ ես նորա համար աղօթք չանեմ Աստծուն։ Աքաաբը չվախեցաւ այս սպառնալիքից, այլ միտը դրեց թագաւոր պատնել Եղիային։ Աստուած ինքը փրկեց մարգարէին, ասելով նրան. «Հեռացիր այս տեղից և թագնվիր Քառաթու հեղեղատի մօտ, որ Յորդանանի մէջ է վազում։ Ես հրամայեցի իմ ագռաւներին, որ քեզ կերակրեն»։ Եղիան հպատակեցաւ և տեղափոխեցաւ Քառաթու հեղեղատի ափը, Յորդանանի մօտ։ Նա բնակում էր հեռու մարդոց հաւարակութիւններից. հեղեղատը տալիս էր նրան խմելու ջուր, և առաւօտ ու երեկոյեան ագռաւները բերում էին նրան միս և հաց ուտելու։

Բայց երկար ժամանակ անձրև չգալից և սաստիկ տապից Քառաթի հեղեղատն էլ ցամաքեցաւ։ Սուրբ Եղիան ջրի պակասութիւն զգում էր։ Այն ժամանակ Աստուած ասաց նրան. «գնա՛ Սիդոնացուց Սարեպթա քաղաքը. այնտեղ ես կ՚հրամայեմ մի այրի կնոջ, որ քեզ կերակրէ»։ Մարգարէն հպատակեցաւ և երբ եկաւ քաղաքի դրան մօտ, տեսաւ մի այրի կնոջ, որ փայտ էր ժողովում։ Սա էր այն կինը, որի մօտ Աստուած նրան խրկեց։

Սուրբ Եղիան մօտեցաւ այրի կնոջ և ասաց. «ես շատ ծարաւ եմ, տուր ինձ ջուր»։ Այրին շատ բարի կնիկ էր։ Նա այն րոպէին գնաց ջրի եռևից։ Եղիան նորա եռևից ձայն տուեց. «բե՛ր ինձ հաց էլ. ես քաղցած եմ»։ — «Աստուած ինքը վկայ է, ասաց այրին, որ ես ոչ մի կտոր հաց չունիմ. ես ունեմ մի բուռը ալիւր միայն ամփորիս մէջ և փոքր ինչ իւղ ամանումս։ Ես եկայ այստեղ, որ մի քանի կտոր փայտ գտնեմ և

եփեմ մեռցած ալիւրից նկատակ։ Այս վերջին կերակուրն էլ ուտելից յետո, իմ որդուս հետ միասին, մենք պէտք է, մեռնենք սովից»։ Եղիան ասաց նրան. «մի՛ վախենար, եփի՛ր նկատակդ. միայն այն այտուղ ինձ մօտ բեր և յետոյ կ՚եփես քո և որդուդ համար էլ։ Աստուած ասաց. որ «ալիւրդ և իւղդ չեն պակասիլ մինչև այն օրը, երբ կ՚գայ անձրև երկրիս վերայ»։ Բարի այրին հաւատով լսեց Մարգարէի խօսքերը, կատարեց ամէնը, ինչոր ասաց նրան Սուրբ Եղիան, կշտացաւ ինքը և իր որդին և այն ժամանակից սկսած չէր պակասում ոչ նորա ալիւրը և ոչ իւղը։

Սուրբ Եղիան բնակեցաւ նորա տանը։

Մի քանի ժամանակից այրիի որդին հիւանդացաւ և մեռաւ։ Սուրբ Եղիան, տեսնելով մօր անմխիթար արտասուքը, առաւ երեխայի մարմինը, դրաւ իր անկողնի վերայ. յետոյ ջերմեռանդ աղօթքով դարձաւ դէպի Աստուած, փչեց երեք անգամ մեռածին և երեխան վեր կացաւ և յանձնվեցաւ իր մօրը։

ԳԼՈՒԽ ՀԶ.

## ԵՂԻԱՅԻ ԶՈՀԸ

Սուրբ Եղիայի մարգարէութիւնը, որ նա ասաց Ահաբին, կատարվեցաւ. երեք տարի և վեց ամիս անձրև և ցօղ չինչաւ, ամէն ջրի աղբիւրները ցամաքեցան, երկիրը չտուաց ոչ ցորէն և ոչ խոտ. Իսրայէլի թագաւորութեան մէջ սարսափելի թշուառութիւն էր։ Ծառերը կանգնած էին առանց տերևի և դաշտերը ընկած առանց խոտի։ Ամբողջ անտառներ չորացան, անասուն-

ները կոտորվում էին և մարդիկ մեռնում։

Վերջապէս Իսրայէլացիները զղջացան, դարձան Էլ-ռան, որնոր միայն կարող է ջրել երկիրս պտղաբեր անձրևով և զովացնել նրան երկնային ցօղով։ Նոքա սկսան աղօթք անել ամենազօր Աստուած ասաց Եղիային։ «գնա՛։ յայտնվիր Աքաաբի առջև։ ես կ'տամ երկրիս անձրև»։ Սուրբ Եղիան հպատակեցաւ։

Այս ժամանակ ինքը Աքաաբ թագաւորը բարեպաշտ Աբդիուի հետ ճանապարհորդութիւն էր անում, փնտռելով մի ձոր հեղեղատով, ուր կարելի լինէր աւրաձել արքունի ձիերուն և ջորիներուն, աշխատելով գտնել մի քանի անասուն կենդանի պահել Իսրայէլի երկրում։ Թագաւորը գնում էր մի ճանապարհով և Աբդիուն մի ուրիշով։ Յանկարծ Եղիան հանդիպեցաւ Աբդիուին և ասաց նրան։ «յայտնվիր թագաւորին իմ գալուստը»։

Աբդիուն յայտնեց թագաւորին, որ Եղիան, որին ամէն տեղ փնտռում էր, ինքը եկել է նորա մօտ։ Թագաւորը ասաց մարգարէին։ «այն դու ես, որ խռովում ես Իսրայէլի ազգին»։ — «Ես չեմ այն», պատասխանեց Եղիան։ «այլ դու ինքդ և՛ քո հօրդ տունը։ Դու մոլորեցուցիր նրան Աստուծոյ ճանապարհից և ստիպեցիր կռքերին երկրպագութիւն տալ։ Երկիր ամէն կողմ հրեշտակներ, որ ժողովեն քո ազգդ Կարմելոս լերան վերայ։ Թող գան այն տեղ նոյնպէս բահաղի քուրմերն էլ»։

Ամէնը ժողովեցան Կարմելոս լերան վերայ։ Բահաղի քուրմերը շատ հարիւր յիսուն հոգի էին։ Իսկ Եղիան էր միայն ճշմարիտ Աստուծոյ մարգարէն։ Նա առաջարկեց պատրաստել երկու զոհ, մէկը բահաղի հա-

մար և միւսը Իսրայէլի Աստուծոյ համար և ասաց ազ-
գին, թէ ծշմարիտ Աստուածը նա է, որոնք կ՚խրկէ երե-
կնքից կրակ զոհին վերայ։ Բոլոր ազգը ապաշաւելով
համաձայնեցաւ այս առաջարկութեան։

Բահաղի քուրմերը առաջինը սկսան բերել իրենց
զոհը։ Մորթեցին մի եզն, դրին նրան զոհարանի վե-
րայ և քուրմերը սկսան աղաղակել. «Բահաղ, լսիր մեզ.
Բահաղ, լսիր մեզ»։ Նոքա ծունր իջան, պատում էին
սեղանի չորս կողմերը, կանչում էին. բայց նա չէր կարո-
ղանում լսել նրանց. նոքա ոչինչ պատասխան չստացան։
«Բարձր ձայնով կանչեցէք», ասում էր Եղիան, «դու-
ցէ քնած է ձեր աստուածը կամ զբաղած է ուրիշ գոր-
ծով, նրան պէտք է զարթեցնել»։ Բահաղի քուրմերը
գոռում էին, ծեծում էին իրենց և ծակծկում իրենց,
մինչև որ արիւն էր գուրս գալիս. բայց ամէնը 'ի զուր
էր. այսպէս գոռում էին նոքա առաւօտից մինչև երե-
կոյ. միայն ոչ ոք նրանց, ոչ ձայն առաց և ոչ լսեց։ Այն
ժամանակ Եղիան ասաց ազգին. «մօտացէք ամէնքդ ինձ»։
Ժողովուրդը մօտեցաւ։ Եղիան վանդեց Աստուծոյ սե-
ղան տասներկու քարերից, Իսրայէլացւոց ցեղերի թուով,
սեղանի մօտ հրամայեց փորել խորը փոս, դրեց փայտ
զոհարանի վերայ և մորթեց զոհի համար նշանակված
եզը։ «Լցրէք ջուր», ասաց նա, «և ածէք զոհի վերայ»։
Երեք անգամ լցրին ջուր և թրջեցին նրանով բոլոր
սեղանը և փոսը, որ փորած էր սեղանի չորս կողմում,
մինչև բերանը լցվեցաւ։ Այն ժամանակ Եղիան, մօտե-
նալով սեղանին, ասաց. «Տէր Աստուած Աբրահամի, Ի-
սահակի և Յակոբի, ցոյց տուր այժմ Իսրայէլացւոց
բոլոր ազգին, որ Դու ես միայն Աստուած և թէ ես,

գո ծառայդ, անում եմ այս գո հրամանով։ Լսիր ինձ, Տէր, դարձրու այս մարդոց սրտերը դէպի քեզ, որ մի միայն ես ճշմարիտ Աստուած։ Այս խօսքերը ասելիս, լիջաւ կրակ երկնքից, վառեց փայտը, այրեցաւ զոհը և կրակը պատեց բոլոր գետինը սեղանի չորս կողմում և ցամաքեցրեց ջուրը փոսի մէջ։ Ժողովուրդը ընկաւ դէմ առ դէմ, աղաղակելով. «ճշմարտիւ Սա է Տէր Աստուածը»։

Սուրբ Եղիան հրամայեց Բահաղի քուրմերուն սպանել, որովհետև մոլորութեան մէջ էին գցում, կործանել կուռքերը և քանդել նոցա բագիները։ Յետոյ Աքաաբին դառնալով ասաց. «գնա՛ տուն. ես լսում եմ անձրևի մօտենալը»։ Իսկ ինքը երաւ Կարմելոսի գագաթը և ծունր իջած աղօթում էր։ Արդարի աղօթքը զօրեղ է Աստուծոյ առաջ։ Յանկարծ վեր կացաւ սաստիկ հողմ, ամպերը պատեցին երկինքը և նրանցից եկաւ մեծ անձրև և ուռոցք երկիրը։

Յեզաբէլ երբ լսեց Բահաղի քուրմերի մահը, երդում տուեց, որ Եղիան էլ նոյն վիճակին կ'հասնի. բայց Աստուած պահպանեց նրան Յեզաբէլի վրէժխնդրութիւնից. արդարը հեռացաւ Արաբիա։

ԳԼՈՒԽ ԺԷ.

## ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԷՆ ՓՈՐԷԲ ԼԵՐԱՆ ՄՕՏ

Սուրբ Եղիան բնակում էր մի քանի ժամանակ Արաբիայում, այրի մէջ, Փորէբ լերան մօտ։ Այստեղ նա շատ անգամ տրտմութեամբ մտածում էր, թէ, ինչպէս Իսրայէլացւոց տան ցեղերը մոռացան ճշմարիտ Աստուծուն, քանդեցին նորա սեղանները և կոտորեցին նորա

մարգարէներուն, որոնք յայտնի բան է, ամէնքը կ'կոր-
չէին, եթէ Աբդիուն նրանից մի քանիսին չազատէր։ Այս
տխուր մոքերով Սուրբ Եղիան գուրս եկաւ այրից։
Աստուած հրամայից նրան յայտնվել իրեն լերան գլ-
խին։ Նա կանգնեցաւ այրի դրան մօտ և յանկարծ
վեր կացաւ մեծ քամի, որ խորտակում էր լեռները.
բայց սրա մէջը չկար Աստուած։ Եղիան հոգմի ժա-
մանակ չէր զգում նորա մօտ լինելը։ Յետոյ երկիրը շար-
ժեցաւ բայց Աստուած չկար այս շարժի մէջն էլ։ Յե-
տոյ անցկացաւ հուրը. Աստուած չէր նորա մէջն էլ։
Սրանցից յետոյ փչից մեղմ քամի և այս մեղմ օդի մէջը
մարգարէի տխուր սիրտը զգաց Աստուծոյ լինելը։ Նա
ծածկեց իր դլուխը մաշկեակով և դուրս եկաւ այրից
և խօսակցում էր Աստուծոյ հետ։ Աստուած հանդա-
տացրեց նորա նախանձայոյզ ոգին, ասելով, թէ Իսրայէլի
թագաւորութեան մէջն էլ, ուր Եղիան չէր գտնում
ճշմարիտ աստուածապաշտներ, կան էլի 7000 հոգիք,
որոնք քահանի երկրպագութիւն չեն տալիս։

Աստուած մօտ է ամէն մարդոց և խօսում է մեզ
հետ բնութեան ամէն երևոյթներով՝ մրրկով, որոտու-
մով, փայլակով, անձրևով, արեգակի փայլելովը և հոգմի
մեղմ փչելովը։ Հազարտ և յանդուգն մարդուն զսպելու
համար կան մրրիկ և որոտումն, հեզ և տխուր սրտի
համար — հոգմի մեղմ փչելը, արեգակի փայլելը։

Սրանից յետոյ Սուրբ Եղիան Աստուծոյ հրամանով
դարձաւ Իսրայէլի երկիրը։

ԳԼՈՒԽ ՀԸ.

## ԱՔԱԱԲԻ ԵՒ ՑԵԶԱԲԷԼԻ ՑԱՆՑԱՆՔԸ ԵՒ ՆՈՅՆ ՊԱՏԻԺԸ

Մի Իսրայէլայի Նաբաւթ անուն, բնակում էր Յեզրայէլի գեղեցիկ և պտղաբեր ձորի մէջ, Յեզրայէլ քաղաքում։ այսուհետև Թագաւորն էլ ունէր պալատ Նաբաւթի այգիի մօտ։ Ահաբը խնդրեց Նաբաւթին, որ այգին իրեն տայ, որովհետև այնտեղում նա կամենում էր պարտէզ անել տալ։ Նա խոստացաւ փոխարէնը կամ ուրիշ այգի տալ և կամ փող վճարել նրան։ Բայց Նաբաւթը ասաց։ «Աստուած չանէ, որ ես երբէք համաձայնիմ ծախել ժառանգութիւնս, որ ստացել եմ ծնողներից»։ Այն ժամանակ ծնողաց թոռան ժառանգութիւնը սուրբ էր համարվում և նրան ծախելը մեղք։ Ահաբ այս բացատրութեամբը այնպէս տրտմեցաւ, որ հիւանդ պառկեցաւ, դարձրեց երեսը դէպի պատը և չէր ուզում ոչ ոքին նայել և ոչ կերակուր ուտել։

Նորա կինը Յեզաբէլ, նորա մօտ մտնելով, հարցրեց։ «քեզ ի՞նչ պատահեցաւ։ ինչո՞ւ դու ոչ ոքին չես ուզում տեսնել և բան չես ուտում»։ Ահաբ պատմեց նրան իր խռովակցութիւնը Նաբաւթի հետ։ Ի՞նչպէս, պատասխանեց Յեզաբէլ, ուրեմն էլ դու արքայի թագաւորը ես, որ քո հպատակից խռովարհում ես։ կեր հաց և հանգիստ եղիր, ոչինչ բանի վերայ մի՛ մտածիր։ ես կ՚տամ քեզ Նաբաւթի այգին»։ Նա գրեց Ահաբի անունովը նամակ Յեզրայէլ քաղաքի ծերերին և մեծերին և կնքեց արքունի կնքով։ Այս նամակումը հրա-

մայած էր սուտ վկաներով ամբաստանել Նաբաւթին, իբրև թէ նա հայհոյել էր Աստուն և չարաբանել թագաւորին: Այս պատճառով անմեղ Նաբաւթը քարկոծվեցաւ:

Յեզաբէլ, երբ Նաբաւթի մահը իմացաւ, ասաց Աքաաբին. «այժմ կարող ես ձրի առնուլ այն այգին, որոնը Նաբաւթը քեզ չէր ուզում փողով ծախել. Նաբաւթը մեռաւ»: Աքաաբ այն բոլորին գնաց այնտեղ և մտաւ այգին: Եղիա մարգարէն, Աստուծմէ խրկած, եկաւ այնտեղ և ասաց Աքաաբին. «ո՞ւր մարդասպան. Աստուծոյ անունով յայտնում եմ քեզ, որ նոյն տեղում, ուր թափվեցաւ անմեղ Նաբաւթի արիւնը, կ'թափվի քո արիւնդ էլ. իսկ Յեզաբէլին կ'պատառեն շները»:

Երեք տարի սրանից յետոյ Աքաաբը ասացաւ պատերազմում մահաբեր վէրք: Նրան բերին Սամարիա, իր մայրաքաղաքը, և թաղեցին: Նորա կառքը լցվել էր արիւնով, որ վազում էր վէրքից: Այս կառքը լուացին իսկ այն տեղում, ուր թափվել էր Նաբաւթի արիւնը: Իսկ Աստուծոյ դատաստանը Յեզաբէլին վերայ կատարվեցաւ Յեզրայելում այնտեղ, ուր էր Նաբաւթի այգին, որին նա անօրէնութեամբ տիրել էր: Երբ Աքաաբի ցեղը ջնջող զօրավարը՝ Յէուն հանդէսով մտնում էր Յեզրայէլ քաղաքը, նա զարդարվեցաւ, զարդարեց գլուխը և մտեցաւ պատուհանին, որ նայէ յաղթողի հանդիսաւոր ընթացքին, յաղթողին, որոնը տիրեց Իսրայէլի թագաւորութեան և եղաւ նորա որդու Յովրամի մահի պատճառը: Թագաւորը, երբ նրան տեսաւ, ասաց իր մօտը եղող ծառաներին. «դուրս գցեցէ՛ք դրան պատուհանից»: Նրան դուրս գցեցին, պատերը սրսկեցան

նորա արիւնով, ձիերը ոտնակոխ արին նորա մարմինը և երբ թագաւորը հրամայեց վեր առնուլ նորա դին, որ թաղեն, գտան միայն նորա կառափը, ոտները և ձեռները: Նորա բոլոր մարմինը պատառել էին շները:

Աքաաբի որդին և յաջորդը Յովրամ ապանվեցաւ նետով և նորա մարմինը գցվեցաւ Նաբաւթի այգում: Աքաաբը բաց 'ի նրանից ունէր էլի եօթանասուն որդի, որոնք ամէնքը ապանվեցան: Այսպէս ջնջվեցաւ Աքաաբի բոլոր տունը:

ԳԼՈՒԽ ՀԹ.

## ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԷՆ ԵՂԻԱԷ

Աստուծոյ հրամանով Սուրբ Եղիան իրեն աշակերտ ընտրեց Եղիսէին, որ ամէն տեղ նրան ուղեկից էր լինում: Եղիան օծեց նրան մարգարէ և Աստուած խրկեց Սուրբ Հոգւոյ շնորհքը նորա վերայ: Սուրբ Եղիան, Եղիսէի աչքի առաջին, երկինք բարձրացաւ հրեղէն կառքով:

Սուրբ Եղիսէն իր տուրբ վարդապետի վերարկուի հետ միասին ժառանգեց մարգարէութեան կրկնապատիկ շնորհքը և հրաշագործութեան զօրութիւնը:

Մի աղքատ այրի եկաւ Եղիսէի մօտ և ասաց, «իմ մարդս մեռաւ, դու քնքշ գիտես, որ նա բարեպաշտ մարդ էր: Այժմ եկաւ պարտատէրը, որոնք հօր պարտքի համար իմ որդոցս կամենում է իրեն տարուկ անել: Ազատիր իմ որդոցս»:— «Ինչո՞վ կարող եմ քեզ օգնել, հարցրեց Եղիսէն, «չունե՞ս արդեօք մի կալուածք»:— «Եւ ոչինչ չունեմ, պատասխանեց այրին, բաց 'ի մի աման

իւղից »։ — «Ուրեմն գնա՛ տուն», ասաց Եղիսէն. «բան ուզիր ղրայիներից, ինչքան կարելի է, շատ ամաններ, փակիր տանդ դուռը և քո որդոց օգնութեամբը ածիր իւղը քո ամանից բան ուզած ամաններիդ մէջ, և բոլորն էլ կ'լքցուին։ Այրին կատարեց Եղիսէի հրամանը. փոխ առաւ իր ծանօթներից շատ ամաններ և ամէնը լցրեց իւղով, որ վերջումը էր նորա ամանից, մինչև որ կար դարդակ աման։ Նա այնքան իւղ ծախեց, որ ոչ միայն կարողացաւ իր մարդու պարտքը տալ, այլ նրան մնաց դեռ էլի բաւական փող, որ կերակրէր իրեն և իր որդոց։

Միանգամ Խրայէլի թագաւորութեան մէջ սով ընկաւ։ Մարգարէների որդիքը եկան Եղիսէի մօտ և նա հրամայեց իր ծառային նոցա համար կերակուր պատրաստել։ Ծառաներից մէկը գնաց բանջար հաւաքելու կերակրի համար և գտնելով մի վայրի պտուղ, որ խաղողի նման էր, ժողովեց և դրեց եփած կերակրի մէջ, չիմանալով այս պտուղների ինչպիսի լինելը։ Երբ կերակուրը պատրաստ էր. ամէնքը նստան ուտելու, բայց փոքր ինչ ուտելից յետոյ ամէնքը կանչեցին. «մա՛րդ Աստուծոյ, մենք կորանք, մենք դեղած ենք։ Այս կերակրի մէջը թոյն է խառնած»։ Եղիսէն հրամայեց ածել ալիւր պղնձի մէջ և ասաց ծառային. «այժմ տո՛ւր, թո՛ղ ուտեն անվնաս»։ Ամէնքը կշտացան և մնացին առողջ. պտուղները կորցրին իրենց ինչպիսի յատկութիւնը։

Մարգարէի որդիքը ասացին Եղիսէին, թէ այսուղ։ ուր մենք բնակում ենք, խիստ նեղուածք է։ Մենք գնանք Յորդանանի մօտ, կտրենք փայտ և շինենք մեզ համար բնակարաններ։ Եղիսէն էլ գնաց նոցա հետ։ Երբ

ասրդներից մէկը իր կացինը վեր գցեց ձեռքից գետի մէջ։ «Ո՛հ։ ես ի՞նչ անեմ հիմիկ։ կացինս էլ բան ուզած էր», աղաղակեց նա։ «Յոյց տո՛ւր ինձ», ասաց Եղիսէն։ «կացինդ որ տեղ վեր գցեցիր»։ Երիտասարդը ցոյց տուաց այն տեղը, ուր ընկաւ կացինը։ Եղիսէն գցեց այն տեղ մի փայտի կտոր — և կացինը դուրս եկաւ ջրի երեսը։ «Ա՛ռ քո կացինդ», ասաց Եղիսէն։ Երիտասարդը ձգեց իր ձեռքը և առաւ կացինը։

Մի քաղաքում երեխայք մաքերը դրին մարգարէին վերայ ծաղը անել։ Քաղաքից դուրս գալով կանչում էին նորա ետևից։ «գնա՛ կնատակ, գնա՛ կնատակ»։ Այն րոպէին դուրս եկան անտառից երկու արջ և պատառեցին քառասուն երկու երեխերք։

## ԳԼՈՒԽ Զ։

## ՆԷԵՄԱՆ ԱՍՈՐԻԻ ԲԺՇԿՈՒԼԸ

Իսրայէլի երկրի հիւսիսային սահմանը է Ասորոց երկիրը։ Ասորոց թագաւորի առաջին զօրավարը՝ Նէեման էր լաւ զինուորական առաքինութեանց տէր մարդ և սիրելի խիստ իր թագաւորին։ Նա շատ երևելի էր և հարուստ։ բայց ամէն արտաքին թիւնները ոչինչ էին նորա աչքում, որովհետև ինքը բորոտութիւն ունացաւ, որ սարսափելի և դրեթէ անբուժելի ցաւ է։

Միանգամ մի քանի Ասրի զինուորներ յարձակեցան Քանանացւոց երկիր և յափշտակեցին ուրիշ գերիների հետ միասին մի փոքրիկ աղջիկ էլ, որին բերին իրենց հետ և տուին Նէեմանին։ Զօրավարի կինը առաւ գերի աղջկան և պահում էր իր մօտ։ Փոքրիկ

Իսրայէլացի աղջիկը կարեկցութեամբ նայում էր հիւանդ Ներեմանին վերայ։ Ո՛հ. ասաց նա միանգամ Ներեմանի կնոջ. «եթէ մեր տէրը գնար Սամարիա Մարգարէի մօտ, յայտնի բան է, սա կ՚բժշկէր նրան»։ Գինը կրկնեց ազախնի խօսքերը իր մարդուն և սա էլ ասաց թագաւորին։ «Գնա՛ Սամարիա, ասաց թագաւորը, ես կ՚տամ քեզ նամակ Իսրայէլացւոց թագաւորին վերայ»։ Ներեման առնց ուշանալու գնաց, և առաւ հետը տասն տաղանդ արծաթի, վեց հազար դահեկան և տասն ձեռք ծանրագին շորեր։ Երբ Սամարիա հասաւ, նա խրկեց Իսրայէլի թագաւորին իր թագաւորի նամակը, որ գրուած էր այս մտքով, թէ այս նամակը կ՚բերէ քեզ իմ ծառայ՝ Ներեման, որին խրկում եմ քեզ մօտ, որ դու բժշկես նրան բորոտութիւնից։ Իսրայէլի թագաւորը շփոթվեցաւ և ասաց. «Միթէ՞ ես Աստուած եմ, նա միտքս կարող է յարուցանել մեռելներուն և բժշկել բորոտներուն։ Աստուց թագաւորը փնտռում է պատճառ ինձ պատերազմ յայտնելու»։ Եղիսէն խրկեց թագաւորի մօտ մարդ և հրամայեց նրան ասել. «Ի՞նչ դուր ես տրտում դու. խրկի՛ր Աստրին ինձ մօտ. թո՛ղ նա իմանայ, որ Իսրայէլի մէջը կայ Մարգարէ»։

Ներեման նստաւ իր կառքը, գնաց Եղիսէի մօտ և կանգնեցաւ նորա տան դրան առաջը։ Եղիսէն խրկեց իր ծառային նրան ասելու, որ նա գնայ Յորդանանի մօտ և եօթն անգամ լուացվի այն գետում, այն ժամանակ նա կ՚արբվի բորոտութիւնից։ Ներեման, սատիկ նեղացած, ասաց. «Ես սպասում էի, որ Մարգարէն ինքը դուրս կըգայ ինձ մօտ, աղօթք կ՚անէ իր Աստծուն, կ՚դնէ իր ձեռքը իմ վէրքերիս վերայ և կ՚բժշկէ ինձ։ Մի՞թէ Աստ-

րոց գետերը Իսրայէլի գետից վատ են։ Ինչո՞ւ խրկում է նա ինձ Յորդանանում լեղնալու »։ Նա բարկացած կամենում էր արդէն հեռանալ, բայց ծառաները, որոնք բոլոր սրտով սիրում էին նրան, ասացին. «եթէ Մարդարէն ասէր քեզ մի ծանր բան, մի՞թէ դու չէիր կատարել քո բժշկութեանդ համար նորա հրամանները։ Իսկ նա ասաց քեզ. լուացվիր և կ՚առողջանաս»։ Նէեման լսեց նոցա խորհուրդը, լուացվեցաւ Յորդանանում եօթն անգամ և արբվեցաւ բորոտութիւնից։ Այն ժամանակ դարձաւ նա Մարդարէի մօտ բոլոր իր ուղեկիցներով, մտաւ նորա տունը և ասաց. «այժմ ես ճշմարտութեամբ տեսնում եմ, որ բոլոր տիեզերքում չկայ ուրիշ Աստուած, բաց 'ի Իսրայէլի Աստուծմէ։ Խնդրում եմ քեզ, ընդունիր ինձնից այս ընծաները»։ Նա կամենում էր տալ Մարգարէին բոլոր իր ոսկին, արծաթը և ծանրագին շորերը։

Բայց Եղիսէն պատասխանեց. «Վկայ է Ամենազօր Աստուածը, որ ես չեմ ընդունիլ ոչինչ։ Նէեման ամէն կերպի աշխատում էր համոզել նրան. բայց մարգարէն մնաց անհամոզելի և ասաց նրան. «գնա՛ խաղաղութեամբ»։

ԳԼՈՒԽ ԶԱ.

## ԳԷՆԶԻ

Եղիսէ մարգարէի ծառան Գէնզին չունէր իր տիրոջ անարծաթասիրութիւնը։ Ինչո՞ւ համար, մտածեց նա, խնայեց տէրս այն Ասորիին, ինչու չընդունեց նա նրանից ոչ մի ընծայ։ Ես կ՚հասնեմ նորա ետևից և կ՚առնեմ նրանից մի բան»։ Գէնզին գնաց Նէեմանի ետևից։

Նէեման, երբ տեսաւ Մարգարէի ծառային, ինքը դուրս եկաւ նորա առաջ և քաղցրութեամբ ընդունեց նրան։ Գէեզին ասաց Նէեմանին, որ իր տիրոջ Եղիսէին մօտ եկել են Եփրէմի տարից երկու աղքատ տղայք, որ մարգարէի որդիք են և թէ նորա տէրը խնդրում է Նէեմանին ընծայել նրանց մի մի տաղանդ արծաթ և մի մի ձեռք շոր։ Նէեմանի ծառաներից երկուսը տարան Գէեզիի ետևից ընծաները։ Գէեզին, երբ տուն հասաւ, ծառաներուն յետ խրկեց, թաղցրեց առած ընծաները և Եղիսէին ոչինչ չասաց այդ մասին։

«Ո՞րտեղից եկար Գէեզի»։ հարցրեց Եղիսէն։ «Ես ոչ մի տեղ չեմ գնացել»։ պատասխանեց Գէեզին։ Բայց ի՞նչ կարող էր ծածուկ մնալ Մարգարէից։ Եղիսէն ամէնը գիտէր արդէն։ «Ես տեսայ, ինչպէս դու խորամանդուութեամբ առար փող, որ գնես քեզ համար պարտէզներ, այգիներ և խաշներ»։ ասաց Մարգարէն։ «դու խաբեբայութեամբ ստացար հարստութիւնը։ խնդրեցիր Նէեմանից փող և շորեր։ նոցա հետ միասին ընդունիր ուրեմն նորա ցաւն էլ»։

Գէեզին դուրս եկաւ Մարգարէի մօտից բոլորովին բորոտած, ինչպէս որ էր Նէեման։

## ԳԼՈՒԽ ՁԲ.

## ՅՈՆԱՆ ՄԱՐԳԱՐԷՆ

Իսրայէլի թագաւորութեան մէջ բնակում էր Յովնան մարգարէն։ Աստուած ասաց նրան։ «վե՛ր կաց, գնա՛ Նինուէ քաղաքը և քարոզի՛ր ժողովրդին ապաշխարութիւն։ Այս ընդարձակ, բազմամարդ քաղաքը սարսափելի անօրէ-

նութիւնների մէջ ընկաւ, որոնց ձայնը հասան երկինք։

Յովհան, ակամայ հպատակելով Աստուծոյ հրամանին, ճանապարհ ընկաւ, միայն ոչ նինուէ քաղաքը երթալու համար։ Նա վարձեց իրեն տեղ մի նաւի վերայ, որ գնում էր Թարսիս, և կամենում էր անցնել ծովը, որ աշխարհի Աստուծոյ հրամանը կատարելից։

Բայց ի՞նչ պատահեցաւ։ Վէր կացաւ մրրիկ սաստիկ և նաւը մեծ վտանգի մէջ էր։ Ամէնքը սարսափեցան և սկսան աղօթք անել։ որովհետև վտանգի ժամանակ ամէնից մեծ չարագործն էլ դառնում է դէպի Աստուած։

Յովհան այս ժամանակ քնած էր։ Նաւի տէրը ասաց Յովհանին։ ամօթ չէ՞ քեզ, որ քնում ես։ Վէր կաց և աղօթք արա՛ քո Աստծուդ, գուցէ՛ նա ազատէ մեզ մահից։

Ամէնքը կարծում էին, թէ Աստուած վէր է կացրել մրրիկ պատժելու համար մի մեծ չարագործի, որնոր իրենց մէջ է։ Ամէնքը ժողովեցան միասին և ասում էին։ «եկէք, վիճակ գցենք, որ իմանանք, ով է պատճառը այս պատահածին, որ ամէնուս ապառնում է»։ Աստուած այնպէս կարգեց, որ վիճակը ընկաւ Յովհանին։ Այն ժամանակ ամէնքը սկսան նրան հարցնել։ «ասա՛, ո՞վ ես դու։ ո՞ւր կամենում էիր դու երթալ և ինչո՞ւ Աստուած պատժում է մեզ քեզ համար»։ Յովհան պատասխանեց։ «ես Իսրայէլացի եմ և երկրպագութիւն եմ տալիս Ամենաշնորհ Աստուծոյ, որ ստեղծեց երկինքը, ջուրերը և ցամաքը»։ Յովհան չի ծածկեց, որ ինքը կամենում էր Աստուծոյ հրամաններից փախչել։ Այն ժամանակ ամէնքը տեսան, որ նա մեղանչել է և վախենալով

ատում էին նրան. «Ինչու՞ փոխում ես զոհ քո Աստուծոյ երեսից։ Ի՞նչ անենք ուրեմն մենք այժմ, որ զաղարեցնենք մրրիկը»։ Յովնան պատասխանեց. «Գցեցէ՛ք ինձ ծովը, ես գիտեմ, որ մրրիկը իմ պատճառով է վեր կացել»։

Բայց ծովագնացները մարդասէր մարդիկ էին. նոքա կամենում էին Յովնային ափը հանել, աշխատում էին մօտենալ ցամաքին և երկար ժամանակ կռվում էին մրրիկի հետ. բայց ալիքը անդադար նրանց հեռացնում էին այնպէս, որ վերջապէս զօրութիւնից ընկան։ Տեսնելով, որ իրենց ամէն աշխատանքները 'ի զուր են, սկսան աղօթք անել, ասելով. «Յոյն ժամանակ յետադայ խօսքերն էլ. «Տէր, մի՛ կորցնիր մեզ ամէնուս այս մի մարդու անօրէնութեան համար և տուր մահը մեզ մեղք մի՛ համարիր. մենք կատարում ենք քո կամքդ»։ Նոքա վերառան Յովնային և գցեցին ծովը։ Մրրիկը այն րոպէին դադարեցաւ։

Նոքին վերայ բոլոր գտնուողները զօրացան կենդանի հաւատով Աստուծոյ և ջերմեռանդութեամբ։ Նոքա զոհ բերին Ամենաբարձրեալ Աստուծոյ և խոստացան պահել նորա պատուիրանները։

## ԳԼՈՒԽ ԶԴ.

## ՅՈՎՆԱՆ ԿԷՏ ՁԿԱՆ ՓՈՐՈՒՄ

Այն րոպէին, երբ Յովնային ծովը գցեցին, Աստուած հրամայեց մեծ ձկան, որ նրան կուլ տայ. բայց կէտի փորումն էլ պահպանեց Աստուած նորա կեանքը։ Յովնան մնաց անվնաս երեք օր և երեք գիշեր ձկան փորում։

Այս Յովհան մարգարէի անցքը էր օրինակ մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի երեքօրեայ թաղման և յարութեան։ Եւ աղօթքը, որնոր Յովհան կէտի փորում՝ ասաց, պարունակում՝ է իր մէջ շատ մարգարէութիւն։

Աստուած լսեց Յովհանի աղօթքը և հրամայեց կէտին, որ նրան ցամաքը դուրս գցէ։

Աստուած երկրորդ անգամ հրամայեց Յովհանին երթալ Նինուէ և նորա բնակիչներին ապաշխարութիւն քարոզել։ Նա անյապաղ ընկաւ ճանապարհ։ Նինուէն Ասորեստանի թագաւորութեան մայրաքաղաքն էր և այնպէս ընդարձակ էր, որ Յովհան բոլոր օր գնում էր մի ծայրից մինչև միւս ծայրը, անդադար ձայն տալով։ «Կանցնի էլի երեք օր—և Նինուէն կ'կործանվի»։ Նինուէի բնակիչները, վախենալով այս սպառնալիքներից, ապաշխարեցին, պահք դրին իրենց, հագան քուրձ և նստան մոխրի վերայ ամէնքը, թագաւորից սկսած մինչև վերջին մարդը, թողին իրենց ամէն գործերը և մեծ ջերմեռանդութեամբ աղօթք էին անում։ Աստուած, տեսնելով նոցա արտանց զղջումն, ներեց նրանց։

Յովհան դուրս եկաւ քաղաքից և փոքր ինչ հեռու նստաւ նորա հանդէպը և սպասում էր, թէ ինչ կըպատահի քաղաքին։ Այս ժամանակ Աստուծոյ հրամանով դուրս եկաւ այն տեղումը, ուր Յովհան էր, դդմենի, որ իր լայն տերևներով պահպանում էր նրան օրվան շոքից։ այնտեղ նստաւ նա և քաղաքին նայելով սպասում էր իր մարգարէութեան կատարվելուն։ Բայց տեսնելով, որ Նինուէն անվնաս կեցած է, նա սկսաւ տրտմիլ, որ իր մարգարէութիւնը չկատարվեցաւ։ Նա մինչև անգամ մահ էլ խնդրեց իրեն Աստուծուից և ասում էր.

ահա՛ ինչու ես չէի ուզում նվիրուել երթալ։ Ես գիտեմ, Տէ՛ր, որ դու երկայնամիտ ես և բազմողորմ և թողութիւն ես տալիս զղջացած մեղաւորներին։ Այժմ, խընդրում եմ քեզ, Տէ՛ր, սո՛ւռ իմ կեանքս, ես աւելի կամենում եմ մեռնիլ, քան թէ ապրել»։

Մի՛ւս օր էլ չկար դղմենին, ճիճուն կերաւ նրան և նա թառամեցաւ արեգակի տաքութիւնից։ Յոնէան ուելի տխրեցաւ։ Նա էլի սկսաւ կանչել մահին, որովհետև Աստուած խլեց նրանից դղմենու շուաքն։ Այն ժամանակ Աստուած ասաց նրան. «Յոնէա՛ն, դու չես տընկել դղմենին, հոգս չես քաշել նորա մեծանալու վերայ, բայց արտմում ես նորա կորուստի համար։ Ես դուրս եկաւ մի գիշերում և մի գիշերումն էլ թառամեցաւ։ Դու ցաւում ես նորա վերայ և ուզում ես, որ ես ջընջեմ մեծ քաղաքը, որի մէջ հազարներով մարդիկ են կենում, ուր 120000 ից աւելի մարդիկ կան, որոնք չեն կարող զ�բարին ձախից զանազանել և շատ էլ անասուններ։

## ԳԼՈՒԽ ԶԴ.

## ԻՍՐԱՅԷԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԸՆԿՆԻԼԸ

Ասորիները և Եբրայեցւոց միւս զրացիները քանի անգամ յափշտակեցին Իսրայէլի գեղեցիկ երկիրը։ Իսրայէլացիները զեռ կարողանում էին ընդդիմանալ զրացիներին և պաշտպանել իրենց նոցա յարձակումներից։ Բայց վերջ կացաւ Ասորեստանցւոց ազգը և բոլորովին նուաճեց Իսրայէլի թագաւորութիւնը։ Ովսէ թագաւորը անհաւատարմութեամբ վարվեցաւ Ասորես-

տանի թագաւորին հետ և այն պատճառով զրկվեցաւ թագաւորութիւնից և եղաւ Իսրայէլի վերջին թագաւորը։

Ասորեստանցւոց բազմաթիւ զօրքը տիրեց Սամարիային։ Ոչնչ թագաւորը, գրեթէ բոլոր իր հպատակներով գերի գնաց։ Այնուհետև և Իսրայէլի թագաւորութիւնը բոլորովին վերջացաւ։ Դարդակ տներում բնակվեցան կռապաշտները, որոնց հետ միացան մնացած փոքրաթիւ Իսրայէլացիներն էլ և սկսան այնուհետև Սամարացիք կոչվել։

Այսպէս ընկաւ Իսրայէլի՝ Հրէից տասն ցեղերի թագաւորութիւնը Ասորեստանի Սաղմանասար թագաւորի ձեռքով 722 տարի Քրիստոսի Ծնունդից առաջ։

## ԳԼՈՒԽ ԶԵ.

## ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ

## ԱՀԱ ԱՅՆ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԳՐՈՒԱԾՔԸ ԴՐԱԾ ԵՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ ՄԷՋ

Եպայի, Ամովսի որդին, բնակում էր Յուդայի երկրում։ Ոզնայի, Յովաթամի, Ակաղի և Եզեկիայի թագաւորութեանց ժամանակ։ Ինչքան ուսումնասիրում էին նրան՝ չար թագաւորների անաստուածութիւնը և մեղքերը, ընդ հակառակն այնքան էլ աւելի ուրախացնում էին բարի թագաւորների առաքինութիւնները և բարեպաշտութիւնը։ Եզեկիան Յուդայի թագաւորների լաւերից մէկն էր։ Նորա թագաւորութեան ժամանակ Ասորեստանցիք պատերազմ բաց արին Յուդայի հետ և շատ յաղթութիւններ արին, այնպէս որ Եզեկիան ստիպում

էր, որ իր թագաւորութիւնը կ'քանդվի. բայց Եսայի մարգարէն խոստացաւ նրան Աստուծոյ մերձակայ և շուտ օգնութիւնը, որ և ճշմարտիւ կատարվեցաւ: Նմանապէս Եղեկիայի ծանր հիւանդութեան ժամանակ, Եսային խոստացաւ նրան բժշկութիւն և հաւատացրեց այն նրան հրաշքով. նա աղեգակի ստուերը տասն աստիճան յետ դարձրեց: Եսային լցեալ էր Աստուծոյ Հոգւով. նա վառ զդացմամբ խօսում է Աստուծոյ և նոցա երջանկութեան վերայ, որոնք երկրպագութիւն են տալիս նրան հաւատով. նա յայտնի մարգարէանում է դաւթի այն զաւակի վերայ, որնոր կ'ծնի Կոյսից, մարդոց փրկելու համար. նա խօսում է նմանապէս այն չարչարանքների վերայ, որոնց նա կ'տանէ մարդկային ազգի համար: Մարգարէներից ոչ մէկը այնպէս պարզ չէր գուշակում Մեսիայի Յիսուսի Քրիստոսի ծնունդը, չարչարանքները և փառքը: Այս պատճառով մի քանի Սուրբ Հայրերը Սուրբ Եսային անուանում են հին ուխտի աւետարանիչ:

Երեմիա մարգարէն ուրիշների պէս մարգարէանում էր Մեսիայի գալուստը, և յորդորում էր Աստուծոյ ժողովրդին ապաշխարելու և գուշակեց Երուսաղէմի քանդվելը և ինքն էլ տեսաւ իր գուշակութեան կատարումն:

Դանիէլ մարգարէին վերայ աւելի ընդարձակ կըխօսենք յետոյ:

Մարգարէները Եղեկիէլ, Ովսէ, Յովէլ, Ամոս, Աբդիու, Յովնան, Միքիա, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, Անդէ, Զաքարիա և Մաղաքիա մարգարէացան նոյնպէս Մեսիայի և Յուդայի թագաւորութեան ու ուրիշ ազգերի զանազան վիճակների վերայ:

## ԳԼՈՒԽ ԶԶ.

## ՏՈՎԲԻԹ

Այն Իսրայէլացիների մէջ, որոնց Ասորեստանցիք գերի տարան, կար մի բարեպաշտ մարդ Տովբիթ անուն։ Նրան բերին Նինուէ՝ Ասորեստանի մայրաքաղաքը, իր կնոջ և միակ որդու հետ միասին։ Բայց ստար երկրումն էլ հաստատ մնաց նա իր հաւատին և կատարում էր Աստուծոյ պատուիրանները։ Սաղմանասար, Ասորեստանի թագաւորը, սիրում էր այս բարեպաշտ մարդուն և հրամայում էր նրան ազատ ման գալ իր բոլոր տէրութեան մէջ։ Տովբիթ այս հրամանը գործ էր դնում, որ մխիթարէ իր գերի եղբայրներուն, օգնէ նրանց իր կարողութեան չափ և տայ նրանց օգտակար խորհուրդներ։ Նա ամէն տարի գնում էր իր ազգակիցների և ծանօթների մօտ և նրանց էլ ման էր հանում ամէնից, ինչ որ ունէր։

Տովբիթ վաճառականութեամբ շահեցաւ ոսկի տասը զանգ արծաթ։ Այս փողերը որ հաւաքեց, գնաց Մարաստանի Հռագա քաղաքը, որ այնտեղ էլ թողեցնէ գերի Իսրայէլացիների վիճակը։

Նուա սրանից յետոյ մեռաւ Սաղմանասար և նրանից յետո թագաւորեց նորա որդին Սենեքերիմը։ Սա խստութեամբ էր վարվում Իսրայէլացիների հետ և ատում էր նրանց։ Այս ազգի թշուառութիւնը սարսափելի էր։ Նորա մեծ մասը չունէր ոչ օրվան հաց և ոչ շոր, շատերը սպանվեցան և դիերը գցվեցան քաղաքի պատերից դուրս, որ վայրի գազաններին և պատառող թռչուն-

ջուններին կերակուր լինեն։ Այս թշուառ ժամանակները Տոբիթի ողորմածութիւնը առաւել աւելացաւ, նա կերակրում էր քաղցածներուն, հագցնում էր մերկերուն և թաղում էր մեռածներուն։

Երբ այսպիսի անխոնջ բարեգործութեան համբաւը հասաւ թագաւորին։ Սենեքերիմ բարկացաւ, հրամայեց խլել Տոբիթից նորա բոլոր ստացուածը և իրեն ապահել։ Թշուառականը, ամէն բանից զրկած, փախաւ։ Նրան թագցնում էին բարեկամները, որովհետև իր առաքինութիւններով շատ բարեկամներ դտել էր։

Տոբիթի փախուստից յետոյ յիսուն օր հազիւ անցել էր, որ Սենեքերիմ ապահովեցաւ իր հարազատ որդիներից։ Նրանից յետոյ թագաւորեց Ասորդան նորա որդին, որի մօտ Տոբիթի ազգականներից մէկը էր երեւելի իշխան։ Սա խնդրեց Տոբիթին համար թողութիւն, և նա յետ ստացաւ կրկին իր կնոջ, որդուն, իր տունը և բոլոր ստացուածը։ Նա առաջվան պէս սկսաւ բնակել Նինուէում իր ընտանիքով։

Եկաւ եօթներորդ շաբաթը, Պենտէկոստէի ծունը։ Տոբիթի տանը պատրաստվեցաւ մեծ ճաշ։ Տոբիթ, տեսնելով կերակուրների առատութիւնը, ասաց իր որդուն, «գնա՛, կանչիր ինձ մօտ իմ աղքատ եղբայրներից մի քանիսին, որոնք պահում են Աստուծոյ օրէնքները և թող ուզեն այս մեծ օրը. ես քեզ ճաշի կ՚սպասեմ»։ Նորա որդի Տոբիան, երբ յետ դարձաւ պատմեց, թէ տեսաւ փողոցում մի սպանած Իսրայէլացիի մարմին։ Տոբիթ սեղանից վեր կացաւ և թագուն մեռելին բերաւ իր տուն, որ արեգակի մտնելից յետ թաղէ։ Դրացիները նախատում էին նրան, ասելով, «շա՞տ ժամա-

մանակ է, որ թագաւորը քեզ կամենում էր ապանել մեռելներուն թաղելուդ համար։ Հաղիւ ապաստիցար մահուան վճռից և էլի մի և նոյնն ես անում»։ Բայց Տովբիթ թաղից ապանածի մարմինը։

Գիշերով, թաղումից յետ դառնալով, չմտաւ իր տունը, այլ պառկեցաւ տան պատի մօտ և չնկատեց, որ ուղիղ իր գլխին վերայ կար ծոմի բոյն։ Այս բունից ընկաւ նորա աչքի մէջ ծերա, որից եկաւ աչքի վրան փառ։ Տովբիթ գնաց բժիշկների մօտ, միայն նոքա ոչինչ օգնութիւն չտուին նրան և նա բոլորովին կուրացաւ։ Բայց այս թշուառութեան էլ տանում էր նա համբերութեամբ։

Անան, Տովբիթի կինը, անխոնջ աշխատում էր, որ կերակրէ իր ընտանիքը. նա մանում էր բուրդ։ Մի անգամ նա, երբ տարաւ տիրոջը իրեն յանձնված աշխատանքը, ստացաւ բացի իր վարձից մի ուլ էլ ընծայ։ Տովբիթ որ լսեց նորա ձայնը, չէր իմանում թէ այն ի՞նչ է նշանակում։ Տէ՛ս, ասաց նա իր կնոջ, գողացած չէ արդեօք ուլը. յետ տուր այն տիրոջը, գողունի բան ուտելը մեղք է»։ Կինը խիստ բարկացաւ նորա այս կասկածանքի համար։ Նա ասաց նրան շատ տխրի խօսքեր։ Տովբիթը լռութեամբ համբերում էր նորա հայհոյանքներին և յանդիմանութիւններին, նա հոգոց էր հանում և իր սրտում խնդրում էր Աստուծոյ, որ կամ թեթևացնէ իր վիճակը և կամ խլէ իրեն մահ։

Աստուած լսեց նորա աղօթքը և խլեց նրան օգնութիւն իր Ռափայէլ հրեշտակին։

ԳԼՈՒԽ ԶԷ.

## ՏՈՎԲԻԹԻ ԻՐ ՈՐԴՈՒՆ ՏՈՒԱԾ ԽՐԱՏՆԵՐԸ

Տովբիթը հաւատում էր, որ Աստուած լսել է իր աղօթքը և շուտ կ'ուրկէ իրեն մահ և այս պատճառով կանչեց իր որդուն, և ասաց նրան յետագայ խօսքերը. «որդեակ, լսիր քո հօրդ և պինդ պահիր իմ խօսքերս սրտումդ»:

Երբ Աստուած կ'կանչէ իր մօտ իմ հոգիս, թաղիր իմ մարմինս»:

Պատուիր մօրդ, մի՛ մոռանար երբէք, ինչքար նա քաշել է քեզ համար: Եւ երբ նա կ'մեռնի, թաղիր նը-րան էլ ինձ մօտ մի գերեզմանում»:

Աստծուն միշտ աչքիդ առջև ունեցիր, կատարիր նորա պատուիրանները, և փախիր մեղքից:

«Ողորմութիւն արա՛ քո կարողութեանդ համեմատ և երբէք երեսդ մի՛ դարձնիր աղքատից. այն ժամանակ Աստուած էլ քեզնից չի դարձնել իր երեսը»:

«Զգնիր ամէնին, ինչքան կարող ես: Եթէ դու հա-րուստ կ'լինես, ա՛ւելի շատ, եթէ դու աղքատ կ'մնաս, ա՛ւելի փոքր, միայն բարի սրտով: Այսպէսով կ'հաւա-քես մեծ գանձ թշուառութեան ժամանակի համար: Ողորմութիւնը փրկում է մահից և չէ թողնում մար-դուս խաւարը երթալ:

«Եղիր ողջախոհ, հեռացիր զեղխ մարդոց հատա-կութիւնից և մի՛ առնիր քեզ կին կռապաշտ, այլ ընտրիր մեր ազգից»:

Փախիր հպարտութիւնից. նա չպէտք է տեղ ունե-

նայ սրտումդ : Հպարտութիւնը և փառամոլութիւնը մարդուս ամէն բարի որպիսութիւնները խախտում են և զցում են նրան ամէն մեղքի մէջ »:

«Տուր վարձ արդարութեամբ ամէնին, ովոր քեզ համար կ'աշխատէ և մի՛ պահիր մօտդ վարձկանի աշխատանաց գինը »:

«Մի՛ անիր ուրիշին այն, ինչ որ չես ուզում, որ քեզ անեն »:

«Մի՛ խմիր գինի այնքան, որ հարբես »:

«Բաժանիր հացդ կարօտեալների հետ և հագցրու մերկերին քո շորերդ »:

«Հարցրու խորհուրդ միշտ իմաստուն մարդերից »:

Կենացդ ամէն գիրքերում փառաբանիր Աստծուն և խնդրիր նրան, որ կառավարէ ամէն քո գործքերդ և խորհուրդներդ : Որովհետև Աստուծմէ է ամէն բարին : Նա բարձրացնում է և խոնարհեցնում է, ում որ կամենում է »:

«Սրիացիր, որդեակ, մենք աղքատ ենք. բայց եթէ կ'կենանք Աստուծոյ կամաց յարմար և կ'փախչենք մեղքից, այն էլ, ինչ որ ունինք, բաւական կ'լինի մեզ »:

Երիտասարդ Տուբիայի սիրտը շարժեցաւ այս խօսքերից : Նա ասաց իր հօրը. «Հա՛յր խմ, ես կ'կատարեմ բոլոր քո հրամանները » և պահեց իր խօսքը :

ԳԼՈՒԽ ԶԸ.

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՈՒԲԻԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈԳՈՒԹԻՒՆԸ

Իր խրատները վերջացնելից յետոյ Տոբիթ ասաց իր որդուն, «ես քեզ պէտք է էլի յայտնեմ, որ քո ման-

կութիւնդ ժամանակ։ Մարտանի Հռադա քաղաքում Գաբայելի մօտ պահ առել եմ տասն տղայ արծաթ. գնա՛ նորա մօտ, որդեակ։ Բայց առաջ գտիր քեզ ընկեր, որոնք առաջնորդէ քեզ Հռադա և էլի յետ ինձ մօտ։ Կատարիր այս իմ մահկանացու առաջ»։

Երիտասարդ Տուբիան գնաց իրեն ընկեր փնտռելու և պատահեցաւ մի երիտասարդի, որ խիստ գեղեցիկ էր տեսքով։ Այս երիտասարդը էր Հռափայէլ հրեշտակը. նա հագած էր ճանապարհի շորեր։ Տուբիան չիմանալով, թէ ով է նա, մտաւոր հրեշտակին, ողջունեց և ասաց. «Չգիտե՞ս արդեօք Մարտանի Հռադա՛ քաղաքի ճանապարհը»։— «Գիտեմ, պատասխանեց հրեշտակը, ես այնտեղ քանիցս անգամ եղել եմ մեր եղբօր՝ Գաբայէլի մօտ։ Տուբիան ասաց. «ապասի՛ր ինձ այստեղ մինչև ես այդ յայտնեմ հօրս»։ Հայրը զարմացաւ, տեսնելով, որ Տուբիան այնպէս շուտ դառաւ իրեն ուղեկից և հրամայեց որդուն իր մօտ կանչել երիտասարդին։ «Կ՚համաձայնի՞ս դու իմ որդուս Հռադա Գաբայէլի մօտ առաջնորդելու. հարցրեց Տոբիթ։ Եթէ դու կ՚գառնաս նորա հետ միասին, մենք քեզ կըտանք աշխատանացդ վարձը», ասեցրեց նա։ «Որքա՞ խուժեամբ պատասխանեց երիտասարդը. «ես կ՚տանեմ որդուդ Հռադա և յետ կ՚դարձնեմ նրան էլի»։ «Որ՞ բնին», ասաց Տոբիթ, գնացէք։ Աստուած ձեզ հետ լինի, Աստուած թող խրկէ ձեզ ուղեկից իր հրեշտակին»։

Երիտասարդ Տուբիան պատրաստեցաւ ճանապարհի, հրաժարական ողջոյն տուեց իր հօր և մօր, առաւ նոցա օրհնութիւնը և գնաց երիտասարդին հետ։

Ճանապարհորդութեան առաջին օրը նորա հասան

մինչև Տիգրիս գետը։ Տուբիան գնաց գետում լողանալու։ Յանկարծ մի մեծ ձուկը դուրս եկաւ ջրից և կամենում էր կուլ տալ նրան։ Տուբիան վախեցաւ, պինդ գոռաց և օգնութիւն կանչեց իր ընկերոջը։ Հրեշտակը ասաց. «բռնիր այդ ձկան և հանիր ջրից»։— Տուբիան հանեց ձկան ցամաքը։ «Այժմ», ասաց Հրեշտակը, ճեղքիր փորը. սիրտը, լեղին և լեարդը պահիր. դոքա դեղեն»։ Տուբիան կատարեց, ինչ որ իրեն հրամայվեցաւ։ Այս ձկնից մի քանի կտոր նա խորովեց ընթրելի համար։

Յետոյ գնացին առաջ և եկան Եկբատանա քաղաքը։ «Ո՞ւր իջևանենք մենք», հարցրեց Տուբիան Հրեշտակին։ «Այս տեղ կենում է՞ մի մարդ Հռագուէլ անունով, ասաց Հրեշտակը։ Նա քեզ ազգական է և բացի մի աղջկից, որի անունը Սառա է, չունի ուրիշ զաւակ։ Նա գեղեցիկ է, խելօք և բարեբարոյ։ Ես կ'խօսեմ քեզ վերայ նորա հօր հետ. նա կ'համաձայնի նրան քեզ տալ. դու ես նորա տատցուածների օրինաւոր ժառանգը։ «Ես լսել եմ նորա համար», պատասխանեց Տուբիան։ «Ասում են, թէ նա չար դևի իշխանութեան տակն է, թէ նա եօթն անգամ ամուսնացել է և թէ նորա ամէն եօթը մարդերն էլ ամուսնութիւնից յետո առաջին գիշերը մեռել են։ Ես վախենում եմ, որ ինձ հետ էլ մի և նոյնը չպատահի։ Եթէ ես մեռնեմ, ոչ հոգս կ'քաշէ ծնողացս վերայ։ Ես եմ նոցա միակ ներկուկը։ Տրրամեռելիութիւնը նրանց գերեզման կ'իջեցնէ»։

«Մի վախիր, ասաց Հրեշտակը. չար ոգին քեզ վնաս չի տալ, միայն ջերմեռանդութեամբ աղօթք արէք ամենաբարձրեալ Աստծուն և նա կ'ազատէ ձեզ և կ'ողորմի։

## ԳԼՈՒԽ ԶԹ.

## ՏՈՒԲԻԱՅԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Տուբիան Հրեշտակի ուղեցկութեամբ եկաւ Հռագուէլի մօտ և Սառան ընդունեց նրան։ Հռագուէլ Տուբիային նայելով ասաց իր կնոջ Հեդնային. «Նայի՛ր ի՞նչպէս նման է այս երիտասարդը մեր ազգականին Տոբիթին»։ Յետոյ դառնալով ճանապարհորդներին, հարցրեց նա. «որտեղի՞ց է՛ք գալիս, սիրելի եղբայրներ»։ «Մենք գերի Խրայէլացիներից ենք, Նեփթալիմի ցեղից, որ Նինուէում են», պատասխանեցին նոքա։ «Ձէ՞ք ճանաչում արդեօք այնտեղ իմ ազգական Տոբիթին»։ Հարցրեց Հռագուէլ։ «Ճանաչում ենք», պատասխանեցին նոքա։ «Նա իմ հայրն է», ասաց Տուբիան։ Այն ժամանակ Հռագուէլ գրկեց Տուբիային և լաց եղաւ ուրախութիւնից։ «Օրհնում եմ քեզ, որդեակս, ասաց նա. դու ունես առաքինի և բարեպաշտ հայր»։ Հէդնան, Հռագուէլի կինը և Սառան, նորա աղջիկը, ուրախութեամբ բարեւեցին Տուբիային. բայց՝ ամենքն էլ շատ տխրեցան, երբ լսեցին, որ ծերունի Տոբիթը զրկվել է աչքից։

Հռագուէլ հրամայեց մեծ ճաշ պատրաստել և խնդրեց իր հիւրերուն, որ նստեն։ Բայց Տուբիան ասաց. «ես ոչ կ'ուտեմ և ոչ կ'խմեմ, մինչև չես համաձայնել իմ խնդիրքս կատարել։ Տո՛ւր ինձ կին քո աղջկանդ Սառային»։ Հռագուէլ վախեցաւ այսպիսի առաջարկութիւնից, մտածելով, թէ արդէն իր աղջկան եօթը ամուսիններին մեռան. նա վախենում էր, որ նոյն վիճակը Տուբիային էլ չհասնի. բայց Հրեշտակը ասաց նրան. «մի՛ վախի՛ր, սա բարեպաշտ մարդ է և Աստուած ինքը նշանակել է նրան քո աղջկանդ համար. ահա՛

ինչու մինչև հիմիկ ոչ ոք չէր կարողանում տիրել նրան։ Այն ժամանակ Հռաղուէլ միացրեց Տուբիայի և Սառայի ձեռները, ասելով. «Աստուած տեսաւ իմ արտասուքները և լսեց իմ աղօթքս։ Տալիս եմ նրան քեզ։ Աբրահամի Իսահակի և Յակոբի Աստուածը օրհնէ ձեր պսակը»։

Այս գիշերից յետո Հռաղուէլ կանչեց իր ծառաներուն և գնաց նոցա հետ միասին պարտէզ, որ գերեզման փորէ իր աղջկան նոր մարդուն համար։ Երբ գերեզմանը պատրաստեց, նա դարձաւ իր կնոջ մօտ և ասաց նրան. «Խրկիր քո աղախիններից մէկին, որ տեսնէ, չէ՞ մեռել արդեօք Տուբիան, որ մենք կարողանանք նրան թաղել արեգակի ծագելից առաջ և այսպէսով ծածկենք նորա մահը»։ Աղախինը դարձաւ և համբաւ բերեց, որ երկու նոր ամուսնացածներն էլ ողջ և առողջ են։ Տուբիան Հրեշտակի հրամանով, իր համար պատրաստած սենեակը ծխեց արուեստը և լիարդոյը, որ հանեց իր բռնած ձկնից, և Սառայի հետ միասին երեք օր աղօթքով անցկացրեց։ Աստուած ողորմեց նրանց։ Հռաղուէլ հրամայեց իր ծառաներին ծածկել փորած գերեզմանը. իսկ ինքը և իր կինը աղօթք էին անում և շնորհակալ լինում Աստուծոյ։

ԳԼՈՒԽ Դ.

## ՏՈՒԲԻԱՅԻ ԴԱՐՁԸ

Հռաղուէլ պատրաստեց հարսանիքի խնջոյք, ու հրաւիրեց ամէն իր բարեկամներուն և դրացիներուն։ Նա խնդրեց իր փեսային, որ մնայ իր մօտ էլի երե-

կու շաբաթ։ Տուբիան, չկարողանալով բացատել իր աներոջ և մի և նոյն ժամանակ վախենալով իր երկարաժամանակեայ բացակայութեամբ իր ծնողացը անհանգստութիւն պատճառել, խնդրեց Հրեշտակին, որնոր իրեն Ազարիա էր անուանում, որ գնայ առանց իրեն Հռաֆա Գաբայէլի մօտ և ձեռագրի գօրութեամբ առանց նրանից փողը և իրեն էլ հրաւիրէ հարսանիքի խնջոյքը։ Հրեշտակը կատարեց Տուբիայի յանձնարարութիւնը։ Գաբայէլ առաց բոլոր արծաթը, ինչպէս պարտք էր և ինքն էլ ուրախութեամբ եկաւ Տուբիայի հարսանիքը։

Երկու շաբաթից յետոյ Հռաֆուէլը ասաց Տուբիային. «Ծնա՛ իմ մօտ մի քանի ժամանակ, ես կ՚խրկեմ՝ քո հօրդ մօտ մարդ ասելու, որ դու առողջ ես»։ — «Չէ», պատասխանեց Տուբիան. «ես գիտեմ, որ իմ ծնողքս համարում են այժմ ամէն բոլէն և իմ բացակայութիւնս անհանգստացնում է նրանց»։ Թէև շատ խնդրեց Հռաֆուէլ նրան, բայց Տուբիան ոչ մի կերպով չհամաձայնեցաւ մնալ։ Ասաի Հռաֆուէլ առաց նրան իր աղջկան՝ Սառային, իր բոլոր խաշների կէսը, իր փողերի կէսը, առաց նրան ծառաներ, աղախիններ և ցանկալով նրանց բարի ճանապարհ, ասաց նրան. «Սառա՛ծոյ տէր Հրեշտակը ուղեկից լինի՛ ձեզ և հասցնէ ձեզ յաջողութեամբ ձեր տուն։ Սառա՛ած տայ, որ ծնողացդ առողջ գտնես և ես իմ մահից առաջ արժանանամ ձեր որդոցը տեսնել»։ Հռաֆուէլ և Հեղնան գրկեցին իրենց փեսային և աղջկան ու համբուրելով հրամայեցին Սառային, որ սիրէ իր մարդուն և պատուէ իր սկեսուրին և սկեսրայրին և պահէ իրեն այնպէս, որ ոչ մի յանդիմանութեան չարժանանայ։ Առաւն արտասուք թա-

փելով, խոստացաւ, որ երբէք չի մոռանալ իր ծնողաց խրատները։ Յետոյ նոքա բաժանվեցան։

Իսկ Ծերունի Տոմբիմ և նորա կինը շատ անհանգստանում էին իրենց որդու վերայ, որնոր փոքր ինչ ուշացաւ հարսանիքի ընծոյքի պատճառով։ «Ի՞նչ բան կարող էր պահել մեր որդուն», ասում էր նա իր կնոջը։ Գուցէ գաբայէլը մեռել է և նա չգիտէ ումից առնոյ փողերը»։ Տոմբիմ և Անանն ժամից ժամ աւելի անհանգստանում էին. նոքա լաց էին լինում, տեսնելով, որ իրենց որդին նշանակած ժամանակին յետ չէ դառնում։ Մայրը չէր դադարում արտասուելից. «Ո՜հ որդեակ իմ, որդեակ իմ». ասում էր նա. «ինչո՞ւ խրկեցինք մենք քեզ օտար երկիր— դու մեր աչքի լոյսը, մեր Ծերութեան նեցուկը, մեր կեանքի միխիթարութիւնը, մեր ցեղի յոյսը։ Մի՞թէ մենք բաւական հարուստ չէինք, երբ քեզ ունէինք»։ Տոմբիմ միխիթարում էր նրան, ասելով. «բաւական է, մի՛ տխրիր, յոյսի բան է, որ մեր որդին առողջ է, ընկերը, որնոր նորա հետ գնաց, արդար և հաւատարիմ մարդ է։ Բայց Անանն չէր կարողանում միխիթարվել և ամէն օր գնում էր այն ճանապարհը, որով պէտք է նորա որդին դառնար։ Այս տեղ բարձրութեան վերայ նստած նայում էր հեռու։ Վերջապէս հեռուից տեսաւ ճանապարհորդներ, որոնք գալիս էին այն ճանապարհով և նրանցից մէկին ճանաչեց, որ իր որդին էր։ Անանն ուրախացած վազեց իր մարդուն մօտ աղաղակելով. «որդիդ գալիս է»։—

Տոբիան Հռափայէլի հետ միասին գնաց առաջ, որ շուտով տեսնվի ծնողաց հետ. իսկ Սառային բոլոր ծառաներով և խաշներով յետ թողին. սա կամաց կամաց

հեռևում էր նրանց։

Հրեշտակը ասաց Տոբիային. «վեր առ հեղգ լե-
զին, որ ձկնից հանեցիր և քսիր այն հօրդ աչքին. այս-
պէսով կ՚բժշկես նորա աչքերը»։

Ծերունի կոյրը՝ Տոբիթը, շտապելով իր որդուն ա-
ռաջը դուրս գալ գլորվեցաւ և որդին շուտ գնաց նը-
րան բարձրացրեց։ Հայրը և մայրը գրկեցին իրենց սի-
րելին և ամէնքը միասին շնորհակալ եղան Աստուծոյ
և ջերմեռանդութեամբ աղօթք արին։ Երբ փոքր ինչ
հանգստացան, ուրախութեան առաջին րոպէներից յե-
տոյ, Տոբիան առաւ ձկան լեղով լեք ամանը և օձից
նրանով իր հօր աչքերը նոյն րոպէին փառը աչքերի
բերից հեռացաւ և Տոբիթ սկսաւ տեսնել։ Ամէնքը
փառաւորեցին Աստծուն։ Ծերունի Տոբիթը ասաց ու-
րախութեամբ. «Տէր Աստուած Իսրայէլի, շնորհակալ
եմ քեզնից. դու պատժեցիր ինձ. բայց դու էլ ողոր-
մեցար, ես էլի տեսնում եմ իմ որդուս Տոբիային»։

Բարեպաշտ Տոբիթի առաջին խօսքերը, աչքերի
բացվելից յետո, էին շնորհակալութեան աղօթքը Աստ-
ուծոյ։ Նա գիտէր, որ ամէն ուրախութիւնը Աստու-
ծոյ պարգև է և ամէն բանի մէջ տեսնում էր նա Աստ-
ուծոյ բարութիւնը։

Տոբիթ ուրախ սրտով գնաց իր հարսի առաջը նի-
նուէի դռներից դուրս. ով որ նրան ճանաչում էր,
զարմանում էր, որ նա առանց առաջնորդի գնում է,
իսկ Տոբիթ ամէնի առջևը փառաւորում էր Աստու-
ծոյ, որնոր դարձրեց նրան աչքի լոյսը։ Տոբիթի բոլոր
ազգականները ուրախանում էին և եօթն օր ուտում
էին Տոբիայի պսակը։ Խնջոյքի օրերը անցնելից յետո,

երկաւան էլ հայրը և որդին խնդրեցին ծպտեալ Աղա-
բիային, որ իբրև շնորհակալութեան նշան ընդունէ ի-
բենց բոլոր ստացուածի կէսը. բայց հրեշտակը ասացնելը-
բանց. «փառաւորեցէք Աստուն ամէնի առջև. նա
խրկեց ձեզ մեծ ողորմութիւններ. թագաւորի գաղտ-
նիքը պահել հարկաւոր է. իսկ Աստուծոյ գործքերը
յայտնելը բարի է։ Պահք, աղօթք և ողորմութիւն ա-
մէն դանձերից լաւ են։ Լաւ է քիչը արդարութեամբ,
քան թէ շատը անարդարութեամբ։ Ողորմութիւնը
փրկում է մահից և զրում է մեղքերը, ողորմութիւն
և արդարութիւն անողները կեանք կ'ստանան։ Խրա-
տասխրա մեղաւորը իր հոգւոյ թշնամին է։ Ես չեմ
ծածկիլ ձեզնից մեծ գաղտնիքը։ «Այն ժամանակ», ա-
ստց. Հրեշտակը Տոբիթին, «երբ դու աղօթք էիր ա-
նում և քո հարսը Սառան էլ աղօթք էր անում, ես
տանում էի ձեր աղօթքը Ամենաբարձրեալի առաջը։
Երբ դու թաղում էիր մեռածներին և այս բարի գոր-
ծի համար չծուլացար սեղանից էլ վեր կենալ և թողնել
քո ճաշը, ես քեզ հետ էի այն ժամանակ. ես այն բո-
լորը տեսայ։ Աստուած խրկեց ինձ, որ բժշկեմ քեզ և
քո հարսին Սառային։ Ես Հռափայէլն եմ, մէկը այն
եօթն սուրբ հրեշտակներից, որոնք տանում են սուր-
բերի աղօթքը և կանգնում են Ամենաբարձրեալի ա-
թոռի առջևը։

Այս որ լսեցին Տոբիթ և իր որդին, զարմացին և
յարգութեամբ ընկան Հրեշտակի առջևը։

«Խաղաղութիւն ձեզ», շարունակեց նա, «մի՛ վա-
խենաք ոչընչից, ես ոչ թէ իմ կամքովս, այլ Աստուծոյ
հրամանով եկայ ձեզ մօտ և բնակեցայ ձեր մէջ։ Փա-

ռաւորեցէք նրան, աղօթք արէք նրան. այժմ ես դառնում եմ նորա մօտ, ով ինձ խրկեց. յայտնեցէք մարդոց և գրեցէք հրաշքները, որոնք ձեզ պատահեցան։

Այս ասելից յետո Հռափայէլ հրեշտակը անհետացաւ։ Տոբիթ և իր որդին ընկան գետին, փառաւորեցին Աստուն և ամէնին պատմում էին իրենց պատահած հրաշքները։

Սրանից յետոյ Ծերունի Տոբիթը ապրեցաւ էլի վաթսուն երկու տարի յաջողութեամբ և տեսաւ իր թոռներուն։ Իր մահից առաջ նա նախատեսեց որդոցը, որ նիներուէն շուտ կ'քանդվի և Խրայէլացիները կ'դառնան իրենց հայրենիք։ Տոբիթ մեռաւ խորին ծերութեան մէջ հարիւր յիսուն ութը տարեկան և պատուով թաղվեցաւ։ Տուբիա, նորա որդին, կեցաւ իր մօր մօտ մինչև նորա մեռնիլը և յետոյ տեղափոխեցաւ Եկբատանայ իր աներոջը՝ Հռագուէլի մօտ և պատվում էր նրան և նորա կնոջ Հեզնային ինչպէս իրեն ծնողներուն։ Նա վարեց նոցա աչքերը։ Տուբիան կեցաւ երկրիս երեսին հարիւր քսան եօթն տարի և հանգիստ վախճանեցաւ արդարների մահով։

## ԳԼՈՒԽ ՂԱ.

## ՅՈՒԴԻԹ

Բաբելոնի թագաւորը, Նաբուգոդոնոսոր, պատերազմ էր տալիս Մարաց Արփաքսատ թագաւորի հետ։ Նա խրկեց ամէն գրայի ազգերին մօտ օգնութիւն խնդրելու, միայն ամէնքն էլ բացասեցին։ Երբ յաջողութեամբ վերջացրեց պատերազմը Մեդացւոց թագաւորի դէմ,

Նաբուգոդոնոսոր միտքը դրեց վրէժ հանել Նրանցից, որոնք օգնութիւն չտուին իրեն: Այս բանի համար խրկեց նա իւր Հոլոփեռնէս զօրավարին բազմաթիւ զօրքով նոցա դէմ: Այս զօրավարը արով և կրակով ջնջում էր ամէն իրեն ընդդիմացողներուն: Յուդայի բնակիչները, որոնք նմանապէս Նրանցից էին, որ բացասեցին Նաբուգոդոնոսորին օգնութիւն, սպասում էին նոյն վիճակը: Նոքա պահք կարգեցին և վճռեցին մինչև վերջին զօրութիւնը պաշտպանել իրենց: Հոլոփեռնէս զարմացաւ նոցա այսպիսի հաստատամտութեան վերայ: Նա պաշարեց Բեթուղիա բերդը, կտրեց ջրի աղբիւրները և քաղաքի բնակիչները քաշում էին ջրի մեծ պակասութիւն: Թշուառութիւնը Բեթուղիայի մէջ սարսափելի էր և շատերը կամենում էին վերջապէս անձնատուր լինել, քան թէ մեռնիլ ծարաւից: Վճռեցին էլի հինգ օր սպասել և եթէ այս միջոցում Աստուած իրենց օգնութիւն չի տալ, մատնել բերդը թշնամեաց ձեռքը:

Բեթուղիա քաղաքում բնակում էր մի բարեպաշտ և գեղեցիկ այրի կին, Յուդիթ անունով, որնոր միտք դրեց փրկել քաղաքը: Նա ոչ ոքին չյայտնեց իր խորհուրդը, բայց միայն խնդրեց իր քաղաքացիներուն, որ աւելի ջերմեռանդութեամբ աղօթք անեն իրեն համար Աստծուն: Յետոյ հանեց իր ագոյ շորերը, որ իր մարդու մահուան պատճառով հագած ունէր, զարդարվեցաւ ճոխութեամբ և գնաց թշնամեաց բանակը: Նրան տարան Հոլոփեռնէսի մօտ, որին նա ասաց, թէ ինքը կարող է գտնել միջոց հեշտութեամբ քաղաքին տիրելու յետոյ նա խնդրեց միայն, որ իրեն և իր հետ եկած ա-

զանին հրաման տայ ամէն առաւօտ և երեկոյ բանակից դուրս գնալ աղօթք անելու համար։

Հողեփեռնէսը շատ բաւական մնաց այս առաջարկութեամբ և հրամայեց պահապանին, որ չարգելէ Յուդիթին և նորա աղախնին բանակից դուրս գալու առաւօտները և երեկոյները։ Նա սիրահարեցաւ Յուդիթի գեղեցկութեան և խոհեմութեան վերայ։ Նորա գալատի չորրորդ օրը հրաւիրեց նրան իր սեղանի մօտ նստել։ Երբ նա վրանը մտաւ, Հողեփեռնէս ասաց. «Մի՛ թար մեզ հետ, կե՛ր, խմի՛ր, և ուրախացի՛ր»։ «Ո՛հ», յայտնի բան է, ես ուրախ կ՚լինեմ». պատասխանեց Յուդիթ, «ինձ գեռ ոչ ոք երբէք այսպիսի յարգանք չէ ցոյց տուել»։ Հողեփեռնէս, Յուդիթի ներկայութեամբը ուրախացած, խմում էր սովորականից աւելի, նոյնպէս էլ նորա սպասաւորները։ Սեղանից յետոյ ամէնքը հեռացան մէկ մէկից, ով որ կողմն կամեցաւ. վրանում ոչ ոք չմնաց բացի Յուդիթից և Հողեփեռնէսից, որնոր այնպէս հարբեցաւ, որ պառկած էր անկողնի վերայ առանց զգացողութեան։ Յուդիթ, նրան մօտենալով, ասաց արտասուքով. «Տէր Աստուած Իսրայէլի, զօրացրո՛ւ ինձ այս ժամս»։ Յետոյ նա վեր առաւ Հողեփեռնէսի սուրը, որ կախած էր նորա գլխի վերայ, և կարեց նորա գլուխը. Յուդիթի աղախինը Հողեփեռնէսի գլուխը դրաւ պարկի մէջ։

Աստուած իրենց սովորութեամբ դուրս գնացին նոքա բանակից իրենց աղօթքը կատարելու. բայց էլի բանակը դառնալու տեղ նոքա մտան քաղաքը։

Երբ քաղաքի ծերերը ժողովեցան հրապարակում, Յուդիթ ցոյց տուեց նրանց Հողեփեռնէսի գլուխը։ Բե-

ուղևորում ամէնքը ուրախության շատ և նոյն ժամին վճռեցին դուրս գալ քաղաքից և յարձակել թշնամեաց վերայ։ Թշնամիները, դեռ չիմանալով իրենց զօրավարի մահը, ծաղրում էին ցուդայիներուն։ Նոքա ժողովեցան Հողեփեռնէսի վրանի շուրջ կոմը, կարծելով, որ նա դեռ քնում է, բայց տեսնելով, որ նոցա զօրավարը խիստ ուշ է զարթում, մի քանիսը յանձն առան վրանը մտնելու և գտան այնտեղ Հողեփեռնէսի գլխատած մարմինը։ Զօրավարի մահուան համբաւը մեծ խռովութիւն գցեց բանակի մէջ։ Զօրքը բանակը թողնելով փախաւ և ցեղուղիայի բնակիչները մտան բանակ և գտան այնտեղ մեծ տաք, որոնք երեսուն օրվան մէջ հագիւ կարողացան քաղաք տանել։ Յուդիթը երդեց գովասանական երգ Աստծուն։

ԳԼՈՒԽ ՂԲ։

## ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ։ ԴԱՆԻԷԼ

Բաբելոն տարած գերի Եբրայեցիների մէջ կային շատերը թագաւորական ցեղից և մեծամեծների որդիք։ Նաբուգոդոնոսոր հրամայեց այս ընտանիքներից ընտրել խելօք և գեղեցիկ երեխաներուն։ Նա նշանակեց նրանց իրեն ծառայելու համար, հրամայեց սովորցնել նրանց ամէն գիտութիւններ և արհեստներ, պահել լաւ, տալ նրանց կերակուր և գինի իր սեղանից։

Այս երեխաների անունները էին Դանիէլ, Անանիա, Ազարիա, և Միսայէլ։ Նոքա մտքերը դրին չգործածելու նոցա բերած ոչ քաղցրահամ կերակուրները և ոչ թանգագին գինիները։ Չնայելով իրենց մատաղ և փափուկ հասակին, Եբրայեցի երեխաները էին բարեխառն.

նոքա ոչինչ էին համարում ամէն երկրային բարու թիւն-
ները, և ոչինչ ուրիշ բանի վերայ չէին մտածում, բայց
միայն որ կատարեն Աստուծոյ պատուիրանները։ Նոքա
գիտէին, որ թագաւորի սեղանում գտնվում են շատ
այնպիսի կերակուրներ, որոնք Մովսէսի օրէնքներով ար-
գելված են, և վախենալով, որ նրանցից չանցնեն, նախա-
դասելի համարեցին բաւականանալ հացով, կանանչեղէ-
նով և ջրով։ Եբրայեցի մանուկների վերակացուն, որ թա-
գաւորի առաջին պաշտօնեաներից մէկն էր, յայտնում էր
Դանիէլին և նորա ընկերներին, որ իր վերայ կ'բարկա-
նայ թագաւորը, եթէ կիմացվի, որ նոքա չեն կերակր-
վում արքունի սեղանից բերած կերակուրներով և եթէ
թագաւորը կ'տեսնէ նոցա երեսները դեղնած և տխուր.
բայց Դանիէլ խնդրեց նրան, որ միայն տասնօրեայ փորձ
անէ և եթէ այս միջոցումն կ'նկատէ, որ իրենք վատա-
նում են կամ դեղնում, նա խոստացաւ ուտել այն, ինչ որ
կ'հրամայեն։ Վերակացուն համաձայնեցաւ։ Նրանց սկսան
ուտելու տալ միայն ունա, հաց և ջուր խմելու համար։
Նշանակած տասնօրեայ ժամանակից յետո, նոքա աւելի
առողջ և զուարթ երևում էին, քան թէ այն երեխանց
երեսները, որոնք ուտում էին թագաւորի սեղանի կե-
րակուրներից։ Այս տեսնելով, վերակացուն հրամայեց
նրանց գործածել այն կերակուրը, ինչ որ կ'բարեհաճեն
իրենք։ Աստուած վարձատրեց այս բարեպաշտ և բա-
րեխառն երեխաներուն, տալով նրանց ընդունակութիւն
գիտութիւններ սովորելու։ Նոքա մեծ յառաջադիմու-
թիւններ արին և գիտութեամբ անցան ամէն բա-
բելացի ուսեալներից և իմաստուններից, նրանց յանձ-
նեցին երևելի գործքեր Բաբելոնի երկրում (Դան. գ. 12)։

ԳԼՈՒԽ ՂԳ.

## ԵՐԵՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԿՐԱԿԻ ՀՆՈՑԻ ՄԷՋ

Ղաբուդոդոնոսոր հրամայեց ոսկիից մի մեծ կուռք ձուլել և դնել դաշտում։ Նա կանչեց իր սէրութեան աստիճանաւորներին, որպէսզի մարդոց ուղարկեն այս կռոնի պատուի համար և փողերի ձայներով հրամայեց յայտնել, թէ ով որ երկրպագութիւն չի տալ կռոնին, նրան կ՚գցեն վառած հնոցի մէջ։ Այս հրամանը լսելիս ամէնքը ժողովեցան, որ երկրպագութիւն տան կռոնին և երկրպագանում էին, բացի երեք Եբրայեցի մանուկներից, որոնց անունները Սեդրաք, Միսաք և Աբեդնաքով էին։ Այս երեք մանուկներուն տարան թագաւորի առաջ։

Ճշմարիտ է, չէ՞ք կամենում երկրպագութիւն տալ ոսկի կռոնին». հարցրեց բարկացած թագաւորը։ «Այժմ իսկ հրամայում եմ ձեզ, որ երբ կ՚լսէք փողի ձայնը, ընկնէք կռոնի առաջին և երկրպագէք նրան։ Իսկ եթէ չէք հնազանդիլ, կ՚ընկնէք կրակի հնոցի մէջ։ Այն ժամանակ կ՚տեսնենք, ո՞ր Աստուածը կ՚փրկէ ձեզ իմ ձեռից»։ Մանուկները պատասխանեցին. «Ամենազօր Աստուածը, որին մենք երկրպագութիւն ենք տալիս, կարող է փրկել մեզ ՝քո ձեռքից և հնոցի բորբոքեալ կրակից. բայց եթէ նա էլ չի բարեհաճիլ մեզ փրկել, էլի այն ժամանակն էլ, այս յայտնի լինի ՝քեզ, մենք ՝քո չԱստուածներիդ և կուռքիդ, որոնք դու կանգնեցիր, երկրպագութիւն չենք տալ»։

Թագաւորը, զայրացած, հրամայեց, որչափ կարելի է, սաստիկ բորբոքել հնոցը և գցել նորա մէջ երեք

մանուկներուն, պինդ կապած։ Ամէն բան Նաբուզոդոնոսորի հրամանին համեմատ կատարվեցաւ։ Հնոցը այնպէս տաքցրած էր, որ սպասաւորներուն, որոնք մանուկներուն գցէցին մէջը, այրուեր։ Բայց կապած մանուկները, որոնք ընկան այս սարսափելի բոցի մէջ, մընացին անվնաս։ Աստուծմէ խրկած Հրեշտակը մեղմացրեց կրակի սաստկութիւնը և զովացրեց նրանց ինչպէս զովարար ցօղով։ Կրակը նրանց չէր հասնում։ Նոքա, կրակի մէջ կանգնած, երգում էին Աստծուն երգ։

Նաբուզոդոնոսոր, երեք մանուկներուն անվնաս տեսնելով, զարմացաւ, վեր կացաւ իր տեղից և հարցրեց իր պալատականներուն. «Մենք երեք մարդոց կապած չգցեցի՞նք բորբոքեալ հնոցի մէջ։ Այո՛ ցէք, նոքա ազատ են, անվնաս նրանց պատող բոցի մէջ և նրանց հետ միասին էլի մէկ չորրորդը, գեղեցիկ երկնային ոգիի պէս։ Նա մօտեցաւ հնոցին և կանչեց. «Դո՛ւք բարձրեալ Աստուծոյ ծառայք, դուրս եկէ՛ք բոցից և մօտեցէ՛ք ինձ։ Նոքա մօտեցան թագաւորին։ Ոչ մի մազ նոցա գլխի վերայ չէր խանձվել. նոցա շորերը անվնաս մնացել էին. չէր երևում կրակի ոչ մի հետքը, և ոչ էլ կրակի հոտը կար. միայն շղթաները, որով կապած էին, թուլացել էին և քակվել։ Այն ժամանակ Նաբուզոդոնոսոր երկրպագութիւն տուեց ճշմարիտ Աստծուն և ասաց. «Օրհնեալ է ձեր Աստուածը, որ խրկեց իր հրեշտակին փրկելու իրեն վերայ յուսացողներուն։ Եթէ իմ հրպատակներից մէկը կ՚համարձակվի հայհոյել Աստծուն, որին երկրպագում են այս ցուղաները, մահով կ՚մեռնի նա. որովհետև չկայ ուրիշ Աստուած, որ կարողանայ այսպիսի հրաշք գործել»։

Թագաւորի հրամանով Սեդրաք, Միսաք և Աբեդ-նագով (այսպէս անուանվեցան Բաբելոնում Անանիա, Ազարիա և Միսայէլ) ստացան բարձր պաշտօններ տէրութեան մէջ։

ԳԼՈՒԽ ԶԴ։

## ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷ

Նաբուգոդոնոսոր թագաւորը միանգամ տեսաւ երազ, որ մեծ անհանգստութեան մէջ գցեց նրան։ Նա մոռացաւ երազի մանրամասն հանգամանքները, բայց զգում էր ահ և ոչինչ ուրիշ բանի վերայ չէր կարողանում մտածել, բայց միայն նորա վերայ, թէ ինքը տեսել է մի սարսափելի բան։ Վերջապէս կամենալով հանգստանալ այս երազից, կանչեց իր թագաւորութեան բոլոր գիտուն մարդոց, մանաւանդ երազահաններուն և քուրմերուն, որոնք պարապում էին ապագայն դուշակելով։ Ամէնքը ասում էին, որ առանց երազը իմանալու, նոքա չեն կարող մեկնել նրան։ Բայց թագաւորը կամենում էր, որ անպաճառ պատմեն և մեկնեն իրեն այն երազը, որ ինքը մոռացել էր։ Նա պատուում էր սպանել նրանց, որոնք չեն իմանալ նորա երազը, և քանդել նոցա տները։ Ի զուր ասում էին նրան, թէ այս մարդկային մաց զօրութիւնից վեր բան է. թագաւորը հրամայեց սպանել իր թագաւորութեան մէջ եղած բոլոր գիտնականներուն, որովհետև նոքա չկարողացան մեկնել նրան այն, ինչ որ ինքն չէր իմանում։

Այս թշուառների մէջ, որոնք պէտք է մեռնէին անարդար հրամանով, էր Դանիէլն և նորա ընկերները, էլ ինչպէս գիտութիւններով պարապող անձներ։ Նոքա ա-

մէնքն էլ չէին իմանում, թէ ինչ է պատահել թագաւորին։ Սպառնող վտանգը որիմացաւ, Դանիէլ գնաց այն պաշտօնեաների մօտ, որոնք, ինչպէս էր, կատարէր թագաւորի հրամանը։ Արիովք (այսպէս էր պաշտօնեաների անունը) պատմեց նրան նաչուգոդոնոսորի բարկութեան պատճառը ամէն խմաստունների վերայ։ Դանիէլ լսեցը կենդանի յոյսով Ամենազօր Աստուծոյ վերայ, որոնք պահպանեց նրան բոլոր կեանքում, խնդրեց, որ իրեն տանեն թագաւորի առջև, որից խնդրեց, որ ժամանակ տայ դատապարտածներին, մինչև ինքը կ'իմանայ երազը և մեկնութիւնն էլ կ'ասէ։ Թագաւորը համաձայնեցաւ ժամանակ տալ։ Դանիէլ կանչեց իր մօտ իրեն ընկերներին Անանիային, Ազարիային և Միսայէլին, պատմեց նրանց, թէ ինչ է պահանջում թագաւորը և խնդրեց նրանց, որ իրեն հետ միասին աղօթք անեն Աստուծոյ, որ Սա բարեհաճի յայտնել իրենց գաղտնիքը, այնքան անմեղ մարդոց փրկութեան համար։ Նոքա ամէնքը սկսան ջերմեռանդութեամբ աղօթք անել։ Աստուած լսեց նոցա աղօթքը և գիշերը տեսիլքում յայտնեց Դանիէլին, ինչ որ հարկաւոր էր նրան գիտենալ։ Առաւօտը վեր կացաւ շնորհակալ եղաւ Աստուծմէ, և յետոյ գընաց թագաւորի պալատը և խնդրեց, որ իրեն նարուգոդոնոսորի առջև տանեն։

Արիովք յայտնեց թագաւորին Դանիէլի գալուստը և ներս մտցրեց նրան։ Դանիէլ ասաց նաբուքոդոնոսորին, թէ գիտութիւններով ոչ ոք չէր կարող մեկնել այն երազը, որոնք Աստուած իրեն բաց արաւ։ Քանի որ Դանիէլ պատմում էր նաբուքոդոնոսորին նոքա տեսած երազը, թագաւորը իր միտը բերում էր ամէն պարա-

գանները, և մեկնելով երազը, Դանիել ասաց, որ Աստուած կամենում էր նրան ձեռքով յայտնել այն մեծ անցքերի գաղտնիքը, որոնք երկրիս երեսին, պէտք է, կատարվին։ Սեղով մեկնութիւնը, որնոր բոլորովին համաձայն էր երազի ամէն մանրամասն հանգամանքներին, Նաբուգոդոնոսոր վեր ընկաւ Աստուծոյ առջև, աղաղակելով. «Ճշմարտիւ բաց՝ի յաւիտենական, Ամենազօր Աստուծմէ, ոչ ոք չէր կարող յայտնել այդպիսի երևելի գաղտնիք»։ Նաբուքոդոնոսոր թանգագին ընծաներ տուաց Դանիէլին և բարձրացրեց նրան իր թագաւորութեան առաջին աստիճանի պաշտօնատարների կարգը։ Դանիէլ խնդրեց իր բարեկամների՝ Անանիայի, Ազարիայի և Միսայէլի մասին և նրանց յանձնվեցաւ Բաբելոնի երկրի գործերի կառավարութիւնը։ Դանիէլ մարգարէն, պալատում թագաւորի սիրելին լինելով, միջոց ունեցաւ շատ բարեգործութիւններ անելու իր հայրենակից Հրէաներին։

Նաբուքոդոնոսոր տեսաւ ուրիշ երազ էլ և երբ հրամայեց մեկնել այն, Դանիէլ յայտնեց նրան, որ Աստուած կամենում է կատարել նորա հպարտութիւնը և թէ նա մի քանի ժամանակ կ՝զրկվի խելքից և աթոռից կ՝ընկնի, մարդոց հասարակութիւնից կ՝հեռանայ, կ՝ապրի թափառելով անապատներում և վայրենի գազանների պէս կերակրվելով արօտով, մինչև այն ժամանակ, երբ կ՝հասկանայ, որ մի է Ամենազօր Աստուածը և որ նա միայն տալիս է իշխանութիւն և թագաւորութիւն, ում կամենում է։ Ամէն դուշակածը կատարվեցաւ։ Նաբուքոդոնոսոր իր հպարտութեան և փառասիրութեան համար զրկվեցաւ մարդից և վայրենի գազանների հետ

եղաւ նորա բնակութիւնը։

Նոյնպէս մեկնեց Դանիէլ Նաբուքոդոնոսորի որդուն և ժառանգին Բաղդասարին էլ մի հրաշալի երևոյթ։ Բաղդասարը տալիս էր մեծ խնջոյք, ուր հրաւիրեց իր թագաւորութեան ամէն մեծամեծներուն, մօտ հազար հոգիք էին ամէնքը։ Նա հրամայեց բերել սուրբ ամանները, որ նորա հայրը Նաբուքոդոնոսոր առել էր Երուսաղէմի տաճարից։ Այս ամաններով խմում էին գինի, և մեծացուցանում էին ոսկեղէն, արծաթէղէն, պղնձի, երկաթի, քարէղէն և փայտէղէն կռքերուն. բայց ոչ ոք չէր մտածում փառաւորելու Մի, Յաւիտեանի և Ամենազօր Աստուն։ Յանկարծ երևեցաւ մի ձեռք, որ գրում էր ամէնին անծանօթ բառերը՝ Մանէ, Թէկէղ, Փարէս։ Թագաւորը, ապշահար, տեսնում էր վառ լապտերների լուսով գրող ձեռքը և մտածում էին. բոլոր հիւլերը տեսան այն նմանապէս։ Էլի կանչեցին ամէն զօրաւորներ ուն. բայց ոչ ոք չկարողացաւ, ոչ կարդալ անծանօթ գրերը և ոչ մեկնել այն բառերի միտքը, ոչ ոք չկարողացաւ բացի Դանիէլից, որոնք ասաց թէ այն բառերը նշանակում են. չափեցի, կշռեցի, բաժանեցի և թէ Բաղդասարի թագաւորութիւնը կ՚բաժանվի և կ՚տուաձվի Մեդացիներից և Պարսիկներից։ Նոյն գիշերը իսկ Բաղդասարին սպանեցին և նորա թագաւորութիւնը տիրեց Մարաց Դարիհ թագաւորը։

ԳԼՈՒԽ ԶԵ.

## ՇՈՒՇԱՆ

Բաբելոնում բնակում էր մի անուանի և հարուստ Հրէայ, Յոյակիմ անունով, որի կնոջ անունը Շուշան էր։ Յոյակիմի մօտ հաւաքվում էին ամէնից անուանի Հրէաները և նա նոցա մէջ առաջինը համարվում էր։ Մանաւանդ երկուսը Հրէաների դատաւորներից ամէն օր ուցելութիւն էին անում նրան։ Նոքա ծերունի էին և ամէնքի առաջ պատուելի. բայց նոցա սրտերը էին չար և արատաւոր։ Նոքա զրպարտեցին Շուշանին մի մեծ յանցանքում, որի համար Մովսէսի օրէնքով յանցաւորը մահու պէտք է, դատապարտվէր։ Ասենը, ծերունիների վկայութիւնը յարգելով, Շուշանին յանցաւոր հանեց։ Նրան տանում էին արդէն դատապարտութեան տեղը. բայց Աստուած լսեց անմեղի աղօթքը։ Նա լքցրեց իր Հոգւով Դանիէլին, որոր յայտնվեցաւ դատաւորների առջև և պահանջեց, որ նոքա նորից քննեն Շուշանի գործը։

Դատաւորները, դատապրտածը և զրպարտիչները դարձան դատարանը։ Դանիէլ հրամայեց զրպարտիչներուն զանազան սենեակներ բաժանել և հարցնել նրանց մէկ մէկ։ Իրենց պատասխաններում անտարբեր ծերունիները հակառակաբանեցին միմեանց։ Այն ժամանակ ամէնքը տեսան Շուշանի անմեղութիւնը և փառաւորում էին Աստծուն, որ փրկում է իր վերայ յոյս դնողներուն։ Երկու զրպարտիչներն էլ ատացան իրենց արժանի հատուցումն. նոքա մահու դատապարտվեցան, որ պատրաստում էին անմեղ Շուշանին։

## ԳԼՈՒԽ ՂԶ.

Բաբելոնի բազմութիւնների մէջ կանգնած էր Բէլայ կուռքը, որոնք Բաբելոնում առաջին աստուածն էր համարվում։ Նրան բերում էին ամէն օր զոհ քառասուն ոչխար, տասներկու արջուռ նաշիհ և վեց մաք գինի։ Թագաւորը ինքը ամէն օր գնում էր տաճար կռքին երկրպագութիւն տալու։ Ամէնքը հաւատում էին, որ Բէլը կենդանի էակ է և ուտում է բոլոր իրեն բերած զոհերը, ամէնքը աղօթք էին անում նրան, ամէնքը պաշտում էին նրան — ամէնքը բաց՝ի Դանիէլից և ուրիշ աստուածապաշտ Հրէաներից։ Միանգամ թագաւորը հարցրեց Դանիէլից. «Ինչո՞ւ դու չես ուզում երկրպագութիւն տալ Բէլին»։ «Այն պատճառով», պատասխանեց Դանիէլ, «որ ես չեմ պաշտում կռքեր, որոնք մարդու ձեռքով շինած բաներ են։ Ես երկրպագում եմ Մի ճշմարիտ Աստուծուն, երկրի և երկնքի արարչին, որոնք տիրում է ամէն արարածներին»։— «Միթէ՞ դու կարծում ես, որ Բէլը կենդանի աստուած չէ», հարցրեց թագաւորը. «միթէ՞ չես տեսնում, ինչ քան շատ ուտում է նա և խմում ամէն օր»։— «Թագաւո՛ր մի մոլորվիր. Բէ՛լը արձան է, մէջից հողէ է և դրսից պղնձէ. նա երբէք ոչ կերել է և ոչ խմել»։ Թագաւորը, չափացաւ և հրամայեց կանչել Բէ՛լ ամէն քուրմերին, որոնց թիւը հօթանասուն էր, չհամարելով կանանց և երեխաներց։ Նա ասաց նրանց. «Եթէ չէք ասել ինձ, ով է ուտում զոհը, որ ամէն օր բերվում է Բելին, ամէնքդ մահի կ՝արժանանաք. բայց եթէ դուք կ՝ապացուցանէք, որ ինքը Բելն է ուտում, ես կ՝հրամայեմ Դանիէլին սը-

պանել, որովհետև նա հայհոյեց մեր աստծուն։ Դանիէլ պատասխանեց. «Թագաւոր, թող լինի քո ցանկութիւնը։

Թագաւորը մտաւ բաղնիք Դանիէլի հետ միասին, քուրմերը ասացին. «Թագաւոր, մենք ամէնքս կ'երթանք այստեղից. դիր քեզ կերակուր և գինի, յետոյ փակիր դուռը և կնքիր քո կնքովդ և եթէ եղուց առաւօտը պատրաստած կերակուրդ անվնաս մնացած կը լինի, թող մեզ սպանեն. բայց եթէ կ'գտնես, որ բէլը կերակիր է նրան, այն ժամանակ, պէտք է, սպանվի Դանիէլը որ զրպարտում է մեզ»։ Քուրմերը դուրս գնացին և Թագաւորը քեզի բերած կերակուրները սեղանի վերան։ Իսկ Դանիէլ այս միջոցին հրամայեց իր ծառաներին բերել մոխիր և ցանել այն, Թագաւորի ներկայութեան ժամանակ, տաճարի բոլոր յատակի վերայ։ Յետոյ, տաճարից դուրս գալով, Թագաւորը փակեց դուռը և կնքեց իր մատանիի կնքովը։ Գիշերի մէջ քուրմերը, իրենց կանանց և որդոց հետ միասին, մտան տաճարը և վեր առան ամէնը, ինչ որ Թագաւորը դրել էր բէլի կռքի առջև։

Միւս օր առաւօտը վաղ Թագաւորը Դանիէլին հետ եկաւ տաճարի դրան մօտ։ «Դանիէ՛լ ասաց Թագաւորը, տես լաւ. ո՞ղջ է կնիքը»։ «Այո՛. Թագաւո՛ր», ասաց Դանիէլը «ողջ է կնիքը»։ Դուռը բաց անելով Թագաւորը նայեցաւ զոհի սեղանին և աղաղակեց. «ո՞վ բէլ, մեծ ես դու։ Այստեղ ոչ մի խաբերայութիւն չէր կարող լինել»։ Դանիէլ կանչեցրեց Թագաւորին, որ նա չմտնէ տաճար, որ նոր հետքեր չթողնէ փուած մոխրի վերայ։ «Թագաւո՛ր, նայիր տաճարի յատակին, ա-

ասց Դանիէլ. չէ՞ս տեսնում արդեօք ոչ մի հեռք »։—«Ես տեսնում եմ, պատասխանեց թագաւորը, մարդոց, կանանց և երեխանց ոտների հետքեր։ Այս հետքերը թողել էին քուրմերը, նոցա կանայք և երեխաները։ Որչափ խորամանկ էր խաբեբայութիւնը, բայց էլի բացվեցաւ։ Գտան գաղտնի դուռը, որով մտնում էին քուրմերը իրենց ընտանիքներով, որ ուտեն գիշերով ամէն բան, ինչ որ կռքին պոհ էին բերում։ Թագաւորը հրամայեց բոլոր քուրմերուն սպանել իբրև չար խաբեբաներու, իսկ կուռքը տուաց Դանիէլին, որնոր քանդեց նը-բան էլ, նորա տաճարն էլ։

ԳԼՈՒԽ ՂԷ։

## ԴԱՆԻԷԼԸ ԱՌԻՒԾՆԵՐԻ ՓՈՍՈՒՄ

Այն մարդիկ, որոնք Հաւատի առուծատուր ուսումն չունին, ընդունակ են ամէն մոլորութեանց մէջ ընկնելու։ Բաբելոնում կար մի մեծ օձ, որին ժողովուրդը պաշտում էր։ Սխանգամ թագաւորը, ասաց Դանիէլին. «այս Աստուծոյ վերայ չես ասիլ, զիտեմ թէ կենդանի չէ, դու տեսնում ես ինքդ, ինչպէս նա ուտում է և խմում է, ուրեմն երկրպագիր զրան »։ Դանիէլ պատասխանեց. «ես երկրպագում եմ Տէր Աստուն, Նա միայն է կենդանի Աստուած։ Տո՛ւր ինձ հրաման, արքայ, և կ'սպանեմ այդ կենդանին, որին ժողովուրդը ընդունում է Աստուած, և ես կ'սպանեմ առանց սուր և գաւազան գործածելու։ Թագաւորը հրաման տուաց։ Դանիէլ առաւ ձիւթ, ճարպ և մազ, եփեց ամէնը միասին և դցեց օձի առջև, որնոր կերաւ այս պատրաստած

խառնուածքը և տրտքեցաւ։ «Տեսնում՝ էք, ումն էք պաշտում դուք» ասաց Դանիէլ ժողովրին։

Եւ այս հարցաւը ասրածվեցաւ, ազգը սկսաւ տրտնջել թագաւոր ի վերայ. պատեցին նորա պալատը և գոռում էին. «թագաւորը Հրէայ է դառել. նա քանդեց Բէլին, դատապարտեց նորա քուրմերուն և ապանեց օձին»։ Ապ ռամիներին խումբը մտաւ թագաւորի պալատ ներս և ասում էր թագաւորին, «Տո՛ւր մեզ Դանիէլին կամ՝ թէ չէ, կ'ապանենք քեզ էլ, բոլոր ընտանիքդ էլ»։ Թագաւորը ստիպվեցաւ Դանիէլին նոցա ձեռք մատնել։ Ժողովուրդը գցեց նրան փոսը, ուր կային եօթ ը ընտրեալներ։ Ամէն օր նրանց կերակրում էին, տալով նրանց երկու մարդու մարմին և երկու գառ. բայց Դանիէլին գցելից յետոյ վեց օր ոչինչ կերակուր չտուին, որ սովից շուտ պատառեն նրան։

Ասուած այսուհետև էլ չթողեց Դանիէլին։ Առիւծները ոչինչ վնաս չտուին նրան։ Բայց Դանիէլ ինքը ըղգում էր սով։ Այս ժամանակ բնակում էր Հրէ, ասատանում Ամբակում մարգարէն։ Նա եփեց կերակուր իր հընձողների համար. կողովի մէջ դրեց հաց և պատրաստած կերակուրի հետ միասին տարաւ արտը իր մշակների մօտ։ Ասուծոյ հրեշտակը երևեցաւ Ամբակումին ճանապարհում և ասաց. «տար այդ ճաշը Բաբելոն Դանիէլին, որ առիւծների փոսի մէջ է։» Տէ՛ր, պատասխանեց Ամբակում, ես երբէք Բաբելոնում չեմ եղած և չը գիտեմ էլ, ուր է առիւծների փոսը»։ Այն ժամանակ հրեշտակը բարձրացրեց նրան, տարաւ, ինչպէս մրրիկ, օդի մէջովը և դրեց Բաբելոնում առիւծների փոսի մօտը։

Ամբակում կանչեց. «Դանիէլ, ծառայ Ասուծոյ ա՛ռ

այս կերակուրը, որ Աստուած խրկում է քեզ։ Աստուած իմ», ասաց Դանիէլ. «Դու շնորհաւոր ինձ։ Դու երբէք չես թողնում նրան, ով որ քեզ սիրում է»։ Նա վեր կացաւ և կուշտ կերաւ, իսկ հրեշտակը տարաւ Ամբակումին իր առաջման տեղը։

Եօթներորդ օրը թագաւորը գնաց առիւծների փոսի մօտ, որ լաց լինի Դանիէլի մահը, որովհետև նրան մեռած էր կարծում. բայց Դանիէլին անվնաս և առողջ տեսնելով բարձր ձայնով աղաղակեց. «ով Աստուած, Աստուած Դանիէլի. Դու մեծ ես և չկայ ուրիշ Աստուած բացի քեզնից միայն։ Նա հրամայեց հանել Դանիէլին առիւծների փոսից և դցել այնտեղ նրանց, որոնք նրան դցել էին։ Մի րոպէում թագաւորի աչքի առաջին առիւծները պատառեցին նրանց։ Թագաւորը ասաց. «իմ ամէն հպատակներս, պէտք է երկրպագութիւն տան Դանիէլի Աստծուն։ Նա է գործում հրաշքներ. Նա փրկեց Դանիէլին առիւծներից»։

ԳԼՈՒԽ ՂԹ.

## ԵՍԹԵՐ

Եսթերի ծնողները գերի Հրէաներից էին և բնակում էին Պարսկաստանում, ուր այն ժամանակ թագաւորում էր Աքսորաշէս, որոնք մականուանվում էր երկայնաբազուկ։ Նորա մեռան և Եսթեր մնաց որբ օտար երկրում և օտարների մէջ։ Բայց Աստուած, ամէն որբերի Հայրը, խրկեց նրան պաշտպան, ոչ էր նորա ազգական Մուրթքէոսը, նորա հօրեղբօր որդին։ Սա էր առաքինի, աստուածավէր մարդ և կրթում էր Եսթեր-

բին ճշմարիտ Աստուծոյ հաւատով։ Եսթերը զեղեցիկ էր շատ, բարի և խելօք։

Արտաշէս հզօր թագաւոր էր և սիրում էր հարիւր քսան գաւառների։ Միանգամ նա իր Սխտա մայրաքաղաքում մեծ խնջոյք կազմեց և հրաւիրեց իր թագաւորութեան ամէն մեծամեծներին և պաշտօնատարներին։ Խնջոյքի տեղը կարգած էր թագաւորի տան դահլիճում։ Սիւների վերայ կախած էին գոյնզգոյն դորձածներ, որոնք պաշտպանում էին հիւրերին արեգակի ճառագայթներից։ Սեղանը զարդարած էր ոսկի ամանեղերով և խմիչքները բաժանում էին ոսկի բաժակներով։ Այս հացկերոյթը տևեց եօթն օր։ Եօթներորդ օր թագաւորը սովորականից աւելի ուրախ էր։ մեծ բազմութիւն հաւաքեցաւ և թագաւորը նրանց յարդելով կամենում էր, որ ճաշի ժամանակ իր կինը՝ Սամանէն, բոլոր իր զարդերով զարդարուած, յայտնվի իր բաղդաւոր հպատակների մէջ։ Բայց հպարտ Սամանէն չկամեցաւ կատարել իր ամուսնի կամքը։ Թագաւորը բարկացաւ, թողեց Սամանէին և միտը դրեց ընտրել իրեն ուրիշ աւելի բարի և խոնարհ կին։

Ընտրութիւնը ընկաւ Եսթերին։ Պարկեշտ Եսթերը ամենևին չէր կարծում, որ այս բաղդաւորութիւնը իրեն կ'վիճակվէր։ Նա զարդերով չէր պարարում և իր հանդուրժեամբ չէր էլ խմանում, որ ինքը ամենից գեղեցիկն է։ Թագաւորը նրան նախապատուելի համարելով ամէն ուրիշ աղջիկներից, դրեց նրա գլխին թագաւորական թագ։

Եսթերի պատուի համար թագաւորը կազմեց խրախճոյք, ուր հրաւիրեց ամէն իշխանների և մեծա-

ձեռներումն։ Բոլոր ազգին մի տարի հարկի թողութիւն արաւ և ամէնին պարզև էր տալիս աշքունի առատաձեռնութեամբ, իր ուրախութիւնը յայտնելու համար։ Նա ուզում էր, որ իր բոլոր թագաւորութիւնն էլ մասնակից լինի այս ուրախութեանը։ Բայց Եսթեր ամենևին չհպարտացաւ իր նոր վիճակում։ Թագուհի լինելով, նա էլի չէր դադարում պատուել և սիրել Մուրթքէոսին, ինչպէս առաջ, երբ բնակում էր նորա տանը, իրրև մի պարկեշտ որբ։

## ԳԼՈՒԽ ՂԺ.

## ՄՈՒՐԹՔԷՈՍ ԵՒ ՀԱՄԱՆ

Մուրթքէոսը խիստ յաճախ գալիս էր թագաւորի պալատի դիմաց մօտ, որ տեսնէ, թէ ի՞նչ է պատահում Եսթերին։ Մի անգամ նա լսեց ինչպէս պալատականներից երկուսը խօսք են կապում թագաւորին սպանելու համար։ Մուրթքէոս, իրրև հաւատարիմ հպատակ, կամեցաւ զգուշացնել իր թագաւորին. նա յայտնեց այս թագուհիին, որնոր իր կողմից ասաց թագաւորին։ Գործի վերայ քննութիւն եղաւ, ամբաստանութիւնը արդարացաւ. երկու գաւազանները էլ կախվեցան, իսկ անց.քը գրվեցաւ արքունի յիշատակաց գրքի մէջ։

Սրտաշէսի առաջին նախարարը էր Համան։ Թագաւորը նրան իր թագաւորութեան ամէն իշխանութիւնից վեր բարձրացրեց. ամէնքը, պէտք է, ծունր իջնէին նորա առաջև. բայց Մուրթքէոս չէր կամենում Համանի առաջին ծունր իջնել, ուստի սա շատ տրտում նրան։ Համանը գոհ չէր լինում միայն նրանից վրէժ հանելով։ Գիտենալով, որ Մուրթքէոս Հրէայ է, միտը դրեց Համան,

Արտաշէսի տէրութեան մէջ եղած բոլոր Հրէաներուն ջնջել։ Նա խօսում էր թագաւորի առաջին նոցա վերայ, իբրև մի ազգի վերայ, որնոր միշտ պատրաստ է ապստամբութիւն անելու, վերջապէս հանեց հրովարտակ, թագաւորի ստորագրութեամբ, ամէն Հրէաներուն կոտորելու համար։ Զար ուրախութեամբ լցած, Համանն շտապեց թագաւորի հրամանը հրատարակելու։ Զար ամսի տասնչորսը նշանակած էր Արտաշէսի թագաւորութեան մէջ եղած բոլոր Հրէաներուն ջնջելու օր։

Մուրթքէոս սարսափեցաւ, երբ լսեց այսպիսի տմարդի հրամանը։ Նա ջերմեռանդութեամբ աղօթք էր անում Աստուծոյ, որ փրկէ իր թշուառ ազգին։ Աստուծոյ օգնութեան վերայ յուսալով, նա մտածում էր Հրէաներուն փրկելու միջոցների վերայ։ Այս մտածմանց մէջ նա խրկեց Եսթերին թագաւորի հրամանից մի օրինակ և խնդրեց, որ թագաւորից մի ողորմութիւն հանէ։ Եսթեր հրամայեց իր հօրեղբօր որդուն ասել, որ բոլոր տէրութեան մէջ յայտնի է այն օրէնքը, որ հրամայում է, ամէնուն, ով որ առանց կանչելու կ՚համարձակվի թագաւորի մօտ մտնել, պաշնալ, ով էլ լինի, թէ մարդ և թէ կին։ «Ես չեմ համարձակվում», ասաց Եսթեր, «գնալ թագաւորի մօտ, ահա արդէն երեսուն օր է, նա ինձ չէ հարցրել։ Մուրթքէոս հրամայեց ասել նրան. «մի կարծիր, որ քեզ կ՚խնայեն Հրէաների ընդհանուր կոտորածի ժամանակ, այն պատճառով միայն, որ դու թագաւորի տանն ես. չէ, չեն խնայիլ, դու էլ կ՚կորչես քո հայրենակիցներիդ հետ, քո ազգիդ հետ միասին։ Ի՞նչ կարծենք, արդեօք Աստուած քեզ այս բարձր աստիճանը չքարձրացրէց, որ դու լինես գործիք Հրէից

ազգի փրկութեան »։

Եսթերի սիրտը շարժեցաւ Մուրթքէոսի խօսքերից, հրամայեց ներսն առել. « գնա՛, ժողովիր քեզ մօտ Սուսա քաղաքում գտնուող բոլոր Հրէաներին, պահք պահեցէք երեք օր և երեք գիշեր և ամէնքդ միասին աղօթք արէք ինձ համար։ Ես իմ աղախիններով նոյնապէս երեք օր կ'անցկացնեմ պահով և աղօթքով։ յետոյ, չը-նայելով աչքուն՝ արգելման, կ'երթամ ներս մօտ անուշը, եթէ մինչև մահ անգամ առանալու լինիմ այս գործի համար։»

ԳԼՈՒԽ Ճ.

## ԵՍԹԵՐԸ ՅԱՅՏՆՎՈՒՄ Է ԹԱԳԱՒՈՐԻ ԱՌԱՋԸ

Ոչինչ մեծ բան չպէտք է ձեռք խփել առանց Աստուծմէ օգնութիւն խնդրելու։ Եսթեր գիտէր այս և աղօթք էր անում ասելով. « Աստուած, Տէր տիեզերաց. ես ամէնից թոյլաց եմ. չունեմ ոչ պաշտպան և ոչ հովանաւոր, օգնիր ինձ. օգնիր քո ազգիդ, նորա թշուառութեան օրը. ողորմիր մեզ. տուր ինձ համարձակութիւն և դիր բերանս այնպիսի խօսքեր, որոնք կարողանան ազդել թագաւորի սրտին վերայ։ Ո՛հ Ամենազէտ Տէր. դու կարդում ես իմ սրտումս եղածը, դու գիտես, որ ոչ թագաւորական թագը, ոչ էլ ինձ պատող մեծութեան փառքը չեն ուրախացնում իմ սիրտը. դու գիտես, որ իմ բոլոր մխիթարութիւնս, իմ բոլոր ուրախութիւններս դու միայն էիր։ Ո՛վ Տէր, Աստուած Աբրահամա՛, լսիր քո ծառաներիդ աղօթքը, որոնք իրենց բոլոր յոյսը քեզ վերայ են դրել։ փրկիր նը-

բանց ապանիշների ձեռքից և ազատիր ինձ իմ վտան-
գից »։

Երբ ապօթքի երեք օրերը վերջացան, Եսթեր հա-
գաւ իր ճոխ թագաւորական զարդը և գնաց թագա-
ւորի մօտ, երկու ապախիններով միասին։ Նա թեք
ընկած էր մէկի վերայ. իսկ միւսը բարձրացրած ունէր
նորա երկար ծխամէջի քղանցը։ Շատ սենեակներ անց-
նելից յետոյ մտաւ նա վերջապէս այն սենեակը, ուր էր
թագաւորը։ Նա նստած էր գահի վերայ. նորա շորը
փայլում էր ոսկով և թանգագին քարերով։ Արտաշէս նա-
յեցաւ Եսթերին — և բարկութիւնը փայլեցաւ նորա երե-
սին։ Թագուհին զեղջեցաւ և անզգայ ընկաւ մի ապախնի
ձեռքի վերայ։ Բայց Աստուած զսպեց թագաւորի բար-
կութիւնը. նա գահից լիջաւ, ինքը բռնած ունէր ան-
զգայ Եսթերին, մինչև որ սա խելքի եկաւ և վերջա-
պէս քաղցրութեամբ ասաց նրան. « Եսթեր, դու չես
մեռնիլ. դու բացառութիւն կ'լինես հասարակաց օրէն-
քից, որոնք պատրաստուած է մեռնել ամէնին, ով որ
առանց իմ հրամանին կ'համարձակի իմ առջևս յայտ-
նուիլ »։ Տեսնելով, որ նա բոլորովին կազդուրեցաւ, Ար-
տաշէս շարունակեց. « Թագուհի, ի՞նչ ես կամենում
դու։ Խնդրիր համարձակ. ես պատրաստ եմ քեզ տալ
մինչև թագաւորութեանս կէսը անգամ։ Եսթեր խնդ-
րեց, որ թագաւորը Համանի հետ միասին գայ իր մօտ
ճաշի։ « Այն ժամանակ, ասաց նա, ես կ'յայտնեմ քեզ,
թագաւոր, իմ խնդիրքս »։ Թագաւորը հրամայեց ասել
Համանին, որ թագուհիի կամքը անպատճառ կատարվի։

ԳԼՈՒԽ ՃԺ.

## ՄՈՒՐԹՎԷՈՍԻ ՑԱՂԹԱՆԱԿԸ

Թագաւորը Համանի հետ միասին ճաշ կերաւ Եսթերի մօտը։ Մէկ օր էլի խնդրեց նա թագաւորին իր մօտ ճաշի գալ Համանի հետ և խոստացաւ երրորդ օրը յայտնել իր խնդիրքը։ Համան տուն դնալիս, գոհ լինելով այն պատուովը, որ իրեն տուին, շատ ուրախ էր։ Բայց չար մարդու պտի ուրախութիւնը երկարաւոր չէ լինում։ Նա տեսաւ Մուրթվէոսին, որ նստած էր թագաւորի պալատի դրան մօտ, Մուրթվէոսը նորա առաջին չվեր կացաւ։ Այս միայն բաւական էր, Համանի բոլոր ուրախութիւնը թռուցուցանելու, նորա ուրախութիւնը այն բոպէին կորաւ։ Նա, խիստ նեղացած, նկաւ տուն և իր բարեկամաց ու կնոջ առաջին համարում էր ամէն շնորհքները, որ ինքը ստացել էր։ «Նա, ասում էր նա, բարձրացաց թագաւորի ձեռքով նորա թագաւորութեան ամէն իշխաններից և նախարարներից վերանում անելու հարստութիւն։ Թագուհին բացի ինձնից ոչ ոքին չկանչեց ճաշի իր մօտ թագաւորին հետ միասին։ Նա եղուցեան ճաշին էլ կանչեց ինձ։ Բայց, շատ բանակից նա, «այս ամէնը չէ ուրախացնում ինձ. երբ տեսնում եմ Մուրթվէոսին թագաւորի պալատում»։

Կինը և բարեկամները ասում էին նրան. «Հրամայիր կանդնել կախաղան և եղուց խակ խնդրիր թագաւորից հրաման Մուրթվէոսին կախելու։ Այն ժամանակ քո ուրախութիւնդ թագաւորի ճաշի ժամին ոչինչ բանով չի խանգարվիլ»։ Այս խորհուրդը շատ

հաճելի թուեցաւ Համանին։ Նա այն բոլոր հրամայեց կանգնել իր բակ եւ բարձր կախաղան։

Աղաքինի Մուրթազան ամենեւին չէր կասկածում, որ իրեն սպասում է այսպիսի մերձակայ մահ։ բայց Աստուած պաշտպանեց Մուրթազային։ Գիշերը թագաւորը չկարողացաւ քնել եւ որ ցրուէ իր անքնութիւնից պատճառված ձանձրութիւնը, հրամայեց իր թագաւորութեան ժամանակագիրքը կարդալ։ Տէր Աստուած, ո՞վ չէ հաւատում յարգութեամբ գոնեխութեան։— Պատահեցաւ, որ թագաւորի առաջին կարդացին երկու նախարարների դաւաճանութեան վերայ նորա կեանքի դէմ, որ բաց արաւ Մուրթազա։ «Ինչո՞վ է վարձատրված Մուրթազայի հաւատարմութիւնը», հարցրեց թագաւորը։ «Ոչի՞չով, թագաւո՛ր», պատասխանեց կարդացողը։ Թագաւորը ամաչեցաւ այս պատասխանից եւ միտը դրեց մեւս օրն իսկ վարձատրել Մուրթազային։

«Տե՛ս, ասաց թագաւորը կարդացողին, «չկա՞յ արդեօք մի մարդ մեւս ամենակում»։— «Այնտեղ կանգնած է Համանը», պատասխանեց կարդացողը։ «Կանչի՛ր նրան այստեղ», ասաց թագաւորը։ Համան մտաւ թագաւորի մօտ։ Նա եւ՛ել էր առաւօտը վաղ, որ խնդրէ հրաման թագաւորից Մուրթազային կախելու համար։ Թագաւորը հարցրեց Համանին։ «Ի՞նչ պէտք է անեմ այն մարդուն, որին կամենում եմ տալ ամենամեծ պատիւը։ Փառասէր եւ մեծամիտ Համանը կարծեց, թէ թագաւորը կամենում է իրեն տալ այս պատիւը եւ այն պատճառով պատասխանեց, նա, ում թագաւորը կամենում է տալ ամենամեծ պատիւը,

պէտք է հագնել այն շորը, որ գործածում է թագաւորը, նաեւ այն ձիու վերայ, որի վերայ հեծնում է ինքը թագաւորը, թագաւորի նախարարներից առաջինը թող բռնէ ձին եւ այսպէս անցնելով բոլոր քաղաքի միջով թող գոչէ, «այսպէս յարգվում է, ով որ հաւատարմութեամբ ծառայում է թագաւորին»: «Բարի է», ասաց թագաւորը, «գնա՛ ուրեմն, պատրաստիր ամէնը, ինչպէս դու ասացիր: Դու ինքդ իբրեւ առաջին նախարար կ'մտնես ածես բոլոր քաղաքի միջով Մուրթքէոսին, այն Հրէային, որնոր միշտ նստում է իմ արքունիքիս դրան մօտ, բայց միայն սո՛ւս, ոչինչ չմոռանաս»: Համան գնաց. նա, պէտք է, հագցնէր Մուրթքէոսին թագաւորի շորերը, նստեցնէր նրան ձիս զարդարած արքունի ձիու վերայ, պտտեցնէր այս ձին Սիսիս քաղաքի ամէն փողոցներում եւ աղաղակէր. «ահա՛ այսպէս յարգվում է նա, ով որ հաւատարմութեամբ ծառայում է թագաւորին»: Պալատի դրան մօտ Մուրթքէոս իջաւ ձիից, հանեց իր զարդերը եւ նստաւ իր սովորական տեղում: Իսկ Համան, զլուխը կորացրած, նեղութեամբ եւ ամօթով դարձաւ տուն:

ԳԼՈՒԽ ՃԲ.

## ՀԱՄԱՆԻ ՄԱՀԸ

Հազիւ կարողացաւ Համան պատմել իր կնոջ եւ բարեկամներին ամէն պատահածները, եկան թագաւորից մարդիկ, որ կանչեցին նրան ճաշի թագուհիի մօտ: Նա գնաց նորա մօտ թագաւորի հետ միասին: Թագաւորը ճաշի ժամանակ ուրախ էր խիստ եւ ասաց. «Եսթեր, այժմ ասա՛ ինձ քո խնդիրքդ: Եւ կ'կատարեմ այն, եթէ, մինչեւ

իմ թագաւորութեան կէսն էլ անգամ խնդրեմ։։ Եսթեր պատասխանեց. «թագաւոր, եթէ գտայ շնորհք քո առաջիդ, խնդրում եմ քեզ, ընծայիր կեանք ինձ և իմ ազգիս. որովհետև մենք ամէնքս պատապարտված ենք ՝ի մահ. մեզ ամէնուս կամենում են ոչընչացնել, ջնջել։ գոնէ, եթէ մեզ իբրև ստրուկներու ծախէին, մեր թշուառութիւնը էլի տանելի կ՝լինի, այն ժամանակ ես լռութեամբ կ՝թափէի ստրուքս. բայց մեր թշնամին խառասիրա է և անոլորելի, նա վճռեց մեզ ամէնուս զրկել կեանքից, ով թագաւոր. նա արժանի չէ քո պալատիդ»։ Ո՞վ է դա, այդ յանդուգնը, ազգակից Արտաշէս։ «Այդ Համանն է». պատասխանեց Եսթեր. «նա մեր ամենաչար թշնամին է։։

Այժմ յայտնի եղաւ, որ Եսթեր պատկանում էր այն ազգին, որին Համան դատապարտից ջնջել։ Համան կանգնած էր, ամբարտաւան, չհամարձակվելով բարձրացնել աչքը ոչ թագաւորին և ոչ թագուհին վերայ։ Արտաշէս զայրացած դուրս գնաց պարտէզ, Համան ընկաւ Եսթերի ոտները, խնդրում էր, որ խնայէ իր կեանքը և վախից այնքան մոռացաւ թագուհին պատշաճաւոր պատիւը, որ մինչև համարձակվեցաւ փաթաթվել նորա ծնկներին։ Այս բոլոր թագաւորը դարձաւ պարտեզից, տեսնելով Համանին Եսթերի ծունկները բռնած, առաւել բարկացաւ։ Թագաւորի տուած նշանով կապեցին Համանի աչքերը, դատապարտեալ յանցաւորի պէս և դուրս հանեցին թագուհիի սենեակներից։ Արտաշէսի ծառաներից մէկը ասաց. «Համան իմ բակում կանգնել տուեց կախաղան յիսուն կանգուն բարձրութեամբ այն Հրէային համար, որոնք փրկեց թագա-

տարի կեանքը։ «Թալ նոյն կախաղանին վերայ կախեն իրեն Համանին» ասաց թագաւորը։

Համան կախուեցաւ այն կախաղանի վերայ, որ պատրաստել էր Մուրթքէոսի համար։ իսկ Մուրթքէոս Արտաշէսի պալատումն բռնեց Համանի տեղը։ Թագաւորը Ներան կարգեց պահապան իր հինգի և յեռ աւաւ իր տմարդի հրամանը, Հրէից ազգը ջնջելու մասին։ Հրէաները այս դիպուածին համար կարգեցին տօն, որ մինչև այժմ էլ կատարում են ամէն տարի։

## ԳԼՈՒԽ ՃԺ.

## ԳԱՐՁԸ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ

## ՏԱՃԱՐԻ ՆՈՐՈԳՈՒՄՆ

Աստուած դեռ շատ ժամանակ առաջ յայտնել էր մարգարէների բերանով իր ընտրեալ ազգին ոչ միայն բաբելոնական գերութիւնը, այլ և նորա վերջանալու ժամանակն էլ։ Հրէաները եօթանասուն տարի շարչարուեցան գերութեան մէջ։

Կիւրոս, Պարսից թագաւորը, նուաճեց Բաբելոնի և Ասորեստանի թագաւորութիւնները, ուր գերի էին խրատուած բոլոր ցեղերը։ Իմանալով, որ Եբրայեցւոց աստուծ գլխերում շատ ժամանակ առաջ արդէն իր անունն էլ յիշած է, և նշանակած է ինքը Հրէաների ազատիչ գերութիւնից, Երուսաղէմի և Աստուծոյ տաճարի նորոգիչ լինելը, Կիւրոս, առաջին տարին իր թագաւորութեան Բաբելոնի վերայ, հրամայեց հրատարակել յետագայ հրամանը։ «Այսպէս է ասում Կիւրոսը, Պարսից թագաւորը։ «Ամենաբարձրեալ Աստուածը՝

երկնքի և երկրի Տէրը, որ իմ ձեռս տուեց երկրիս ամէն թագաւորութիւնները, հրամայեց ինձ Իրեն տաճար կանգնել Երուսաղէմում։ Ով որ իմ հպատակներից պատկանում է Իսրայէլացւոց ազգին, թող երթայ Երուսաղէմ և կանգնէ Իսրայէլի Աստուծուն տաճար և Աստուած ինքը ուղեկից կ'լինի նրան»։

Ազգի առաջնորդները, քահանաները, ղևտացիները և ժողովրդեան մեծ բազմութիւն հաւաքվեցան ճանապարհ ընկնելու։ Ճանապարհ ընկնողների գլխաւոր առաջնորդը էր Սուրբ Դաւթի ցեղից Զորաբաբէլ։ Բացի կամաւոր նուէրներից տաճարի շինութեան համար, նրանց տուին շատ արծաթ և ոսկի, նոյնպէս ամէն պէտք ճանապարհի համար։ Եւ բոլոր հրամայեց յետ տալ ամէն ոսկի և արծաթի սկիհները, որ Նաբուզոդոնոսոր առել էր Երուսաղէմի տաճարից։ Այսպէս հրէաները դարձան կրկին Իսրայէլացւոց երկիր, առաջվան իրենց հայրերի թողած բնակութիւնները և հաւաքվեցան Երուսաղէմում։ Սկսան տաճարը կանգնել. ամէնից առաջ շինեցին սեղան և զոհ բերին Աստուծոյ։ Քահանաները փող էին ածում և աղաղակում էին. «Գովեցէք Աստուծուն, նա բարի է և նորա ողորմութիւնը մշանջենաւոր»։ Բոլոր ազգը աղաղակում էր մի և նոյն ուրախութեան ձայները և գղջման արտասուքները խառնվում էին միասին։

Սամարիայի և Մերձակայ քաղաքների բնակիչները, կռապաշտ ազգեր, որոնք բնակել էին աքսորված Իսրայէլացիների տներում և ունէին մի քանի թերի հասկացողութիւն ճշմարիտ Աստուծոյ վերայ, լսելով Երուսաղէմի տաճարի նորոգվելը, նկատեցին Իսրայէլացւոց առաջնորդների

մօտ և ասացին. «մենք էլ կամենում ենք օգնել ձեզ տաճարի շինութեան մէջ, որովհետև մենք պաշտում ենք ձեր Աստծուն և նրան զոհ ենք բերում»: Բայց նրանց պատասխանեցին. «մեզ պատե՛հ չէ այլազգիներին թողնել տաճար շինելու. մենք միտակ կ՚կանգնենք Աստուծոյ տունը»: Սամարացիք, զայրացած այսպիսի բացասացութեան վերայ, ամէն կերպով աշխատում էին արգելք լինել տաճարի շինութեանը, բայց ամէնը ՝ի զուր ե�, տաճարը շինվեցաւ: Յետոյ Սամարացիքը շինեցին իրենց համար Սիւքեմի մօտ Գարիզին լերան վերայ տաճար, բայց Հրէաները քանդեցին այն: Այս պատճառով ծագեցաւ այս երկու ազգերի մէջ մշանջենաւոր պատերազմ:

ԳԼՈՒԽ ՃԴ.

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՆՈՐՈԳՎԻԼԸ

Տաճարի շինութիւնից յետոյ էլ Երուսաղէմ քաղաքը էր գլուխ քարերի շեղջ: Պատերը քանդած էին, քաղաքի դռները այրած: Հրէաները (անուն հասարակ Իսրայէլի ամէն ցեղերին համար) բնակում էին աղքատութեան մէջ և արհամարհած էին ամէն դրացի ազգերից:

Այս ժամանակներս Շօշ քաղաքում, Պարսից Արտաշէս երկայնաբազուկ թագաւորի դրանը, էր մի առաքինի Իսրայէլացի, Նէեմի անունով: Սա էր թագաւորի տակառապետը: Սորա բարեկամներից մէկը, Անանիա անունով, եկաւ Շօշ իր հայրենիքից, և Նէեմիին տեսութիւն գնալով պատմեց նրան, որ թէև տաճարը

կանգնած է, բայց Երուսաղէմ քաղաքը էլի դեռ ողբալի դրութեան մէջ է. նորա պատերը քանդած են, դռները այրած, մարդիկը անառուն, ժողովուրդը ապ.քաղ, արհամարհած ամէն դրացիներից։ Նէեմին չէր համարձակվում թագաւորին խնդրել, որ օգնութիւն տայ իր թշուառ եղբայրներին, այլ լաց էր լինում և աղօթքով դարձաւ դէպի Աստուած և Աստուած լսեց նորա աղօթքը։

Մի անգամ ճաշի ժամանակ նա սովորութեամբ տաս էս էր բաժակը խմիչքով թագաւորին, որնոր, նայելով նորա երեսին, հարցրեց. «Քեզ ի՞նչ է պատահել Նէեմի, դու շատ տխուր ես։ Ո՛հ թագաւո՛ր, պատասխանեց Նէեմին. «կարելի՞ է արդեօք, որ ես տխուր չլինեմ, երբ քաղաքը, ուր իմ հայրերս բնակում էին, ամայացած է, նորա պատերը քանդած են և նորա դռները մոխիր դարձած»։— «Ի՞նչ ես ուզում խնդրում դու ինձնից», հարցրեց թագաւորը։ Նէեմին մտքումը ջերմեռանդութեամբ աղօթք արաւ Աստուծոյ և պատասխանեց. «թագաւո՛ր, եթէ քո առջևդ գտայ շնորհք, խրկի՛ր ինձ Երուսաղէմ և հրամայ՛ ուր ինձ այն նորոգելու»։— Թագաւորը և նորա մօտ նստած թագուհին հարցրեցին երկուսն էլ. «երկա՞ր արդեօք կ'տևէ քո ճանապարհորդութիւնդ։ Ե՞րբ դու էլի յետ կ'դառնաս մեզ մօտ։ Նէեմին նշանակեց իր բացակայութեան և դարձի ժամանակ. թագաւորը համաձայնեցաւ այս ժամադրեալ ժամանակին, քաղցրութեամբ թոյլ նրան և ճանապարհորդութեան ժամանակ նրան պաշտպանելու համար, խրկեց նորա հետ մի գունդ ձիաւորներ էլ։

Երուսաղէմ հասնելից յետոյ, Նէեմին զնեց քա-

ղաքը և ամէն այնտեղ եղած Հրէաներուն հաւաքելով, սկսաւ շինել քաղաքը աշխատութեամբ։ Նա աշխատում էր ազգի հետ հաւասարապէս, քաղաքի շինութեան և աղքատներուն կերակրելու համար, ծախից բոլոր իր ստացուածքը և ամէնին վերայ նայում էր արթնութեամբ։ Սամարացւոց առաջնորդները ծիծաղում էին այս աշխատութենից վերայ, բայց Հրէաները նոցա ծաղը բանի տեղ չէ ինդում և շարունակում էին անխոնջ աշխատել։ Շուտ պատերը բարձրացան մինչև կէսը. այն ժամանակ դրացի ազգերը մտքերը դրին յանկարծ Հրէաների վերայ յարձակել և քանդել նոցա աշխատանքները։ Բայց մի քանի բարեպաշտ Հրէաներ, որոնք բնակում էին այս ազգերի մէջ, յայտնեցին իրենց հայրենակիցներին նոցա միտքը։ Հրէաները գինաւորվեցան և շարունակում էին աշխատել զէնքը ձեռներին։ Թշնամիները այս խմբով չհամարձակվեցան յարձակվել նոցա վերայ, բայց խմբով, որ Նեեմիա է Հրէից ազգի հոլին, նոքա վճռեցին խորամանկութեամբ բերել նրան իրենց մօտ և սպանել։ Սամարացւոց գլխաւոր իշխանը կանչեց նրան իր մօտ խորհուրդի համար, բայց Նեեմիա չգնաց և այսպէսով ազատեցաւ նոցա ամէնչար խորհուրդներից։ Հրէաները յաջողութեամբ վերջացրին Երուսաղէմի շինութիւնը և նորա պատերը, օրհնեցին նորոգած քաղաքը սաղմոսերգութեամբ, թրմբուկի և փողի ձայներով, շնորհակալութեան աղօթքներով, զոհեր բերելով և ուրախութեան աղաղակներ արձակելով։

ԳԼՈՒԽ ՃԵ։

## ԵՂԻԱԶԱՐ

Հրէաները մի քանի ժամանակ բնակում էին Իրենց երկրում հանգստութեամբ և երկրպագում էին ճշմարիտ Աստուծոյ, բայց կամաց կամաց սկսան անցնել նորա պատուիրանքներից և ընկղմել մեղքերի և անօրէնութիւնների մէջ։ Աստուած էլ մատնեց նրանց թշնամիների ձեռքը։ Ամէնից խստասիրտը սոյանից, Ասորց թագաւորը, Անտիոք (Եպիփան) էր։ Նա առաւ Երուսաղէմ, յափշտակեց տաճարի տուրք ակինները և աստուածպաշտութեան համար հարկաւոր ուրիշ բաները, սպանում էր այր մարդոց, կանանց և երեխանց ծախում էր իբրև տրուկներու, տխրում էր ազգին կրոնքերին եկրպագութիւն տալ և ամէնքին հրամայում էր ուտել կռքերին զոհ բերած խոզի միսը – կերակուրը՝ որոնք Մովսէսի օրէնքով արգիլված էր Հրէաներին ուտել։

Եղիազարը, ուսեալ Հրէաներից մէկը, էր պատուելի ծերունի, սպիտակ մազերով և բարի դէմքով։ Նրան բռնութեամբ ստիպում էին ուտել կռքին զոհած խոզի միսը։ բայց նա չէր ընդունում և նախապատերի համարից աւելի մեռնել փառքով, քան թէ վարել անկարգ կեանք։ Եղիազարի փոքրոգի բարեկամներից ոմանք աւում էին նրան, «մենք կ՚բերենք քեզ զոհած մսից, միայն դու ձևացիր, իբրև թէ ուտում ես այն թագաւորի կամքը կատարելու համար, դու կ՚փրկես այսպէս քո կեանքդ։» «Չէ», պատասխանեց Եղիազար, «ես չեմ ուզում այսպիսի գարշելի կեղծաւորութեամբ գնել կե-

անքիս քանի մի օրերը, որ մնում են ինձ այս երկրումս. այդ անվայել է իմ ալիքներիս։ Այսպիսի երեսպաշտութիւնը կ'դայթակղէ մատաղ մարդոց, երբ նոքա կ'իմանան, որ ինձնուն տարեկան Եղիազարը անցել է կռապաշտներին կողմը, այլ կ'անպատուէ իմ ծերութիւնս։ Եւ ինչ ինձ էլ ի՞նչ օգուտ դրանից։ Եթէ ես ազատվեմ էլ մարդոց տանջանքից, Անհնարաբարձրեալի ձեռից չեմ կարող փախչել, թէ կենդանի լինեմ և թէ մեռած։ Ես արիութեամբ կ'երթամ մահի դէմ, կը վարվեմ, ինչպէս վայել է իմ ալիքներիս և օրինակ կը դառնամ երիտասարդներին, թէ ինչպէս պէտք է յոժարութեամբ և քաջութեամբ մեռնել Աստուծոյ սուրբ օրէնքի համար։

Այս ասելով, արդար ծերունին քաջութեամբ գընաց տանջանքը ընդունելու։ Նրան ճանապարհ գցողները դարձրեցին նրան վերայ ցաւիլ, կարծելով, որ միայն հպարտութիւնը սոխակց նրան այսպէս խօսել։ Մինչև 'ի մահը չարչարեցին նրան։ Իր հոգին առնելից առաջ Եղիազարը ասաց. «Ամենազէտ Աստուծոյ յայտնի է, որ ես, ունենալով միջոց փրկութեան, ասում եմ մարմնով չարաչար տանջանքների, բայց հոգով ուրախանում եմ, որ այս ամէնը նորա համար եմ քաշում»։

Այս նորա վերջին խօսքերն էին. նա վախճանեցաւ թողնելով մեզ օրինակ, թէ ինչպէս հաստատութեամբ պէտք է կատարենք մեր պարտաւորութիւնները, որ մեզ վերայ դնում է Հաւատը։

ԳԼՈՒԽ ՃԶ.

## ԵՕԹՆ ԵՂԲԱՐՔ ԵՒ ՆՈՅԱ ՄԱՅՐԸ ՇԱՄՈՒՆԷ

Անտիոքոսի առջև տարան նամանապէս մի Շամունէ անուն կնոջ, իր եօթն որդոց հետ միասին, որոնց հրամայեց ծեծել խարազանով և եզան ջիլերով, որ կարողանայ ստիպել օրէնքով արգիլած կերակուրը ուտելու։

Մեծ որդին ասաց. «Ինչո՞ւ է այդքան երկար մեզ հարցնում և յորդորում։ Մենք կամենում ենք աւելի շուտով մեռնել, քան թէ անցնել օրէնքից, որ մեր Հայրերին տուած է»։ Անտիոք զայրացաւ խիստ, հրամայեց կտրել այս թշուառականի լեզուն, կաշին հանել, կտրել ոտները և ձեռքերը, յետոյ դեռ կենդանի դնել ջեռուցած տապակի վերայ ու խորովել։ Մայրը և միւս եղբայրները, պէտք է, նայէին այս նահատակի տանջանաց վերայ. բայց նոքա, մինչև որ նրան տանջում էին, աշխատում էին մէկ մէկու քաջալերել և իրենք էլ պատրաստւում էին նոյնպէս չարաչար մահուան համար։

Յետոյ տարան տանջելու երկրորդ եղբօր։ Կաշին հանելից յետոյ, հարցրին նրան. «Համաձայնո՞ւմ է արդեօք խոսքի միս ուտել, աւելցնելով, որ եթէ չէ, էլի կը տանջեն նրան»։— «Վերջին շնչառութեան ժամանակը ասաց նա Անտիոքոսին. «դու խաւտասիրա, դու խլում ես մեր ժամանակաւոր կեանքը. բայց երկնաւոր թագաւորը, յարութիւն կ'տայ մեզ յաւիտենական կեանքի համար»։

Երրորդը յօժարութեամբ գնաց տանջվելու, և երբ տանջողները հարցրին. արդեօք կամենո՞ւմ է կատարել

թագաւորի հրամանը, նա պատասխանեց. «Աստուծմէ ստացայ կեանքս, նորա օրէնքը կատարելու համար զոհում եմ նրան և յոյս ունեմ, որ նրանից էլ կ'ստանամ նրան»: Նա այնպիսի քաջութեամբ համբերեց ամէն տարաբնոյ տանջանքներին և մահուան, որ զարմացրեց թագաւորին և արան պատողներին:

Զորորդն էլ տանջվեցաւ իր եղբայրների պէս, մահուան ընթէում ասաց թագաւորին. «լաւ է մարդոց ձեռքով սպանվել, բայց յոյսով, որ Աստուած կ'տայ յարութիւն յաւիտենական կեանքի համար. իսկ դու այդ յոյսից զուրկ ես»:

Հինգերորդը, տանջանքի ժամանակ թագաւորին վերայ նայելով, ասաց. «այժմ կարող ես անել ինչ որ ուզում ես, բայց դու էլ այնպիսի մարդ ես, որպիսի մենք ենք. մի կարծիր, որ Աստուած թողել է մեր ազգին: Յպասիր և կ'տեսնես, ինչպէս ամենակարող է Աստուած, երբ քեզ և քո զաւակներդ կ'մատնէ հա տանջանաց»:

Վեցերորդը մեռնելիս ասաց թագաւորին. «մենք տանջվում ենք ոչ թէ այն պատճառով, որ դու ուզում ես, այլ որովհետև Աստուած կամենում է մեզ պատժել մեր մեղքերի համար: Բայց չկարծես, որ դու կ'ազատվես պատժից. Աստուած կ'հասուցանէ քեզ փոխարէնը, որ դու զինաւորվեցար նորա դէմ»:

Ասում էր եօթներորդ եղբայրը, ամէնից կրտսերը, դեռ երեխայական հասակում: Թագաւորը կանչեց նրան իր մօտ և քաղցրութեամբ յորդորում էր, թողնել իր հայրերի օրէնքը, և երդումով խոստանում էր նրան ամէն կելպի բարերարութիւններ: Բայց երեխան մնաց անշարժելի: Թագաւորը հրամայեց կանչել մօրը և հր-

բամայեց նրան իր որդուն յորդորել, որ կարողանայ գո-
նեա իր մի որդուն պահել կենդանի։

Այրը, մօտենալով երեխային, ասաց. «սիրելի որ-
դեակ, դու, որին ես գրկումս տուցի, դու, որին ես մեծ
աշխատութեամբ և կարիքով հասուցի մինչև այս օրս,
խնդրում եմ քեզ, ոգորմիր ինձ. նայիր երկնքին, երկրին,
մարդկութեանս ազգին, և ամէն գեղեցիկ արարածների
վերայ, այս ամէնը ամենազօր Աստուծոյ ստեղծածներն
են, որին մենք երկրպագութիւն ենք տալիս։ Մի ու-
րանար նրան, մի՛ վախենար ոչ տանջանքից և ոչ տան-
ջողներից, այլ մեռիր իբրև արժանի եղբայր, որ ես կա-
րողանամ մի անգամ ձեզ ամէնուն սիրով հանգիստ։

Այրը հազիւ կարողացաւ վերջացնել իր խօսքերը,
երեխան արդէն դառնալով դէպի տանջողները, ասաց.
«ինչո՞ւ էք սպասում դուք, միթէ՞ կարծում էք դուք,
որ կ'ուրանամ իմ հաւատս։ Ես երբէք չեմ անցնիլ այն
պատուիրանքներից, որ Աստուած մեզ տուեց Մովսէս
մարգարէի ձեռքով։ Բայց դու, ո՛վ արքա՛յ, որ այդքան
էարևք հասուցիր մեր ազգին, չես ազատիլ Աստուծոյ
դատաստանից։ Այժմ կարծաւոր տանջանքից յետոյ
իմ եղբայրներս ստացան յաւիտենական կեանք. իսկ քեզ
Աստուած կ'պատժէ քո հպարտութեանդ, խստասրտու-
թեանդ համար։ Ես, իմ եղբայրների պէս, կամենում եմ
դնել իմ մարմինս էլ հոգիս էլ հայրենի օրինացս վե-
րայ և խնդրում եմ Աստուծուն, որ նա ոգորմի իր ազ-
գին։ Իսկ դու, ամենատատիկ տանջանաց մէջ, վերջապէս
կ'հաւատաս, որ նա միայն է Աստուած ամենակալ։

Այս խօսքերը խիստ զայրացրին Անտիոքոսին. նա
մատներց այս գեղահաս նահատակին ամէնից խիստ

տանջանքների ։ Վերջապէս նահատակեցին նոցա արդար մօրը՝ Շամունէին էլ ։

ԳԼՈՒԽ ՃԷ ։

## ՄԱՏԱԹԻ ԵՒ ՆՈՐԱ ՈՐԴԻՔԸ

Այս հալածանաց ժամանակ, Մատաթի քահանան իր որդոց հետ հեռացաւ մի փոքրիկ քաղաք, որ Մոմդիմ էր կոչվում ։ Անտիոք խրկից նորա մօտ ասախ ճանաւորներ, որոնց հրամայած էր ասել նրան. « դու այս երկրում ամենից արևելի մարդն ես, դու ունես շատ որդիք և ազգականներ, որոնք քեզ պատվում են։ Երուսաղէմ և բոլոր Հրէաստան հպատակեցան Թագաւորին, հպատակիր նրան դու էլ։ այն ժամանակ Թագաւորը քեզ, քո որդոցդ և քո ազգականներդ իր բարեկամաց թիւը կ'մտցնէ և կ'տայ ձեզ պատիւներ և հարստութիւն »։ Մատաթին համարձակ պատասխանեց Անտիոքոսի պատգամաւորներին. « եթէ Անտիոքոս ամբէր բոլոր ամեղիքքին, և երկրիս ամէն ազգերին տարպէր ուրանալ իրենց հաւատը, այն ժամանակն էլ ոչ ես, ոչ իմ որդիքս և ոչ իմ ազգականներս չէինք Թողնել մեր հայրերիս օրէնքը և չէինք երկրպագութիւն տալ կռքերին »։

Յետոյ դուրս գալով քաղաքի հրապարակ, Մատաթին աղաղակեց բարձր ձայնով. « ով որ օրէնաց վրէժը կամենում է հանել և հաւատարիմ մնալ ուխտին, որ Աստուած դրել է մեր հայրերի հետ, նա թող գայ իմ ետևից »։ Եա և նորա որդիք Թողնելով բոլոր իրենց ըստացուածքը գնացին լեռները։ Շատ բարեպաշտ մար-

ղիկ, որ հաւատարիմ մնացին Մովսէսի օրէնքին, հետևեցին նրանց իրենց կանանց, երեխաների հետ և տնտուններով։ Նրա կենում էին անապատ լեռներում և կերակրվում էին արօտով և արմատներով։ Խարայէլացիներից ամենից քաջերը, որոնք պատրաստ էին թափել իրենց արիւնը հաւատի համար, ժողովեցան Մատաթիան մօտ, այսպէս հաւաքվեցաւ զօրք, որ կարող էր ընդդէմ կենալ Անտիոքոսին։

Մատաթիան էր արդէն շատ ծեր և զգում էր իր մահուան ժամի մօտենալը։ Նա կանչեց որդոց իր մահճին մօտ և ասաց նրանց. «Այժմ իշխում է անօրէնութիւնը. եկել է թշուառութեան, աւերածութեանց և ատելի հալածանաց ժամանակը։ Ուրեմն որդիք, զինաւորվեցէք Աստուծոյ անունով մեր հաւատի համար. մեր հայրերի հաւատի համար։ Յիշեցէք ձեր հայրերի գործքերը, հետևեցէք նրանց և ժառանգեցէք նոցա փառքը։ Աբրահամն էլ փորձեցաւ, բայց մնաց հաւատարիմ Աստուծոյ և նրա հաւատը համարվեցաւ իրեն արդարութիւն։ Յովսէփ թշուառութեանց մէջ էլ հաստատ մնաց իր հաւատքին, և Աստուած կարգեց նրան առաջին աշխատ Եգիպտոսում։ Յետու Նաւեան կատարում էր Աստուծոյ պատուիրանները— և դառաւ Խարայէլացւոց ազգի առաջնորդ։ Քաղէբ վկայեց ճշմարտութեան և մնաւ աւետեաց երկիրը։ Դաւիթ հեզ էր և ողորմած— և այսպէս ստացաւ թագաւորի դահը։ Եղիան նախանձայուզութեամբ Աստուծոյ համար, բարձրացաւ երկինք։ Անանիան, Ազարիան և Միսայէլը մնացին հաւատարիմ Աստուծոյ, չնայելով թագաւորի պատուանշանքներին և մնացին ամենաս բոլի

մէջտեղ։ Դանիէլի բարեպաշտութիւնը պահեց նրան առիւծների կատաղութիւնից։ Քննեցէք մեր ազգի բոլոր պատմութիւնը և ամէն տեղ կ՚գտնէք, որ Աստուած պահպանում է չարից և թշուառութիւնից նրանց, ով որ նորա վերայ դնում է իւր յոյսը։ Մի վախենաք չարագործների ապառնալիքներից, որովհետև աստուծոյ իշխանութիւնը կարճատև է. այսօր յաղթող են հանդիսանում, և եղուց հող են դառնում, նոցա հետ միասին կորնչում են նոցա ամէն խորհուրդներն էլ։ Զօրացէք, որդեակք, հաստատ պահեցէք մեր հաւատը։ Ձեր եղբայր Շմաւոնը իմաստուն և խորհրդական մարդ է. լսեցէք նորա խորհուրդները, հպատակեցէք նրան. նա կ՚լինի ձեզ հայր։ Ձեր եղբայր՝ Յուդան, մականունով Մակաբէ, էր քաջ իր մանկութիւնից, ուստի և նա կ՚առաջնորդէ ձեզ պատերազմում։ Պաշտպանեցէք ձեր հաւատը. եղէք համաձայն միմեանց հետ, ընդդէմ կացէք նեղութիւնց, որոնց մէջ գտնում են ձեր հայրենակիցներն, պահեցէք Մովսէսի օրէնքը ամէն հրամանները »։

Այս ասելով Մատաթիա օրհնեց իր որդոց և վախճանեցաւ խաղաղութեամբ։ Որդիք թաղեցին նրան, կատարեցին ամէն նորա հրամայածները և խրատէլացաւ բոլոր ազգը որդոց նորա մահը։

## ԳԼՈՒԽ ՃԸ.

## ԱՆՏԻՈՔՈՍԻ ՄԱՀԸ

Անտիոքոս գնաց Պարսկաստան այն դիտաւորութեամբ որ տիրէ այս թագաւորութեան Պերսեպոլիս

մայրաքաղաքին և առար առնէ նրան. իսկ Հրէաստա-
նում թողեց իր եղբեալի զօրավարներից մէկին։ Բայց
Պարկաստանում Անտիոքոս ջարդվեցաւ և տխրվեցաւ
ամօթով յետ դառնալ։ Նոյնպէս էլ Հրէաստանում, Յու-
դա Մակաբէն շատ պատերազմերում ջարդեց նորա զօր-
քերուն։ Յուդան առաւ Երուսաղէմ, քանզի կուռքե-
րը, որ Անտիոքոսի հրամանով դրել էին ճշմարիտ Աստ-
ուծոյ տաճարում։ Տաճարը մաքրվեցաւ և սրբվեցաւ։

Այս հաւքաւը խիստ զայրացրեց Անտիոքոսին։ Նա
կամենում էր թագցնել իր ամօթալի փախուստը Պարս-
կաստանից և Հրէաներից հանել վրէժ ամէն ինչների
համար, որ տեղաւ այս անյաջող պատերազմում։ Իր
ձեռնարկութիւնների անյաջողութիւնը այնպէս խիստ
տրտմեցրին նրան, որ նա հիւանդացաւ և տխրվեցաւ
մահանալ անկողին։ Երկարատև հիւանդութիւնը աւելի
մեծացրեց նորա տրտմութիւնը։ Նա կանչեց իր մօտ
իր բարեկամներուն և ասում էր նրանց. «քունս փախ-
չում է աչքերից, սրանից առաջ ինչպէս ուրախ էի նա
և ամէնին սիրելի. իսկ այժմ նեղութիւնները ամէն կող-
մից հաւաքվում են գլխս, տխուր մտքերը ինձ չեն
թողնում, թշուառութիւնները, որ նա Հայոցի Երուսա-
ղէմին, աչքս առջևն են միշտ. նա յափշտակեցի Ե-
րուսաղէմի տաճարը և շատ անմեղ Հրէաների տա-
բուն թափեցի։ Նա խոստովանում եմ, որ իմ խստու-
թիւնս է թշուառութեանս պատճառը։ Ահա՛ մեռնում
եմ նա տրտմութիւնից և նեղութիւնից օտար երկրում»։

Նորա հիւանդութիւնը օրից օր սաստկանում էր.
նա զգում էր սաստիկ ցաւ բոլոր մարմնում և դեռ կեն-
դանի ուտում էին նրան որդերը։ Վէրքերի հոտը ոնա-

տանելի էր և Անախոքոս, որոնք, դեռ փոքր ժամանակ առաջ իր հպարտութեամբ, իրեն Աստուծոյ հաւասար էր համարում, զառաւ որդերին կերակուր, և ամէնքը թողին նրան։ Նա ինքը իրեն էլ անգամ ծանրութիւն էր։ Վերջապէս Անախոք, զսպելով իր հպարտութիւնն, պէտք է, խոստովանէր իր ոչնչութիւնը։ Նա աղօթք էր անում Աստուն, զանազան ուխտեր էր դնում և խոստովանում էր ոչ միայն երուսաղէմի տաճարից յաւիշտակաց դարձնել այլ և զարդարել այն նոր ընծաներով, ընդունել Հրէից հաւատը և տարածել այն բոլոր իրեն հպատակ երկիրներում։ Բայց ամէնը 'ի զուր էր։ Աստուած չընդունեց նորա ուխտը, որովհետև նա էլ նրան չընդունեց իր բոլոր կեանքում։ Անախոքոս, որոնք շատ թշուառներու հեռացրեց իր անից և հայրենիքից, քշեց նրանց անապատներ և չարչարեց նրանց անզթութեամբ, այս Անախոքը ստիպվեցաւ վերջացնել իր կեանքը օտար երկրում, անապատում, սարսափելի տանջանաց մէջ։

## ԳԼՈՒԽ ՃԹ.

## ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ ՍԻՐԱՔԱՅ ՅԵՍՈՒ ՈՐԴՒՈՅ ՎԵՐԱՅ

Յուդայի թագաւորութեան վերջին ողբալի ժամանակները կենում էր մի արժանայիշատակ մարդ, Սիրաքայ որդի Յեսու անունով։ Սա գրեց մի գիրք, որ տեղաւորած է Աստուածաշնչի մէջ մակագրութեամբ «Գիրք իմաստութեան Յեսուայ, որդւոյ Սիրաքայ կամ միայն գիրք Սիրաքայ»։ Այս գիրքը լեցն է գեղեցիկ կանոններով և մրաքներով։ Այս արժանայիշատակ մարդու կեանքի մանրամասնութիւնները մեզ չեն հասել։

բամասն հանդամանքներից միայն այն յայտնի է, որ նուիրը բոլոր կեանքը անցկացրել է սուրբ գիրքը սովորելով։

ԳԼՈՒԽ ԾԺ.

## ՓՐԿՉԻՆ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Մակաբէեանք յաջորդաբար կառավարում էին մի քանի ժամանակ Հրէից թագաւորութիւնը. յետոյ Հերոդէսները դառան Հռովմայ հարկատու և հպատակ Հերոդէսի (Երդումեցի), որ ջնջեց Մակաբէեանց ցեղը։ Հռովմայեցիք, հզօր պատերազմատէր ազգ, որ նուաճեց գրեթէ բոլոր այն ժամանակուան ծանօթ երկիրները, նուաճեցին նմանապէս Հրէաներուն էլ։ Պաղէստինէն բաժանած էր չորս մասն՝ Հրէաստան, Սամարիա, Գալիլիա և Պերէա կամ երկիր յայնկոյս Յորդանանու։ Հռովմայեցիք տիրում էին Պաղէստինէի այս ամէն մասերին էլ. բայց թոյլ էին տալիս Հերովդէսին Հրէից թագաւոր անուանվել։

Այս թշուառ ժամանակները էլ չէին յայտնվում Իսրայէլացւոց մէջ մարգարէներ։ Նոքա չէին լսում ոչ մի մխիթարական խօսք. բայց գիտէին, որ մարգարէների խօսքերի կատարման ժամանակը մօտենում է. որովհետև իշխանութիւնը վերացել էր Յուդայի ցեղից. Իսրայէլացւոց ցեղերը տանջվում էին կռապաշտների ծառայութեան լծի տակ։ Իսրայէլացիները թշուառ էին, բայց նոցա մէջն էր միայն ճշմարիտ աստուածգիտութիւնը. իսկ բոլոր երկիրս ընկղմած էր կռապաշտութեան խաւարի մէջ։ Միայն Իսրայէլացիներին չէր հարկաւոր փրկչի գալուստը, այլ ամէն մարդիկ զգում էին

աշխարհիս փրկչի և լուսաւորչի կարօտութիւնը։

Մեր նախահայրերի մեղքի մէջ ընկնելից յետոյ, Աստուած ասաց օձին. «Կնոջ զաւակը ի՛ջախջախէ քո գլուխդ»։ Այն օձը, որ խաբեց Եւային, հասարակ օձ չէր, այլ սատանայ, այսինքն, չար ոգի, որ կամենում էր ծառայեցնել և ջնջել բոլոր մարդկութիւնը։ Աստուած այն ժամանակ արդէն խոստացաւ փրկել մարդոց սատանայի իշխանութիւնից փրկչի ձեռքով, որնոր, պէտք է, ծնէր անայր կնոջից, այսինքն, կոյսից։

Աստուած խոստացաւ Աբրահամին բազմացնել նորա ցեղը ինչպէս երկնքի աստղերը և նորա զաւակներից մէկի ձեռքով օրհնել երկրիս բոլոր ազգերուն։

Այս խոստումն աւելի բաց հաստատվեցաւ Յակոբին։ Նորա տաներիկու որդիներից յայտնվեցաւ այն, որի զաւակից, պէտք է, ծնէր ՓՐԿԻՉը։ Յակոբը մեռնելիս, մարգարէական հոգւով լցված, իր մահուան բոպէին ասաց. «Յուդա՛, քեզ կ'գովեն քո եղբայրներդ, չի առնվել Յուդայից գաւազանը և օրէնատու նորա զաւակից, մինչև կ'գայ Խաղաղարարը, ամէն ազգերի Յոյսը։

Աստուած կրկնեց իր խոստումն ամէն Իսրայէլացուց առաջին Մովսէսի բերանով, որնոր իր մահից առաջ ասաց ժողոված Իսրայէլացիներին. «Ձեր մէջից, ձեր եղբայրների մէջից, կ'կանգնեցնէ Աստուած մի ուրիշ, ինձ նման Մարգարէ։ Նրան լսեցէ՛ք»։

Այսպէս — Մարգարէն Դաւիթ, գիտէր Սուրբ Հոգւոյ ազդեցութեամբ, որ իր զաւակից կ'ծնի Խոստացեալը, Յաւիտեանական թագաւորը. իր սուրբ ուրախութեան մէջ նա անուանում էր Նրան Տէր, Մեսիայ, Որդի Աստուծոյ։

Վերջապէս ամէն մարգարէներն էլ բաց գուշակում

էին այն խոստացեալն, Դաւթի որդու Մեսիային, Քրիստոսի (այսինքն օծեալն), այն Մարդոյ Որդու վերայ, որին Դանիէլ մարգարէն տեսաւ ամպերի մէջ, այն փրկչին, այն ազատչին՝ Աստուծոյ վերայ։ Ժամանակը եկաւ, որքան որ թանձրանում էր երկրիս վերայ խաւարը, այնչափ աւելի մօտենում էր փրկութեան արշալոյսը։

Անմիտ հրէաները կարծում էին, որ Խոստացեալը կը-գայ երկրային մեծութեամբ ծաւծկաւծ, կ՚քանդէ Հռոմ-մայեցւոց իշխանութիւնը և փառքով կ՚նստի իր հօր՝ Դաւթի աթոռը։ բայց Աստուած իր իմաստութեամբ այդպէս չէր կարդել։

Եկաւ այս փրկիչը, բայց ոչ երկրային մեծութեան փառքով։ Նա յայտնվեցաւ աշխարհիս վերայ հեզ և խոնարհ, սուրբ սիրով վառված մարդկութեան համար։ Այս Հին կտակարանում խոստացեալ Մեսիան է, մեր Տէրը Յիսուս Քրիստոս։

## ՎԵՐՋ.

# ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ (ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

| | | Գին Է | |
|---|---|---|---|
| | | Ռ. | Կ. |
| 1. | Դաւթեանց դասագիրք ընթերցանութեան . . . . . | — | 40 |
| 2. | — Ընդհանուր Պատմութիւն Հատոր ա. . . . . | — | 80 |
| 3. | — Հինգեակաց Դիզակոխիկական կանոններ . . . . | — | 40 |
| 4. | Տէր Յակոբեանց՝ Ընթերցարան մասն առաջին. . . . . | — | 25 |
| 5. | — — Աշխատասիրք . . . . . | — | 7 |
| 6. | — — Դասագիրք աշակերտաց լեզուի . . . . . | — | 60 |
| 7. | Սիմէոնեանց Մ. դասագիրք թուաբանութեան . . . . . | — | 65 |
| 8. | — — Թուաբանական խնդիրներ մասն ա. . . . . | — | 50 |
| 9. | — — — — — բ. . . . . | — | 50 |
| 10. | — Գ. Երկրագրական Պատմութիւն Հին Կտակարանի . . | — | 60 |
| 11. | — — — — Նոր Կտակարանի . . | — | 60 |
| 12. | — Ն. Ընդհանուր Աշխարհագրութիւն մասն ա. Նախագիտելիք. | — | 35 |
| 13. | — — — — մասն բ. մասն աստուածաբանութեան և բնական 31 գրատ. | — | 60 |
| 14. | — — — — մասն գ. քաղաքական . . | — | 60 |
| 15. | Բահաթրեանց՝ քերականութ. աշխ. լեզուի . . . . . | — | 25 |
| 16. | Եղիշեանց՝ Հայեագրեալ մանկական երգարան նոտաներով. . | — | 40 |
| 17. | — Դասագիրք Հայկական ձայնագրութեան . . . . . | — | 30 |
| 18. | — Մանկական երգարան առանց նոտաների . . . . | — | 20 |
| 19. | Մելքիսեթեանց՝ Ժողովածու . . . . . | — | 12 |
| 20. | Աբեղեանց՝ Նպատ և Գամառեանների Յարգ . . . . . | — | 20 |
| 21. | Նազարեանց՝ Զօրութիւնք Յարգելոյ Յարգելոյ. մանկ. . . . . | — | 20 |
| 22. | Կոնդրատենկոյ զծագրութիւնք (ռուսերէն). . . . . | — | 40 |
| 23. | Շարժական տառք Հայերէն՝ Յելեմք . . . . . | — | 5 |
| 24. | — — Կաբդանի վերայ կոպրած. . . . . | — | 35 |
| 25. | Տպագրանց. . . . . | — | 5 |
| 26. | Մանդինեանց՝ Աշխ. բնական. աշխ. . . . . | — | 25 |
| 27. | — — Վերագրաց. աշխ. . . . . | — | 30 |
| 28. | — Նոնդագիտական աշխարհ. . . . . | — | 65 |
| 29. | — Բացատրութիւն աշխ. բնա. աշխարհ. . . . . | — | 75 |
| 30. | Ղազարեանց՝ Ռուսի Պայքարի Լեզուի . . . . . | — | 15 |
| 31. | — Փոքրաց Հանար. . . . . | — | 20 |
| 32. | Տիգինեանի Նկարագիր Լ. գրքոյ . . . . . | 1 | — |
| 33. | Տարբերակաց Ֆիզիկա . . . . . | — | 60 |